This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

+ *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
+ *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
+ *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
+ *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at http://books.google.com/

THE UNIVERSITY OF MICHIGAN · LIBRARIES ·

ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ԿԱՄ

ԱՐՈՒԵՍՏ ԲԱՆԱԿԱՆ

Peshtimalchean, Origor
458
Tramabanutiwn kam aruest...
312 p.

ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ԿԱՄ

ԱՐՈՒԵՍՏ ԲԱՆԱԿԱՆ

ՅՕՐԻՆԵԱԼ

Ի ՀՈԳԵԼՈՅՍ ԲԱԶՄԱՐԴԻՒՆ ԳՐԻԳՈՐ
ՄԵԾԱԶԱՆ ՎԱՐԺԱՊԵՏԷ
ՓԷՇՏՄԱԼՃԵԱՆ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
Տ. Տ. ՆԵՐՍԷՍԻ ՎԵՀԱՓԱՌ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ
ԵՒ Ի ՊԱՏՐԻԱՐԳՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՑ ԱԹՈՌՈՅՍ
ԵՐՈՒՍԱՂԷՄԻ Տ. Տ. ՅՈՎՀԱՆՆՈՒ ՍՐԲԱԶԱՆ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ԵՒ Ի ՊԱՏՐԻԱՐԳՈՒԹԵԱՆ ՊՕԼՍՈՅ Տ. Տ. ՅԱԿՈԲԱՅ
ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՐՈՒՍԱՂԷՄ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ
1854

Grad
EREN
146
BUHR

Լաւ է զիս ստանալ՝ քան զոսկի և զականս պատուականս, և զարդիւնս իմ՝ քան զոսկի և զարծաթ ընտիր։

Առակք Սողոմ. Ը. 19։

GRAD
ERCW
146
01.10.95

ԲԱՆ ԱԶԴԱՐԱՐ

ՄԱՐԴՈՑ բանականի է 'ի նախախնամական վերին Տեսչութենէն վարիլ անձնիշխան զօրութեամբ, և զամենայն զգործառնութիւնս անօրինել յիշողականին մասամբ, զոր իւրաքանչիւր անհատ ունի 'ի ծննդեան անդ իւրում՝ որ է բնական լոյս մտաց. յոր հայեցեալ կորովամիտ հանճարեղք յիմաստնոց՝ 'ի յայտ ածին զայս Արուեստ Բանական. զի տկարք 'ի բնութենէ ստացականաւս զօրացեալ 'ի միտս և 'ի կամս, լիցին բարի քաղաքացի՝ և կատարեալ գործովք բարութեան՝ և հաճոյ Աստուծոյ և մարդկան։

Բանզի ոչ այլով իւիք լրութիւն ազգի միոյ կարէ զարգանալ 'ի համբաւ բարի և բարգաւաճիլ ամենայն բարեմասնութեամբ, բայց եթէ ուսմամբ կարևորաց և առաւել ազատական արուեստից և մակացութեանց, որք սրեն զմիտս աշակերտելոց և համբակաց. որով ամենևին անհետ եղեալ 'ի նոցունց մըռայլ խաւարին տգիտութեան, իբրև ճրագ մշտալոյս բոցափայլին յաչս ամենեցուն. նաւանիկ՝ կատարեալ ուսումն և անսայթաք գիտութիւնն՝ զոր ունիմք, աստուածահա-

ճոյ երկիւղածութեամբ ուղղէ զմիտս մեր 'ի ճանաչումն ճշմարտութեան միոյ միայնոյն Աստուծոյ, և 'ի հնազանդութիւն ամենայն օրինաց նորա և պատուիրանաց յայտնելոց 'ի գիրս սուրբս, և 'ի պահպանութիւն սր-բազան աւանդութեանց՝ որք 'ի փրկութիւն հոգւոց մերոց. քանզի ըստ իմաստնոյն՝ Սկիզ-բըն իմաստութեան է երկիւղ Տեառն։

Արդ՝ բազմարդիւն և մեծիմաստ հոգելոյս Գրիգոր Վարժապետն Փէշտըմալճեան, որ անզուգական իսկ էր յԱրամեանս ազգին ըստ հայկաբանական մասին ամենայն հանգամանօքն, քա՛ջ գիտելով զկարևորութիւն կրթութեան կամաց և իմաստութեան մըտաց մարդկան, առ 'ի բառնալ զնոտի պատճառանս դասատուաց ոմանց և դասառուաց, այս է զդժուարին մեթոտոս առ ձեռըն գտեալ տրամաբանութեանց, 'ի վաթսընամեայ հասակին աշխատասիրութեամբ ծաղկաքաղ հաւաքեալ յառաջնոցն, առանց օրինաւոր յառաջաբանութեան և եթ՝ յօրինեաց զայս գրքոյկ՝ Տրամաբանութիւն անուն եդեալ 'ի վերայ. որ չէ՛ խրթնաբանութեամբ և մանուածոյ կապակցութեամբ և ընդ երկար բաժանմամբք՝ կամ վիճաբանական խորհրդածութեամբ շարադրեալ. այլ զօրէ ընուլ զիղձ փափաքանացն այնոցիկ՝ որք

խնդրեն ուսուցանել կամ ուսանիլ զայս Արուեստ Իտալական 'ի լուսաւորութիւն մըտաց իւրեանց ։

Այլ յիրաւի՝ անհրաժեշտ պարտաւորութիւն է բոլոր լրութեան Ազգիս, և մանաւանդ մեզ հոգևորականս դասուց՝ զայսպիսի բազմարդիւն անձինս ճանաչել և պատուել ըստ արժանւոյն, և զազգօգուտ արգասիս երկասիրութեանց նոցին երախտագէտ մըտօք 'ի վերայ տանելոյ բարձրացուցանել՝ և' 'ի պարծանս ինքեանց և' 'ի փառս լրութեան Ազգիս, և մանաւանդ 'ի խրախոյս և 'ի գըրգիռ ապագայից․ քանզի չէ՛ առաւել գովանի մեզ ձիրք բնութեան լինել իմաստասէր՝ այլ իմաստանասէր ։

Այլ որովհետև ձեռագիր օրինակ այսր Տրամաբանութեան ունէի առ իս 'ի բուն գաղափարէ բազմարդիւն հոգելոյս Հեղինակին օրինակեալ ձեռամբ հարազատ աշակերտի նորին Տէր Գէորգ քահանայի Աթոռանիստ Մայր Եկեղեցւոյն Կոստանդնուպօլսոյ ։ և քանիցս լուեալ եմ յարդի ուսումնասիրաց զօգտակարութիւն և զդիւրութիւն սորին, և քաջ խորհրդածեալ՝ զի այսպիսի ընտիր մատեանք անցմամբ ժամանակաց անհետ եղեալ են՝ և մոռացեալ իսկ անուանց բարեյիշատակ հեղինակաց նոցին․ վասն որոյ

թէ յերախտագիտութիւն և 'ի յիշատակ անուան նոյն մեծիմաստ հօրեղբօր Վարժապետին վաղեմի անկեղծ բարեկամին իմոյ . և թէ 'ի նպաստ ուսումնասիրաց օրհնեալ Ազգիս , և յուրախութիւն փափաքողաց տպագրութեան սորին՝ արժան դատեցայ 'ի սկզբան իմաստասիրական արդեանցս դնել զայս. Նաև ազդարար առ իմաստասէրս , և 'ի տպարանէ մեծի Սրբոյ Աթոռոյս 'ի վեր հանել իբր յէութենէ 'ի գոյ ածել զայս 'ի տես աչաց բարեխնամ անձանց , յոր վայելեալ՝ անձանձիր յօժարեսցին և ինքեանք յայսպիսի ցանկալի երկասիրութիւնս յօգուտ Ազգիս , որ կանուխ և անագան գիտէ պատկել զմեծաջան հեղինակն ըստ արժանւոյն . և առաւել ևս աներկբայ ունի ընդունել զվարձս ըստ վաստակոցն 'ի ծածկագիտէն Աստուծոյ , որ անձկանօք հոգւոյ ախորժելի է քան զամենայն վաղանցուկ փառս և զդիւրեղծական ինչս կենցաղոյս այսորիկ :

Սրբոյ Աթոռոյն Երուսաղէմի
ՊԱՏՐԻԱՐՔ ՅՈՎՀԱՆՆԷՍ
Երզնկացի :

ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՈՐ ԵՒ

ԱՐՈՒԵՍՏ ԲԱՆԱԿԱՆ

Տրամաբանութիւնն է արուեստ ուղիղ խորհելոյ . քանզի ուսուցանէ բարւոք քննել և որոշել զճշմարիտն 'ի սուտ և զստոյգն յանստուգէ :

Եւ քանզի դժուարին է իւրաքանչիւր ումեք առանց ճարտար առաջնորդի ինքնին գտանել զամենայն օրէնս ուղիղ խորհելոյ, վասն որոյ իմաստունք 'ի մարդկանէ յիւրաքանչիւր դարս զգայութեամբ և փորձով և մտածութեամբ յուզախնդիր եղեալ՝ յօրինեցին զԱրուեստն բանական , որ և կոչի Տրամաբանութիւն . որով հմտանամք ըստ օրինի քննութեամբ հասու լինել ճշմարտութեան և չգթել 'ի մոլորութիւնս :

Եւ զոր օրինակ մարմինն ոչ ունի յինքենէ զգացումն ինչ՝ այլ հոգին է որ զգայ , նոյնպէս և հոգին ոչ կարէ ընդունել զազդեցութիւնս արտաքին իրաց առանց տարբեր գործարանաց մարմնոյ : Ապա հոգին պատճառաւ միաւորութեան ընդ մարմնոյ՝ զգայ և իմանայ և դատէ և մտախոհ լինի :

Նմին իրի յառաջ քան զօրէնս քննելոյ և որոշելոյ զճշմարիտն 'ի ստոյ և զստոյգն 'ի կարծեաց, 'ի դէպ է խօսիլ ինչ յաղագս զօրութեանց և ներգործութեանց հոգւոյ, թէ զիարդ 'ի ներքին շարժմանց մարմնոյն և յազդեցութենէ արտաքին իրաց 'ի զգայարանս՝ ընդունի զտպաւորութիւնս գաղափարաց և ծանօթութեանց. որովք և 'ի քըննին մատչի իսկական իրաց և հանգամանաց կապակցելոց ընդ նոսին, և ըստ չափու հաստատութեանն գայ 'ի ճանաչումն ճշմարտութեան որում է 'ի խնդիր ։

ՊՐԱԿ Ա.

Հոգի և զօրութիւնք նորա և ներգործութիւնք ։

Հոգին է էակ պարզ, որ ունի զգալ, մտածել, ճանաչել, խորհրդածել, յիշել, կամիլ, ներգործել, կենդանացուցանել և շարժել զմարմինն ։

Գլխաւոր զօրութիւնք կամ մասունք հոգւոյն երկու են, միտք և կամք, յորս բովանդակին ամենայն զօրութիւնք և ներգործութիւնք իւր. բայց իմաստասէրք առ դիւրահաս լինելոյ զանազանեն 'ի հոգւոջ զվեց մասունս կամ զօրութիւնս, որք են զգալ, մտածել, ճանաչել, յիշել, կամիլ, գործել։

ԳԼՈՒԽ Ա.

Զօրութիւնք Զգալոյ և Մտածելոյ։

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Զգալ։

Զօրութիւնն զգալոյ հասարակ է մարդկան ընդ կենդանիս, որով իմանայ հոգին զազդեցութիւնսն եղեալս 'ի նա, զոր արտաքին զգայութիւնքն ազդեն 'ի ձեռն Ջղաց։ Եթէ խայթիցի մարմինն, իսկոյն զգայ հոգին. իսկ հոգին ոչ զգայր՝ եթէ ոչ միջնորդութեամբ ջղաց. զի ջիղքն ունին զերկուս ծայրս, մին արտաքին՝ որով ընդունին զազդեցութիւնս արտաքին իրաց, և միւսն ներքին՝ որք տանին հասուցանեն զայնս 'ի ներքս 'ի գոյացութիւն ուղղոյն. զի գլխաւոր արմատք ամենայն ջղաց եզերին յուղեղն՝ ուստի սկզբնաւորեալ են։

Ի ջղաց աստի ոմանք ձգին մինչև 'ի ուղնգունս, ոմանք 'ի լեզու, կէսք յաչս, և այլք յանհամար ճիւղս բաժանեալ և խառնեալ սփռին ընդ ամենայն մասունս մարմնոյ մերոյ, և կենդանացուցանեն զնա և շարժեն։

Ոչ ամենայն զգացմունք յարտաքին իրաց ունին սկիզբն. բազում զգացմունք են զոր ընդունի հոգին 'ի ներքուստ անտի մարմնոյ մերոյ, որպէս զգացումն քաղցու և ծարաւոյ,

խանձութեան և հանգստեան, և այսպէս ցաւոց՝ սրտի և գլխոյ և փորոտեաց։ Այս կրկին են զգացմունք. մի՝ պատճառեալ յազդեցութենէ արտաքին իրաց, և միւս՝ 'ի ներքնոց անտի շարժմանց մարմնոյ մերոյ՝ առանց ներգործութեան արտաքին իրաց։

Յայտ է բազում փորձովք, զի եթէ զներքին և եթէ զարտաքին զգացմունս ընդունիմք 'ի ձեռն ջղաց. քանզի 'ի բառնալ 'ի մասնէ իմեքէ զայս կամ զայն ջիղ, մասն այն մնայ անզգայ։

Այն ազդմունք՝ որք ներգործեն 'ի հոգին զներքին հեշտալի կամ անախորժ տպաւորութիւնս, կոչեցան 'ի յստակախօս տրամաբանից Յատուկ զգացումն. որպիսի են ազդմունք համոյ, հոտոյ, ձայնի, ջերմոյ, ցրտոյ, և այլոց այսպիսեաց։

Իսկ եթէ զարտաքին պատկերս ինչ առաջի առնեն, կոչեցան Իմացուած. որպիսի են կերպարանք գունոյն և ձևոց։

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Մտածել։

Պատահի երբեմն զի ազդին 'ի հոգին բազում զգացմունք և իմացուածք միանգամայն. բայց ոչ նոյն օրինակ առ ամենեսին մտադրութեամբ հայի, այլ երբեմն յայս և երբեմն յայն։ Զոր օրինակ, յորժամ միանգա-

մայն ընդունի հոգին զազդմունս երգոց, նըւագարանաց, թռչնոց, ջուրց, և զիմացուածըս գունոց և ձևոց, ոչ ամենեցուն միապէս ուշադիր լինի, այլ է զի այսմ, և է զի այնմ. և այս ներգործութիւն կոչի Ուշադրութիւն։

Իսկ յորժամ զմտադրութիւն իւր խորհրդով իւրով տանի 'ի միոյ առ միւսն, այն ներգործութիւն կոչի Մտածութիւն։ Եւ քանզի կարողութիւն է հոգւոյն յայս ինչ զգայմանէ կամ յիմացուածոյ զմտադրութիւն իւր տանել յայլ՝ առ քաջ խելամուտ լինելոյ, կարողութիւնն այն կոչի Զօրութիւն մտածելոյ։

ԳԼՈՒԽ Բ.

Զօրութիւն ճանաչելոյ և Յիշելոյ։

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Ճանաչել։

Յորժամ հոգին խորհրդով տանի զմտադրութիւն իւր 'ի միոյ առ միւսն, զի համեմատութեամբ իրերաց որոշակի քննեսցէ զիրսն, սովին ներգործութեամբ մարթի գըտանել թէ իւ նմանին միմեանց և իւ տարբերին։ Այս զօրութիւնն՝ որով գտանէ հոգին զնմանութիւն կամ զաննմանութիւն բաղդատեալ իրաց, կոչի Զօրութիւն Հա-

նաչելոյ. և ներգործութիւնն որով դատանք նմանութիւն կամ աննմանութիւն նոցա, կոչի Ճանաչումն կամ Հմտութիւն:

Ի ճանաչմանէ համեմատութեան երկուց իրաց՝ առաջնորդի դատել զնմանութիւն կամ զաննմանութիւն նոցա հաստատութեամբ կամ ժխտողութեամբ. այս ներգործութիւն հոգւոյ կոչի Դատումն. զոր. օրինակ, մորթն է ծակոտկէն. փայտն ոչ է թափանցիկ:

Բայց յորժամ 'ի համեմատութենէ երկուց գաղափարաց ոչ յայտնի երեւեսցի նմանութիւն կամ աննմանութիւն նոցա առ միմեանս, յայնժամ բաղդատեմք զերկոսին ընդ այլում երրորդի, և 'ի հանդիտութենէ կամ յանհանդիտութենէ նոցա ընդ երրորդ գաղափարին՝ 'ի յայտ ածեմք զնմանութիւն կամ զաննմանութիւն նոցա ընդ միմեանս. այս ներգործութիւն մտաց կոչի Տրամախոհութիւն կամ Խելամտութիւն:

Զոր օրինակ խորհիմք թէ արդեօք գաղափարք հրահալելւոյ և ծակոտկենի հանգէտ իցեն միմեանց, մինչև ուղղութեամբ ասել՝ թէ հրահալք են ծակոտկէն, բաղդատեմք զերկոսին ընդ երրորդ գաղափարի լուծականութեան, և գտանեմք զնոսա հանգէտ ընդ նմա: Եւ զի գիտեմք փորձով, թէ ոսկի, արծաթ, պղինձ, և այլք, յորժամ արկանին 'ի ժանտաջուր կամ 'ի ջուր արքունի,

տամկանան 'ի ջուրց անտի, յորմէ և լուծանին. և այս ոչ կարէր լինել, եթէ ոչ ունէին ծակտիս ընդ որս ընդմտանէին ջուրք. վասն որոյ և ասեմք. Ամենայն որ լուծական է, ծակոտկէն ևս է. իսկ հրահալք են լուծական, ապա են ծակոտկէն։

Այս երրորդ գաղափար կոչի Վասն էր կամ Պատճառ իրին, զի թէ 'ի հաստատական և թէ 'ի ժխտողական բանս զպատճառ իրին 'ի մէջ մատուցանէ. զոր օրինակ, Ամենայն բնական մարմինք խառնեալ են 'ի չորից տարերաց, վասն զի հուսկ ուրեմն 'ի նոսա լուծանին։ Ագահութիւնն է չար, զի է անկարգ ցանկութիւն արծաթոյ։ Ճարպն ոչ է մարմին անդակազմ, զի յինչ և իցէ բաղխմանէ փոխէ զձև իւր։

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Յիշել։

Կարողութիւն է հոգւոյն 'ի միտ ածել զգաղափարս անցելոց իրաց և հեռացելոց 'ի զգայութեանց. և այս զօրութիւն կոչի Յիշողութիւն։

Օրինակ իմն. կալեալ ուրուք 'ի ձեռին զխնձոր, տեսանէ զգոյն նորա և զգայ զհոտն. 'ի բաց եդեալ զխնձորն և կափուցեալ զաչս, տակաւին կարէ երևակայել զկերպարանս գունոյ նորա և զհանգամանս հոտոյն.

այս ներգործութիւն հոգւոյն կոչի Երևակայութիւն կամ Նկատողութիւն ։

Միւսանգամ տեսեալ զխնձորն, յիշէ թէ յայլում նուագի տեսեալ իցէ զայն․ այս ներգործութիւն կոչի Յիշատակութիւն ։

Իսկ եթէ բարձցի 'ի միջոյ խնձորն, և անցմամբ ժամանակաց գաղափար ձևոյ նորա և գունոյ և ծանօթութիւն հոտոյն գլխովին անհետ լիցի, և ապա որպէս ստէպ պատահի, զի գաղափար գունոյ և ձևոյ և ծանօթութիւն հոտոյն իւրովի դայցեն 'ի միտ, այս ներգործութիւն կոչի Ուշաբերութիւն ։

Բայց յորժամ զայլ և այլ գաղափարս իրաց միաւորէ ընդ իրեարս, և կազմէ գաղափար ինչ նոր ըստ հաճոյից, օրինակ իմն այծամարդ, ձիացուլ, եղջերուաքաղ․ այսու օրինակաւ կերպաւորէ և զգաղափարս քաղաքի, նաւահանգիստի, հարսանեաց, և այլոց բազմաց առանց տեսանելոյ ևս․ այս զօրութիւն հոգւոյ որով կարէ առնել՝ կոչի Երևակերպութիւն, կամ Սոսկ մտածութիւն ։

ԳԼՈՒԽ Գ․

Զօրութիւն կամելոյ և գործելոյ ։

ՅՕԴՈՒԱԾ Ա․

Կամք ։

Զօրութիւնն կամելոյ կամքն է, որով հոգին հաւանի յօժարիլ իմիք կամ դժկամա-

կել, սիրել կամ ատել. Ներգործութիւնն ուրով հոգին հաւանի, կոչի Կամեցողութիւն. և ոչ հաւանի վայրապար ; այլ զի գտցէ ըզհեշտութիւն, կամ փախնուցու 'ի ցաւոց :

Ի հեշտութեանց և 'ի ցաւոց կէսք զգալիք և բնականք ասին, և կէսք բարոյականք :

Բնական և զգալի հեշտութիւն է՝ որ ծագէ 'ի զգալի ազդեցութենէ. որպէս յանուշահոտութենէ ծաղկանց, 'ի գեղեցկութենէ գունոց, 'ի համեղութենէ կերակրոց, 'ի քաղցրաձայնութենէ երգոց :

Բարոյական հեշտութիւն է, որ յառաջ գայ 'ի ներքին կրից հոգւոյն. որպէս 'ի գըտանելոյ զհաւատարիմ բարեկամ, 'ի յաղթութենէ դատին, 'ի կործանմանէ ոխերիմ թշնամւոյ :

Նոյնպէս զգայական ցաւ է, զոր կրեմք յանդամս մարմնոյ մերոյ 'ի սիրտ, 'ի գլուխ և յայլս : Բարոյական ցաւ է, յաղթահարիլ 'ի վէճս, զրկիլ 'ի սիրելւոյ, անկանիլ յիշխանութենէ :

Ամենայն որ առթէ զհեշտութիւն կամ մերժէ զցաւ, բարի կոչի. իսկ որ առբերէ զցաւ, կամ տայ կորուսանել զհեշտութիւն՝ չար կոչի :

Յայտ ուրեմն է՝ զի բարիք և չարք կըրկնակի են, Բնական և Բարոյական. ըստ որում կրկնակի հեշտութիւն կամ ցաւս ներգործեն 'ի մեզ :

Այս բնական բարի կոչին նոքին իսկ բը-նական և զգալի հեշտութիւնք, որպէս քա-ջողջութիւն անձին, ազատ ՚ի բռնութենէ կեանք, լիութիւն կարևոր պիտոյից, մար-մնական զուարճութիւնք, և այն ամենայն որք ծնանին ՚ի տպաւորութենէ զգալեաց, և բերեն զզգալի հեշտութիւն։

Բարոյական բարի ասին նոքին իսկ բարոյ-ական հեշտութիւնք, որպէս ճանաչումն ճըշ-մարտութեան, անմեղութիւն կենաց, հան-դարտութիւն խղճի մտաց, և այն ամենայն որ յառաջ գան ՚ի կրից հոգւոյն, և զհոգին հեշտացուցանեն։

Ամենայն որ բարի երևի մեզ, եթէ իս-կական բարի իցէ այն և եթէ առ երևոյթ, առթէ ՚ի մեզ ձգտումն և փափագ. և այս կիրք հոգւոյ կոչի Սէր։ Իսկ այն ամենայն որ չար թուի, պատճառէ ՚ի մեզ խորշումն և դժկամակութիւն. և այս կիրք հոգւոյ կոչի Ատելութիւն։ Յերկուց այսոցիկ գլխաւոր կրից յառաջ գան և այլ ամենայն կիրք հո-գւոյն, հեզութիւն, բարկութիւն, վստա-հութիւն, երկիւղ, խնդութիւն, տրտմու-թիւն, և այլք։

Երևոյթք արտաքին իրաց զոր ինչ ձգտու-մըն կամ խորշումն զարթուցեն ՚ի մեզ, կա-րող է հոգին ընծայել նմա զհաւանութիւն, կամ ընդդէմ կալ. այս զօրութիւն հոգւոյ անուանի Ազատութիւն և Ինքնիշխանութի՜։

ՑՕԴՈՒԱԾ Բ.

Գործել։

Կրկնակի ներգործէ հոգին. մի՝ 'ի ներքս յինքեան, և միւս՝ արտաքոյ իւր 'ի մարմինն։ Ներգործէ 'ի ներքս՝ 'ի մտածելն, յորժամ 'ի բազում զգացմանց 'ի միոյ առ այլ տանի զմտադրութիւն իւր։ Ի ճանաչելն, յորժամ բաղդատէ զերկուս գաղափարս կամ զծանօթութիւնս, և գտանէ զնմանութիւն կամ զաննմանութիւն նոցա առ իրեարս, և դատաստան առնէ հաստատութեամբ կամ ժխտողութեամբ։ Ի յիշելն, յորժամ նկատողութեամբ կամ երևակայութեամբ պահէ զգաղափարս և զծանօթութիւնս անցելոց իրաց, և կամաւ 'ի յուշ ածէ զնոսա. և բազում անգամ զուգախառնէ զայլ և այլ գաղափարս ընդ իրեարս, և ստեղծանէ զնորանոր գաղափարս, որք ոչ գտանին 'ի բնութեան իրաց։ Ի կամելն, յորժամ ինքնին յօժարի իմիք կամ խորշի յիմեքէ. և հաւանի ընտրել զայս քան զայն։

Իսկ 'ի զգալն, հոգին կրէ մանաւանդ քան ներգործէ. եթէ 'ի ներքուստ յազդեցութենէ մարմնոյն իցէ, որպէս 'ի քաղցոյ, 'ի ծարաւոյ, 'ի ցաւոց աղեաց. և եթէ յարտաքին իրաց իցէ՝ որք արդեամբ ներգործիցեն 'ի զգայութիւնս, որպէս 'ի խոցելն սուսերաւ, 'ի շօշափելն զհուր, 'ի տեսանելն զլոյս, չկարէ

չզգալ ազդեցութեանցն ։

Նոյնպէս կրէ հոգին երբեմն 'ի յիշելն, յորժամ գաղափարք անցելոց իրաց՝ ամենեւին անհետ եղելոց, վերստին զարթնուցուն իւրովի 'ի յիշողութեան նորա ։ Քանզի ազդմունք արտաքին իրաց որք զգածեն զարտաքին մասն զգայարանաց, 'ի ներքին ծայրից զգայական ջղաց բերին 'ի գոյացութիւն ուղղոյն, և տպաւորին 'ի նմա գաղափարք և ծանօթութիւնք այնոցիկ իրաց ։ Այս տպաւորութիւն թողու հետս յուղեղն, ուր մնան երկար կամ սուղ ըստ կակղութեան կամ ըստ կարծրութեան ուղղոյն ։ Իսկ 'ի կորնչիլ ամենևին գաղափարի և ծանօթութեան իրին յառաջագոյն տպաւորելոյ, այս հետք 'ի ձեռըն ընթացից կենդանական ոգւոց և արեան՝ ինքնին քրքրեալ զարթնուն, և վերստին ընդ միտ տանին զգաղափարն զայն և զծանօթութիւնն ։

Զօրութիւնն գործելոյ կրկին է 'ի հոգին, մին ներքին, այսինքն է զօրութիւնն մտածելոյ, ճանաչելոյ, յիշելոյ, և կամելոյ, զորոց ասացաւ այժմ. իսկ միւսն արտաքին, որ մասնաւոր անուամբ՝ շարժիչ զօրութիւն կոչի. և է կարողութիւնն այն՝ որով շարժէ զմարմինն ընդ որում է միաւորեալ ։

Հոգին շարժէ զմարմինն՝ մի ըստ տնկական կենաց 'ի սնունդ և յաճումն, և միւս՝ ըստ զգայական կենաց 'ի շարժմունս բնա-

կանս, որպիսիք են բաբախիւն զարկի բազկին, կծկումն և բացումն սրտի, խաղացմունք յօդից և աղեաց։ Շարժէ ևս զմարմինն 'ի շարժմունս կամայականս, որպիսիք են կամաւոր շարժմունք գլխոյ և աչաց, ձեռաց և ոտից, և այլոց անդամոց։

ՊՐԱԿ Բ.

Ներգործութիւնք մտաց։

Բառիւս միտք՝ իմացեալ լինի ատէն կարողութիւնն որով խորհիմք և երևակայեմք։

Երեք են գլխաւոր ներգործութիւնք մտաց, Ըմբռնումն, Դատումն, և Տրամախոհութիւն, կամ Խելամտութիւն, յորս բովանդակին ամենայն ազդմունք արտաքին իրաց և հանգամանաց նոցա՝ զգացմունք և իմացուածք, ևս և մտածմունք և ճանաչմունք և խորհրդածութիւնք հոգւոյ։ Իսկ հոգին զոր ինչ միանգամ ըմբռնէ և դատէ և խորհրդածէ, զսկիզբն 'ի զգայութեանց ունի. զի ըստ անշուշտ առածին Արիստոտէլի, Չիք ինչ 'ի միտս, որ չիցէ նախ լեալ 'ի զգայութեան։

Արդ՝ Ըմբռնումն է ներգործութիւն մտաց, որով զպատկերս իրաց և զծանօթութիւնս հանգամանաց նոցա տպաւորելոյ 'ի

զգայութեան, պարզ հայեցիւք մտաց՝ առանց դատաստան առնելոյ խորհիմք՝ և երևակայեմք. և այս երևակայմունք կոչին գաղափարք և ծանօթութիւնք, և նշանակք նոցին բառք, որք ըստ ոմանց անուանեցան Ի՞դէրք։

Դատումն է ներգործութիւն մտաց, որով զըմբռնեալ գաղափարս կամ զծանօթութիւնս՝ ընդ այլում գաղափարի և ծանօթութեան բաղդատեալ 'ի մտի՝ ճանաչեմք զնըմանութիւն կամ զաննմանութիւն նոցա. զոր և յայտ առնեմք հաստատութեամբ կամ ժխտողութեամբ. յօդաւորութիւն բառից որ զդատումն մեր ածէ յերևան՝ Բան կոչի, զոր ոմանք անուանեցին Բացերևութիւն կամ Նախադասութիւն։

Տրամախոհութիւնն կամ Խելամտութիւնն է ներգործութիւն մտաց, որով ըզդատումն զոր արարեալ եմք յառաջագոյն բաղդատութեամբ երկուց գաղափարաց կամ ծանօթութեանց, խորհրդով մտաց համեմատեալ ընդ այլում երրորդ գաղափարի, առաւել ևս բացորոշեմք. բանն յորում լինի այս՝ կոչի Ապացոյց, որ յոմանց ձեռնարկութիւն լսի։

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԸՄԲՌՆՈՒՄՆ

Ըմբռնումն է ներգործութիւն մտաց, որով՝ խորհիմք և երևակայեմք զպատկերս իրաց և զծանօթութիւնս հանգամանաց նոցա տպաւորելոց 'ի զգայութեան առանց դատաստան առնելոյ ։

Եւ քանզի՝ որպէս տրամախոհութիւնն յայտ առնէ զնախընթաց դատումն ինչ, նոյնպէս և դատումն զգաղափարս կամ զծանօթութիւնս. վասն որոյ կարևոր է նախ խօսիլ ինչ զգաղափարաց և զծանօթութեանց որք են հիմն դատման մերոյ և խելամտութեան ։

Բայց գիտել արժան է, զի գաղափար կոչեցան տպաւորութիւնք հոգւոյն, որք նման են իրացն զորս երևակայեն. որպիսի են պատկերք ամենայն բնական և արհեստական իրաց որք ունին զտարածութիւն, և իմացմունք գունոց և ձևոց ։

Ծանօթութիւն ասացան զգացմունք հոգւոյն, որք ոչ են նման զգալի տպաւորութեանց՝ զոր ազդեն հանգամանք իրաց 'ի ըզգայութիւնս մեր, որպիսի են ազդմունք հոտոց, համոց, ձայնի, ջերմոյ, ցրտոյ, և այլն ։

ԳԼՈՒԽ Ա.

Գաղափարք ։

՛Սախնի իմաստասէրք զերիս ազգս գաղափարաց զանազանեցին, բնածին, եկամուտ, և ստեղծական ։

Բնածինք են ասէին, որք 'ի բնէ յառաստուածուստ տպաւորեալ են 'ի հոգին. որպէս գաղափարք ճշմարտութեան, առաքինութեան, արդարութեան, կարեկցութեան։

Եկամուտք են, որք ստացեալ լինին 'ի ձեռըն զգայութեանց. որպէս գաղափարք գունոց, ձևոց, համոց, հոտոց, ջերմոյ, ցրտոյ։

Ստեղծականք են՝ զորս հոգին հնարէ որպիսի ոչ արար բնութիւնն. որպէս յարալէզ, եղջերուաքաղ, ձիակապիկ։

Ապաքէն կարողութիւն է հոգւոյն պատճառաւ տպաւորութեանց ազգի ազգի պատկերաց՝ զոր ընկալեալ ունի յիւրաց 'ի ձեռն զգայութեանց, ստեղծանել զնորանոր գաղափարս առաւել քան զոր արար բնութիւն։

Նախ՝ զուգաւորելով զայլ և այլ գաղափարս. որպէս զգաղափար մարդոյ և զգաղափար ձկան կամ ձիոյ միաւորեալ ընդ իրեարս՝ երևակերպէ զկենդանի ինչ խառնակերպ՝ համբարու կամ յուշկապարիկ անուանեալ։

Երկրորդ՝ աճեցուցանելով զգաղափար ինչ. որպէս 'ի գաղափարէ մարդոյ ձևացու

ցանէ զգաղափար հոգւոյն։

Երրորդ՝ նուազեցուցանելով զգաղափար ինչ. որպէս 'ի գաղափարէ մարդոյ ուրուք կազմեմք զգաղափար թզուկի։

Չորրորդ՝ վերացուցանելով. որպէս յետ ընդունելոյ զգաղափարս կամ զտպաւորութիւնս արտաքին իրաց, խորհիցիմք միայն զգաղափարէն՝ առանց զմտաւ ածելոյ զիրն։ Որպէս յորժամ ասեմք. երկու և երկու առնեն չորս. երկու յաւելեալ առ ութ՝ առնեն տասն. ոչ հայեցեալ թէ զինչ այն երկուքն իցեն կամ չորք կամ ութն, ոսկի՞ թէ արծաթ կամ այլ ինչ նիւթ։

Զայս եղանակ վերառութեան՝ որով ըստեղծանեմք զաննիւթական գաղափարս թըւոց և ձևոց, հրաժարեցուցեալ մտածութեամբ զայնս 'ի նիւթական ենթակայից իւրեանց յորում բնաւորեցան լինել, յիշատակէ Դաւիթ անյաղթ բանիւքս այսոքիւք։

« Ամենայն գոյք եռակի են. կամ ենթակայութեամբ և մակամտածութեամբ նիւթաւորք գոն, որպէս փայտ և քար և այլք ամենայն 'ի տեսանելեաց. վասն զի ոչ է կարողութիւն զքար և զփայտ առանց նիւթոյ իմանալ։

Եւ կամ ենթակայութեամբ և մակամըտածութեամբ իսկ աննիւթք. որպէս Աստուած, հրեշտակ, միտք, հոգի. քանզի այսոքիկ և' ենթակայութեամբ աննիւթք են և

մակամտածութեամբ․ վասն զի ոչ գոյ կարողութիւն նիւթաւոր իմանալ զԱստուած կամ զՀրեշտակս կամ զմիտս կամ զհոգի։

Եւ կամ ենթակայութեամբ նիւթաւորք գոն, իսկ մակամտածութեամբ աննիւթք, որպէս ձեւք․ քանզի ձեւք ենթակայութեամբ նիւթաւորք գոն․ քանզի ոչ կարէ եռանկիւնին կամ քառանկիւնին եւ այլ ձեւք առանց նիւթոյ բաղկանալ, այլ կամ 'ի քարում եւ կամ 'ի փայտում եւ կամ յայլ ինչ նիւթում ունի զգոյութիւնն։

Իսկ մակամտածութեամբ աննիւթք գոն․ քանզի յորժամ երեւակայէ ոք զձեւս 'ի տրամախոհութեան, զնա ինքն զձեւն ըստ ինքեան տպաւորէ 'ի մակամտածութեան․ քանզի որպէս մոմ՝ առտպելով յինքեան զգիր մատանւոյ, զնոյն ինքն առանձին զգիրն առտպէ յինքն, եւ ոչ այլ ինչ նիւթ առնու 'ի մատանւոյն․ ըստ նմին օրինակի եւ տրամախոհութիւն երեւակայելով յինքեան ձեւս՝ ոչ ինչ առնու 'ի նիւթոյ, այլ զնոյն ինքն զձեւս երեւակայէ եւ տպաւորէ յինքեան դ ։

Ըստ այսմ սահմանական գաղափարք են եւ ընդհանուր գաղափարք՝ մարմնաւորի, կենդանւոյ, մարդոյ, առիւծու, զորս սեռ կամ տեսակ կոչեմք։ Քանզի տեսեալ մեր զայլ եւ այլ մասնաւոր գոյակս, մարդ, ձի, առիւծ, զի ունին համակերպութիւն 'ի հասարակ հանգամանս ինչ․ իբր զի նմանակից են 'ի

ծնունդ , 'ի սնունդ , յաճումն , 'ի զգայումն ; 'ի ճանաչումն , 'ի տեղաշարժութիւն . վերացուցեալ միտք զայս հասարակ հանգամանս 'ի մասնաւորաց անտի , կերպաւորեմք զգաղափար ինչ ընդհանուր , զոր կոչեմք Սեռ :

Ըստ սմին օրինակի վերացուցանելով մըտօք զհասարակ հանգամանս այս և այն մարդոյ , այս և այն ձիոյ , այս և այն առիւծու , կազմեմք զընդհանուր գաղափար մարդոյ , ձիոյ , առիւծու , զորս կոչեմք Տեսակ . և զայնոսիկ առանձին խորհիմք իբրև զանձնաւոր գոյակս : Սոյնպէս ստեղծանեմք և զգաղափարս պատերազմի , հարսանեաց , նաւարեկութեան , նա և առանց իսկ տեսանելոյ զնոսա :

Ի սոցուն սակի են և ամենկարագիր գաղափարք կամ ծանօթութիւնք իմանալի և բարոյական էակաց , համոցն և հոտոց , գիտութեան և տգիտութեան , առաքինութեան և մոլութեան :

Ստոյգ իմն է , զի բնածին գաղափար՝ յառաւածուստ 'ի բնէ 'ի հոգիս մեր տպաւորեալ՝ ոչ գտանի 'ի մեզ . այլ ամենայն գաղափարք եկամուտ են կամ ստեղծական , զորըս զգայութեամբ և մտածութեամբ ստացեալ ունիմք յընթացս կենաց :

Ուստի սկիզբնս այս . Զոր ոչն կամիս անձին , մի արասցես այլում . ոչ է բնածին 'ի մեզ , այլ եկամուտ է և ստացական . սակայն

կարեմք դիւրաւ առնուլ 'ի միտ . զի յաւէտ համեմատ է մտաց և բանի . քանզի և օգուտըն մեր զնոյն ուսուցանէ մեզ, իբր զի զայն ինչ զոր ոչն կամիմք մեզ եթէ արասցուք այլոց, այլք և ս զնոյն արասցեն մեզ 'ի փոխ անձանց մերոց :

Նոյնպէս և գաղափար գոյութեանն Աստուծոյ ոչ է բնածին՝ անդստին յաստուածուստ դրոշմեալ 'ի միտս մեր . զի զայն ըստացեալ եմք 'ի մանկութենէ հետէ . բայց սակայն դիւրաւ ստանամք զԱստուծոյն քան զհրեշտակաց՝ 'ի գործոց անտի 'ի միտ առեալ զպատճառն . զի երևելի արարածքս ինքնին առաջնորդեն 'ի ճանաչումն արարչապետին . զի ըստ առաքելոյն՝ Աներևոյթք նորա իսկզբանէ աշխարհի արարածովքս իմացեալ տեսանին :

Իսկ վասն հրեշտակաց չէք բան բաւական հաստատել զգոյութիւն նոցա , բայց եթէ հաւատք հիմնեալ 'ի յայտնութիւնն Աստուծոյ :

Եւ քանզի պիտանացու է առ հմտութիւն ուղիղ դատելոյ գիտել զզանազանութիւն ազգի ազգի գաղափարաց , սմին իրի 'ի դէպ վարկանիմք նշանակել զնոսին զոր 'ի մէջ բերեն տրամաբանք ըստ երից այսոցիկ նկատմանց . 'ի կողմանէ գաղափարացն բացարձակապէս . 'ի կողմանէ տեսութեան մտաց . 'ի կողմանէ իրացն զորս երևակայեն :

ԳԼՈՒԽ Բ.

Գաղափարք և ծանօթութիւնք բացարձակապէս նկատեալ կարեն լինել Նկարագիր կամ Աննկարագիր. Պարզ կամ Յօդուածոյ. Ենթակայացեալ կամ Անենթակայ. Մասնաւոր կամ Ընդհանուր:

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Նկարագիրք և Աննկարագիրք:

Նկարագիրք են որք ցուցանեն զպատկերս. և յատուկ անուամբ կոչին Գաղափարք. որպիսի է ձեւոյն և գունոց, և ամենայնի ընդ որոց միաւորեալ է գաղափար տարածութեան. որպիսի են ըստ իմիք և ձայնք:

Աննկարագիրք են որք ոչ երևեցուցանեն զպատկերս, չունելով կից զգաղափար տարածութեան, այլ են սոսկ զգացմունք ինչ. վասն որոյ մասնաւոր անուամբ ծանօթութիւն կոչին. որպիսի են համոյ, հոտոյ, ջերմոյ, ցրտոյ. հեշտութեան, ցաւոց, ուրախութեան, տրտմութեան, յուսոյ, երկիւղի, կամակարութեան, դժկամակութեան. առաքինութեան, չարութեան, գիտութեան, տգիտութեան, ճշմարտի և ստոյ: Եւ զի դոքա ՚ի միտս ենթակայանան, կոչին իմանալի կամ բարոյական էակք, առ ՚ի որոշել յայնցանէ որք ենթակայանան ՚ի բնութեան իրաց, և կոչի զգալի կամ բնական գոյակք:

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Պարզ և Յօդուածոյ։

Ծանօթութիւնք և գաղափարք պարզ ասին, յորժամ զմի ինչ երևեցուսցեն. որպէս հոտոյ, գունոյ, ձայնի։ Յօդուածոյ կամ պարունակ կոչին, յորժամ զբովանդակութիւն բազում գաղափարաց և ծանօթութեանց յարադրելոց առաջի առնեն. որպիսի է գաղափար գինւոյ, որում կից են գաղափարք տարածութեան, լուծականութե̅, գունոյ, և ծանօթութիւնք համոյ, հոտոյ, և այլն։

Յօդուածոյ են և ծանօթութիւնք բարոյական էակաց, որպէս հեզութիւնն պարունակէ միանգամայն զերկուս զայսոսիկ գաղափարս, մի՝ չզայրանալ արտաքոյ բանի. և միւս՝ զայրանալ ըստ պահանջելոյ բանի։ Նոյնպէս և նախանձն, մի՝ տրտմիլ ընդ բարին այլոց, և միւս՝ խնդալ ընդ չար այլոց։

ՅՕԴՈՒԱԾ Գ.

Ենթակայացեալ և Անենթակայ։

Ենթակայացեալք ասին գաղափարք և ծանօթութիւնք որք մտածին յիրսն. որպէս գաղափար գունոյ, և ծանօթութիւն համոյ մտածեալ 'ի գինին։

Անենթակայք ասին յորժամ մտածին վե-

ռաւեալ յիրէն յորում բնաւորեցան լինել. որպէս յորժամ զգոյն և զհամ գինւոյ խորհի-ցիմք իբրև իրս ինչ ըստ ինքեան կայացեալ:

Ենթակայացեալ գաղափարք և ծանօ-թութիւնք սովորաբար ածական անուամբ նշանակին, որպէս կարմիր, քաղցր: Իսկ ե-թէ վերացուցին յամենայն ենթակայէ և մտածեցին իբրև ինքնակաց ինչ, նշանակին անուամբ· զոր քերականք գոյական կոչեն. որպէս կարմրութիւն, քաղցրութիւն:

Վասն որոյ և գոյականքս՝ հոտ, համ, ձայն, գոյն, նոյնութիւն, նմանութիւն, հաւասա-թիւն, անհաւասարութիւն, գեղեցկութի̃, տգեղութիւն, ճշմարտութիւն, ստութիւն, ոչ ցուցանեն զճշմարիտ գոյակս, այլ են ա-նուանք նշանակիչք անենթակայ գաղափա-րաց և ծանօթութեանց:

ՅՕԴՈՒԱԾ Դ.

Մասնաւորք և Ընդհանուրք:

Ամենայն գաղափարք զորս անմիջապէս առնումք յիրաց՝ են մասնաւորք. զի ամենայն բնական գոյակք են մասնաւորք: Բայց քանզի բազումք յիրաց անտի համակերպ են մի-մեանց ՚ի հանգամանս ինչ, զայնոսիկ հասա-րակ հանգամանս ժողովեմք ՚ի մի, և կազ-մեմք նոքօք զընդհանուր գաղափարն: Զոր օրինակ տեսեալ զի մարդ և արջառ և թռ-

չուն և այլք առհասարակ ունին զծնունդ, անունդ, գործարանս զգայութեան և ճանաչումն, զայսոսիկ համադամանս միայն որք հասարակ են ամենեցուն՝ վերացուցեալ յենթակայէ՝ կազմեմք յօդուածոյ ինչ ընդհանուր գաղափար. և կապեմք ընդ անուանն կենդանի, զոր և կոչեմք սեռ։ Բայց որպէս ոչ գտանի երբէք ընդհանուր կենդանի 'ի բնութեան իրաց, նոյնպէս և ոչ ընդհանուր գաղափար կենդանւոյ. միտքն է որ զայն հընարէ որպէս և զայլ ստեղծական գաղափարս։

Ըստ սմին օրինակի կերպաւորէ և զայլ ամենայն իրաց ընդհանուր գաղափարսն, մարդոյ, առիւծու, թռչնոյ, ծառոյ. զի վերացուցանելով միօք զհասարակ համադամանըս 'ի մասնաւորաց իւրեանց, և յօդուածոյ արարեալ զայնս, իբրև զմի ինչ խորհի։

Ընդհանուր գաղափարք և ծանօթութիւնք չեն միօրինակ տարածական. զի են որ առաւել պարունակող են, և են որ նըւազ. որպէս գաղափար կենդանւոյ առաւել պարունակէ քան զմարդոյ և զառիւծոյ։

Արդ՝ առաւել պարունակողք Սեռ կոչին, նուազ պարունակողք որք ընդ սեռիւ անկանին՝ Տեսակ ասին. և ամենայն մասնաւորք պարունակեալք ընդ տեսակաւ՝ Անհատ անուանին. վասն որոյ կենդանին է սեռ. մարդ և առիւծ տեսակ. ոմն մարդ և ոմն առիւծ անհատ։

Այնպէս ընդհանուր գաղափարաց են յայտնիչք ամենայն հասարակ անուանք, որպէս մարդ, քաղաք, գետ, մոլորակ. զի նոքօք բազում ինչ յորջորջի. իսկ որ զմասնաւոր ինչ կամ զանհատ ցուցանեն յատուկ կոչին. որպէս Պետրոս, Երուսաղէմ, Յորդանան, արուսեակ:

Ըստ այսմ են և անուանք իմանալի և բարոյական էակաց. հասարակ են արուեստ, կիրք, առաքինութիւն, մոլութիւն. և յատուկ՝ ճարտասանութիւն, սէր, արդարութիւն, ամբարտաւանութիւն:

ԳԼՈՒԽ Գ.

Գաղափարք և ծանօթութիւնք 'ի կողմանէ տեսութեան մտաց՝ լինին Պայծառ կամ Աղօտ, Յստակ կամ Շփոթ:

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Պայծառք և Աղօտք:

Գաղափարք և ծանօթութիւնք որք տպաւորին 'ի հոգւոջ յազդեցութենէ ըզգայարանաց, պայծառ են և յայտնի, եթէ հոգին ճանաչիցէ թէ զի՞նչ են, կամ զի՞նչ ցուցանեն. աղօտ են եթէ չկարիցէ ճանաչել: Զոր օրինակ, դայլայլիկ ինչ թռչնոյ չգիտիցէ սոխակի լինել կամ արտուտի, զգա֊

ցումն և 'ի նմանէ ծանօթութիւնն աղօտ է. այլ եթէ որոշիցէ, պայծառ է զգացումն և ծանօթութիւնն։

Գաղափար ուրուք 'ի հեռուստ կամ հարևանցիկ տեսեալ չկարիցեմք ճանաչել թէ ծանօթ ով իցէ եթէ օտար, իմացուածն և 'ի նմանէ գաղափարն՝ աղօտ է. իսկ եթէ մերձ եղեալ՝ կամ քաջ նկատեալ ճանաչեսցուք զայն, իմացուածն և 'ի նմանէ գաղափարն պայծառ է և յայտնի։

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Յստակք և Շփոթք։

Յստակ են գաղափարք, յորում տեսանեմք կամ զգամք՝ յայտնի որոշեալ յայլմէ ամենայնէ. և շփոթ, զոր ոչ կարեմք յայտնապէս որոշել յայլմէ։

Ամենայն պարզ գաղափարք անդստին որոշեալ են և յստակք. զի չէք 'ի նոսա այլ և այլ գաղափար, որովք ընդ միմեանս շփոթեսցին։

Շփոթութիւնն յաճախ պատահի 'ի յօդուածոյս, յորում զանազան գաղափարք կցորդեալ իցեն, զոր օրինակ՝ տարածութեան և ձևոյ և գունոյ և համոյ և հոտոյ. և չկարիցեմք զպարզ գաղափարսն որ 'ի նոսա՝ որոշել 'ի միմեանց, որպէս զի մինն չիցէ միւսն։

Յստակ են այն յօդուածոյ գաղափարք,

յորս այլ և այլ պարզ գաղափարք իցեն անշփոթ ։ զոր օրինակ, եթէ 'ի միում իրի գտանիցի սպիտակ գոյն և կարմիր, և երկաքանչիւր որոշակի իւրով գաղափարաւ ըմբռնեսցի ․ զի բաւական է առ յստակութիւն յօդուածոյից որոշակի ըմբռնումն պարզ գաղափարաց որ 'ի նոսա ։

Յօդուածոյ գաղափարք բարդական էակաց շփոթ է առ բազումս ․ յայր սակս զկարի իմն թմրութիւնն խառնակեն բազումք ընդ բարեխառնութեան ․ զյանդգնութիւնն ընդ արիութեան ․ զշռայլութիւնն ընդ առատաձեռնութեան ․ սոյնպէս և զայլ մոլութիւնս՝ ընդ առաքինութիւնսն որոց են նմանակից ․ զի ոչ ըստ արժանւոյն յստակաբար առնուն 'ի միտ զպարզ գաղափարս և զծանօթութիւնս իւրաքանչիւր բարդական էակացս, յորոց յօդեալ են գաղափարք նոցա և ծանօթութիւնք ։

ԳԼՈՒԽ Դ ․

Գաղափարք և ծանօթութիւնք 'ի կողմանէ իրացն զորս երևակայեն՝ լինին Կատարեալ և Անկատար ․ Ճշգրիտ և Հարևանցիկ ․ Հաւաստի և Մտացածին ․ Ճշմարիտ և Սուտ ։

ՅՕԴՈՒԱԾ Ա ․

Կատարեալք և Անկատարք ։

Կատարեալք են գաղափարքն որք զսկզբնատիպան կամ զնախագաղափարսն իւ-

րեանց անձերի ’ի դէմս ածեն ։ Անկատարք են, որք զնոսա թերակատար և ըստ մասնէ յանդիման առնեն ։

Ա. Պարզ գաղափարք ’ի բնէ կատարեալ են, զի չունին մասունս զի ըստ մասնէ ցուցանիցեն զնախատիպսն իւրեանց. որպէս գոյն ինչ կարմիր կամ դեղին, ձև ինչ բոլորակ կամ եռանկիւնի ։

Բ. Յօդաւոր ծանօթութիւնք իմանալի և բարոյական էակաց կատարեալ են՝ եթէ ըստ մտաց հեղինակաց ’ի դէմս ածիցեն ։ Զոր օրինակ, ’ի կազմել զգաղափար արիութեան միաւորեցից զերիս զայսոսիկ ծանօթութիւնս, որպէս առնէ Դաւիթ անյաղթ. առաջին, այր ոմն շարժի առ վայելուչն իբր թէ առ պատերազմ. երկրորդ, մինչդեռ ունի ոյժ պատերազմելոյ ընդդէմ այնոցիկ որոց կարէ յաղթել անվնաս զինքն պահելով. երրորդ, ’ի ժամանակին յորում թշնամիքն մօտ հասեալ են և հայրենիքն իւր կարօտին օգնականութեան ։ Այս գաղափար կատարեալ է, զի է ըստ սահմանելոյ հեղինակաց ։

Այլ թէ ոք ’ի բաց’ հատանիցէ զմի ’ի ծանօթութեանցս յայսցանէ, անկատար է ’ի նմա գաղափար արիութեան, զի ոչ ժողովեաց զամենայն ծանօթութիւնս նորա ըստ սահմանելոյ իմաստասիրաց ։

Յօդուածոյ գաղափարք բնական գոյից առհասարակ անկատարք են առ մեզ. զի ան-

ծանօթ է մեզ բնութիւն նոցա, և յոլովք յէական յատկութեանց նոցա անյայտք ։

Այս կատարեալ ասի գաղափար ինչ, եթէ ամենայն յատկութիւնք և հանգամանք իւրին, որք փորձով զգայութեան երևին լինել 'ի նմա՝ ընդ այնու գաղափարաւ բովանդակեսցին ։ Որպէս կատարեալ է գաղափար օդոյ 'ի միտս ուրուք, եթէ իմասցի նովին տարր ինչ լոյծ, թափանցիկ; առաձգական, ընդունակ անգայտութեան և խտութեան, հանդերձ այլովք հանգամանօքն՝ որք երևին 'ի նմա ։

Անկատար լինի եթէ 'ի բաց թողցէ 'ի գաղափարէ օդոյ զլինելն նորա առաձգական, կամ զայլ յատկութիւն ինչ բնաւորական ։ Բայց երևի թէ կատարեալ և անկատար ասին գաղափարք, ոչ ըստ իւրին զոր յանդիման առնեն, այլ յաւէտ ըստ տեսութեան հոգւոյն որ թերի ըմբռնէ. զի մարդկային մտաց տկարութիւն ոչ կարէ 'ի գաղափարս բնական գոյից նշմարել զամենայն յատկութիւնս նոցա ։

Այս կորովամիտ ոք եթէ քաջահմուտ է յիրս ինչ, ասի կատարեալ ունել զգաղափար նորա և զծանօթութիւն, և անկատար՝ եթէ սակաւ իցէ նորա հմտութիւն ։

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Ճշգրիտք և Հարևանցիք։

Գաղափարք և ծանօթութիւնք լինին ճշգրիտք, յորժամ իրք և հանգամանք նոցա պարունակեալք ընդ այնոքիւք գաղափարօք և ծանօթութեամբք, ճանաչիցին 'ի մտաց իւրաքանչիւր բնաւոր յատկութեամբք ուրովք տարբերին յայլոց. և հարևանցիկք, յորժամ ոչ այնպէս որոշակի ճանաչիցին յատկութեամբքն իւրեանց։

Գաղափարք բնական գոյից ոչ են ճշգրիտք 'ի միտս մեր. զի չեմք բաւական ունել զկատարեալ գաղափար նորա, ապա և ոչ զճշգրիտն։

Որ առ 'ի գիտել ումեք ճշգրտիւ զգաղափար օդոյ, պարտի ճանաչել մի ըստ միոջէ զամենայն յատկութիւնս և զհանգամանս նորա, և զպատճառս նոցին. օրինակ իմն՝ թէ օդ վասն էր է թափանցիկ, և թէ էր աղագաւ է առաձգական. ապա եթէ ըստ կարի չգիտիցէ, գաղափարն օդոյ հարևանցիկ է 'ի միտս նորա և վեր 'ի վերոյ։

ՅՕԴՈՒԱԾ Գ.

Հաւաստիք և Մթագածինք։

Գաղափարք և ծանօթութիւնք հաւաստի են, յորժամ նման են նախատպից իւ-

րեանց զորս առաջի առնեն. և մտացածին, որք աննման են նոցին:

Պարզ գաղափարք և ծանօթութիւնք հաւաստի են, զի իսկապէս նման են զգացմանց և իմացուածոց զորս յանդիման առնեն. որպէս գաղափարք գունոց և ձևոց, և ծանօթութիւնք համոց և հոտոց, ջերմի և ցրտոյ:

Յօդուածոյ գաղափարք էից հաւաստի են, եթէ ցուցանիցեն զճշմարիտ գոյակս, որպէս գաղափարքս մարդ, առիւծ, ծառ. կամ որ երբեմն եղեալ են իրօք, որպէս գաղափարքս Նինի քաղաք, Դուին քաղաք, Տրդատ, Արշակ. և մտացածին, եթէ առաջի արասցեն զայնս որք ոչ երբէք իցեն գոյացեալ՚ի բնութեան իրաց, որպէս քաղաք պղընձի, լեառն ոսկի, եղջերուաքաղ, յուշկապարիկ, որք և կոչին Էակ բանի:

Յօդուածոյ ծանօթութիւնք իմանալի և բարոյական էակաց հաւաստի համարին, եթէ լինիցին համեմատ ծանօթութեանց կամ գաղափարաց զոր աւանդեցին հեղինակք, և հաստատեաց սովորութիւնն. և մտացածին, եթէ ընդ նովին գաղափարօք կամ ծանօթութեամբք ժողովիցեմք զանյարիր ծանօթութիւնս, որք ընդդէմ եղանեն ծանօթութեանցն աւանդելոց յիմաստասիրաց:

ՅՕԴՈՒԱԾ Դ.

Ճշմարիտ և Սուտ ։

Գաղափարք և ծանօթութիւնք ըստ ինքեան մտածեալք, ոչ ճշմարիտ են տիրապէս և ոչ սուտ. զի ճշդիւ խօսելով՝ միայն դատմանց պատշաճի ճշմարիտ կամ սուտ լինել ։

Սակայն գաղափարք և ծանօթութիւնք ճշմարիտ կոչին, եթէ նման են իրացն զորս 'ի դէմս ածեն. և սուտ, եթէ չեն նման ։

Ա. Ճշմարիտ են պարզ ծանօթութիւնք և գաղափարք, որք զզգացմունս և զիմացուածս մեր ցուցանիցեն. որպէս համոց և հոտոց, գունոց և ձևոց ։

Եւ լինին սուտ, եթէ նոյնպիսի հանգամանս 'ի բուն իրսն դնիցեմք. զի չիք իրօք այնպիսի ինչ 'ի մարմինս, որպէս ցուցանեն բնախօսք ։

Քանզի համ, հոտ, գոյն, ձև, ոչ են էական յատկութիւնք մարմնոց՝ որպէս տարածութիւն, սերտութիւն, այլ են արտաքին և պատահական. որպիսիք են՝ ծանրութիւն, թեթևութիւն, թափանցութիւն, դիմահարութիւն, խտութիւն, անօսրութիւն, ջերմ, ցուրտ. որք իսկութեամբ յիրս ոչ գըտանին, այլ 'ի մէնջ մտածին ։

Բ. Յօդուածոյ գաղափարք գոյից՝ եթէ զիսկական հանգամանս որ յիրս են, յանդիման առնիցեն, ճշմարիտ են. իսկ եթէ զոր

ոչն գտանին յիրս անդ, զայն 'ի դէմս ածիցեն, սուտ են ։ Զոր օրինակ ճշմարիտ է գաղափար սնդկի, եթէ ցուցանիցէ մարմին ինչ ծանրագոյն՝ բայց նուազ քան զոսկի. առաւել յեղյեղուկ քան զայլ ամենայն մարմինս. դիւրաբաժան 'ի փոքրագոյն մասնկունս առաւել քան զայլսն. գլխովին ցնդական 'ի ծուխ. դիւրաթափանց յոսկին, այլ յերկաթ ոչ բնաւ. տանող սաստիկ ջերմութեան և սաստիկ ցրտոյ ։ Եւ լինի սուտ, եթէ ծանրագոյն քան զոսկի համարեսցիս, կամ թափանցող ընդ երկաթ ։

գ. Յօդուածոյ գաղափարք և ծանօթութիւնք իմանալի և բարոյական էակաց ճըշմարիտ են, եթէ առաջի արասցեն զգաղափարս նշանակեալս յիմաստասիրաց. և սուտ, եթէ անյարմար ինչ ընդ այն խառնեսցի. զոր օրինակ սուտ լինի գաղափար հեզութեան եթէ ընդ ծանօթութիւնն՝ չզայրանալ արտաքոյ բանի, յարեսցի և այս ծանօթութիւն՝ չզայրանալ ևս 'ի պահանջել բանի. որ անզգայ թմրութիւն է մոլեկան, և ոչ ունակութիւն ինչ առաքինական ։

ԴՐԱԿ Գ.

Ընդհանուր Գաղափարք։

Ամենայն գաղափարք զոր ստացեալ ունիմք զգայութեամբ և մտածութեամբ՝ յերկուս ազգս վերածին. մի՝ յեկամուտ կամ ՚ի ստացական, և միւս՝ ՚ի ստեղծական կամ մըտացածին։

Եկամուտք կամ ստացականք են գաղափարքն՝ զորս միջնորդութեամբ զգայարանաց հետզհետէ ստանամք ՚ի մասնաւոր գոյակաց, զորս բնութիւնն ստեղծ և գիտէ, որպիսի են գաղափարք մարդոյ, ձիոյ, թռչնոյ։

Ստեղծական կամ մտացածին են գաղափարքն՝ զորս մեք ձևակերպեմք մտածութեամբ ՚ի զանազան պատկերաց, որպիսի ինչ ոչ արար բնութիւնն և ոչ գիտէ. որոց լինելութիւնն ՚ի տրամախոհութեան մերում է, և ապականութիւն՝ մոռացումն մեր, որպիսիք են արալէզ, յուշկապարիկ, քաղաք պղնձի. հսկայ, թզուկ. ընդհանուր կենդանի. ընդհանուր ծառ. ընդհանուր մարդ, ձի, առիւծ։

Ստեղծական գաղափարն կրկնակի երևի, կեղծական և վերացական։

Կեղծականն է զուգադրութիւն պատկերաց այլ և այլ իրաց, որք իւրաքանչիւր առանձինն ենթակայացեալ են ՚ի բնութեան.

բայց կերպաւորեալն իբրև մի ինչ գաղափար, չէք բնաւ եղեալ 'ի բնութեան, այլ ենթակայանայ միայն 'ի սոսկ մտածութեան մերում, որպիսիք են ձիակապիկ, յուշկապարիկ, եղջերուաքաղ, փղաքաղ:

Վերացականն է՝ որ ոչ ըստ եկամուտ գաղափարաց ենթակայանայ 'ի բնութեան իրաց, և ոչ ըստ կեղծական գաղափարաց ունի զգոյ 'ի սոսկ մտածութեան, այլ է պատուաստ յերկոցունց. զի ունի զհիմն յիրս, և ենթակայանայ 'ի միտս. որպիսիք ինչ են ընդհանուր գաղափարք՝ սեռի, տեսակի, տարբերութեան, յատկի, պատահման. զորս միտք մեր 'ի հասարակ հանգամանաց մասնաւոր · իրաց յօդուածոյ արարեալ կազմէ. որք մի ինչ երևին, բայց զօրութեամբ են բազմապատիկ, զի հային անդրէն առ բազում նմանս յորոց վերաբերեալ եղեն:

Եւ քանզի մասնաւոր գոյք անհուն են և փոփոխական, իսկ զանհուն և զփոփոխական իրաց չէ մարթ ունել զբաւական հըմտութիւն. սմին իրի վերացական ընդհանուր գաղափարաւ սովորաբար վարին գիտութիւնք. ըստ որում ասէ Դաւիթ Անյաղթ. «Մասնականացն և ենթալուծեացն ոչինչ միշտ և նոյնպէս բնաւորեցաւ գոլ. իսկ արդ զայս գիտելով իմաստասիրութիւն ըստ նմանութեան բնութեան զընդհանրականօքն եղանի, որ միշտ և նոյնպէս բնաւորեցաւ

գոլ. իսկ մասնականքն որ կոչին անհատք, ոչ գոլով միշտ և նոյնպէս, վասն այնորիկ ոչ նոքօք բաղկանայ իմաստասիրութիւնն »:

ԳԼՈՒԽ Ա.

Բաժանումն ընդհանուր Գաղափարաց և Ծանօթութեանց:

Գաղափարք կամ ծանօթութիւնք ազգի ազգի մասնաւոր գոյից՝ բազմաթիւ են յոյժ և գրեթէ անհամար. բայց նախնի իմաստասէրք համեմատեալ զայնոսիկ առ իրեարս, գտին զբազումս 'ի նոցանէ հանգէտս միմեանց. և կարգ եդեալ 'ի նոսա՝ ժողովեցին 'ի հինգ գլխաւոր և ընդհանուր վերացական գաղափարս կամ 'ի ծանօթութիւնս, ըստ յաւէտ կամ նուազ պարունակելոյ նոցին ըզգաղափարս կամ զծանօթութիւնս մասնաւոր գոյից, անուանեալ զնոսա՝ Սեռ, Տեսակ, Տարբերութիւն, Յատուկ, Պատահումն. որք սովորաբար կոչին հինգ ընդհանուր ձայնք Պորփիւրի. զի Պորփիւրոս իմաստասէր աշակերտ Պղատոնի համարի լեալ առաջին գըտիչ կամ մանաւանդ հանդիսացուցիչ այսոցիկ գաղափարացս կամ ձայնից:

Եւ թէ քանի՛ հարկաւոր է տեղեկութիւն սոցա առ քաջ հմտութիւն ստորոգութեանցն Արիստոտէլի, և առ տրամաբանա-

կան մակացութիւնս, ցուցանէ Դաւիթ Անյաղթ բանիւքս այսոքիւք։

«Ի ստորոգութիւնս Արիստոտէլի պիտանացու լինի. վասն զի ’ի ստորոգութիւնս ուսուցանէ զմեզ Արիստոտէլ յաղագս տասն սեռականագոյն սեռիցն. և ուսուցանէ առաջիկայ շարագրութիւնս, թէ զինչ է սեռ։

»Եւ դարձեալ՝ սեռք տեսակաց են սեռք, և ’ի ձեռն տարբերութեանց՝ այսինքն բանականին և անբանին, բաժանին ’ի տեսակս. իսկ առաջիկայ շարագրութիւնս ուսուցանէ ըզմեզ, թէ զինչ է տեսակ և զինչ զանազանութիւն։

»Եւ դարձեալ՝ զի սեռականագոյն սեռք ոչ ընդունին զսահման. վասն զի սահման ’ի սեռէ և ’ի բաղկացուցիչ զանազանութեանց բաղկանայ. իսկ սեռականագոյն սեռք ոչ ունին այլ սեռականագոյն սեռ զոր պարտ է դնել ’ի սահմանս նոցա. և վասն այսորիկ ոչ սահմանին, այլ ’ի ձեռն յատկի յայտնին. ուսուցանէ մեզ և առաջիկայ շարագրութիւնս, թէ զինչ է յատուկ։

»Եւ դարձեալ՝ վասն զի յոլովք ’ի տասն սեռականագոյն սեռիցն պատահմունք են, որպէս որակ, քանակ, և այլքն ամենայն. իսկ առաջիկայ շարագրութիւնս ուսուցանէ մեզ թէ զինչ է պատահումն»[1]։

1 Ի վերլուծութիւն Ներած. Գործ. Գլուխ. Դ։

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Սեռ։

Սեռն է ձայն ընդհանուր որ մակագրի բազմաց տեսակաւ տարբերելոց 'ի զինչէն։ Եւ է կրկին, սեռականագոյն և հասարակ։

Սեռականագոյն սեռ է՝ որ միշտ է սեռ, և ոչ երբէք լինի տեսակ. զի չիք վերագոյն քան զնա. և այս է գոյացութիւնն։

Հասարակ սեռ է՝ որ կարէ լինել սեռ և տեսակ ըստ այլ և այլ նկատման, որպիսի է մարմինն, կեցողն, զգայունն, կենդանին. զի ուր նուազ պարունակէ՝ տեսակ է, և ուր առաւել՝ սեռ է։ Որպէս մարմինն համեմատեալ առ գոյացութիւնն՝ է տեսակ, և համեմատեալ առ կեցողն՝ է սեռ։ Նոյնպէս կեցողն, և զգայունն, և կենդանին՝ համեմատեալ առ վերնագոյնս քան զինքեանս՝ լինին տեսակ, և առ ստորնագոյնս՝ սեռ։

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Տեսակ։

Տեսակն է ձայն ընդհանուր որ մակագրի բազմաց թուով տարբերելոց 'ի զինչէն։

Եւ սա ևս է կրկին. զի ոմն է տեսակագոյն տեսակ, և ոմն հասարակ։

Տեսակագոյն տեսակ է՝ որ միշտ է տեսակ, և ոչ երբէք լինի սեռ. զի չիք այլ տեսակ ընդ

տարնագոյն քան զնա, որպիսի է մարդ, առիւծ, ձիթենի, ոսկի ։

Հասարակ տեսակ է, որ կարէ լինել և սեռ. որպէս Թռչունն տեսակ ինչ է կենդանւոյ, բայց լինի սեռ արծուոյ, աղաւնոյ, և սոխակի ։

ՑՕՂՈՒԱԾ Գ.

Տարբերութիւն ։

Տարբերութիւնն է որ մակադրի տեսակաց յորպիսի ինչէն՝ էապէս, որպէս բանականն՝ մարդոյ, և անբանն՝ արջառոյ ։ Երկին է տարբերութիւնն, բաժանական և շարադրական, որ ըստ հնոց կոչի՝ բաղկացական ։

Բաժանական տարբերութիւնք են ընդդիմակքն՝ որք հատանեն զսեռն. որպէս տարբերութիւնքս հոգևոր և մարմնաւոր բաժանեն զգոյացութիւնն, և բանականն և անբանն զկենդանին ։

Շարադրական կամ որ նոյն է՝ բաղկացական տարբերութիւնք են, որք յօդեալք ընդ սեռին՝ բաղկացուցանեն զտեսակսն. որպէս տարբերութիւնն մարմնաւոր յօդեալ ընդ գոյացութեան որ է սեռ, բաղկացուցանեն զմարմինն որ է տեսակ. և տարբերութիւնն բանական՝ յարեալ ընդ կենդանւոյն որ է սեռ, բաղկացուցանեն զմարդ որ է տեսակ. ըստ որում տեսակն ՚ի սեռէ և ՚ի տարբե-

րութենէ բաղկանայ. զի մարդն է կենդանի բանական ։

Քանզի սեռն դնի իբրեւ նիւթ տեսակին կամ անհատին, եւ տարբերութիւնն իբրեւ կերպ, ըստ Պորփիւրի ։

Եւ երկաքանչիւր տարբերութիւնք կոչին տեսակարար, մի՝ զի զսեռն 'ի տեսակս բաժանեն. եւ միւս՝ զի զոյգ ընդ սեռին ըզտեսակս բաղկացուցանեն ։ Իսկ սեռականագոյն սեռից ոչ են բաղկացուցիչ տարբերութիւնք, այլ միայն բաժանականք. վասն այսորիկ սեռականագոյն սեռն՝ որպիսի է գոյացութիւնն, ոչ սահմանի, վասն զի չունի զբաղկացուցիչ տարբերութիւն. քանզի ամենայն սահման 'ի սեռէ եւ 'ի բաղկացուցիչ տարբերութենէ բաղկանայ ։ Եւ դարձեալ՝ տեսակագոյն տեսակաց ոչ են բաժանական տարբերութիւնք՝ այլ բաղկացականք միայն. վասն որոյ տեսակագոյն տեսակն ոչ բաժանի, որպէս ասէ Պղատոն. եւ ըստ այսմ է մարդ՝ եւ այլ ամենայն ստորին տեսակք ։

Բաժանական տարբերութիւնք զօրութեամբ պարունակին 'ի սեռն, որպէս բանականն 'ի կենդանւոջ. իսկ բաղկացականք՝ ներգործութեամբ, որպէս բանականն 'ի մարդն ։

Յայտ ուրեմն, զի ոչ նոյն են բաժանականքն եւ բաղկացականք ։ Առաջին, զի բաժանականքն զօրութեամբ են, եւ բաղկացա-

կանքն ներգործութեամբ։ Երկրորդ, զի սե-
ռականագոյն սեռք ոչ ունին զբաղկացական-
նըս՝ այլ զբաժանականս միայն։ Երրորդ, զի
տեսականագոյն տեսակք ոչ ունին զբաժանա-
կանս՝ այլ միայն զբաղկացականս. և եթէ նոյն
էին՞ բաժանականք և բաղկացականք, ապա
ամենայն սեռք պարտ էին ունել զբաղկացա-
կանս, և ամենայն տեսակք զբաժանականս,
և ոչ եթէ ոմանք և եթ։ Չորրորդ, զի ոչ
նոյն նմին է բաղկացական և բաժանական՝
այլ այլոյ. զի բանականն բաժանական է կեն-
դանւոյ, իսկ բաղկացական մարդոյ, և ոչ
նոյն նմին։ Ապա երկաքանչիւր տարբերու-
թիւնքս ամենայն իրօք են այլ և այլ։

Ապաքէն ասացաւ զսեռէն թէ մակադրի
'ի զինչ էն, և զտարբերութենէն՝ թէ յոր-
պիսի ինչ էն. վասն որոյ 'ի հարցանելն զի՞նչ
է մարդ, յորժամ տացի պատասխանի, թէ
է կենդանի բանական. կենդանին է պատա-
խանի զինչ էին, և բանականն որպիսի ինչ
էին։ Որպէս թէ հարցեալ էր, զի՞նչ է մարդ,
և լսէր պատասխանի, թէ է կենդանի. և 'ի
կրկնելն՝ որպիսի՞ կենդանի, լսէր անդրէն՝ թէ
է բանական։

Իսկ սեռ և սեռականագոյն սեռ. և տեսակ
և տեսակագոյն տեսակ. և տարբերութի՞ բա-
ժանական և բաղկացական, զորոց բանք եղեն
'ի վերագոյնդ, այդ ամենայն ակն յանդիման
երևին յառաջիկայդ 'ի Պորփիւրեան ծառդ։

ԾԱՌՆ ՊՈՐՓԻՒՐԵԱՆ

		ԳՈՅԱՑՈՒԹԻՒՆ		ՀՈԳԵՒՈՐ
ՄԱՐՄՆԱՒՈՐ	Բաժանէ Բաղկացուցանէ	ՄԱՐՄԻՆ		ԱՆԿԵՆՍԱՒՈՐ
ԿԵՆՍԱՒՈՐ	Բաժանէ Բաղկացուցանէ.	ԿԵՑՈՂ		ԱՆԶԳԱՅ
ԶԳԱՅԱԿԱՆ	Բաժանէ Բաղկացուցանէ,	ԶԳԱՑՈՒՆ		ԱՆՇՈՒՆՉ
ՇՆՉԱՒՈՐ	Բաժանէ Բաղկացուցանէ.	ԿԵՆԴԱՆԻ		ԱՆԲԱՆ
ԲԱՆԱԿԱՆ	Բաժանէ Բաղկացուցանէ.	ՄԱՐԴ		ԱՅՆ
ԱՅՍ	Բաժանէ Բաղկացուցանէ.	ՍՈԿՐԱՏԷՍ		

Ահա որպէս տեսանի 'ի սմին ; գոյացութիւնն է սեռականագոյն սեռ, քան զոր չիք վերագոյն ինչ սեռ ։ Եւ թէպէտ էակն վերագոյն ինչ երևի քան զգոյացութիւնն, բայց ոչ կարէ լինել սեռ նմին . զի էակն որ բաժանի 'ի գոյացութիւն և 'ի պատահումն իբրև 'ի տեսակս, ոչ կարէ տալ զինքն հաւասար իւրոցն . ուստի և ասի, գոյացութիւնն է էակ ըստ ինքեան, և պատահումն էակ յայլում, այսինքն 'ի գոյացութեան . զի պատահումն ոչ կարէ գոլ էակ առանց գոյացութեան ։

Բայց սակայն հարկաւոր է սեռին հաւասար տալ զինքն իւրոցն . որպէս գոյացութիւնն սեռ գոլով մարմնոյն և անմարմնոյն, հաւասար տայ նոցա զգոլ իւր գոյացութիւն ։

Զի որպէս մարմինն է կատարեալ գոյացութիւն ըստ ինքեան, այսպէս և անմարմինն է կատարեալ գոյացութիւն ըստ ինքեան . ոչ մարմինն կարօտի անմարմնոյն առ 'ի լինել գոյացութիւն, և ոչ անմարմինն մարմնոյն, այլ երկաքանչիւրն ըստ ինքեան է գոյացութիւն . և ոչ 'ի միումն նուազ կամ առաւել գտանի գոլն գոյացութիւն . մինչ զի ոմն մրջիւն ոչ է նուազ գոյացութիւն քան զոմն ուղտ, այլ հաւասար է մրջիւնն ուղտոյն ըստ գոյացութեան . իսկ ասա առաւել էակ է գոյացութիւնն քան զպատահումն ։

Եւ դարձեալ՝ տեսակքն բաժանեալք 'ի

միոյ սեռէ՝ պարտին լինել համանգամայն բընութեամբ. բայց ասա գոյացութիւնն է նախկին, և պատահումն վերջին։ Նոյն որովհետև էակն ոչ է տիրապէս սեռ գոյացութեան վասն ասացեալ պատճառացս, ապա մնայ գոյացութեանն լինել սեռականագոյն սեռ, այսինքն գերագոյն քան զայլ ամենայն ընդհանուրս. սմին իրի չկարէ ունել զբաղկացական տարբերութիւն՝ այլ միայն զբաժանական, որք են մարմնաւորն և հոգևոր։ Իսկ ստորակագոյն տեսակքն, որպիսի է մարդըն, և այլ ստորին տեսակք՝ առիւծ, աղանի, ձիթենի, այնու՝ զի զանհատս պարունակեն և ոչ երբէք զտեսակս, չունին զբաժանական տարբերութիւնս, այլ միայն զբաղկացականսն։ Նոյն միջակքն՝ որք են մարմին, կեցող, զգայուն, կենդանի, այնու՝ զի սեռ և տեսակ կարեն գոլ ըստ այլ և այլ վերաբերութեան, ունին զբաղկացական և զբաժանական տարբերութիւնս, որպէս և յայտ է։

Արդ՝ ընդհանուրքն վերինք՝ պարունակող բոլոր են ստորնոց, միանգամայն և մասունք բաղկացուցիչք նոցին. իսկ ստորինք՝ մասունք պարունակեալք ընդ վերնովք, և միանգամայն բաղկացեալ բոլոր նոցին։

Վերինքն են բոլոր այնու՝ զի պարունակեն զստորինսն, որպէս գոյացութիւնն զամենայն ստորակայս իւր, նոյնպէս մարմինն, կեցողն, և այլք. իսկ մասն այնու՝ զի պա-

ծունակին 'ի ստորինս; որպէս գոյացութիւնն, մարմինն, կեցողն՝ են 'ի զգայունսն, իբրև բաղկացուցիչ մասունք 'ի բոլորում:

Ստորինք են մասունք այնու՝ զի պարունակին ընդ վերնովք. և բոլոր այնու՝ զի 'ի վերնոց իբրև 'ի մասանց բաղկացեալ, բոլոր իմն երևին:

Վերինքն կարօտին ստորնոց, զի երևեսցին 'ի նոսա. և ստորինք կարօտին վերնոց, զի բաղկասցին նոքօք և կատարեսցին:

Ապա՝ վերինքն են կարողական բոլոր, զի զստորինսն զօրութեամբ պարունակեն. իսկ ստորինք ներգործական բոլոր, զի ներգործութեամբ պարունակեն զվերինսն: Եւ վասն զի որ ներգործութեամբ ունին, պատուականագոյն են քան զնոսա որք զօրութեամբ ունին. ապա յայտ ստորինն պատուականագոյն է յոյժ քան զվերինսն, զի ստորինն է որ երևեցուցանէ զվերինսն:

ՅՕԴՈՒԱԾ Դ.

Յատուկ:

Յատուկն է ձայն ընդհանուր որ մակադրի տեսակի իմիք յորպիսի ինչէն հարկաւորապէս, որպէս ծիծաղականն մարդոյ, և խըրխնջականն ձիոյ: Կամ ըստ Դաւթի Անյաղթին. յատուկն է պատահումն հակադարձական. զի ամի մարդն է ծիծաղական, և ծի-

ծաղականն է մարդ. ձին է խրխնջական, և խրխնջականն է ձի: Բայց ոչ է պարտ իմանալ ըստ ներգործութեան, որպէս եթէ մարդ միշտ ծիծաղի, և ձի խրխնջայ, այլ ըստ ունակութեան. իբր այն թէ միշտ բնաւորական է մարդոյ լինել ծիծաղական, և ձիոյ խրխնջական:

Այլ թէպէտ հակադարձին առ միմեանս մարդ և ծիծաղական իբրև հաւասարք, զի զնոյն նշանակեն. բայց մինն է տեսակ, և միւսն հետևող նմին. ապա են հաւասարք ըստ պարունակման՝ և ոչ ըստ էութեան. զի գոլն ծիծաղական է 'ի մարդն, և ոչ մարդն 'ի ծիծաղականն. զի մարդն է լրացեալ, իսկ ծիծաղականն է մի մասն նորին:

Ոչ այսպէս են քանակ և չափ. զի և սոքա հակադարձին առ միմեանս, բայց ոչ մինն միւսոյն հետևանայ, զի են նոյն ամենևին, և միայն անուամբ զանազանեալ:

ՅՕԴՈՒԱԾ Ե.

Պատահումն:

Պատահումն է ձայն ընդհանուր որ մակադրի բազմաց յորպիսի ինչէն որպէս եկամուտ ինչ. որպէս սեաւն զեթենոսէ, և քաջագանգուրն զհնդկայ:

Կամ ըստ Պորփիւրի, պատահումն է որ գայ և գնայ առանց ենթակային ապականու-

թեան. յոր յաւելու Դաւիթ Անյաղթ, ներգործութեամբ և մտածութեամբ.

Բանզի եթէ ներգործութեամբ 'ի բաց բարձցես զսպիտակութիւնն 'ի կրոյ, կամ մտածութեամբ անջատեսցես զսեւութիւնն յեբենոսէ, տակաւին մնայ կիրն կիր, և եբենոսն եբենոս. զի սպիտակութիւնն և սեւութիւնն ոչ են բնաւորական յատկութիւնք ինչ ներքին այսց գոյակաց, այլ եկամուտ ինչ և արտաքին, որք կարեն գալ և գնալ առանց ենթակային ապականութեան:

Եւ է պատահումն որ հասարակ է, որպէս սեւութիւնն ագռաւու, և սպիտակութիւնն կաթին, որ 'ի վերայ ամենայն տեսակին երևի տարածեալ. և է որ մասնաւոր, որպէս ուժեղութիւնն Հայկայ, և խոհեմութիւնն Ոդիսեայ, որ սակաւուց ոմանց է 'ի դէպ. և է որ միջական, որպէս լինելն մարդկան՝ սպիտակ, սեաւ, ցորենագոյն, շէկամորթ. որ ոչ ամենայն տեսակին է, և ոչ սակաւուց կամ մասնաւորաց ոմանց, այլ բիւրաւոր բազմութեան, ըստ բերման ջերմ և ցուրտ և բարեխառն բաժնի տիեզերիս:

Յայսցանէ ոմանք անջատականք են, որպէս ջերմութիւն կամ ցրտութիւն օդոյ, և հիւանդութիւն կամ առողջութիւն Սոկրատայ. և ոմանք անանջատականք, որպէս սեւութիւնն եբենոսի, և խաժակնութիւնն Դիոնիսեայ:

Այլ անջատականաց ոմանք են դիւրաշարժ, որպէս լինել տողացող, ընթացող, ընկողմանող. և ոմանք դժուարաշարժ, որպէս մանուկ գոլ կամ երիտասարդ։

Այլ դժուարաշարժն կրկնակի է, զի է որ 'ի ծնէ, որպէս խաժակն և կորունչ. և է որ ժամանակաւոր, որպէս կնտութիւն, և այլ 'ի վերէ հնացեալ։

ՊՐԱԿ Դ.

Ընդհանուր գաղափարք և ծանօթութիւնք, որք կոչին Ստորոգութիւնք այսինքն Մակադրութիւնք։

Նախաշաւիղք Մակադրութեանց։

Արիստոտէլ յառաջ քան զմակադրութեանցն վարդապետութիւն ուսուցանէ, թէ ամենայն որ մակադրի ենթակայի իմիք, կամ է հոմանուն, կամ փաղանուն, կամ յարանուն. և կոչին սոքա Նախաշաւիղք մակադրութեանց, և բացատրին այսպէս։

Հոմանուանք ասին, որոց անուանքն միայն են հասարակ, իսկ բան գոյացութեանն այլ. որպէս ակն, փող, որթ, սարդ. որք ըստ հասարակ սովորութեան լեզուին միով անուամբ զատարբեր իրս նշանակեն։

Ըստ սոյուն օրինակի հոմանուն կամ համանուն ասին այլ ամենայն բազմանշանակ բառք. որոց կրկին են իմաստք՝ բուն և փոխաբերական. որպէս առիւծ ասի գազանն և այր քաջ. օձ՝ սողունն և խորամանկ ոք. հուր՝ տարրն և սէր, կամ այլ ինչ նման. կոչի սա և համեմատանուն:

Այն և համաբայք, որ զերկուս բայս նշանակեն. որպէս ագանիլ, որ է զգենուլ և օթեվանիլ: Նոյն և համաբառք, որք զանուն և զբայ նշանակեն. որպէս բառս այրի, է անուն և բայ:

Փաղանուանք ասին, որոց անունն է հասարակ, և ըստ անուան բան գոյացութեանն է նոյն. որպէս կենդանի կոչի մարդն և արջառ. և մարմին՝ քարն և ծառ:

Այսպիսի են ամենայն տեսակք միոյ սեռի, և ամենայն անհատք միոյ տեսակի: Զի փաղանունապէս այսինքն անուամբ և իրօք թռչուն կոչին արծուին և աղաւնին, ագռաւն և անծեղն, և այլք. և ագռաւ կոչին մէն մի իւրաքանչիւր ագռաւք:

Յարանուանք ասին, որք ըստ անուան և ըստ իրին ունին հաղորդութիւն իրերաց և զանազանին ՚ի միմեանց ըստ եղանակի ածանցման, որպէս առաքինութիւն և առաքինի. մեծութիւն և մեծ: Ըստ անուան հաղորդ են, զի նոյն բառիւ սկսանին. ըստ իրին հաղորդ են, զի նշանակութիւն բառին

որով իրն ծանօթանայ , նոյն է երկոցունց 'ի սկզբանն , բայց զանազանին ածանցմամբ 'ի վերջն · զի ածանցեալքն 'ի նոցունց առաքինութիւն և մեծութիւն՝ են բառք բացականք , որք նշանակեն զվերացական և զանենթակայ ծանօթութիւնս , և պահանջեն զկցականն՝ այն ինքն է զթանձրացեալս իւքեանց ենթակայանալ 'ի նոսին ։

Իսկ նախատիպքն նոցին առաքինի և մեծ գոլով կցական բառք՝ նշանակեն զթանձրացեալ գաղափարս իրաց · որք ոչ միայն են ենթակայանան ըստ ինքեան , այլ և լինին ենթակայ վերացեալ և բացական ծանօթութեանց , որովք և զանազանին 'ի միմեանց ։

Յարանուանք այսինքն յարանուանողք և յարանուանեալք կրկնակի ածանցին , մի ըստ անուան , և մի ըստ իրին ։ Ըստ անուան , բացականն 'ի կցականէն ածանցի , որպէս առաքինութիւնն յառաքինւոյ, և մեծութիւնն 'ի մեծէն ։ Ըստ իրին , կցականն 'ի բացականէն ածանցի , զի յառաքինութենէն ասի ոք առաքինի , և 'ի մեծութենէն մեծ · և ոչ թէ յառաքինւոյն առաքինութիւն , և 'ի մեծէն մեծութիւն ։

ԳԼՈՒԽ Ա.

Մակադրութիւնք։

Մակադրութիւնք կրկնակի նկատին. մի՝ բաղդատութեամբ առ ենթակայն յորում են կամ որում մակադրին. և միւս՝ յորժամ զէր ինչ կամ զինչ իրին 'ի դէմս ածեն։

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Մակադրութիւնք բաղդատութեամբ առ ենթակայն յորում են, կամ որում մակադրին։

Ամենայն գաղափար կամ ծանօթութիւն որ մակադրի ենթակայի իմիք, կամ է գոյացութիւն, և կամ պատահումն. և զի կրկին են երկուքանչիւր սոքա՝ հասարակ և մասնաւոր, միանգամայն լինին չորք. այսինքն հասարակ գոյացութիւն, և հասարակ պատահումն. մասնաւոր գոյացութիւն, և մասնաւոր պատահումն։

Ա. Հասարակ գոյացութիւնն է, որ մակադրի ենթակայի, բայց յենթակայում ոչ է բովանդակեալ, որպէս մարդ. զի թէպէտ մարդն լինի մակդիր Սոկրատայ, զի ասի Սոկրատէս է մարդ, բայց ոչ է բովանդակեալ 'ի նմա. զի Սոկրատէս ոչ է ամենայն մարդ, այլ ոմն 'ի մարդկանէ։

Բ. Մասնաւոր պատահումն է, որ յենթակայում է, բայց ոչ մակադրի ենթակայի.

որպէս ամն քերականութիւն է 'ի Սոկրատէս, այլ ոչ լինի մակդիր նմին, զի ոչ ասի Սոկրատէս է քերականութիւն:

Գ. Հասարակ պատահումն է, որ մակադրի ենթակայի, և յենթակայում է. որպէս գիտութիւն և առաքինութիւն յենթակայում է յանձին, և լինի մակդիր ենթակայի. զի ասի բնաբանութիւնն է գիտութիւն, խոհեմութիւնն է առաքինութիւն:

Դ. Մասնաւոր գոյացութիւնն, որ ոչ յենթակայում է, և ոչ մակադրի ենթակայի, որպէս ամն մարդ, կամ Սոկրատէս, և ամենայն եզական գոյացութիւնք:

Աստուստ յայտ է, թէ այլ է լինել ենթակայ կայանի, և այլ է լինել ենթակայ մակադրութեան. ահա Սոկրատէս է ենթակայ պատահմանց և ընդհանուր գոյացութեանց. բայց պատահմանց է ենթակայ կայանի, զի պատահմունք որ են 'ի Սոկրատէս ոչ մակադրին նմին. որպէս զօրութիւնն Սոկրատայ է 'ի Սոկրատէս. բայց ոչ ասի Սոկրատէս է զօրութիւն, այլ զօրաւոր. որ նշանակէ զգոյացութիւն որ ունի զզօրութիւն: Իսկ ընդհանուր գոյացութեանց է. ենթակայ մակադրութեան. զի գոյացութիւն, մարմին, կեցող, զգայուն, կենդանի, որ են 'ի Սոկրատէս իբր յենթակայում՝ մակադրին նմին. զի Սոկրատէս է գոյացութիւն, մարմին, և այլն:

Եւ այս պայմանք են իրաց որք լինին են-

թակայ մակադրութեանց. Առաջին, զի իցեն էակ զգալի. զի էակն բանի՝ այնու զի ոչ ենթակայանայ 'ի բնութեան իրաց, ոչ ևս կարէ ենթակայ լինել մակադրութեանց։ Վասն այսորիկ և վերացական գաղափարք իրաց, որպէս կենդանութիւն, մարդկութիւն, որովհետև ոչ ցուցանեն զիր ինչ ըստ ինքեան ենթակայացեալ, այլ միայն զէակս բանի, ոչ կարեն լինել ենթակայ մակադրութեանց։ Այնպէս և պատահական թանձրացեալք, որպէս սպիտակ, բոլորշի. այնու զի ոչ նշանակեն զիր ինչ բնական ենթակայացեալ յինքեան, այլ զկերպ և զհանգամանս ինչ ենթակայացեալ յայլում. վասն որոյ և չմարթին լինել ենթակայ մակադրութեանց։ Երկրորդ, զի իցեն էակ լրացեալ յինքեան. վասն այսորիկ զգալի մասունք որպէս գլուխ, ոտք, ձեռք. և իմանալի մասունք որպէս կենդանութիւն, բանականութիւն, ոչ կարեն լինել ենթակայ մակադրութեանց։

Կրկին է մակադրութիւնն, իրական, և մտածական կամ արհեստական, զոր ոմանք ենթացուցական և տարացուցական կոչեն։ Իրական ասի մակադրութիւնն, յորժամ ենթակայն նշանակիցէ զիրն ըստ որում է յինքեան. զոր օրինակ մարդն է կենդանի. Սոկրատէս է մարդ։

Մտածական կամ արհեստական ասի, յորժամ ենթակայն նշանակիցէ զիրն ըստ որպի-

սութեանն ընծայելոյ նմա 'ի մտաց, կամ յարհեստէ. որպէս մարդն է տեսակ. Սոկրատէս է անհատ, կամ ուղղական ։

Իրականն՝ միշտ է իրական, և ոչ երբէք լինի մտածական կամ արհեստական. և միշտ միօրինակ մակադրի տեսակին և անհատին. զոր օրինակ, մարդն է բանական. Սոկրատէս է բանական ։ Իսկ մտածականն կամ որ նոյն է արհեստականն, ոչ մակադրի միշտ միօրինակ. զոր օրինակ, մարդն է տեսակ, և ոչ ասի Սոկրատէս է տեսակ. Սոկրատէս է անհատ, այլ ոչ մարդն է անհատ ։

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Մակադրութիւնք յորժամ զէր ինչ կամ զէն իւրեն 'ի դէմս ածեն ։

Մակադրութիւնք յորժամ ցուցանիցեն զգաղափարս կամ զծանօթութիւնս որք միաւորեալ գտանին 'ի յօդուածոյ գաղափարս բնական իրաց, որպիսիք են գոյացութիւն, ձև, գոյն, և այլ պէսպէս զգալի և իմանալի հանգամանք, բաժանին 'ի տասն գերագոյն սեռս, որոց մինն է գոյացութիւն, և ինունքն պատահմունք. և են սոքին. գոյացութիւն, որակ, քանակ, առ ինչ, ուր, երբ, առնել, կրել, կալ, ունիլ ։ Օրինակ իմն, մարդ՝ է գոյացութիւն. երկկանգուն՝ քանակ. սպիտակ՝ որակ. հայր՝ առ ինչ. աստ՝ ուր. այսօր՝

երբ. ընկողմնեալ՝ կալ. գտանել՝ առնել. գտանիլ՝ կրել. կօշկաւոր՝ ունել։

ԳԼՈՒԽ Բ.

Գոյացութիւն և Յատկութիւնք նորա։

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Գոյացութիւն։

Գոյացութիւնն է էակ ըստ ինքեան ենթակայացեալ. այսինքն որ ոչ ունի զգոյլ յայլում, այլ 'ի նմա են պատահմունք։

Կրկին է գոյացութիւն՝ նախկին և երկրորդ։ Նախկին գոյացութիւն է՝ որ ոչ ենթակայի ումեք մակադրի, և ոչ յենթակայում ումեք է. այլ է ենթակայացեալ յինքեան. որպէս ոմն մարդ, ոմն ձի։

Երկրորդ գոյացութիւնք ասին տեսակք նախկին գոյացութեանց, և տեսակացն սեռք, որք ենթակայանան 'ի նախկին գոյացութիւնս, և նոյնանան ընդ նմա. որպէս մարդ և կենդանի։

Նախկին գոյացութիւնք՝ որք են մասնաւորք կամ անհատք, են իսկական գոյացութիւն. զի ոչ միայն ենթակայանան յինքեանս՝ այլ և ենթակայ մակադրութեան լինին երկրորդ գոյացութեանց, և ենթակայ կայանի ամենայն պատահմանց։

Բանզի ամենայն երկրորդ գոյացութիւնք որք են ընդհանուրք, մակադրին նախկին գոյացութեանց ըստ օրինակի անձանց. զոր օրինակ Սոկրատէս է մարդ, կենդանի, զգայուն, մարմին, գոյացութիւն. այսինքն է՝ Սոկրատէս է ունող մարդկութեան, կենդանութեան, զգայութեան, մարմնոյ կամ տարածութեան, և գոյացութեան: Նոյնպէս և ամենայն պատահմունք են ՚ի նոսա, սպիտակութիւն, զօրութիւն, գիտութիւն, նմանութիւն:

Եւ քանզի երկրորդ գոյացութիւնք ՚ի նախկին գոյացութեանց ունին զլինելութիւն իւրեանց, և ՚ի նոսին ենթակայանան, ապա մտածեալ առանց մասնաւորաց կամ անհատից՝ ոչ երբէք ունին զճշմարիտ գոյութիւն. ուստի ասէր Անտիսթենէս. մարդ տեսանեմ՝ մարդկութիւն ոչ. ձի տեսանեմ՝ ձիութիւն ոչ:

Եւ զի տեսակն յանհատից գոյանայ, ապա ՚ի բառնիլ անհատից՝ բառնի և տեսակն. և ՚ի բառնիլ տեսակաց՝ բառնի և սեռ. քանզի որպէս տեսակ յանհատից, նոյնպէս և սեռ ՚ի տեսակաց զլինելութիւն ունի. ապա մասնաւորք կամ անհատք են նախկին և իսկական գոյացութիւն, յորս երևին երկրորդ գոյացութիւնք:

Արդ՝ ՚ի լինել սեռից և տեսակաց՝ հարկաւոր է գոլ անհատից. քանզի սեռք և տե-

տակք յանհատից ունին զգոյութիւն իւր-եանց. իսկ անհատից լինելոյ՝ ոչ է հարկ գոլ սեռի և տեսակի. քանզի 'ի լինել միոյ անհատի ՚ի նմա սեռ կամ տեսակ ասացի, որպիսի է արեգակն և լուսին և աշխարհ ։

Ի մէջ երկրորդ գոյացութեանց՝ տեսակն քան զսեռն առաւել գոյացութիւն է, զի նմանակից է անհատին. քանզի ոչ այլ ինչ է տեսակն, բայց եթէ նոյն իսկ անհատն կամ մասնաւոր գոյացութիւն ներգործութեամբ մտաց արարեալ ընդհանուր ։

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Յատկութիւնք գոյացութեան ։

Առաջին յատկութիւն գոյացութեան է ոչ ընդունել զյաւէտն և զնուազն. զի թէպէտ առաջին գոյացութիւնն է յաւէտ գոյացութիւն քան զերկրորդն, և յերկրորդսն՝ տեսակն քան զսեռն. բայց քանզի իւրաքանչիւր գոյացութիւն է այն՝ որ ինչ են, սմին իրի ոչ ասի յաւէտ և նուազ թէ՛ նկատմամբ ինքեան և թէ այլոյ. որպէս այս գոյացութիւն մարդ՝ ոչ է առաւել մարդ քան զոր յառաջագոյն էր ինքն, և ոչ ևս առաւել մարդ քան զայլ մարդ ։

Բ. Ոչ ունել զներհականս. զի ուր ոչ է յաւէտ և նուազ, անդ և ներհակութիւն չիք ։ Եւ թէպէտ հուր և ջուր ներհականք

երեքին, այլ ոչ են. զի ոչ ըստ գոյացութեան ներհականք ինչ են նոքին, այլ ըստ որակութեան. այսինքն ըստ ցրտութեան և ջերմութեան, ըստ խոնաւութեան և չորութեան:

Գ. Մի և նոյն թուով զներհականս ընդունել. որպէս նոյն մարդ լինի առողջ և հիւանդ. և այս յատկութիւն նախկին գոյացութեանց է 'ի դէպ, զի երկրորդ գոյացութիւնքն միշտ են 'ի նոյնութեան:

Դ. Ոչ լինել յենթակայում, և այսու արոշին 'ի պատահմանց, որ ոչ կարօտին յենուլ յենթակայս: Նաև թէպէտ երկրորդ գոյացութիւնք թուին լինել յառաջին գոյացութիւնս իբրև յենթակայում, բայց ոչ են տիրապէս. զի մարդ կենդանի, զգայուն, և այլք, թէպէտ են 'ի Սոկրատէս, այլ ոչ են իբրև այլք յայլում ենթակայացեալք, այլ նոյնացեալք ընդ նմա:

Իսկ պատահմունք որ յենթակայում են, և մակադրին ումեք, ոչ նոյնանան ընդ նմա. զի միայն զանունն տան նմա և ոչ զբանն. որպէս նոյն քերականութիւն է 'ի Սոկրատէս, բայց ոչ մակադրի նմին՝ այլ յարանուանեալն նորին, թէ Սոկրատէս է քերական:

Իսկ երկրորդ գոյացութիւնքն զանունն և զբան տան ենթակայից իւրեանց, որպէս մարդն է կենդանի բանական:

ԳԼՈՒԽ Գ.

Քանակութիւն և Յատկութիւնք նորա։

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Քանակ։

Քանակն է պատահումն որով տարածին և չափին զգալի իրք. և է կրկին՝ շարունակ և տարորոշ։

Շարունակ է տարածութիւն, տեղի, ժամանակ, և շարժումն. տարորոշ է թիւ և բան։

Ա. Տարածութիւն ասի այն տեսակ չափելի քանակութեան, որոյ մասունքն յօդեալք են ընդ միմեանս 'ի մի զանգուած։ Որ եթէ ընդ երկայն միայն իցէ, կոչի գիծ. եթէ յերկայն և 'ի լայն՝ ասի մակերևոյթ. իսկ եթէ յերկայն և 'ի լայն և 'ի խոր՝ մարմին. որպիսի է երկիր, մարմին կենդանեաց, երկաթ, վէմ։

Տարբերի սա յիրական մարմնոյ որ գոյացութիւն է, և է ընդունակ ջերմութեան և ցրտութեան, չորութեան և խոնաւութեան, ապականութեան և նորոգութեան, և պէսպէս փոփոխութեան. իսկ այս է սոսկ չափելի տարածութիւն յերկայն և 'ի լայն և 'ի խոր, ծագեալ 'ի հոսմանէ մակերևութի։

Տարբեր են և գաղափարք երկուքանչիւրոց. զի գաղափարն զոր ունիմք զիրական մարմնոյ, է եկամուտ, նիւթական, և ենթա-

կայացեալ. իսկ սորայս է տարածական, աննիւթ, և վերացական. զի իրք չիք գիծ կամ երկայնութիւն ինչ առանց լայնութեան, և ոչ մակերևոյթ կամ լայնութիւն ինչ առանց խորութեան: Զի գիծ ինչ որչափ և փոքր իցէ, ունի զլայնութիւն և զխորութիւն:

Այս զանազանին ամենայն իրօք մարմինն իրական՝ որ գոյացութիւն է, և մարմինն քանակական՝ որ է պատահումն:

Բ. Տեղին է մակերևոյթ պարունակող մարմնոյ, որպէս մակերևոյթն խոռոփեաց սափորի՝ նկատմամբ ջրոյ զոր պարունակէ. և մակերևոյթն օդոյ որ շրջապատէ զսափորն:

Գ. Ժամանակն է հոսումն յաջորդական վայրկենից, որով չափին տևողութիւնք ըզգալի և փոփոխական իրաց. և է եռամասն, ներկայ, անցեալ և ապառնի. ուր անցեալն և ապառնին յօդին ընդ իրեարս ներկայիւ, որ է կէտ ինչ անբաժանելի 'ի մէջ երկոցունց:

Դ. Շարժումն է դիմողութիւն 'ի միոյ որպիսութենէ յայլ. որպիսի են միջոցք կամ աստիճանք փոփոխութեան ջրոյ 'ի ցրտութենէ 'ի ջերմութիւն, և փայտի 'ի հուր, և հրոյ 'ի մոխիր: Քանզի եղանութիւն ացա ոչ կարէ լինել միանգամայն, այլ բազմամասնեայ միջոցաւ. վասն զի ջուրն ցուրտ եդեալ 'ի հուր՝ սկսանի տակաւ առ տակաւ եղկանալ, և աստիճան քան զաստիճան սաստկացեալ՝ հասանի 'ի ծայրագոյն ջերմութիւն.

և փայտն ոչ նոյնկերպայն հրանայ, այլ անցա-նելով 'ի զանազան աստիճանս ջերմութեան։

Այս եղանութիւն է որ կոչի շարժումն. և է չափ փոփոխութեան իրի 'ի միոյ որպի-սութենէ յայլ։

Դարձեալ՝ բաժանի քանակն 'ի դիրս ու-նողս, և յոչ ունողս. դիրս ունողք են տա-րածութիւն և տեղի, զի են մասամբք իւ-րեանց զետեղեալ ուրեք. և ունին զվեցեքին տարբերութիւնս կողմանց, այսինքն 'ի վեր, 'ի վայր, յաջ, և յահեակ, յետ կոյս և յա-ռաջ կոյս։

Դիրս ոչ ունողք են, ժամանակ, շարժու-մըն, թիւ, և բան. զի այսոքիկ ոչ ունին ըն-կայուն մասունս, և ոչ զետեղեալ են ուրեք. այլ միայն դաս ունին. զի 'ի սոսա է որ ա-ռաջին է, և է որ միջին, և է որ վերջին։

Ի ժամանակն՝ անցեալն է առաջին. ներ-կայն միջին. ապառնին վերջին։

Ի շարժումն՝ յեղանութենէ առ եղեալ գոյն հարկաւ պիտին աստիճանք առաջինք, միջինք և վերջինք. որպէս 'ի տեղափոխիլ անդ 'ի տեղւոջէ 'ի տեղի՝ ամենայն քայլափոխք են միմեանց առաջին և վերջին։

Ի թիւն՝ մին առաջին է քան զերկուս. և 'ի բանն՝ միմեանց նախկին և վերջին են
1 2 3
վանկք, որպէս Սոկ րա տէս։

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Յատկութիւնք քանակութեան։

Առաջին յատկութիւնն է ոչ ընդունել զյաւէտն և զնուազն. զի թէպէտ քանակութիւն ինչ աճի և նուազի, լինի մեծ կամ փոքր, սակայն ոչ վասն այնորիկ մին քան ըզմիւսն ասի յաւէտ և նուազ 'ի քանակութեան. զի և փոքրիկ ինչ քանակութիւն միապէս կատարեալ է 'ի քանակութեան իբրև զմեծն։

Բ. Ոչ ընդունել զներհականս. զի ուր յաւէտ և նուազ ոչ է, անդ և ոչ ներհակութիւն. և թէպէտ մեծ և փոքր, շատ և սակաւ երևին լինել ներհականս, բայց ոչ են. զի ներհականն ինքն առ ինքն ներհակի և ոչ եթէ առ այլ. իսկ մեծ առ փիղ ասի, և փոքր առ մրջիւն. և ոչ եթէ մեծ և փոքր զմիոյ։

Եւ որովհետև մեծ և փոքր, և շատ և սակաւ առ միմեանս բաղդատութեամբ ասին և ոչ ըստ ինքեանց. ապա ոչ են տիրապէս քանակ՝ այլ առինչ. և ըստ այնմ ևս ոչ են ներհականք. զի յառնչութիւնս ոչ գտանի ներհակութիւն՝ այլ հակադրութիւն, որով կացուցանեն զմիմեանս, և ոչ եթէ եղծանեն։

Գ. Հաւասար և անհաւասար, զոյգ և անզոյգ ըստ քանակին ասին. զի նորա է ըզ-

չափելիսն կացուցանել հաւասար կամ՝ անհաւասար, և գլթուելիսն զոյգ և անզոյգ։

ԳԼՈՒԽ Դ.

Առինչ և Յատկութիւնք նորա։

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Առինչ։

Առինչք են, որոց գոյն վերաբերի առ այլս. կամ որպէս ասէ Արիստոտէլ, ինքեանք որ ինչ ենն՝ այլոց գոլ ասին. որպէս մեծ և փոքր, կրկնապատիկ և կէս. զի մեծն ոչ ըստ ինքեան՝ այլ բաղդատութեամբ առ այլ ասի մեծ. և կրկնապատիկն՝ նկատմամբ առ այլ ասի կրկնապատիկ։

Առնչին ոմն է պարզ և ոմն բաղադրեալ։ Պարզ ասի առնչութիւնն, յորժամ առնչակիցք արտաքոյ են միմեանց. որպէս հայր և որդի, տէր և ծառայ։ Իսկ բաղադրեալ, յորժամ առնչացեալն փակի յառնչակիցն. որպէս կրկնապատիկն և կէս, մասն և բոլոր։

Դարձեալ զանազանին առնչութիւնք ըստ երից այսոցիկ նկատմանց. ըստ համաձայնութեան, ըստ առնելոյ և կրելոյ, ըստ չափոյ և չափելւոյ։

Առնչութիւնն է ըստ չափոյ և չափելւոյ, յորժամ մի ինչ հայի առ այլ իբրև ՚ի չափ

իւրոյ կատարելութեան . որպէս զգայունն հայի 'ի զգալին , մակացութիւնն 'ի մակացելին , և ամենայն գիտութիւն առ գիտելի առարկայն :

Առնչութիւնն է ըստ առնելոյ և կրելոյ, յորժամ մի ինչ հայի առ այլ իբրև 'ի պատճառ կամ 'ի գործ . որպէս որդի հայի առ հայր , և արարածք առ արարիչն , և ամենայն գործ 'ի պատճառ իւր :

Առնչութիւնն է ըստ համաձայնութեան և անհամաձայնութեան , յորժամ մի ինչ հայի առ այլ ըստ համաձայնութեան և անհամաձայնութեան . որպէս ծառ սաղարթախիտ հայի առ այլ ծառ սաղարթախիտ իբրև 'ի համաձայն , և 'ի տերևաթափ իբրև յանհամաձայն :

Ամենայն համաձայնութիւն մտածի մանաւանդ ըստ երից այսոցիկ մակադրութեանց . ըստ գոյացութեան , ըստ քանակութեան , և ըստ որակութեան :

Համաձայնութիւնն ըստ գոյացութեան՝ ասի նոյնութիւն . որպէս երկու մարդիկ ունին զնոյն բնութիւն մարդկային . որոյ ներհակն է պէսպիսութիւն : Համաձայնութիւնն ըստ քանակութեան՝ կոչի հաւասարութիւն . որպէս երկու իրք իցեն համաչափք միմեանց . որոյ ներհակն է անհաւասարութիւն : Համաձայնութիւնն ըստ որակութեան՝ անուանի նմանութիւն . որպէս

երկու. ազդուածք իցեն միօրինակ սեռաւք . ո-
րոց ներհակն է աննմանութիւն ։

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Յատկութիւնք առնչիցն ։

Նախ զինն է ոչ ընդունել զյաւելումն և զնու-
նուազ . որպէս հայր և որդի, կրկնապատիկ
և կէս ։ Այլ թէպէտ նման աննման առնչու-
թիւնքս յաւելուն և նուազ ունին . որպէս այն
սպիտակ յաւելու կամ նուազ նման ասի ու-
րումն սպիտակի . բայց այս ոչ է հասարակ
ամենայն առնչից, այլ այնոցիկ որ յորակէն
լինին, կամ ՚ի մակադրութեանց որք ընդու-
նին զներհակութիւն ։

Բ. Ոչ ընդունել զներհակութիւն . զի
ներհականք բառնան զմիմեանս, իսկ առնչք
՚ի միջ բերեն զնոսին ։

Գ. Հակադարձիլ հոլովիւք . զի ասի հայր
որդւոյ է հայր, և որդի հօր է որդի . կրկնա-
պատիկ քան զկէսն է ; և կէս կրկնապատկին
է . զգացումն զգալւոյն է, և զգալին զգաց-
մամբն է զգալի ։

Դ. Համանգամայն գոլ բնութեամբ . որ-
պէս տէր և ծառայ, հայր և որդի, կրկնա-
պատիկ և կէս ։

Բայց երևի թէ ոչ ամենայն առնչք հա-
մանգամայն են բնութեամբ . քանզի մակա-
ցելին նախկին թուի լինել քան զմակացու-

թիւնն, և զգալին քան զզգացումն։ Զի յա-ռաջագոյն են իրք, իսկ զմակացութիւն նո-ցա յետոյ ստանամք. և յառաջագոյն են ըզ-գալիք, իսկ մեք յետոյ առնումք զզգացումն։ Այն զի ՚ի բառնալ զգալւոյ՝ բառնի ընդ նմա և զգացումն, այլ ՚ի բառնալ զգացման՝ գոյ զգալին. որպէս մարմին ջերմ, քաղցր, դառն։

Եւ դարձեալ՝ զգացումն համանգամայն է ընդ կենդանւոյ, իսկ զգալին նախկին քան զզգացումն է. քանզի հուր, և ջուր, և այլք յորոց կենդանին է բաղկացեալ, յառաջա-գոյն են քան զկենդանին և քան զզգացումն. ապա երևի թէ ոչ ամենայն առնչականք՝ հա-մանգամայն են բնութեամբ։

Բայց ՚ի միտ առնուլ արժան է, զի հուր և ջուր և այլք ոչ են ներգործութեամբ ըզ-գալի յառաջ քան զզգացումն կենդանւոյն՝ այլ զօրութեամբ միայն. քանզի զգացմամբ լինին ներգործութեամբ զգալի. զի մինչև է զգացումն, հուր և ջուր ոչ են զգալի, այլ իր միայն։

Ապա առնչութիւնքս զգալի և զգացու-մըն, մակացելի և մակացութիւնն են հա-մանգամայն բնութեամբ։

Ե. Լինել համանգամայն ճանաչմամբ. և այս՝ է հետևութիւն վերնոյն. քանզի չէ հնար ճանաչել զմի յառնչակցաց առանց իւ-րոյ առնչակցին. որովհետև առնչութիւնն

կայանայ 'ի կարգ և 'ի հայեցուած երկուց ծայրից առ միմեանս. զի մարդ որ ոչ ճանաչէ լինել հայր կամ տէր՝ առանց որդւոյ կամ ծառայի, այլ մարդ միայն ։

Այս առնչակիցք որպէս միանգամայն են բնութեամբ, նոյնպէս և համանգամայն ճանաչմամբ ։

ԳԼՈՒԽ Ե.

Որակութիւն և Տեսակք նորա և Յատկութիւնք.

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Որակութիւն ։

Որակութիւն կոչի այն՝ յորմէ որակքն ասին. որպէս 'ի սպիտակութենէ սպիտակն, և յառաքինութենէ առաքինին ։ Որակութեանց ոմանք բնական են և ոմանք ստացական ։ Բնական, որպէս խոհեմութիւն, հեզութիւն, ուժեղութիւն, գեղեցկութիւն, տգեղութիւն ։

Ստացական են պէսպէս գիտութիւնք, ազգի ազգի հիւանդութիւնք, զանազան արհեստք, և այն ամենայն զորս յընթացս կենաց հետզհետէ 'ի ձեռս բերեմք ։

Բայց է՝ զի նոյն որակութիւն կարէ լինել 'ի ծնէ՝ և կոչիլ բնական, և լինել 'ի կրթութենէ՝ և ասիլ ստացական ։ Որպէս բը-

նական առ 'ի արագութիւնն, եթէ յառաջ գայցէ 'ի թեթեւութենէ մարմնոյ. ստացական է, եթէ իցէ 'ի կրթութենէ։

Չորք տեսակք են որակութեան. առաջին; ունակութիւն և տրամադրութիւն. երկրորդ, կարողութիւն և անկարութիւն. երրորդ, կրական որակութիւնք և կիրք. չորրորդ, տեսակ և ձև։

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Ունակութիւն և Տրամադրութիւն.

Որակութեանց անտի որք տևողագոյն են և դժուարաշարժ, Ունակութիւն կոչին. որպէս ողջախոհութիւն և բղջախոհութիւն, կարեկցութիւն և անգթութիւն. իսկ որ դիւրաշարժ են և արագափոխ, Տրամադրութիւն անուանին, որպէս առողջութիւն և հիւանդութիւն, ջերմութիւն և ցրտութիւն։

Բայց է՝ զի տրամադրութիւն ինչ փոխի յունակութիւն, զոր օրինակ եթէ հիւանդութիւն ինչ զբազում ժամանակս դժուարաշարժ լինիցի։

Եւ քանզի սակաւուք տարբերին 'ի միմեանց ունակութիւն և տրամադրութիւն, վասն այսորիկ մի տեսակ համարին. զի զանազանին 'ի միմեանց ըստ առաւելութեան և ըստ նուազութեան. զի ունակութիւնն է առաւել, և տրամադրութիւնն նուազ։

Զի թէպէտ ունակութիւն յառաջ գայ ՚ի տրամադրութենէ, բայց զտրամադրութիւնն ընդ իւրև փակէ. որպէս երկուն յառաջ գայ ՚ի միոյ, բայց զայն յինքեան պարուրէ:

Ի սոցանէ ոմանք են հոգեկան, որպէս գիտութիւն և առաքինութիւն. և ոմանք մարմնական, որպէս հիւանդութիւն և առողջութիւն. ոմանք էական, որպէս գեղեցկութիւն և տգեղութիւն, սպիտակութիւն և սևութիւն. և ոմանք գործնական, որպէս արդարութիւն և անիրաւութիւն, բարերարութիւն և զրկողութիւն:

ՅՕԴՈՒԱԾ Գ.

Կարողութիւն և Անկարութիւն:

Կարողութիւնն ոչ ասի նկատմամբ այնոցիկ՝ որ կրթութեամբ ստացան զկարողութիւն առնել ինչ դիւրաւ, որպէս գօտեմարտիլ և յաղթել, այլ որք բնական ուժով յաղթող հանդիսացան:

Եւ անկարութիւն ոչ ասի զնոցանէ՝ որք ՚ի հիւանդութենէ իմեքէ ստացան զտկարութիւն, այլ որք ՚ի բնութենէ են նիհար և անզօր, և ոչ կարեն առնել ինչ դիւրաւ:

Եւ որովհետև երկոքին սոքա կարողութիւն և անկարութիւն միապէս հային առնել ինչ դիւրաւ կամ ոչ դիւրաւ, մի ան-

ասել որակութեան Թուեցան. որպէս է մըրցականն և ընԹացական, և հեղգն և Թանձրամարմին, և որ ինչ միանգամ ըստ բնական կարողութեան և անկարութեան ասի։

ՅՕԴՈՒԱԾ Դ.

Կրական որակութիւնք և կիրք։

Կրական որակութիւնք ասին՝ քաղցրութիւն և դառնութիւն, ջերմութիւն և ցրտութիւն, չորութիւն և գիջութիւն, սպիտակութիւն և սևութիւն, համ և հոտ. ոչ զի կիրք ինչ են իրաց յորս երևին լինել, այլ զի կարող են այլայլել և ախտացուցանել զզգայարանս, վասն այսորիկ ասին Կրական որակութիւնք. և մինչ իրօք ախտացուցանեն և այլայլեն, կոչին Կիրք։ Զոր օրինակ քաղցրութիւն 'ի մեղըն և դառնութիւն յօշինդրըն՝ այնու զի կարող գոն ախտացուցանել զճաշակելիս, ասին կրական որակութիւնք. և մինչ ներգործաբար ախտացուցանեն քաղցրութեամբ կամ դառնութեամբ, կոչին կիրք. ըստ այսմ են և այլ բնական որակութիւնք իրաց, որովք իբրև բնական յատկութեամբք զանազանին և որոշին յայլոց։ Ուստի ջերմութիւն 'ի հուրն է բնական որակութիւն. զի Թէ ոչ է ջերմ՝ ոչ է հուր. իսկ 'ի ջուրն պատահական և յետամուտ։ [illegible] ըստ այնմ զի կարող է հուրն ջերմութեամբ

զգածել զգայարանս, տալ բնական որակութիւն. և ըստ այնմ զի ներգործաբար ըզգածէ, կոչի կիրք։

Դարձեալ կիրք և կրական որակութիւնք զանազանին 'ի միմեանց ըստ ոմանց հեղինակաց ըստ վաղանցիկ գոլոյ և ըստ յարատևութեան. իբր զի որակութիւնք յորս տևանին զգալի այլայլութիւնք եթէ փութանակի անցանեն որպէս դեղնութիւնն որ յերկիւղէ, և շառագնութիւնն որ յամօթոյ, ասին կիրք։ Բայց եթէ տևեն ընդ երկար, որպէս դեղնութիւնն որ 'ի մելամաղձ խառնուածոյ, և շառագնութիւնն որ յարիւնոյ, ասին կրական որակութիւնք։

Կրական որակութիւնք ասին նաև սևութիւն և սպիտակութիւն, և այլ գոյնք. ոչ զի կիրս իմն առնեն զգայարանաց, զի տեսանելիք ոչ կրեն ինչ, այլ զի ինքեանք լինին 'ի կրից։

Աստուստ յայտ է եթէ կրկին են կրական որակութիւնք. զի են որք ախտացուցանեն զզգայարանս, որպէս ջերմութիւն և ցրտութիւն և այլք. և են որք յախտից եղանին, որպէս սպիտակութիւն և սևութիւն և այլք։

Իսկ եթէ գոյնք յախտից եղանին՝ յայտ է, զի 'ի սուղ ժամանակի երկիւղ և պատկառանք այլայլեն զոք. վասն զի երկուցեալ ումեք հարկանի 'ի դեղնութիւն, և պատկառեալ լինի շառագոյն։ Նոյն զի այսպիսի

գոյնք են յախտից եղեալ, այլ ոչ ինչ առա-գելու զի և բնական գոյնք յախտից եղանին-ցին ։ Նըւ զայսոսիկ հաւաստաբանէ մեզ Դաւիթ Անյաղթ յասելն ։

« Քանզի որպէս կամին իմաստասէրք բը-կիզքն գոլ կենդանեաց զախտսն, և 'ի նմանէ զերակացն տրոհումն, որպէս զի 'ի տուր և առ արեանն ուղղեալ ամենայն մարմինն, ըստ որպիսութեան սորին առ մակերևու-թիւնն ցնդումն լինել արեանն ։

» Արդ՝ վասն զի է իշխանական իմն և ա-ռաջնորդ ամենայն բնութեան սիրտն, յոր-ժամ պատահեաց ումեք երկնչել, սարսեալ ամենայն բնութիւնն փախնու առ իշխանա-կանն, զորէն բազմութեան 'ի քաղաքին՝ յոր-ժամ զպատերազմականաց լուիցեն զհամ-բաւ՝ ոչ ուրեք լինել ապաւինել, բայց առ իշխանն և առաջնորդ իւրեանց ․ այսպէս և բնութիւնն ամփոփեալ յինքն՝ փախնու առ իշխանականն՝ անապատ յարենէ զմակերևու-թիւնն թողեալ, վասն որոյ և դեղնութիւն լինի յախտէս յայսմանէ ․ քանզի ոչ այլ ինչ է դեղնութիւն՝ բայց արեան պակասութիւն ։

» Իսկ 'ի պատկառելոյն լինի շառագոյն ․ այս պիտակաբար ․ քանզի պատկառոտքն՝ ծածկել զինքեանս և քողարկել զի մի տես-ցուք՝ յօժարին ։ Արդ ամաչելն լինի ըստ իշ-խանին 'ի մեզ ․ զի առ ինքն ամփոփեալ իշ-խանական զիւրեաւսն 'ի բաց սփռէ, որպէս

առագաստ իմն և կրճիմն ընդ ինքն և յորոց պատկառելին զարիւնն ձգեալ։ Իսկ հասարակ աբիւնն 'ի սրտէն 'ի մակերևութիւնն, առաւագատաձև տարածական 'ի կենդանւոյն, և այսուիկ շառագունութիւնն 'ի պատկառասն լինին. քանզի ոչ այլ ինչ է շառագունութիւն, բայց արեան առաւելութիւն առ մակերևութիւն։

„Զի թէ 'ի խառնման տօթոյ և կամ յառաւել ցրտութենէ սևութիւն լինի, ընդդիմակ սորա զգաստակութիւն հնարաւոր է առնել՝ իբր թէ 'ի բարեխառնութենէ օդոց 'ի հովասուն և 'ի փափկասուն լինելոյ։

„Երդ՝ որոց միանգամ ըստ բնութեան հետևանայ ումեմն սպիտակութիւն և սևութիւն՝ որպէս փորոյ կատաղաւոր, ասելի է զի ոչ իբր գոյացութիւն 'ի սոսա այսպիսիքս պատահեցին գոլ գոյնք, այլ ըստ տարերցն խառնմանց իբր յախտէ իմն եղեալք„[1]։

Իսկ կիրքս այսոքիկ եթէ բնականք իցեն և եթէ յախտից եղեալք՝ մինչ բազմաժամեայ և դժուարաշարժ գտանիցին, ընդունակքն նոցին յարանուանին 'ի նոցանէ. բայց եթէ սակաւատև և դժուարաշարժ իցեն, ընդունակքն նոցին ոչ յարանուանին. որպէս ոչ ասի դեղին որ յերկիւղէ դեղնանայ, և ոչ շառագոյն՝ որ 'ի պատկառանաց շառագունի, և ոչ բարկացող՝ որ ըստ դիպաց ինչ բար-

1 Ի մեկն. ստորոգ. Գլուխ. Է։

կանայ. քանզի 'ի դուզնաքեայ ժամանակի փոփոխին այս կերք, և չունին յարատևութիւն։

Նաև զի գոյնք և այլ որակք որպէս ջերմութիւն և ցրտութիւն, հոտք, համք, ոչ են այնպէս 'ի մարմինս որպէս թուին, և ոչ ունին զնմանութիւն ինչ ընդ հանգամանս մարմնոց յորոց տպաւորին կամ ազդին. այլ միայն զգածմունք ինչ են հոգւոյն և կերք։

Կրական որակութիւնք և կերք մի տեսակ որակութեան ասացաւ, զի ոչ զանազանին 'ի միմեանց, բայց եթէ ըստ զօրութեան և ըստ ներգործութեան։

ՅՕԴՈՒԱԾ Ե.

Ձև և կերպ։

Ձև և կերպ ծագին 'ի պէսպէս տրամադրութենէ մասանց մարմնոյ. և զի դոյզն տարբերութեամբ զանազանին 'ի միմեանց, մի տեսակ որակութեան ասացան։ Ուստի ասէ Դաւիթ Անյաղթ. «Սովորեցաք զանազանել՝ ասելով զձևն 'ի վերայ անշնչիցն, իսկ զկերպն 'ի վերայ կենդանեաց»։

Քանզի եթէ ճշդիւ կամիցիմք խօսել, ասեմք՝ ձև ծառոյ, ձև նաւու. կերպ մարդոյ, կերպ առիւծոյ. սակայն բազում անգամ 'ի նոյն միտս անխտիր վարին երկոքին ձայնքս. զի երկոքին ևս միօրինակ ցուցանեն զտրամադրութիւն մասանց քանակութեան։

ՅՕԴՈՒԱԾ Զ.

Յատկութիւնք որակութեան:

Առաջին յատկութիւն որակութեան է ընդունել զներհականս. որպէս արդարութիւն և անիրաւութիւն. ջերմութիւն և ցրտութիւն. առողջութիւն և հիւանդութիւն. սպիտակութիւն և սևութիւն:

Բայց ոչ ամենայն որակութեան գոյ ներհական, զի կարմիր և դեղին ոչ ունին ներհականս. նոյնպէս և ոչ որ 'ի քանակէն լինին որակք, զի եռանկիւն և քառանկիւն ոչ են ներհականք:

Բ. Ընդունել զյաւէտն և զնուազ. զի կարէ լինել սպիտակ յաւէտ 'ի միում քան յայլում. և հիւանդութիւն նուազ ունել այլում քան զայլ: Եւ որպէս այլ բաղդատաբ այլում, նոյնպէս և առ ինքն մարթի բաղդատել. զի որ սպիտակն է՝ կարէ սպիտակագոյն ևս լինել: Զի որակութիւնք կարեն սաստկանալ և թուլանալ. որպէս դոյզն մի խօթութիւն զայրանայ և լինի սաստիկ, և սաստիկ խօթութիւն նուազի. սոյնպէս ջերմութիւն և ցրտութիւն, խոնաւութիւն և չորութիւն սաստկանան և նուազին յինքեանս:

Բայց ձևք ոչ կարեն զյաւէտն և զնուազ ընդունել. զի եռանկիւնի և քառանկիւնի, եթէ ընդունակք են սահմանի եռանկիւնւոյ և քառանկիւնւոյ՝ ասին այնպիսի. և եթէ

ոչ են ընդունակք ; ոչ երբէք ասին · զի ոչ ամն քան զամն ասի գոլ եռանկիւնի · զի որ ոչ ընդունի զքան եռանկիւնւոյ՝ ոչ է եռանկիւնի ։

Գ․ Օրինման և աննման ասին․ և այս յատկութիւն ուրոյն է որակութեան, զի զամենայն տեսակաց որակութեան ասին ։

ԳԼՈՒԽ Զ․

Առնելութիւն և Յատկութիւնք նորա ։

ՅՕԴՈՒԱԾ Ա․

Առնել ։

Առնել ասի՝ յորժամ պատճառն ներգործէ զգործ ինչ ։ Ի գործն երեք ինչ զանազանին․ նախ՝ ելք գործոյն յարարչական պատճառէ, որ ասի առնել․ երկրորդ՝ ընդունելութիւն գործոյն յենթակայում, որ ասի կրել ։ Իսկ եղանութիւնն ասի շարժումն․ որպէս ջերմացուցանելն հրոյ զջուր, է առնել․ ջերմանալն ջրոյ ՚ի հրոյն, է կրել․ իսկ եղանութիւնն ուղեկան որով կացուցանի ջերմ, է շարժումն ։

Առնելն կրկին է՝ ազդել և անազդել ։ Ազդել ասի՝ յորժամ արարքն արարողին անցանէ ՚ի կրողն․ և կրողն կրելով զայն այլայլի յինքեան, որպիսի է շինել, քակել, կիզուլ, աղոցել ։

Իսկ անազդել ասի՝ յորժամ արարք արատողին անցանէ 'ի կրողն . բայց կրողն ոչ այլայլի այնու , որպիսի տեսանել զոք , ճանաչել , իմանալ ։ Զի 'ի տեսանելն ուրուք զոք՝ թէպէտ տեսեալն յինքն ընդունի զտեսութիւն տեսանողին , և որպէս թէ կրէ զայն , բայց քանզի ոչ ինչ իրական ազդումն արտաքուստ յինքն առնու , վասն որոյ ոչ այլայլի որպէս չլինեցեալն ։ Ի սոյն միտս ազդելն՝ ածել ասացաւ յառաջնոյ , որպէս և անազդելն՝ անածել ։

Դարձեալ՝ առնելոյն ոմն է արտազեղ ; և ոմն անարտազեղ ։ Արտազեղ ասի այն՝ որոյ արարքն ելանեն յիւրմէ առ այլ՝ այսինքն առ կրողն , եթէ իցէ ազդել և եթէ անազդել . որպէս շինելն զեղանի առ շինելին , և տեսանելն առ տեսանելին ։ Իսկ անարտազեղ ասի այն՝ որոյ արարքն յինքն միայ , և ոչ ինչ դնէ արտաքոյ . որպէս նստիլ , կանգնիլ , ելանել , որոց նոյն է արարողն և արարեալն , զոր քերականք զանարտազեղն չէզոքական կոչեն կամ ընդմիջական , որպէս և զարտազեղն՝ ներգործական ։

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Յատկութիւնք առնելութեան ։

Առաջինն է ընդունել զներհակութիւն , զի ջեռուցանելն ներհակ է ցրտացուցանելոյն ։

Բ. Ընդունել զյաւէտն և զնուազ. զի ջեռուցանելն և ընթանալն յաւէտ կամ նո-ւազ առի ։

ԳԼՈՒԽ Է.

Կրելութիւն և Յատկութիւնք նորա ։

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Կրել։

Կրել է առի՝ յորժամ ենթակայն ներգոր-ծութե ընդունի զինչ 'ի պատճառէն ։ Կրելն կրկին է . ոմն ներքին , որպէս ուրախանալ, ագալ. և ոմն արտաքին, որպէս ցնծալ, կոծել ։

Քանզի ամենայն որ կրէ ունի պատճառ արարող զարտաքին իրս որք արդեամբք ներ-գործեն, և այլայլեն զնա 'ի ներքուստ կամ արտաքուստ ։

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Յատկութիւնք կրելոյ ։

Առաջինն է ընդունիլ զներհակութիւն. որպէս հեշտանալ և զզուիլ, ջերանիլ և ցրտանալ ։

Բ. Ընդունիլ զյաւէտն և զնուազ. զի տրտմիլ և ուրախանալ յաւէտ և նուազ առի ։

Գ. Զի առնչակից է առնելոյ. բայց ոչ ա-մենայն առնել առնչակից է կրելոյ. զի առնե-լութիւնք՝ հառաչել և գոչել չունին զկրող ոք ։

ԳԼՈՒԽ Ը.

Կալ և Յատկութիւնք նորա։

ՅՕԴՈՒԱԾ Ա։

Կալ։

Կալ ասի՝ յորժամ մարմին ինչ ընդունի զերկանակ իմն զետեղման. որպէս յոտն կալ, նստիլ, յորսայսիլ։ Կալն ասի զգայնոց և անզգայից. զգայնոց՝ որպէս ընկողմնեալ, յորսայսեալ. և անզգայից՝ որպէս արձանացեալ, կառուցեալ։

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Յատկութիւնք կալոյ։

Առաջինն է ոչ ընդունել զյաւէտն և զնուազ։

Բ. Ոչ ընդունել զներհակութիւն։

Գ. Զի խախուտ և անխախուտ տիրապէս զկալոյ ասին։

ԳԼՈՒԽ Թ.

Ուր և Յատկութիւնք նորա։

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Ուր։

Ուրն է որով իրն որոշի լինել ՚ի տեղի ինչ. որպէս ՚ի տան, ՚ի Վերիա, առ գետով։

Արդ՝ ուրն ոչ յատկապէս նշանակէ ընդտեղին, որպէս տուն, քաղաք, գետ. և ոչ առակապէս զտեղակայն, այլ զտեղի ինչ հանդերձ տեղակալաւն նշանակէ: Եւ որոշի ՚ի ներքին և յարտաքին. ներքին՝ որպէս ՚ի տան, ՚ի քաղաքի, ՚ի գետոջ. արտաքին՝ որպէս ընդտամբ, առ քաղաքաւ, առ գետով:

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Յատկութիւնք ուրին:

Առաջինն է, ոչ ընդունել զյաւէտն և զնուազ. զի լինել ՚ի տան՝ ոչ է յաւէտ կամ նուազ քան լինել ՚ի քաղաքի:

Բ. Ոչ ընդունել զներհակութիւն. զի աստ գոլն ո՛չ է ներհակ անդ գոլոյ: Եւ թէպէտ ՚ի վերնում ՚ի ներքնում ներհակ երեւին միմեանց, բայց ոչ են. զի ոչ մերժեն զմիմեանս ըստ սովորութեան ներհակաց, այլ իբրև առնչակից հակադրին, և զմիմեանս կացուցանեն:

ԳԼՈՒԽ Ժ.

Երբ և Յատկութիւնք նորա:

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Երբ:

Երբն է որով իրն լինի յիմիք մասին ժամանակի. որպէս երէկ, այսօր, վաղիւ, ՚ի հե-

բունհնչումն, յայսմ ամի, 'ի ժամանակս առա-քելոց, առ Մովսէսիւ մարգարէիւ, յաւուրս Տրդատայ արքայի :

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Յափկութիւնք Երբէն :

Առաջինն է ոչ ընդունել զյաւէտն և զըն-նուազ. զի գոյն այժմ ոչ է յաւէտ կամ նը-ւազ ըստ ժամանակի քան զերէկն :

Բ. Ոչ ընդունել զներհակութիւն :

Գ. Զի համանգամայն և առաջին և վեր-ջին ըստ երբին ասին. զի որք 'ի նմին ժա-մանակի են՝ ասին համանգամայն, և որք չե-նըն՝ ասին առաջին և վերջին :

ԳԼՈՒԽ ԺԱ.

Ունել և Յատկութիւնք նորա :

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Ունել :

Զանազան եղանակք են ունելոյ : Առա-ջինն է Որակական, որպէս յորժամ ասի ա-ռաքինութիւն ունել կամ գիտութիւն :

Բ. Քանակական, որպէս եռականգուն մեծութիւն ունել կամ քառականգուն :

Գ. Ընչական, որպէս հայր զորդի ունել, և որդի զհայր. այր զկին ունել, և կին զայր։

Դ. Ստացական, որպէս ունել զտուն կամ զայգի։

Ե. Զետեղական, որպէս ունել զգինի ՚ի կարասի, և զցորեան ՚ի շտեմարան։

Զ. Յարողական, որպէս ունել զգեստ, կամ զզէն, զմատանի, կամ զկօշիկ։

Բայց արժան է գիտել, զի ասելն՝ ունիմ զկօշիկս կամ զգեստ՝ է ձայն շարամանական, զի ՚ի մէջ բերէ զենթակայ և զմակդիր. քանզի նշանակէ ասել, ես եմ ունող կօշկաց կամ զգեստու. իսկ մեր բանքս են զպարզ ձայնից. այլ ասելի է՝ ունել զկօշիկս կամ ըզգեստ, որ թէպէտ ըստ ձայնին է շարամանեալ, բայց ըստ իմացմանն է պարզ, զի նշանակէ կօշկաւորեալ, կամ զգեստաւորեալ. և ըստ այսմ է ասել, ունել զմանեակ, զպըսակ, զգիտութիւն. այսինքն է՝ գիտնաւոր, մանեկաւոր, պսակաւոր։

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Յատկութիւնք ունելոյ։

Առաջինն է ընդունել զյաւէտն և ըզգունաւ. զի առաւել կարէ ունել ոք զոր ինչ յայսմ ամի՝ քան զոր ունէր ՚ի հերու։

Բ. Ընդունել զներհակութիւն. զի ունել զառաքինութիւն, է ներհակ ունելոյ զմոլութիւն ։

Գ. Ըստ ունելոյն առ ի լի և թերի, երջանիկ և թշուառ ։

ԳԼՈՒԽ Ե.

Հետևանք Մակադրութեանց ։

Հետևանք մակադրութեանց՝ որք զհետ երթան իրաց առ միմեանս բաղդատելոց, են չորք. հակադրութիւնք կամ հակակայք. նախկինք. համանգամայն, և շարժութիւն ։

Ապաքէն ցուցաւ թէ մակադրութիւնք ոմանք ընդունին զներհակութիւն, որպէս որակն. ոմանք զնախկնութիւն, որպէս երբըն. ոմանք զհամանգամայնութիւն, որպէս առինչն. ոմանք զշարժութիւն, որպէս առնելն և կրել ։

Պիտանացու ուրեմն է յառաջիկայդ ծանօթութիւն ամենայնի սոցա. բայց յառաջ քան զամենայն գիտել զսեռն ներհականց՝ որք են հակակայքն ։

ԳԼՈՒԽ Ա.

Հակադրութիւնք կամ Հակակայք :

Քառակի հակադրին միմեանց էակութիւնք. առաջին, իբր առինչք. երկրորդ, իբր ներհականք. երրորդ, իբր ունակութիւն և պակասութիւն. չորրորդ, իբր հաստատութիւն և ժխտումն :

Իբր առինչք. զոր օրինակ հայր և որդի, տէր և ծառայ, կրկնապատիկ և կէս :

Իբր ներհականք. զոր օրինակ բարի և չար, հիւանդութիւն և առողջութիւն, ջերմ և ցուրտ :

Իբր ունակութիւն և պակասութիւն. զոր օրինակ լոյս և խաւար, կուրութիւն և տեսութիւն, գիտութիւն և տգիտութիւն :

Իբր հաստատութիւն և ժխտումն. զոր օրինակ է՝ և չէ. նստի՝ և ոչ նստի. է առաքինի՝ ոչ է առաքինի :

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Առնչականք :

Առաջին տեսակ հակադրութեան են առընչականք. և տարբերին 'ի ներհականաց այնու, զի առնչականք որ ինչ ենն այլոց ասին. որպէս հայր՝ որդւոյ ասի հայր, և ծառայ՝ տեառն ծառայ. իսկ ներհականք ոչ երբէք, զի մոլութիւնն ոչ ասի առաքինու-

թեան մոլութիւն, և ոչ սպիտակն սևոյ։

Այս՝ առնչականք զմիմեանս կացուցանեն. զի 'ի լինել ծառայի՝ հարկ է լինել և տեառն. իսկ ներհականք բառնան զմիմեանս. զի 'ի գալ ջերմութեան յօղն, հարկ է մերժիլ ցրտութեան 'ի նմանէ։

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Ներհականք։

Երկրորդ տեսակ հակադրութեան են ներհականք. և են կրկին. զի են որք ունին զմէջ, և են որք ոչ ունին։ Ներհականք որք ոչ ունին զմէջ, հարկ է միոյ 'ի նոցանէ ընդունական լինել կամ մակադրիլ. որպէս առողջութիւն և հիւանդութիւն բնաւորեալ է լինել 'ի մարմին կենդանւոյ. և հարկ է զի մարմին ինչ առողջ իցէ կամ հիւանդ։ Նոյնպէս և դար և կոճատ թուոյ մակադրի. և հարկ է զի թիւ ինչ դար կամ կոճատ ասիցի։

Իսկ ներհականք որք ունին զմէջ, ոչ է նոցա հարկ ընդունական լինել. որպէս սպիտակութիւն և սեւութիւն բնաւորեալ են 'ի մարմնի գոլ. այլ ոչ է հարկ զի մարմին ինչ լինիցի սպիտակ կամ սեաւ, զի կարէ լինել գորշ կամ դեղին։

Նոյնպէս վատթար և առաքինի զմարդոյ ասի. բայց չէ՛ հարկ մարդոյ լինել առաքինի կամ վատթար. զի կարէ ունել անտարբեր ա-

խորժակս, որ ոչ իցէ առաքինի կամ վատթար։

Այնպէս ոչ է հարկ մարմնոց որ ընդունակք են ջերմութեան կամ ցրտութեան՝ լինել ջերմ կամ ցուրտ. զի մարթ է լինել ոչ ջերմ և ոչ ցուրտ՝ այլ գաղջ։

Ոչ ամենայն միջական որակութիւնք որք ՚ի ներհակսն գտանին՝ ունին զանուն. այլ մէջ նոցա ՚ի ժխտողութեան ներհական ծայրիցն իմանին։

Քանզի գոյ միջին ինչ՝ թէ և չիցէ անուանակոչեալ, ՚ի մէջ կարծրութեան և կակղութեան. անուշահոտութեան և գարշահոտութեան, սաստկութեան և թուլութեան, որք ՚ի ժխտողութենէ ծայրիցն երևին։

Իսկ ջերմութիւն հրոյ. և ցրտութիւն ձեան՝ ոչ միայն չունին զմէջ, այլ և ոչ զներհականս. զի այսօրիկ էական յատկութիւնք նոցա ճանաչին և ոչ իբրև եկամուտ պատահումն, որ կարիցէ յարիլ և զատանիլ առանց ենթակային ապականութեան։

ՅՕԴՈՒԱԾ Գ.

Ունակութիւն և Պակասութիւն։

Երրորդ տեսակ հակադրութեան են ունակութիւն և պակասութիւն, որպէս տեսութիւն և կուրութիւն, ատամնաւոր և ժօռատ։

Պակասութիւն ըստ բազում յեղանակս առի. բայց որ ըստ հակադրութեան է՝ այս

դէս սահմանի․ Պակասութիւն է հեռաւորութիւն պատուականին յորում բնաւորեցաւ գոլ, և ուր, և երբ բնաւորեցաւ ։

Ասի նախ՝ թէ յորում բնաւորեցաւ․ քանզի ոչ զխոյսէ կամ զքարէ ասի կոյր գոլ, զի ոչ բնաւորեալ են ունել զականողիս ։

Ասի երկրորդ՝ թէ ուր․ զի ոչ զձեռաց կամ զոտից ասի կոյր գոլ, քանզի ոչ յայն մասունս բնաւորեցան աչք ։

Ասի երրորդ՝ թէ երբ․ քանզի և ոչ զկարիւն 'ի ժամանակի ծննդեան ասի կոյր գոլ, զի յայնմ ժամանակի ոչ ունի զտեսութիւն․ և ոչ ժռատ զնորածին մանուկ, այլ յետ ունելոյ զնոսին մինչ յարկածից կամ յախտից կորուսանիցէ ։

Պակասութիւն և ունակութիւն ունին զյատուկ եղանակ հակադրութեան, զի ոչ իբրև առինչք հակակային․ զի առինչք որ ինչ ենն այլոյ ասին, իսկ սոքա ոչ բնաւ․ զի չէ՛ մարթ ասել, տեսութիւն կուրութեան է տեսութիւն ։ Եւս՝ առինչք համանգամայն են բնութեամբ, իսկ սոքա ոչ ևս ։

Եւ ոչ իբրև ներհականք հակակային․ զի ներհականք յեղումն և փոփոխութիւն ընդունին առ միմեանս․ զի առաքինին կարէ լինել մոլի, և մոլին առաքինի․ իսկ յունակութենէ երբեմն լինի յեղումն առ պակասութիւն, բայց 'ի պակասութենէ յունակութիւն ոչ երբէք․ զի ոչ կոյր ոք վերստին

եղև տեսող, և ոչ ժոռատ ատամնաւոր, և ոչ կունտ վարսաւոր :

Եւ ոչ իբրև հաստատութիւն և ժխտողութիւն հակակային. զի յասելն ըստ հակառակ բանի, կամ որ նոյն է՝ ըստ հակասութեան, է մահկանացու, ոչ է մահկանացու, բան ընդ բանի դիմամարտի. իսկ յասելն ըստ ունակութեան և պակասութեան՝ առողջ և հիւանդ, բառ ընդ բառի հակակայի :

Ապաքէն ըստ նշանակելոյ Դաւթի Անյաղթին 'ի մեկնութեան ստորոգութեանց, են բառք ինչ որ ըստ ձայնին են պակասականք, այլ ոչ ըստ իրին. զի անմահ ասեմք ոչ զմահկանացու որ չև ևս վախճանեալ. այլ զայն որ ամենևին անհաղորդ է մահու ախտի. ըստ այսմ են անսահման, անստեղծ, և այլք, որք ըստ ձայնին թուին լինել պակասական, այլ ըստ իրին նշանակեն զդրական կատարելութիւնս :

Եւ են բառք որ ըստ ձայնին ոչ նշանակեն զպակասութիւն վասն ոչ առադրեալ ունելոյ պակասական մասնկանս ան, բայց ըստ իրին իսկապէս ցուցանեն զպակասութիւնս. որպէս կուրութիւն, ժոռատ, կունտ, ըստ այսմ են՝ եղծումն, ապականութի, մահ,

Գտանին և բառք ինչ, որք ըստ ձայնին և ըստ իրին են պակասականք. որպէս անկենդան, անլսուրդ, անիրաւ :

Իբրև ունակութիւն և պակասութիւն հակադրեալ երևին և ձայնքս՝ մարդ, ոչ մարդ. քար, ոչ քար. բայց ոչ են իսկապէս հակադրութիւնք. քանզի երկոքին ևս են հաստատականք՝ մարդն և ոչ մարդն. և նշանակեն իրական ինչ, մին որոշակի և միւսն անորոշակի. զի մարդն նշանակէ որոշակի զմի ինչ միայն այսինքն զմարդն. և ոչ մարդն կարէ նշանակել անորոշակի առ հասարակ զամենայն որ ոչ է մարդ։

ՅՕԴՈՒԱԾ Դ.

Հաստատութիւն և ժխտողութիւն։

Չորրորդ տեսակ հակադրութեան է հաստատութիւն և ժխտողութիւն, այն ինքն է հակառակ կամ հակասութիւն. որպէս է մահկանացու, ոչ է մահկանացու. սիրէ, ոչ սիրէ. և հարկաւոր է միշտ զմին ՚ի սոցանէ ճշմարիտ գոլ և զմին սուտ։

Իսկ այլ եղանակք հակադրութեանց թէ պարզաբար և թէ շարամանութեամբ ասացին, ոչ է հարկ միշտ զմին ճշմարիտ լինել ՚ի նոցանէ և զմին սուտ։

Զոր օրինակ ներհականք, որպէս առողջութիւն և հիւանդութիւն. առնչականք, որպէս կրկնապատիկ և կէս. ունականք և պակասականք, որպէս տեսութիւն և կուրութիւն. այսոքիկ պարզաբար ասացեալ

հակադրութիւնք՝ ոչ մի 'ի սոցանէ ճշմարիտ է կամ սուտ ։

Իսկ եթէ չարամանութեամբ ասացին․ որ մանաւանդ ներհականաց է 'ի դէպ, սակայն և ոչ մի 'ի նոցանէ ճշմարիտ և մին սուտ եղիցի ։ Զոր օրինակ Սոկրատէս է ողջ, Սոկրատէս է հիւանդ․ արդ եթէ գոյ Սոկրատէս, մին է ճշմարիտ և մին սուտ․ իսկ եթէ ոչ գոյ, երկոքին ևս են սուտք ։

Սոյնպէս ըստ ունակութեան և պակասութեան ասացեալք․ զոր օրինակ Սոկրատէս է ականաւոր, Սոկրատէս է կոյր․ եթէ գոյ Սոկրատէս, թերևս մին ճշմարիտ լինիցի և մին սուտ․ իսկ յոչ գոլն, երկոքին միանգամայն են սուտ ։

Իսկ ըստ հակասութեան հակադրեալք՝ հարկաւ մին 'ի նոցանէ ճշմարիտ է և մին սուտ․ զոր օրինակ Սոկրատէս է հիւանդ, Սոկրատէս ո՛չ է հիւանդ․ եթէ է Սոկրատէս՝ յերկուց մին ճշմարիտ է․ և եթէ ոչ է, հիւանդ գոլն սուտ է, և ոչ է հիւանդն ճշմարիտ ։

Այլ որք իբրև հաստատութիւն և ժխտողութիւն հակակային, հարկաւ մի 'ի նոցանէ ճշմարիտ լինի, և մին սուտ․ և սովաւ որոշին յայլոց հակադրութեանց․ որք եթէ պարզաբար և եթէ չարամանութեամբ ասացին, ոչ է հարկաւոր մին 'ի նոցանէ ճշմարիտ լինել և մին սուտ ։

ԳԼՈՒԽ Բ.

Նախկինք ։

Նախկին՝ այլ այլոյ ասի, այսինքն մի ինչ բաղդատութեամբ առ այլ. քանզի 'ի վերայ նոյն և միոյ Նախկին և Երիցագոյն ոչ է մարթելի ասել. և է հնգապատիկ ։

Ա. Ըստ ժամանակին. որպէս տասնամենին Նախկին է քան զհնգամենին ։

Բ. Ըստ բնութեան. որպէս մասնաւոր կամ անհատ գոյացութիւնք Նախ են քան զընդհանուրսն, այսինքն քան զտեսակ և զսեռ. և արեգակն և հուր քան զջերմութիւն իւրեանց, և ամենայն պատճառ քան զգործ իւր ։

Գ. Ըստ դասու. որպէս տառք դասիւ յառաջ են քան զվանկս, և ուսումն տրամաբանութեան քան զբնաբանութիւն. ըստ այսմ և մին յառաջագոյն է քան զերկուն ։

Դ. Ըստ պատուոյ. որպէս ոսկի քան զարծաթ է պատուականագոյն, և քաղաքականն քան զգեղջուկն, և իշխանաւորն քան ըռամկականն ։

Ե. Ըստ ճանաչման. որպէս պատահական յատկութիւնք՝ հանգամանք և կերպք յառաջագոյն քան զգոյացութիւն իւրեն են 'ի ճանաչման. զի նախ ծանրութիւն, սպիտակութիւն, դեղնութիւն, և այլ պատահական յատկութիւնք ոսկւոյն 'ի զգայութեանց ճա-

նաչէն միտք, և տալ ՚ի հաւաքմանէ յատկութեանց ճանաչէ զնոյն ինքն զէութիւն ոսկոյն. իսկ եթէ զճշմարիտն կամեսցուք խօսել, ոչ կարեմք գտանել զէութիւն իրաց ըստ որում են յինքեանս, այլ միայն զերևոյթս նոցին և զհամեմատութիւնս, որպէս հաւաստաքանեն իմաստասէրք։ Ըստ այսմ Նախկին են զգալիք քան զիմանալի էակս. զի որպէս ասէ Դաւիթ Անյաղթ. “Նախ պատահեմք զգալեաց, յետ այնորիկ ՚ի ծանօթութիւն գամք իմանալեաց”. զի ըստ առաքելոյն. “Աներևելք արարածովքս աներևոյթքն իմացեալ տեսանին”[1]։

Եւ թէպէտ ըստ մտածութեան՝ դիտումն վախճանական պատճառին քան զգործն յառաջագոյն երևի. այնու զի Նախկին է դիտաւորութիւն պաշտպանութեան հայրենեաց քան զգրիլն ՚ի զինուորութիւն, և ընդունելութիւն վարձուց քան զերկս աշխատութեան, և կերակուր ՚ի պէտս կենաց քան զվարձս արծաթոյ. բայց քանզի պատճառն առնչանայ առ պատճառելին, զի պատճառն պատճառելեաւն է պատճառ, և առանց նորա անհնար է գոլ և իմանիլ պատճառ. սմին իրի դիտումն վախճանական պատճառին և գործն են համանգամայն. զի յառընչակիցսն չէ մարթ լինել Նախկին և յետին։

1 Հռովմ. Ա. 20։

ԳԼՈՒԽ Գ.

Համանգամայնք ։

Համանգամայնք, կամ որ նոյն է՝ միասնականք հակադրին նախկնեաց. և են ըստ նացուն օրինակի հնգապատիկ։

Ա. Ըստ ժամանակի. և ասի զայնց որոց լինելութիւնն է 'ի նմին ժամանակի. որպէս չորք տարերք և բնական որակութիւնք իւրեանց և յատկութիւնք. ոսկի և ծանրութիւն իւր և խտութիւն քան զամենայն մարմինս. մարմին և տարածութիւն իւր են համանգամայն. և համատիք որք 'ի միում ժամանակի ծնան յաշխարհ։

Բ. Ըստ բնութեան. որպէս կրկնապատիկ և կէս. ըստ սմին օրինակի տեսակք իրաց որք պարունակին ընդ միով սեռիւ, են միասնականք. որպէս թռչուն և անասուն ըստ որում կենդանի՝ են համանգամայն բնութ̅ք։

Գ. Ըստ դասու. որպէս զօրականք ընդ միով տասնապետաւ, են միասնական ըստ դասու։

Դ. Ըստ պատուոյ. որպէս միապէս մեծարեալն աստիճանաւ և պաշտամամբ 'ի հասարակութենէ, են միասնականք պատուով։

Ե. Ըստ ճանաչման. որպէս առնչականք, զի չէ՛ հնար ճանաչել զտէր առանց ծառայի, և զծառայ առանց տեառն. ըստ այսմ միանգամայն են ճանաչմամբ, արեգակն և բոլ-

րակութիւն իւր ․ ջուր և հոսանուան լինել ․ և այլքն ամենայն որք միով հայեցիւք ըմբռնին, որպէս մարմին և տարածութիւն իւր։

ԳԼՈՒԽ Դ․

Շարժութիւն։

Շարժութիւնն է փոփոխումն ներգործական ․ և է որ ըստ գոյացութեան, է որ ըստ քանակին, է որ ըստ որակին, և է որ ըստ ուրին ։

Ըստ գոյացութեան, լինելութիւն և ապականութիւն ։

Ըստ քանակին, աճումն և նուազումն ։

Ըստ որակին, այլայլութիւն ։

Ըստ ուրին, բերումն կամ տեղափոխումն ։

Եւ ըստ այսմ տեսակք շարժութեան լինին վեց ։

Արդ՝ լինելութիւն և ապականութիւն հակադրին իրերաց ոչ իբրև ունակութիւն և պակասութիւն, այլ իբրև առնչակիցք ․ զի 'ի պակասութենէ ոչ է մարթ դառնալ յունակութիւն, զի ոչ ոք կոյր լինի տեսօղ ․ բայց յապականութենէ է լինելութիւն, զի հուր ծնանի յապականութենէ փայտի ․ ապա իբրև առինչք հակադրին՝ զի զմիմեանս պահանջեն ․ զի ապականութեան հարկ է

գոլ լինելութիւն, և լինելութեան ապականութիւն ։

Միևնոյն զգալի գոյակք ունին զսկիզբն 'ի նիւթոյ և զկատարումն 'ի տեսակէ. նիւթ իմն ամենամանր և անզգալի մասնկունք կամ տարերք իւրաքանչիւր իրի տարածական, անթափանցելի, որ անտարբեր է առ ընդունելութիւն ո՛ և իցէ տեսակի. և տեսակ՝ կերպն որով տարտամ և անտարբեր նիւթն որոշի յայլմէ ամենայնէ, և կացուցանի այս ինչ իր ։ Լինելութիւն և ապականութիւն իրին ըստ տեսակին միայն է և ոչ ըստ նիւթոյն, զի նիւթն անփոփոխ է յինքեան ։ Քանզի նիւթն ըստ որում նիւթ՝ յետ արարչութեան Աստուծոյ կայ մնայ անփոփոխ յինքեան և անապական, ցորչափ կամք իցեն պահել Աստուծոյ 'ի նմին բնութեան յոր հաստատեացն 'ի սկզբանէ ։

Ապա լինելութիւնն է ընդունելութիւն նիւթոյ զայլ տեսակ իրի, և ապականութիւնն է դադարումն նիւթոյ 'ի լինելոյ այս տեսակ իրի ։ Ու թէպէտ ինքն նիւթն 'ի բնութեան իւրում է անապական, բայց է ենթակայ լինելութեան և ապականութեան ։

Իսկ եթէ անտարբեր է նիւթ առ ընդունելութիւն ո՛ և իցէ տեսակի, առ որ բնութիւն տեսակին ապականելոյ և պարագայք արտաքինք առաջնորդեն, տեսանեմք հանապազօր զգայութեամբ. մասնկունք նիւ-

թոյ որ ընդ տեսակաւ բուսոյ են , կարեն ընդունել զտեսակ հողոյ՝ եթէ բոյսն փտեսցի 'ի հող , զտեսակ մսոյ՝ եթէ ճարակեսցի 'ի խաշանէ , զտեսակ հրոյ՝ եթէ չորացեալ արկանիցի 'ի խարոյկ ։ Զի ըստ Արիստոտէլի , ապականութիւն միոյն՝ ծնունդ է միւսոյն ։ Որպէս յապականութենէ տեսակի փայտին՝ ծնանի տեսակ հրոյ . 'ի հրոյ մոխիր . 'ի մոխրոյ հող . 'ի հողոյ բոյս . 'ի բուսոյ միս . 'ի մսոյ որդն . և այլ ինչ 'ի նմանէ ։

Աճումն է անցումն կամ փոփոխութիւն 'ի փոքուէ 'ի մեծ քանակութիւն . իսկ նուազումն է անցումն 'ի մեծէ 'ի փոքր քանակութիւն . որպէս մանուկն աճի հասակաւ , և նուազի ախտիւ կամ ծերութեամբ ։

Այլայլութիւնն է փոփոխութիւն 'ի միոյ որպիսութենէ յայլ , որպէս ջուր ցուրտ փոխի յեղկ կամ 'ի ջերմ . և բորբոքեալն բարկութեամբ փոխի 'ի հեզութիւն հանդարտութեան ։

Տեղումն է փոփոխութիւն տեղւոյ . յարաբերութեամբ առ այլ մարմինս . այսինքն է լինել անդ՝ ուր չէր յառաջագոյն ։

Ստոյգ իմն է , զի այլայլութիւն ոչ է նոյն ընդ աճման և նուազութեան . զի 'ի զանազան կրից՝ 'ի սիրոյ , 'ի բարկութենէ , յերկիւղէ , յամօթոյ և յայլոց այլայլի մարդ , այլ ոչ աճէ և նուազի , և որ յախտէ լինի ջերմ կամ քաղցր , ոչ վասն այնորիկ աճի և նուա-

զի։ Այս քառանկիւնին աճէ և նուազի, բայց ոչ լինի երկար կամ բոլորակ, անայլայլելի մնալով յիւրում ձեւոջ. սակայն յայտ է՝ թէ այլայլութիւնն է որոշ տեսակ շարժութեան։

Որ ինչ միանգամ ասացաք ցայս վայր զաղդի ազգի եկամուտ և ստեղծական գաղափարաց և ծանօթութեանց, ևս և զհնգից պորփիւրեան ընդհանուր ձայնից, և զտասանց գերագոյն սեռից արիստոտելեան մակադրութեանց, բաւական համարեցաք առ փոքր 'ի շատէ տեղեկութիւն հետեւողաց. Մնայ այժմ յիմաստասիրացն բանից առաջի առնել համառօտիւ զօրէնս հմտութեան, որ առաջնորդեալ ածէ 'ի հանդէս ուղղադատութեան, յորում կայանայ արհեստն տրամաբանութեան։

ԳԻՐՔ Բ.

Հմտութիւնք։

Որ 'ի խնդրել և ճանաչել զճշմարտութիւնն և ուղիղ դատել։

Ճշմարտութեան երեք աստիճանք զանազանին. բնազանցական, բանական, և բարոյական։

Բնազանցօրէն ճշմարիտ ասի ինչ, յորժամ ունի յինքեան զամենայն յատկութիւնս յորս կայանայ բնութիւն իւր. որպէս ճըշմարիտ ասի վարդն, յորում գտանին ամենայն հանգամանք ինքեան պատկանեալք:

Այս միտ ճշմարիտ է և լոկ գաղափարն զատ ինքեան առանց համեմատելոյ ընդ իրին նշանակելոյ նովաւ. զի է ինչ՝ որ ինչ էն: Բայց այսմ ճշմարտութեան չունի ոք պէտս ՚ի խնդիր լինել, զի է աւելորդ նրբութիւն ինչ դպրոցական: Իսկ եթէ գաղափարն այն իցէ՛ արդեօք համեմատ իրին թէ չիցէ, բանական ճշմարտութեանն է անկ քննել և դատել. և այս գործ է արուեստին տրամաբանութեան:

Բանական ճշմարտութիւն է համեմատութիւն գաղափարաց մերոց և դատման ընդ իրին նշանակելոյ նովաւ. որպէս բանական ճշմարտութիւն է ուղիղ ճանաչել զբոլորակն կամ զքառանկիւնին, և ասել թէ է բոլորակ կամ քառանկիւնի. զի բանական սուտ լինի թիւր ճանաչել և ասել այլ ինչ ձև՝ որպիսի ոչ է իրն յինքեան:

Բարոյական ճշմարտութիւնն է հանգիտութիւն խորհրդոց մտացն և գործոց ընդ բանիցն և շարժուածոց, որովք յայտնի առնեն զխորհուրդս և զգործս իւրեանց զոր արարին. որպէս ճշմարիտ ասին բանք և շարժուածք, յորժամ համեմատ իցեն խորհրդոց

և գործոց նոցին, և ուստ՝ եթէ այլ և այլ իցեն ։

Զբնազանցական և զբարոյական ճշմարտութեանցն ոչ է տեղւոյս խօսել. միայն այժմ խօսիլ ինչ զբանական ճշմարտութենէն ։ Եւ զի յայդմ մասին 'ի չորս այլ և այլ կերպս գըտանին միտք, 'ի տգիտութեան, յերկբայութեան, 'ի կարծիս, և 'ի ստուգութեան. այսմ մեծապէս փոյթ ունի արհեստն տրամաբանութեան, զի զանազան հմտութեամբք փարատեսցէ 'ի մտաց զտգիտութիւնն և զերկբայութիւն, յայտ արասցէ զնշանսն որով որոշին կարծիքն 'ի ստուգութենէն, ցուցցէ զճանապարհն հաւանական կարծեաց կամ ստուգութեան, և նշանակեսցէ զպատճառս սխալանաց զգուշանալ 'ի նոցանէ, և դատել անմոլար ։

ԳԼՈՒԽ Ա.

Զանազան հմտութիւնք, և օրէնք գիւտի հաւանականութեան կամ ստուգութեան, որ է ուղղադատութիւն ։

Առ ուղիղ դատաստան առնել զիրաց՝ կարևոր են ազգի ազգի հմտութիւնք, որով ծանուցեալ զնմանութիւն կամ զաննմանութիւն երկուց զգացմանց և իմացուածոց, կամ զբաղդմանց. և զերկուց կամ զբազում ծանօթութեանց և գաղափարաց, և բաղ-

դատել զնոսա ընդ իրերաց, բայց չափոյ հըմ-տութեանն դատաստան արացէ։

Ընդունուլն մանկան զառաջին հասն, ոչ է հմտութիւն՝ այլ լոկ զգացումն, մինչեւ տա-ցէ զայլ ինն հաս, եւ իմացի զկարգն. եւ տա-կաւ առ սակաւ ՚ի ծանօթութիւն եկեսցէ իրացն յորոց են զգացմունքն, եւ պէսպէս հանգամանաց նոցա եւ համեմատութեանց. որով եւ հմտութիւն իւր ընդարձակի։

Այս առ հմտութիւն կարեւոր է բաղ-դատութիւն գոնէ երկուց իրաց. զի ծանօ-թութիւն ինչ կամ գաղափար ինքն առան-ձին ոչ է հմտութիւն։

Նմանութիւն կամ զանազանութիւն եր-կուց գաղափարաց կամ ծանօթութեանց երբեմն առանց միջնորդի լոկ բաղդատու-թեամբ նոցին ճանաչեմք. եւ այս հմտու-թիւն կոչի անընդմիջաբար եւ ինքնադիմի։ Իսկ երբեմն հարկիմք բաղդատել զնոսա ընդ այլում. եւ այն հմտութիւն ազդմամբ կամ սովորութեամբ. եւ ամենեքին կարեն լինել ստոյգ, եւ հաւանական կամ երկբայելի։

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Հմտութիւնք ո՛ր ինքնադիմի, ո՛ր ցուցիչ, ո՛ր ազդմամբ, եւ ո՛ր սովորութեամբ։

Հմտութիւնք են իրաց էութեան, կամ հանգամանաց, կամ համեմատութեան։

Հմտութիւն էութեան իրին ինքնադիտիտաի, եթէ արդեամբք ազդէ ինչ 'ի զգայութիւնս. իսկ որ արդեամբ ոչ ազդեցուցանէ; հարկիւք միջնորդաւ հմտանալ էութեան նորին: Զոր օրինակ՝ եթէ ոք ուրեք զվարդ կամ զհուր տեսանիցէ, իմանայ անընդմիջաբար տեսութեամբ կամ շօշափմամբ. իսկ եթէ միայն զհոտն առնուցու կամ զծուխն տեսանիցէ, զգայութիւն վարդի կամ հրոյ ոչ ևս ճանաչէ անընդմիջաբար, այլ միջնորդաւ և ցուցիւք. փորձիւ գիտելով յառաջագոյն հոտ վարդի 'ի վարդէ յառաջ գալ և ծուխ 'ի հրոյ. և յայսմանէ 'ի վերայ ածէ, թէ որպէս անդ նոյնպէս և աստ հոտն վարդի կից ունի զծաղիկն, և ծուխն զհուր:

Ըստ սմին օրինակի զօրհանապազ տեսանեմք զգայութեամբ, զի ո՛ և իցէ մարմին 'ի շարժիլ իւրում՝ յարտաքին ինչ գործողէ շարժի. այս հմտութիւն է անընդմիջաբար. և յորժամ շարժի երկիր, տեսանեմք միայն զշարժիլ նորա՝ այլ ոչ զշարժողն. սակայն մարթիմք խելամուտ լինել խորհրդով մտաց, թէ մարմին ինչ ինքնին իւրովի ոչ կարէ երբէք շարժիլ մինչև ոչ շարժեսցի յայլմէ գործողէ, այլ մնայ 'ի դադարման մինչև 'ի յաւիտեան. ապա երկիրն 'ի շարժիլ իւրում ունի ինքեան զարտաքին շարժող ինչ, և այս հմտութիւն է միջնորդաւ:

Ինքնադիմաքար ծանուցեալ Ճշմարտութիւնք Առած կոչեցան . որպէս այն թէ՝ Բոլորն մեծ է քան զմի և իցէ մասն իւր ։ Եթէ յերկու հաւասար քանակս յաւելցին այլ երկու հաւասար քանակք , մնան հաւասար ։ Որ ինչ է՝ այն է ։ Անկարելի է իրի իմիք՝ զի 'ի նոյն ժամանակի իցէ և ոչ իցէ ։ Ամենայն գործ ունի զպատճառ ինչ նախկին ։ Ամենայն փոփոխութիւն ներգործեալ 'ի մարմին ինչ, համեմատի միշտ կարողութեան պատճառին յորմէ արտադրեցաւ ։ Ի սոցին սակի համարի և այս . Որք նոյն են ընդ միում երրորդի, նոյն են և ընդ միմեանս ։

Հմտութիւնն որ ազդմամբ՝ այն է , յորժամ արդեամբք առ ժամն ճանաչեմք զնմանութիւն կամ զաննմանութիւն գաղափարացն զոր համեմատեմք ։

Իսկ սովորութեամբն է , յորժամ զհանգիտութիւնն կամ զանհանգիտութիւն ոչ առ տեղեաւն արդեամբք ճանաչեմք . այլ զի ծանուցեալ գիտեմք յայլում նուագի , և զայն 'ի յուշ ածեմք , և նովաւ դատեմք զիրսն ։

ԳԼՈՒԽ Բ.

Ստոյգ, Հաւանական, և Երկբայական հմտութիւնք։

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Յաղագս նշանաց ստուգութեան, հաւանեաց, և երկբայութեան։

Յորժամ համգիտութիւն կամ անհամագիտութիւն երկուց գաղափարաց կամ ծանօթութեանց յստակ և պայծառ ծանօթանայ մեզ, յայնժամ ստոյգ է գիտութիւն մեր. որպէս յորժամ ճանաչիցեմք զքառեակն քառեակ՝ և ոչ հնգեակ, և զբոլորակն բոլորակ՝ և ոչ քառակուսի։

Իսկ յորժամ ոչ պայծառ և յստակ ճանաչիցեմք, յայնժամ գիտութիւն մեր է կարծիքական կամ երկբայական։

Երկբայական է՝ յորժամ ոչ գտանեմք բաւական նշան առ 'ի դատել զհամգիտութիւն կամ զանհամգիտութիւն երկուց գաղափարաց, որ և կոչի պակասական երկբայութիւն, կամ մանաւանդ տգիտութիւն. զոր օրինակ աստեղք զուգաթի՞ւ իցեն եթէ անզուգաթիւ։ Կամ թէ՝ 'ի յաջորդ ամի եղիցի՞ շարժումն երկրի՝ թէ ո՛չ. կամ արդեօք մարմինն արեւու իցէ՞ սոսկ հուր, եթէ ունիցի խառնուրդ ինչ յայլմէ նիւթոյ. կամ թէ ե՞րբ իցէ կատարած աշխարհի. զի չի՛ք ինչ նշան գիտելոյ զայդոսիկ։

Իսկ յորժամ նոյնչափ իցեն նշանք յերկուքանչիւր կողման, յայնժամ ասի Իսկական երկքայութիւն. իսկ եթէ կցէ նշան ինչ միոյ կողման, և միւսոյն ոչ ինչ, կամ միոյն մեծ քան զմիւսն, այլ անբաւական 'ի բառնալ զամենայն երկքայութիւն, և տալ զանվրէպ ստուգութիւն, յայնժամ ասի Կարծիք: Օր օրինակ հաւանական է՝ թէ սկիզբն աշխարհաց և ականց յորոց բղխին գետք, անձրևք իցեն, քան եթէ ջուրք ծովուն ձգեալ 'ի հաղոյ որպէս 'ի սպնգոյ մինչև 'ի բարձր լերինս, և բղխեն զաղբիւրս: Կամ թէ իցե՞ն բնակիչք 'ի լուսինն նկատմամբ ամենակարողութեանն Աստուծոյ, քան եթէ չիցեն: Կամ թէ՝ գիսաւորք յարեգակնէ՞ առնուն զլոյս իբրև զայլ մոլորակս, քան թէ յինքեանց ունին:

Որդ՝ ուղղադատութիւնն է. գիտել ընտրել զչափ հաւանութեան ըստ արժանի նշանացն. եթէ բաւական իցեն բառնալ զամենայն երկքայութիւն և զկարծիս, և զկատարեալ ստուգութիւն 'ի միտսն տպաւորել, ասին Ստոյգ նշան. եթէ կարծիս միայն տան, են Հաւանականք. և եթէ յերկուանալի ցուցանեն, կոչին Երկքայականք:

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Պատճառք ստուգութեան, կարծեաց և երկքայութեան:

Նախնի իմաստասէրք ոմանք պնդէին, թէ

ճշմարտութիւն և ստուգութիւն է 'ի բնութեան իրաց, բայց մեզ անհասանելի. վասն որոյ անստոյգ և երկբայական համարէին զամենայն գիտութիւն էիցս։

Բայց չէր արժան զամենայնէ յերկուանալ, քանզի կարողութիւն է մտաց զբաղում իրաց զստոյգ գիտութիւն ունել. ապա թէ ոչ՝ զգոյութենէ անձանց մերոց պարտ էր երկմտիլ։

Պղատոն հիմն ստուգութեան և ճշմարտութեան զմտաւորական խոկումն համարեցաւ լինել. զի ասէր, է ինչ որ անընդմիջաբար զգայութեամբ ուսանիմք, և սա ծնանի 'ի մեզ զկարծիս և զհաւանութիւն. և է ինչ որ մտաւորական խոկմամբ, և սա ծնանի զգիտութիւն և զստուգութիւն։

Ամանք ծնող ճշմարիտ գիտութեան և ստուգութեան զպայծառ և զյստակ իմացումն հանգիտութեան կամ անհանգիտութեան գաղափարաց ասացին, յորոյ հաւանութենէն չկարէ ոք հրաժարիլ առանց դիմամարտութեան մտաց։

Բայց այլք յիմաստասիրաց բաւական բանիւ ցուցանեն, թէ իսկապէս ստոյգ այն է համարելի, որոյ հակառակն ճանաչի անհընարին։ Իսկ իր ինչ եռակի կերպիւ կարէ լինել հնարին և անհնարին. բնազանցաբար, բնաւորաբար, և բարոյապէս. ապա և ստուգութեան այս երեք չափք են։

Բնազանցաբար անհնարին այն է, եթէ իցէ ինչ և չիցէ միանգամայն. զոր օրինակ ձև ինչ իցէ բոլորակ և ոչ բոլորակ միանգամայն, թիւ ինչ զոյգ իցէ և կոճատ 'ի նմին պահու ։

Բնաւորաբար անկարելի է, որ հակառակի օրինաց զգալի բնութեան. որպէս գետ ինչ հոսիցի ընդ զառ 'ի վեր, կամ հուր ոչ այրեսցէ զխոտիւս ։ Այսքիկ անհնարին են բնական զօրութեան. այլ ոչ ամենեին անհնարին ամենակարող զօրութեանն Աստուծոյ ։

Բարոյապէս անհնարին է՝ որ ոչ է անկարելի բնազանցօրէն և ոչ բնապէս. սակայն յոյժ դժուարաւ հանդիպի, և գրեթէ ոչ երբէք. զոր օրինակ 'ի խառն 'ի խուռն ընկեցեալ տառից ելցէ տող մի Վիրգիլեայ քերթողի ։ Կամ բազում մարդիկ 'ի միում գաւառի իցեն համահասակ, նոյնակերպարան, և համաբարոյ ։ Կամ երկու ոմանք անտես 'ի միմեանց գրեսցեն զճառ ինչ ամենեին յար և նման միմեանց, ոչ և մի ինչ առաւելութիւն կամ նուազութիւն 'ի բառսն անդ և 'ի տառսն ։

Վասն որոյ և երեք չափք են ստուգութեան. Բնազանցական, որոյ հակառակն պարզաբար և բնազանցապէս անհնարին ճանաչի ։ Սա նախապատիւ է քան զամենայն, և հաստատուն հաւանութեան արժանի. զոր

օրինակ, ամենայն որ մարմին է, ունի և ըն-
տարածութիւն ։

Բնաւորապէս և զգալի ստուգութիւն
է, որոյ հակառակն ճանաչի անհնարին 'ի
բնութենէ. զոր օրինակ ոչ ոք 'ի մարդկանէ
կարէ կեալ անսուաղ տարեկան աւուրբք ։
Սա փոքր է քան զառաջինն, բայց և ինքն
հաստատուն հաւանութեան է արժանաւոր ։

Բարոյական ստուգութիւն է, որոյ հա-
կառակն ճանաչի բարոյապէս անմարթ. զոր
օրինակ ազգ մի ողջոյն իցէ ստախօս կամ Ճըշ-
մարտախօս ։ Սա նուաստագոյն է քան զայլս,
և միջական հաւանութիւն պահանջէ ։

Իսկ որոյ հակառակն ոչ երևի անհնարին,
ոչ բնազանցօրէն, ոչ բնաւորաբար, և ոչ
բարոյապէս, հաւանական է կամ երկբայելի ։
Օրինակ իմն եթէ 'ի միում կողման իցեն
փաստք և հաւաստիք, և 'ի միւսումն չիցեն.
կամ յերկոսին կողմանս իցեն, բայց զօրա-
ւոր 'ի մին քան 'ի միւսն, հաւանական հա-
մարեսցի. իսկ եթէ և ոչ 'ի միումն իցեն
փաստք, կամ երկոցուն կողմանցն հաւա-
սարք, լինի երկբայական ։

ԳԼՈՒԽ Գ.

Զափ ստուգութեան և հաւանականութեան ազդի ազդի հմտութեանց ։

Ամենայն հմտութիւնք կամ գոյութեան իրաց են, կամ հանգամանաց, և կամ հաւաստութեանց նոցին ։

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Գոյութեան կրկին է տեսակ՝ հոգեղէն և նիւթեղէն. այսինքն անմարմին և մարմնաւոր, իմանալի և զգալի ։ Ընդ անուամբ հոգեղէն գոյութեան իմացեալ լինին՝ Աստուած, և հրեշտակք, և հոգիք մարդկան ։ Իսկ նիւթեղէն գոյութեամբ բովանդակին ամենայն մարմինք կամ զգալիք ։ Բայց միտք մեր զայս ամենայն գոյութիւնս ոչ միով եղանակաւ, և ոչ միով չափով ստուգութեան ճանաչէ, այլ ըստ իւրաքանչիւր իրաց պայմանի ։

Ներքնական գոյութիւնք ։

Գոյութիւն հոգւոյ և մտաց մերոց ճանաչի ինքնին անընդմիջաբար կատարեալ ստուգութեամբ. այնու զի գիտեմք հաւաստեաւ թէ գոյ 'ի մեզ խորհուրդ, հարկիմք գիտել թէ գոյ էակ ինչ 'ի մեզ որ խորհիցի. քանզի խորհուրդ է գործ, և գործ հարկաւ

խնդրէ զներգործող ոք․ ուրեմն անհնարին է թէ իցէ խորհուրդ, և ոչ այն որ խորհիցի։

Ըստ սմին օրինակի և զգոյութիւնն Աստուծոյ կատարեալ ստուգութեամբ ճանաչեմք․ միայն այս ինչ է խտիր, զի գոյութիւն հոգւոց մերոց ինքնադիմաբար յայտնի լինի մեզ առանց միջնորդի, իսկ գոյութիւնն Աստուծոյ միջնորդաւ և ցուցիւք․ սակայն այս եղանակ ճանաչման մերոյ ոչինչ նուազեցուցանէ զչափ ստուգութեան գոյութեանն Աստուծոյ։ Քանզի որպէս գոյութիւն հոգւոյս մերոյ օրինօք անհնարութեան յայտնի ցուցանի, նոյնպէս և գոյութիւնն Աստուծոյ։ Իսկ արդ՝ գոյութիւնն Աստուծոյ 'ի գոյութենէ հոգւոյս մերոյ ցուցանի բանիւ՝ այսու օրինակաւ։

Հոգիս մեր կամ յիւրմէ ունի զգոլ, կամ յայլմէ եկեալ է 'ի գոյ։ Սոյդ գիտեմք թէ ոչ յիւրմէ և ինքեամբ ունի զգոլ․ ապա յայլմէ ունի զգոյութիւն իւր։

Իսկ գոյացուցիչ սորա կամ յայլմէ ունի զգոյութիւն իւր, կամ է ինքնագոյ․ եթէ յայլմէ ածեալ է 'ի գոյ, և սա դարձեալ յայլմէ մինչև յանհունս, ոչ գտանելով արտաքոյ հաւաքման սոցին միոյ անսկզբնական և ինքնակաց էակի․ յայսմանէ զհետ գայր լինել շար անընդհատ գործոց առանց սկզբնապատճառի՝ որ է անհնարին։ Քանզի 'ի բառնալ առաջին ինքնակաց պատճառին,

բառնի և առաջին գործն ։ ընդ նմին բառնին բոլորովին և այլքն ամենայն որք ՚ի միմեանց ածին ՚ի գոյ ։

Ապա արտաքոյ այս հաւաքման որք ունին զգալ յայլմէ, հարկ է լինել որ պատճառ առաջին, անեղ, ինքնագոյ, և գոյացուցիչ ամենայն էից. և սա ինքն է Աստուած. վասն որոյ և զգոյութիւն նորա կատարեալ ստուգութեամբ գիտեմք. և անհնարին է թէ չիցէ. զի ոչինչն ոչ կարէ արտադրել ինչ ։

Զգոյութիւնն հրեշտակաց ոչ կարեմք հարկաւոր ցուցանել բնական բանիւ, որպէս զԱստուածոյն. սակայն գիտեմք ՚ի յայտնութենէն Աստուծոյ, թէ ստոյգ է ամենեւին, զի հաստատեալ կայ յանսուտ ճշմարտութիւնն Աստուծոյ, որ ոչ խաբէ և ոչ խաբի ։

Զգոյութիւնս հոգւոց յայլ մարդիկ, ոչ գիտեմք բնազանցական կամ բնական ստուգութեամբ, այլ միայն բարոյապէս ։ Քանզի տեսանեմք թէ զգան, մտածեն, ճանաչեն, յիշեն, կամին, և գործեն իբրև զմեզ. յորոց իմանամք թէ է ՚ի նոսա գոյակ նման այնմ՝ յորմէ յառաջ գան այն զօրութիւնք ՚ի մեզ, որ այն ինքն է հոգի. զի օրէնք բնութեան են, թէ նման գործք ՚ի նման պատճառաց լինին ։ Բայց այս բարոյական ստուգութիւն՝ համաչափ է բնազանցական և ըզգալի ստուգութեան, և ամենեւին աներկուանալի ։

Նիւթական գոյութիւնք ։

Զգայութիւն նիւթականաց գիտեմք ըն-ձեռն այսոց՝ ՚ի գործոց անտի նոցա զոր առ-գեամբք ազդեցութեանն ՚ի մեզ, ոչ միայն զորս կամիմք՝ այլ և որոց դժկամակ գտա-նիմք. և այս իսկ հաւատարմացուցանէ ըզ-մեզ, թէ է ինչ արտաքոյ մեր որ զայն ներ-գործէ ։

Յորժամ տեսանէ ոք մղեալ զանձն յար-տաքին բռնութենէ յոր ոչն կամի, կամ ՚ի կարկառել զձեռն՝ արգելեալ յիմեքէ ակա-մայ, ոչ կարէ երկմտիլ թէ գոյ որ մղէ զնա, կամ արգելու զձեռն ։

Արդ գոյութիւն մարմնոց անշուշտ հա-ւաստի է մեզ բնական ստուգութեամբ. քանզի բնապէս անհնարին է զի զգայարանք մեր միօրինակ զգացուցեն մեզ զմարմինս և զազդեցութիւնս նոցին որոց չիք գոյութիւն։

Բայց զգոյութիւն մարմնոց ոչ միշտ ըզ-գայութեամբ ճանաչեմք, զի բնական ստու-գութեամբ հաւաստի լինիցի մեզ. այլ եր-բեմն պատշաճութեամբ, և երբեմն վկայ-ութեամբ այլոց, և յայնժամ բարոյական ըս-տուգութիւն է։ Զի ոչ որպէս ականատես հաւաստի համարի ոք բնական ստուգու-թեամբ, հուր լինել ՚ի տեղւոջն յորժամ տե-սանէ զծուխ, կամ լուիցէ թէ լիցէ, որպէս յորժամ առաջի տեսանիցէ ։

Յորժամ 'ի պատշաճութենէ գոյութիւն իրիք հաստատի բարոյական ստուգութեամբ, հարկ է ցուցանել թէ գործն այն՝ ըստ օրինաց բնութեան չէ՛ հնար յայլմէ պատճառէ յառաջ գալ, բայց միայն յիրէ յայնմանէ զորոյ զգոյութիւնն կամիմք գիտել։

Նա հաւաստի լինելոյ գոյութեան իրաց բարոյական ստուգութեամբ՝ ոչ են բաւական ամենայն ուրեք պատշաճութիւն և այլոց վկայութիւն. զի է ուրեք զհաւանականութիւն, և է զի երկբայութիւն միայն գործեն։ Տեսեալ յամայի վայրի զհիմունս պարըսպաց և շինուածոց, զագուգայս և զջրշիղջըս, զբեկորս սեանց և խոյակաց, հաւաստի լինիմք թէ երբեմն եղեալ է անդ քաղաք։

Նոյնպէս յորժամ 'ի մեղըէ զմեղու, յոստայնէ զսարդ, 'ի քերթուածոյ զքանաստեղծ, և յամենայն գործոց և յերևութից զպատճառն հարկաւոր առնումք 'ի միտ, հոգին է 'ի բարոյական ստուգութեան։

Բայց է երբէք զի խաբիմք, որպէս 'ի լսել մերում զդայլայլիկ ինչ յար և նման սոխակի, համարեսցուք անդ լինել սոխակ. զի մարթ է լինել նուագ հաւորսի որ կրելով 'ի բերանի զարուեստաւոր գործին նուագերգութեան, հնչեցուցանէ զայն իբրև սոխակ՝ առ 'ի որսալ զթռչնակն։

Նոյնպէս առ բաւական լինելոյ վկայութեան այլոց 'ի բարոյական ստուգութիւն,

հարկ է բարոյապէս անհնար լինել թէ խաբեալ իցեն պատմողք, կամ խաբել զմեզ կամիցին: Գիտէ ամենայն ոք ստուգիւ՝ թէ գոյ Երուսաղէմ և Եգիպտոս, թէպէտ և չիցէ տեսանատես. զի բազումք են յոյժ որք զգոյութենէ նոցա միաբան վկայեն. և բարոյապէս անհնար է թէ սոքա ամենեքին պատրեալք իցեն, կամ ուշ եդին պատրել զմեզ: Իսկ եթէ իցեն 'ի սահմանս աշխարհին ընդկաց ազգք ինչ շանագլխոց, թզկաց. հսկայից, չունիմք ասել ինչ ստուգութեամբ, զի դիրք որք պատմեն զայսոսիկ՝ չեն ինչ արժանահաւատ, և ոչ համաձայն միմեանց:

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Զատ հաւանականութեան գոյութեան իրաց:

Ըստ հաստատութիւն գոյութեան իրի է մեք եթէ ոչ ունիցիմք բնազանցական, բնական և բարոյական ստուգութիւն, մնայ միայն հաւանականութիւն, կամ երկբայութիւն և կամ տգիտութիւն:

Տգիտութիւնն է պակասութիւն գաղափարաց և ծանօթութեանց, կամ նշանաց հանգիտութեան նոցա և անհանգիտութեան. թէ արդեօք իցե՞ն կենդանիք յարեգական. տգէտ եմք. զի չիք 'ի մեզ գաղափար կենդանւոյ որ կարիցէ կեալ 'ի հուր, որպիսի է արեգակն: Այնպէս տգիտանամք, թէ է

ցեն կենդանիք 'ի մոլորակս. զի թէպէտ կարեն լինել, բայց չունիմք 'ի ձեռին զնշան գոյութեան նոցա։

Ըստ սոյն սահմանի ստգէտ եմք քան թէ երկբայ, թէ արդեօք գոյացութիւն ոսկւոյ մարթ իցէ նորահնար արուեստիւ կամ խառնութեամբ այլոց նիւթոց եղծանել իսպառ և դարձուցանել 'ի կիր. զի չունիմք 'ի մեզ զգաղափար ապականութեան ոսկւոյ։

Սոյնպէս ստգիտանամք քան թէ յերկուանս կամք, թէ արդեօք նոյնչափ իցէ ոսկին 'ի վերայ երկրի և յընդերս հողոյ աննուազ և անյաւելուած՝ որչափ ստեղծաւ յարարչէն 'ի սկզբանէ, եթէ օր ըստ օրէ գոյանայ 'ի համապատշաճ նիւթոյ 'ի խորս երկրի. վասն զի չունիմք հաւաստի նշան իւիք բնածին լինելոյ նմին անդստին յարարչութեան, կամ աւուրց յաւուրս գոյանալոյ։

Հաւանականութիւն և երկբայութիւն ընդ մէջ են ստգիտութեան և ստուգութեան. որք մերթ ստգիտութեան և մերթ ստուգութեան հուպ մատչին։

Հաւանականութիւնն հիմնի 'ի պատշաճութիւն և 'ի վկայութիւն այլոց. և այնչափ մեծ է հաւանականութիւնն, որչափ մերձ է 'ի բարոյական ստուգութիւն։

Հաւանականութիւնն կարէ լինել յաւէտ և նուազ յերկուց աստի, մի՝ 'ի թուոյ նշանացն, և միւս՝ 'ի զօրութենէ նոցին։

Ի թուոյ նշանացն չափի հաւանականու֊
թիւնն այսու օրինօք. եթէ մի միայն օրինակ
առաջի կայցէ գործոյ իրիք յայն ինչ պատ֊
ճառէ լինելոյ, 'ի տեսանելն միւսանգամ
գործ ինչ այնպիսի՝ մի և եթ չափ հաւանա֊
կանութեան է գոյութեան այնր պատճա֊
ռի. եթէ կրկին իցէ օրինակն, չափք հա֊
ւանականութեան լինին երկու. իսկ եթէ
աւելի՝ աւելի ևս լինին չափքն ։

Իսկ եթէ օրինակքն բազում իցեն, և ա֊
մենեքին նոյնպիսի և հաստատուն, մինչև ի֊
բաւացի վճիռ հատանել թէ այն գործ յայնմ
պատճառէ յառաջագայի միշտ, 'ի գոյութե֊
նէ գործոյն բարոյական ստուգութեամբ
ճանաչեմք յայնժամ և զգոյութիւն պատ֊
ճառին ։

Բայց եթէ բազում օրինակքն անփոփոխ
և նմանք իցեն, սակայն գտցին անդ և հա֊
կառակք, ըստ թուոյ հակառակացն նուա֊
զին և չափք հաւանականութեան ։

Եթէ տասնիցս տեսեալ իցէ զայն գործ
յայնմ պատճառէ յառաջ գալ, և երկիցս
յայլոց պատճառաց, հաւանականութեանն
ութ չափ է ։ Իսկ եթէ յերկոցունց կողմանց
օրինակք հաւասարք իցեն, եղծանի հաւա֊
նականութիւնն յերկաքանչիւր կողմանց. և
յայնժամ է երկբայութիւն ։

Այսու օրինակաւ չափի և հաւանակա֊
նութիւն վկայութեան այլոց վասն գոյու֊

թեան իրիք ։ Եթէ մի ոք վկայեսցէ, մի չափ հաւանականութեան է. եթէ երկուք իցեն վկայք, երկու է հաւանականութիւնն գոյութեան. և այսպէս կարգաւ մինչև միաբանք իցեն ։

Ապա եթէ գտցին և հակառակք, իւրաքանչիւր նուազեցուցանէ չափ մի հաւանականութեան. և յորժամ հաւասար լինին, մնայ միայն երկմտութիւն ։

Հաւանականութիւնն չափի նա և 'ի զօրութենէ նշանաց. զի զօրութիւնն իւրաքանչիւր նշանաց զսակաւն բազում անգամ հաւասարէ ընդ բազմին, և առաւելու ևս ։ Եթէ ոք տասանիցս մտադիր լինիցի գործոյ իմիք գիտել զպատճառն, չորիցս տեսանիցէ պարզ և յայտնի յոյն պատճառէ լինել, և վեցիցս ընդ աղօտ յայլմէ, առաջին չորքն եղծանեն զվեցն ։

Նոյնպէս վկայութիւն չորից բարի և իմաստուն անձանց՝ աւելի արժէ քան զվեցից բարութեամբ և իմաստութեամբ խոնարհագոյն եղելոց, որք ժխտեն զնոյն ։

ՅՕԴՈՒԱԾ Գ.

Չափ ստուգութեան և հաւանականութեան հանգամանաց իրաց ։

Որպէս գոյութեան իրաց՝ նոյնպէս և հանգամանաց նոցին ստուգութեան կամ հաւա-

նութեան՝ է զի անընդմիջաբար և ինքնադիմի ; և է զի միջնորդաւ և ցուցիւք լինիմք հասու ։ Սա ինքնադիմաբար գիտութեամբ և բնազանցօրէն ստուգութեամբ պարզաբար յայտնի է , թէ հոգին մեր ունի զօրութիւն զգալոյ , մտածելոյ , ճանաչելոյ , յիշելոյ , և գործելոյ ։

Իսկ պարզութիւն և անապականութիւն թէ արդեօք սեպհական հանգամա՞նք իցեն բնութեան հոգւոյ , ոչ է ինքնադիմաբար յայտնի , այլ խելամտութեամբ և ցուցիւք , որ ոչ ինչ պակաս գտանի քան զինքնադիմին , զի յօրէնս անհնարութեան հաստատեալ է . քանզի անհնարին է յօղուածոյ գոյացութե̄ , որով հարկ է նմա լինել քակտելի և ապականացու , ունիլ զզօրութիւն խորհելոյ ։

Իսկ թէ որ ինչ զօրութիւնք են 'ի հոգիս մեր , նոյն զօրութիւնք իցեն և 'ի հոգիս այլ մարդկան , բարոյական ստուգութեամբ հաւաստի լինի մեզ 'ի պատշաճութենէ ։

Կատարեալ ստուգութեամբ 'ի ձեռն ապացուցի հաւատարմանամք , թէ են 'ի յԱստուած յատկութիւնք միութեան , ամենակարողութեան , անփոփոխութեան , յաւիտենականութեան , անսահման իմաստութեան , նախախնամութեան , և այլ ևս գերագոյն կատարելութեանց ։

Զհրեշտակս՝ միայն 'ի յայտնութենէն Աստուծոյ գիտեմք թէ են պարզ , անմարմին ,

քան զմեզ իմացական և կատարեալ։

Զպէսպէս յատկութիւնս և զհանգամանս զգալեաց, յորժամ արդեամբք զփորձ առնումք ազդեցութեանց նոցին 'ի զգայարանս, բնական ստուգութեամբ ճանաչեմք. բայց սակայն պարտ է զգայարանաց մերոց լինել բարեկազմ, և 'ի պատկանաւոր դիրս։ Դալկահարին՝ ամենայն ինչ դեղնաշորդ երևի. և որ 'ի կարի հեռաստանէ հայի զմեծամեծ իրս՝ փոքր տեսանէ. որք եթէ որպէս նշմարեն՝ նոյնպէս և զիրսն համարեսցին, վրիպին յոյժ։

Իսկ զհանգամանաց իրաց որք արդեամբք ոչինչ ազդեցուցանեն 'ի զգայարանս մեր, միայն պատշաճութեամբ դատեմք, կամ այլոց վկայութեամբ։

Օգտակարութիւնն կամ վնասակարութիւնն հանգամանք ինչ են բանջարոց, ընդդոց, արմատոց, կենդանեաց, որք արդեամբք ինչ ոչ ազդեցուցանեն 'ի զգայարանս մեր յառաջ քան զճաշակելն. և եթէ ոք երկուցեալ 'ի վնասակարութենէն ոչ և զմի ինչ 'ի սոցանէ վտանգանայր ճաշակել, թերևս մեռայր սովալլուկ։

Նոյնպէս օգտակարութիւնն կամ վնասակարութիւնն ըմպելեաց հանգամանք ինչ են այնց հեղանիւթից, որք արդեամբք ինչ ոչ ազդեցուցանեն 'ի զգայութիւնս մեր մինչև իցեմք զփորձ առեալ զգայութեամբ. բայց

ահա տուեր եմք առանց ինչ փորձոյ անձին զբաղումս 'ի նոցանէ 'ի կիր առնուլ, համարձակեալք առ այնուսիկ 'ի պատշաճութենէ կամ 'ի վկայութենէ այլոց, թէպէտ ոչ անխտրաբար և անզգոյշ մտօք. քանզի ըստ չափոյ յաւէտ կամ նուազ ստուգութե̄ կամ հաւանականութեան նշանացն՝ զոր պատշաճութիւնն կամ վկայութիւնն այլոց ցուցանեն մեզ զհանգամանաց նոցա, համարձակիմք և մեք յաւէտ կամ նուազ վստահութեամբ առ կիրառութիւն այնոցիկ կերակրոց կամ ըմպելեաց: Այս օրէնք են և յայլ ամենայն ծանօթութիւնս հանգամանաց իրաց որք արդեամբք ոչինչ ազդեցուցանեն 'ի զգայութիւնս մեր:

ՅՕԴՈՒԱԾ Դ.

Չափ ստուգութեան և հաւանականութեան համեմատութեանց:

Գլխաւոր տեսակք համեմատութեան կամ առնչութեան եօթն թուին յիմաստասիրաց. նոյնութիւն և զանազանութիւն. նմանութիւն և աննմանութիւն. մերձաւորութիւն և հեռաւորութիւն տեղւոյ կամ ժամանակի. չափ մեծութեան կամ սաստկութեան կամ թուոյ. ընտանութիւն և ներհակութիւն. պատճառ և գործ. պարտականութիւն և կցորդութիւն: Եւ այսոքիկ

մարթին ժողովել յերիս դասս, այն ինքն է նմանութիւն, ընդ որով պարունակի նոյնութիւն. համագոյութիւն, ընդ որով տեղին՝ ժամանակն և քանակ. կցորդութիւն, ընդ որով պատճառ և գործ, ընտանութիւն և ներհակութիւն և պարտականութիւն:

Միութիւն և Բազմութիւն, Նմանութիւն և Աննմանութիւն, Պատճառ և Գործ, Ընտանութիւն և Ներհակութիւն:

Բնական սովորութեամբ դատեմք թէ բազում միանական զգացմունք են 'ի մեզ, յորժամ յստակօրէն զգայ հոգին՝ թէ տպաւորութիւն ինչ որ իբրև միաբուն ազդի 'ի մեզ, ոչ է մի և պարզ՝ այլ խառն և յօդաւոր:

Հասեալ 'ի ռնգունս մեր բուրումն ինչ անոյշ, որ հարևանցիկ զգացմամբ տայ ազդումն միոյ հոտոյ, յայնժամ ստոյգ է դատաստան մեր՝ յորժամ ծանիցուք լինել բուրումն խառն ծխանելեաց. զորս ուրոյն ուրոյն 'ի հուր արկեալ, և յստակաբար որոշեալ զհոտ կնդրկի, քաղբանի, զմռսոյ, և կասիայի, և ապա ամենեցուն միանգամայն, և գտցուք 'ի նմա զանուշահոտութիւնն զոր ընկալաք զառաջինն:

Այնպէս 'ի մի փունջ ծաղկանց բազում հոտք են, որ խառն բուրմամբ մի ինչ երևին. և 'ի միում հնչման բազում զուգաձայն նը-

ւածք գտանին որք իբրեւ զմի հնչեն, բայց հմուտքն ՚ի նոսա յստակաբար զգան ։

Միութիւն և բազմաւորութիւն արտաքին իրաց, որպէս և նմանութիւն նոցին և աննմանութիւն, և համեմատութիւնք պատճառի և գործոյ, ընտանութիւն և ներհակութիւն, զոր բնախօսք ձգողութիւն և վանողութիւն, կամ կորզողութիւն և մղողութիւն անուանեն, որպէս և այլք նմանապանութեամբ իմն համակրութիւն և հակակրութիւն կոչեն, բնական ստուգութեամբ հաւաստի լինի մեզ յորժամ բարեկազմ և քաջայարմար զգայարանօք առնուցումք ըզյստակ զգացումն և զիմացուած նոցա ։

Իսկ յորժամ զգացումն և իմացուած չլիցեն յստակ և յայտնի, կամ զգայարանքն չլիցեն բարեյարմար, կամ զհամեմատութեանցն ոչ ներկայ զգացմամբ և իմացուածիւ դատաստան արասցուք, այլ ՚ի պատշաճութենէ կամ յայլոց վկայութենէ, յայնժամ ունիմք զբարոյական ստուգութիւն միայն, կամ զհաւանականութիւն կամ զերկբայութիւն, ըստ առաւելութեան և նուազութեան թըւոյ և զօրութեան նշանացն զորս գտանեմք ՚ի նոսա ։

Նոյնութիւն ։

Յորժամ կամիցիմք ճանաչել զնոյնութիւն առաջիկայ իրին կամ զհանգամանաց ինչ նա-

-քան զոր դիտեալ եմք կանխաւ , համեմա-տեմք զայժմեան զգացումն և զիմացուած մեր ընդ առաջինն զգացմանն և իմացուա-ծոյն , և եթէ գտանեմք նման նմին , դա-տեմք լինել նոյն . և այս է բարոյական ստու-գութիւն ։

Բանից ստուգութիւնն է որ հաւա-տարիմ առնէ զմեզ , թէ նման գործք 'ի նման պատճառաց գան յառաջ , յորժամ 'ի մերոյ բերեմք , ապա նոյն իր է որ ճանաչի այժմ 'ի մէնջ և ոչ այլ . իսկ ստուգութիւնն ընդ-բարոյական ստուգութիւն և եթ գործէ , և ոչ աւելի ։

Այն զի ներքնոյ զգացմունք և իմացուածք թէ իցեն ամենևին նման անցելոցն , ոչ միշտ բարոյապէս ստոյգ գտանին . զի չէ՛ այնպէս հաստատ , թէ յիշողութիւնն զանցեալ ընդ-զգացմունս և զիմացուածս 'ի միտ ածիցէ մեզ այժմ՝ յայտ և նման ամենևին առաջին գիտողութեան մերում ։ Իսկ եթէ ածիցէ և՛ս , չէ՛ հնար ստուգիւ գիտել , թէ առա-ջինկոյ իրն կամ հանգամանք ինչ նորաւն նոյն իցէ ընդ անցելոյն զորոյ զփորձ առաք , և ոչ նման և եթ ։

Իր ինչ բարոյական ստուգութեամբ է նոյն , յորժամ գտանի 'ի նմա հանգամանք ինչ նմա միայնոյ սեպհական ։ Անծաղանգուած իրաց բաւական է նոյնութիւն տեղւոյ . նոյն քաղաքն է , նոյն գետակն , նոյն ամրոց , զի են

'ի նոյն տեղւոջ զոր տեսաք յայլ և այլ ժամանակս ։

Եւ նոյնութիւն անձանց՝ պահանջէին նոյնութիւն արտաքին կերպարանաց, և փոխուց և կենաց նոցա, զոր դիտեմք եւս յառաջագոյն ։ Իսկ նոյնութիւն այլոց իրաց ճանաչելին յաւէտ կամ նուազ ստուգութեամբ և հաւանութեամբ ըստ յատուկ կամ ազգա յիշատակի նշանաց նոցին ։

Համեմատութիւնք քանակի ։

Քանակութիւնն կրկին է ՝ շարունակ և տարորոշ ։ Շարունակ քանակօք իմանամք ընդարձակութիւնն, որ ենթակայ է երկրաչափութեան. և տարորոշ քանակօք իմանամք զթիւս, որ ենթակայ է թուաբանութեան՝ զորոց ճառեն երկրաչափք և թուաբանք ։

Ի համեմատութիւնս քանակի յայնժամ բնազանցական ստուգութիւն է, յորժամ հրաժարեցուցեալ մտօք յամենայն ենթակայէ, առանձինն խորհիմք զնոսա ։ Իսկ 'ի զգալի ինչ ենթակայի մտածեալք, բարոյական ստուգութիւն միայն է, կամ սոսկ հաւանականութիւն, և այն յաւէտ կամ նուազ ըստ ցուցանելոյ նշանացն ։

Համեմատութիւնք պարագայանութեան ։

Պարտականութեամբն իմացեալ լինին ամենայն բարոյական կցորդութիւնք. օրէնքն

չզրկելոյ զոք, բացարձակապէս նկատեալ ըս-տոյգ է ամենեւին, զի է կից ընդ իրաւանց պահպանութեան անձին. յայս օրէնս հիմնին ամենայն պարտք բնական արդարութեան, վասն որոյ և նոյնպէս ստոյգ են։

Պարտք մարդասիրութեան, որ է օգնել այլոց գտնել 'ի ծանր վտանգս, ինքնին յառաջ գան 'ի կարեկցութենէ, որ է կիրք 'ի բնէ աննդակից մարդկութեանս։

Ի բնական պարտուց մարդոյ առ մարդ, ելանեն պարտք քաղաքացւոյ առ քաղաքացի, ընկերութեան առ ընկերութիւն. և առանձին պարտք իւրաքանչիւր առ միմեանս ըստ իւրաքանչիւր կցորդութեանց կամ դաշանց։

Յետ նշանակելոյ համառօտիւ զազգի ազգի հնութիւնս և զչափ հաւանութեան նոցա կամ ստուգութեան, արժան է խօսել ինչ և զեղանակէն, որով հասանեմք առ ստուգութիւն նոցին։ Եւ քանզի զոմանս 'ի նոցանէ մեզէն գտանեմք, և զոմանս յայլմէ ուսանիմք, կարեւոր իսկ է յայտ առնել և զճանապարհն որով կարիցեմք ժամանել 'ի գիւտ ճշգրիտ հնութեանց։

ՊՐԱԿ Ի·

Զմտութիւնք զոր մեղէն ստանամք, և համառօտ սահմանք գիտութեանց:

Զմտութիւնք՝ որպէս յայտ եղև 'ի նախընթաց բանից, կամ գոյութեան էից են, կամ հանգամանաց նոցին, և կամ համեմատութեանց. և կէսք 'ի գոյից նիւթականք են և կէսք աննիւթականք, զորոց խօսեսցուք սակաւուք. ուր նշանակեսցուք և զսահմանս գլխաւոր գիտութեանց առ ծանօթութիւն խնդրողին:

ԳԼՈՒԽ Ա·

Զմտութիւնք գոյութեան և հանգամանաց աննիւթ գոյից:

Աննիւթական գոյացութեանց և հանգամանաց նոցին հմտութիւն յատուկ ենթակայ է բնազանցական գիտութեան. բայց առաջէն զայս և եթ յուշ առնեմք, թէ առ 'ի ճանաչել զգոյութիւն հոգւոյ մերոյ՝ բաւական է զգացումն ինչ գիտել յանձինս: Իսկ զօրութեանց և ներգործութեանց հոգւոյ կարեմք իրազգած լինել եթէ խնամով ուշ դիցուք ամենայնի որ կրի յանձինս մեր՝ յորժամ հոգին զգայ, մտածէ, ճանաչէ, յիշէ, կամի և գործէ ինչ 'ի ներքս յինքեան և արտաքս իւր:

Բայց պարտիմք զերկուս զայսոսիկ խրատս ունել 'ի մտի, և նովին կանոնօք վարիլ:

Ա. Յորժամ մեք ինքնին զմեզ մտածեմք, յայնժամ առաջնորդութեամբ ներքին զգայութեանց վարիմք. զի յայնժամ 'ի ձեռն զօրութեանց և ներգործութեանց հոգւոյ ըմբռնեմք զհմտութիւն որոց եմք 'ի խնդիր: Վասն որոյ պարտիմք զգուշանալ՝ ըստ խրատու մեծի ուրումն իմաստասիրի, թէ մի՛ գուցէ ցնորք մտաց և յոյզք շարժմանց և մտահաճութիւնք մոլորեցուսցեն զմեզ՝ գոյացուցանել 'ի մեզ զայն որ չէ, և թաքուցանել կամ այլայլել զայն որ է:

Բ. Որ ինչ 'ի մեզ ինքեանս գործի՝ ստոյգ է ամենեւին, եթէ ըստ այսմ խրատու վարեսցուք. իսկ որ ինչ յայլս գործիցի, բարոյական ստուգութիւն է. զի ըստ պատշաճութեան միայն կարեմք դատաստան տանել, ուր յոլովակի սխալիմք եթէ յանձնէ չափիցեմք զայլս: Զոր օրինակ յորժամ համարիցիմք՝ թէ որպէս է զգացումն և իմացուած և ճանաչումն և յօժարութիւն և դատումն և կարծիք մեր յայս ինչ կամ յայն ինչ դէպս՝ նոյնպէս են և այլոց. վասն զի են ազատ պատճառք և ոչ հարկաւորք, զի անփոփոխելի օրինօք վարեսցին:

Զհմտութենէ էութեան և յատկութեանցն Աստուծոյ ոչ ունիմք խօսել ինչ, զի այն բնական աստուածաբանութեանն է անկ. և ոչ զհրեշտակաց, զի զնոցանէ յայտնեալ աստուածաբանութեանն է ճառել.

խոկ զհմտութենէ նիւթականաց ստացի կարծ 'ի կարծոյ առ փոքր 'ի շատէ տեղե-կութիւն ։

ԳԼՈՒԽ Բ.

Հմտութիւնք գոյութեան և հանգամանաց նիւթական գոյից ։

Որպէս բնազանցութիւնն ճառէ զհո-գեղինաց, նոյնպէս և բնախօսութիւնն զըզ-գալի գոյացութեանց. և քանզի բազում ազգ-են զգալեաց, նմին իրի և բնախօսութիւնն 'ի բազում մասունս բաժանի ։

Համառօտ պատկեր գիտութեանց զգալեաց ։

Գիտութիւնն՝ որ քննէ զզգալի և զնար-թեղէն բնութիւնս՝ կոչի բնախօսութիւն, բնազննութիւն, բնագիտութիւն, որ է գի-տութիւն ամենայն գոյացական մարմնոց ։

Որ քննէ միահամուռ զտիեզերս ամենայն, զսկիզբն նորա, զկարգ, և զբաժանումն մա-սանցն, զօրէնսն որովք վարի, զտարերսն յո-րոց կազմեալ կայ. և այս կոչի տիեզերաբա-նութիւն ։ Եւ է զի քննէ զհասարակ հան-գամանս ամենայն մարմնեղինաց, զտարածու-թիւն, զսերտութիւն, զդանդաղութիւն, զօրէնս ծանրութեան, ձգողութեան և վա-նողութեան և զայլս, կոչի ընդհանուր բնա-խօսութիւն. և որ քննէ զզգալիս մասն մա-սըն, զննելով զյատկութիւնս, զգործս և

զսկզբունս նոցա, և տայ մասնաւոր բնախօսութիւն:

Ի զգալի բնութիւնս ոմանք երկնաւոր են և ոմանք երկրաւոր. որ զերկնաւորսն քննէ և տեղեկանայ չափոյ մեծութեան և հեռաւորութեան նոցա, և գտանէ զշարժմունսն, և անուանի աստեղաբաշխութիւն. իսկ որ զերկրաւորսն, և կոչի առաստական անուամբ բնախօսութիւն:

Յերկրաւոր մարմնոց տարր ջուր, օդ, հուր, և հող, առաջին քննութեան արժանի են, զի 'ի խառնութիւնս այլոց մտանեն, վասն որոյ չորք տարերք կոչին: Մասն բնախօսութեան որ զՋրոյ ճառէ, տայ ջրաբանութիւն: Մասն որ զօդոյ ճառէ, զննելով զառաձգութիւն նորա և զծանրութիւն և զայլսն, տայ օդաբանութիւն. և որ զննէ զերևոյթսն որ 'ի նմա, որպէս անձրև, ձիւն, կարկուտ, եղեամն, որոտումն, շանթ, հողմն, և այլն, որք օդերևոյթ անուանին, կոչի երևութաբանութիւն: Մասն որ քննէ զբնութիւն հրոյ, տայ հրաբանութիւն. ընդ որով է և ճառն լուսոյ և շփհրոյ: Իսկ որ զերկրէ ճառէ, երկրաբանութիւն կոչի. և որ աւանդէ զօրէնս չափելոյ զայն, երկրաչափութիւն անուանի:

Ա. Մասնաւոր մարմնոց յօդաւորելոց 'ի խառնուածոյ տարերց՝ ոմանք գործարանաւորք են և կենդանիք, և 'ի ներքուստ ու-

նքին յմիջեւանս զզօրութիւն զգալոյ և կամա-
կար շարժելոյ . և որք կոչին կենդանիք :

Բ. Այլ ոմանք Թէպէտ և գործարանաւորք են և կենդանականք , բայց անզգայունք . մինչև յերկրէ կամ յերկնէս ջրոց յորմէ սնանին . անզգայ են և չունին զշարժումն կամաւոր . և որպէս անուանին տունկք և բոյսք :

Գ. Այլ կէսք անկեալ դնին յերեսս երկրի կամ ընդ հողով , և չունին զգործարանս . և զկեանս , և զշարժումն կամակայական և զզգայութիւն , և կոչին հանք : Այս երեք կարգք միահամուռ անուանակոչին երբեակ ցեղապետութիւնք բնութեան :

Որդ՝ որ համարակաբար զսոցանէ պատմէ , կոչի բնապատմութիւն . մասն որ յաղագս կենդանեաց է , կոչի կենդանաբանութիւն . մասն որ 'ի վերայ բուսոց է , ասի տնկաբանութիւն . մասն որ խօսի զհանածոյից և զբրածոյից որ 'ի բովուց հատանին , կոչի հանքաբանութիւն :

Բայց անպիտան և սնավաստակ հետաքրքրութիւն էր ճանաչելն միայն զբնութիւն մարմնոց , եթէ չէր փոյթ առնուլ զնոսա 'ի պէտս կենաց . ուստի և զբաղումն 'ի նոցանէ 'ի կիր արկանէ բժշկականութիւնն 'ի պէտս դեղոց և յապաքինումն ախտից : Այլ գիտութիւնն որ կոչի յատուկ բնագիտութիւն արհեստից , վարէ զնոսա 'ի պէտս ազգի ազգի կենցաղօգուտ արուեստից և ձե-

ռագիտութեանց , 'ի ձեռն առեալ զտարրալուծութիւն 'ի հալել և 'ի ձուլել զհրահալեալս , յապակեգործութիւն և 'ի ներկարարութիւն և յայլս . զշարժաբանութիւն և զգործեաց հնարաւորութիւն 'ի կազմել զանօթս և զկահս տան 'ի շարժել զմարմինս , ոլորել , քակել , հիւսել , յայլ և այլ ձևս և 'ի կերպարանս ածել . և զտնկաբանութիւն , 'ի լրումն երկրագործութեան արհեստի , բարեբոյս և արդիւնաւոր առնել զերկիր ։

Այսքիկ են գլխաւոր մասունք բնախօսութեան , որոց հմտութիւնն պէտս ունի գիտողութեան և փորձոյ , որ բնախօսից է անկ ։

ԳԼՈՒԽ Գ.

Հմտութիւնք համեմատութեանց ։

Խօսեցեալ համառօտիւ յաղագս էից և նոցին հանգամանաց ; Նշանակեսցուք այժմ և զօրէնս քննութեան և գիւտի համեմատութեանց նոյնութեան և նմանութեան . զքանակի՝ ընդ որում է մեծութիւն և թիւ , նաև միջոց , ժամանակ , և շարժումն . ըզպատճառի և գործոյ , յորում պարունակի ընտանութիւն և ներհակութիւն . և հուսկ ապա զպարտականութեան ։

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Նոյնութիւն և նմանութիւն ։

Յորժամ առաջի կայ գտանել զնոյնութիւն իրի և զյարակայութիւն հանգամանաց նորա, չէ բաւական միայն 'ի վկայութիւն յիշողութեան լինել ապաստան, որ ինքնին միայն բազում անգամ խաբէ. այլ և պարտ է գիտել զյատկութիւնս որք երևին յիրի անդ, և զդէպսն յորս գտանի. զի բաղդատեսցուք ընդ այլ դիտողութիւնս. քանզի 'ի փոփոխել դիպացն, կարելի է զի նոյն իր այլազգ երևիցի, և ներհակ այսմ՝ այլազգ իր նոյն գոլ թուեսցի ։

Ըստ սմին օրինակի է իմանալ և զնմանութիւն իրաց. զի յորժամ փոփոխին դէպքըն՝ նմանագոյնքն աննմանք երևին, և աննմանքն նմանագոյնք ։

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Քանակ ։

Քանակն՝ վերացուցեալ յինչ և իցէ նիւթական ենթակայէ՝ պարունակէ ոչ միայն զշարունակն որ է մեծութիւն և զանգուած, և զտարորոշն որ է թիւ, այլ և փակէ յինքեան զմիջոց, զժամանակ և զշարժումն. և համեմատութիւնք նոցին կազմեն զչափաբերութիւն, որ ստուգագոյն է 'ի բնական գիտութիւնս ։

Զափաւորութիւնն պարտալի 'ի քննել և իմանալ զհամեմատութիւնս հաւաստաւութեան կամ անհաւաստութեան երկուց քանակաց ։

Ամենայն եթէ միայն զմերացեալ և զաննիւթական քանակօք պատահէր չափաւորելութիւնն, անավլասրակ դեդերումն էր և ընդունելն քերան. բայց քանակի չափաւորեալք զանձնիւթական և զիմանալի համեմատութիւնս քանակի փարեն 'ի պէտս առանեզեա բաշխութեան, աշխարհագրութեան, նաւորդութեան, չարժաբանութեան, և այլոց նիւթական և զգալի իրաց յօգուտ մարդկութեանս, է գիտութիւն պատուական և պիտանի. վասն որոյ և ամենայն հրահանգեալ ազինք անձանձիր երկասիրութեամբ ծաղկեցուցին յառաջ խաբեանց, և դրեթէ հասուցին 'ի կատարելութիւն ։

ՅՕԴՈՒԱԾ Գ.

Պատճառ և գործ ։

Ի համեմատութիւնս պատճառի և գործոյ երկու ինչ խնդրի, եղեալ զգործն՝ ցուցանել զպատճառն, եղեալ զպատճառն՝ իմանալ զգործն ։

Ա. Եղեալ զգործն՝ խնդրել զպատճառն.

Յորժամ խնդրի պատճառ գործոյ, նախ ուշի ուշով քննելի է զբուն գործն, ապա զա-

միևնոյն պատշաճեալ հանգամանօք որք նը-պատակին գործոյն :

Պատճառք գործոյն որ խնդրի, կրկնակի գտանի, մի՝ յորժամ յառաջ երևիցի պատ-ճառն յորում լինի. զոր օրինակ եթէ խնդրի-ցի պատճառն անձրևոյ թէ ուստի՞ գան յա-ռաջ. յառաջ տեսանի թէ ամպք լինին 'ի ծովային և 'ի հողային գոլորշեաց. Երկրորդ՝ յորժամ յայտնի լինիցի թէ յայլմէ իմեքէ ոչ է մարթ լինել. զոր օրինակ եթէ խնդրիցի պատճառն անցմելոյ մարմնոյ, ստոյգ երևի թէ են ծակոտիք իւրեանց. զի չէ մարթ այ-լով պատճառաւ պարունակիլ մարմնոյ իրիք 'ի փոքր միջոց քան զառաջինն առանց կորու-սանելոյ ինչ 'ի զանգուածոյն, բայց եթէ պատճառաւ ծակոտեացն իւրոց :

Այսպէս որոյ կրկնակի լինի սխալել. Առա-ջին՝ պատճառս իրիք համարել զայն՝ միայն վասն յառաջելոյ քան զգործ ինչ, թէ և ոչ երևի ի ընդ նմա հաղորդութիւն կամ համե-մատութիւն պատճառաւորութեան : Այս սխալ է զոր ամենք անուանեն գուշակու-թիւն. որպէս 'ի խաւարմանէ արեգական և լուսնի, և 'ի պէսպէս ընթացից և յաղ-դեցութեանց մոլորակաց գուշակեն 'ի հը-նումն յիւրաքանչիւր ժամանակս զյաջողակ դէպս և զձախող պատահարս 'ի մարդիկ. Այնպէս և յերևմանէ գիսաւոր աստեղաց ահաբեկ առնէին զմարդիկ, թէ յայնժամանէ

պատճառին տօլ և պատերազմ և հիւանդութիւն. այնու զի երբեմն այսպիսի վնասակար դիպուածք պատահաբար զհետ եկին երեւման գլխաւոր աստեղաց.

Երկրորդ՝ միոյ և եթ պատճառի տալ զայն՝ որ 'ի բազմաց լինիցի. զի կարի սովորական են գործք՝ որոց չիցեն բազում պատճառք: Զոր օրինակ եթէ պատճառ ջերմութեան հանքային ջուրց ջերմկաց համարիցիմք լինել միայն զծծումբ, գուցէ ոչ ուղիղ դատեցաք. զի մարթ է լինել զուգընթաց պատճառ նմին և երկաթ. որք խառնեալք ընդ միմեանս, և եռացեալք 'ի գոլորշեաց հրոյ 'ի ծոցս երկրի բնաւորելոյ, ջեռուցանիցեն զջուրս ջերմկաց: Քանզի ծաղիկ ծծմբոյ խառնեալ ընդ փշուրս խարտոցեալ պողպատի ջեռնուն, և եռուզանեն զգոլորշի և զծուխ: Սմին իրի պարտ է նախ զգուշութեամբ քննել զհանգամանս գործոյն, և ապա զպատճառսն հաստատել: Նման որոյ վրիպի այն բժիշկ, որ վեր 'ի վերոյ շօշափմամբ զարկի բազկին և տեսութեամբ լեզուի խօթացելոյն, իսկ և իսկ դատեսցէ զպատճառ ախտին առաւելութիւն մաղձին կամ արեանն լինել, ոչ ինչ 'ի միտ բերելով զայլ ևս որք կարեն լինել պատճառ նախընթաց կամ յարակից: Քանզի բազումք 'ի նոցանէ 'ի պէսպէս խառնուածոց, և 'ի բնական կամ բարոյական պատճառաց փոփոխին ախտք յախտ. որոց վասն

պիտոյ մանր խուզողութիւն առ 'ի ճանաչել և ապաքինել ։

Բ. Ընդեալ զպատճառն՝ դուշակել զգործն ։

Եթէ պատճառն կայ, և խնդրի դուշակել զգործն, պարտ է նկատել զերկուս զայսոսիկ. մի՝ պատճառն հարկաւոր իցէ եթէ ազատ. և միւս՝ օրէնքն գործելոյն կամ հանգամանքն ծանօթ իցեն եթէ անծանօթ ։

Գործք հարկաւոր պատճառաց ։

Մարթ է անվրէպ դուշակել զգործ հարկաւոր պատճառաց, որոյ օրէնքն յայտնի իցեն և հանգամանքն ծանօթ ։

Եթէ 'ի մեծագոյն ապակեղէն անօթ ինչ հեղցի մաքուր ժանտաջուր առատ, և 'ի նմա արկցի փոքր ինչ արծաթ, հաւաստեալ է փորձիւ եթէ արծաթն իսկոյն լուծանի ։ Ուր եթէ արկցի փոքր ինչ թիթեղն պղնձի, յայտ է զի ժանտաջուրն մեկնի յարծաթոյն և միաւորի ընդ պղնձոյն լուծանելով զնա, իսկ արծաթն որպէս մոխիր իջանէ յատակս անօթոյն ։

Իսկ եթէ պատճառն հարկաւոր իցէ, բայց օրէնքն գործելոյն կամ հանգամանքն չիցեն ծանուցեալ ըստ բաւականին, յայնժամ չիք ստուգութիւն, այլ հաւանականութիւն և եթ կամ երկբայութիւն ։

Այսպիսի բազումք են 'ի բնական գործոց, զի չունի ոք հաւաստեաւ ասել, թէ

անձրեւ բազում լինիցի 'ի տարւոջս կամ սակաւ ։ Կամ ծառք ծաղկախիտք վնասեսցին 'ի մառախլոյ թէ ոչ. կամ 'ի փորելն զայս ինչ անդի՝ ելանիցէ ջուր քաղցր կամ դառն եւ յայսչափ գիրկս ։

Ուստի յայնժամ հաւանականութիւնն է խնդրելի. եւ այնչափ զօրաւոր է՝ որչափ հաւանականագոյն իցեն պատճառքն եւ օրէնքն գործելոյն, եւ հանգամանքն յորս է այժմ կամ լինելոց է յերեւել գործոյն. եւ այս է արուեստն գուշակութեան, յորում նա է քաջ, որ առաւել հմուտ է իրացն ։

Այսպէս ներհուն բժիշկն բազում քննութեամբ կանխաւ գիտացեալ զարդիւնս դեղոցն, եւ ներկայ եւ անցեալ բնական եւ բարոյական հանգամանաց հիւանդին տեղեկացեալ, գուշակէ զպատճառս եւ զանցս ցաւոց, եւ ըստ այնմ տայ զդեղն եւ բժշկէ ։

Պատահական դիպուածք ։

Այն են գործք սոսկ պատահականք, որ յառաջ գան 'ի զուգընթացութենէ բազում պատճառաց, որոց չէ՛ մարթ նախատես լինել. բայց բազում անգամ կամիմք գուշակել զնոցանէ ։

Պատահէ այս առաւել 'ի խաղս վիճակաընկեցութեան եւ բաղդի. 'ի բազում թուոց արկելոց 'ի սափոր, արդեօք այս ելանիցէ թէ այն, ոչ է հնար գուշակել. զի 'ի շարժ-

ժիլ սափորոյն՝ անհնար է գիտել թէ որով կարգաւ կայցեն թիւքն, առ ի 'ի նոցանէ դիպեսցի ձեւն հանողին ։

Ապա խաղին յոյժ, որք երազողք, հմայիւք և այլով սնոտի գուշակութեամբ յուսան գիտակ լինել թուոցն ելանելոյ 'ի վիճակս, և յայս սպասին խաղս ։

Բայց երբեմն գիտի գուշակել դհաւանութիւն կամ զանհաւանութիւն պատահական ինչ գործոյ առանց գիտելոյ զամենայն կարելի դիպուածն ։ Ապաքէն ոչ ոք գիտէ զամենայն պատճառս փոփոխելոյ օդոյ յերեկորեայ մինչև ցառաւօտ, նոյնպէս և զամենայն դիպուածս որք կարեն պատահիլ ։ Այնուամենայն կարէ կշռել զամենայն ծանօթ դիպուածն, և տեսանել թէ քանիք իցեն յերկոսին կողմանս ։

Դիցուք թէ տասն անգամ տեսեալ իցէ ոք զերկինս շառագոյն ընդ երեկս, և յառաւօտուն ութ անգամ պարզ գտան երկինք և երկիցս ամպոտ և պղտոր . ապա հաւանելի է, թէ շառագունել երկնից ընդ երեկս՝ նշան իցէ պարզութեան վաղուի ։

Բայց այս հաւանութիւն որ հաստատի 'ի թիւ՝ աճէ ևս . զոր օրինակ 'ի խռովիլ երկնի կայծակամբք և որոտմամբք, 'ի միում նաւագի շանթահար կործեալ մի ոմն 'ի հազարաւոր մարդկանէ . ապա հաւանութիւնն անվնաս սրահելոյ է հազարիցս ընդդէմ միոյ ։

Գործք ազատ պատմաբանաց:

Դժուարին է գուշակել զգործ ազատ պատմաբանաց որպիսի են մարդիկ, որովհետև զայս կամ զայն առնել՝ կախեալ կայ զազատ հաւանութենէ առնողին:

Սակայն մարթ է նախագուշակ լինել ՚ի հաւանական նշանաց ինչ, այսինքն ՚ի վարուց, ՚ի բարուց և ՚ի կրօնից ուրուք, և ՚ի զօրութենէ առթիցն որք գրգռեն զմարդն ՚ի գործ:

Արուեստ քաղաքավարութեան կամ տեսչութեան յայսմ կայանի. նախ քննէ ընդհանրապէս զբնութիւն մարդկան ՚ի պատմութեանց վաղեմի անցից և յիրողութեանց ներկայից. և ծանուցեալ զբնութիւն ախտից, ախորժակաց և յօժարութեանց, և առթից որք գրգռեն զմարդն ՚ի գործ. և յայսցիկ հմտութեանց առաջնորդեալ մտանէ ՚ի մասնաւոր քննութիւն բնաւորութեան, բարուց, խառնուածոց, բնական և բարոյական հանգամանաց նոցա որոց կարգեալ է տեսուչ և առաջնորդ, և ըստ տեղեկութեանն զոր ստացաւ զնոցանէ՝ խնդրէ և գտանէ զպատշաճաւոր հնարս ածել ՚ի կատար զդիտաւորութիւն իւր:

Կարևոր է այս հմտութիւն և օգտակար ոչ միայն առաջնորդի ազգի միոյ կամ ժողովրդեան, այլ և իւրաքանչիւր ումեք ՚ի

մարդկանէ ըստ իւրում չափու ; որ զգործ տնտեսութեան կամ դատաւորականութեան յանձին ունիցի, կամ հանդերձեալ է կենցաղակից լինել այլոց ։

ՅՕԴՈՒԱԾ Դ.

Պարտականութիւն ։

Պարտականութիւնն է հիմն և արմատ բովանդակ բարոյական իմաստասիրութեան. և բնական, քաղաքական և հասարակաց իրաւանց ։ Աւասիկ 'ի համեմատութիւնն պարտականութեան ընդ առաջ եկանեն երրեակ պարտք մարդոյ զոր ունի առ Աստուած, առ ինքն, և առ համազգիս իւր ։

Բանիւ գոյութեան մերոյ ծանուցեալ միանգամ զգոյութիւն արարչին, զհետ գան պարտք երախտագիտութեան, սիրոյ, մեծարանաց և հնազանդութեան առ նա՝ այլովքըն հանդերձ ։

Ի բնաւորական սիրոյ բարեբաստիկ զկեանըս վարելոյ՝ ինքնին յառաջ գան պարտք առ անձինս մեր, որ այն ինքն է օգուտն անձանց մերոց, որով ստիպիմք կացուցանել զմեզ երջանիկ ըստ կարողութեան մարդկան . իսկ առաջնորդել առ այն՝ բարոյական իմաստասիրութեան է անկ ։

Պարտք առ համազգիս բովանդակին յերկուս պատուիրանս յօյասսիկ. Մի՛ ունեք առ-

նել զայն ինչ՝ զոր ոչ կամիմք թէ արասցեն մեզ. և Զոր կամիմք թէ արասցեն մեզ մարդիկ, զնոյն առնել նոցա: Առաջինն բացասականէ զարգելական պարտս, այսինքն զհրաժարականն. և երկրորդն զհրամայականն, այսինքն զյանձնառականն:

Յայտ ուրեմն է, զի յիրաւանց իւրաքանչիւր չզրկելոյ յումեքէ՝ յառաջ գայ փոխադարձ պարտք ոչ զոք զրկելոյ: Իսկ քանզի երբակի մարթ է զրկել զոք, հատուցանելով վնաս անձին, կամ ընչիցն և կամ պատուոյն, աստ պարտաւորիմք հեռի կալ յերից աստի անիրաւութեանց. և այս կոչի պարտք արդարութեան.

Ի բնաւորական կարեկցութենէ ելանեն պարտք օգնելոյ այլոց, զորս առանց ինչ վընասու մերոյ կարող եմք առնել. և 'ի մեծամեծ վտանգս ոչ յետս կալ յօգնականութենէ, թէ և նեղութիւն կամ վնաս ինչ հասանիցէ մեզ. և այս կոչի պարտք մարդասիրութեան:

Արդ՝ որ կատարէ զհարկաւոր և զանհըրաժեշտ պարտս արդարութեան և մարդասիրութեան, և չառնէ ինչ աւելի, այնպիսին արդար միայն ասի. իսկ որ աւելի ինչ քան զհարկաւոր պարտսն առնէ, մանաւանդ մեծաջան փութով, կոչի այնպիսին ոչ միայն արդար՝ այլ և առաքինի:

Քաղաքական իրաւունքն՝ է նոյն իսկ բը-

նակման իրաւունքն պատշաճեալ օգտի իւրաքանչիւր ընկերութեան ։ Այս իշխան որ կամ տեսուչ հասարակութեան յորժամ պիտանի համարիցի վասն ինչ ինչ իրաց օրէնս դնել, պարտ է նմա համաձայն բնական օրինացն կարգել, զի արդար լինիցին օրէնքն, և յօգուտ իւրաքանչիւր ընկերութեան ուղղել, զի պատշաճաւոր լինիցին ։

Այս յորժամ դէպ ինչ լինիցի ումեք զարդարութենէ և զպատշաճութենէ օրէնսդրին դատաստան առնել, խնամով քննեսցէ զօրէնսն, թէ արդեօք համեմատ իցէ բնականին՝ թէ հակառակ, օգտակար իւրաքանչիւր ընկերութեան՝ թէ անօգուտ կամ վնասակար, և ըստ այնմ դատեսցի ։ Եւ որպէս զքաղաքականն իրաւանց՝ նոյնպէս և զհասարակաց իրաւանց պարտ է դատաստան առնել ։ Զի և նմա հարկ է անխտիր զհետ երթալ բնականին՝ առ 'ի լինել արդար, և յօգուտ հասարակաց կարգելոյ՝ առ 'ի լինել պատշաճաւոր ։

ԳԼՈՒԽ Դ.

Ոճ ընդհանուր քննութեան ։

Ա. Յորժամ կամիցիմք քննել ինչ առ խելամուտ լինելոյ նմին, պարտիմք 'ի բաց պատուցանել զայն յայլ ամենայն աւելորդ

խնդրոյ , և նմին միայնոյ մտադիր լինել ։

Բ. Եթէ կանուխ քննութեամբ ունիցիք տեղեկութիւն զառաջիկայ իրէն, մի աւելորդ համարեսցուք քննել և ևս. ուր եթէ երկմտութիւն ինչ ընդառաջ ելանիցէ , ուշ դիցուք զայն լուծանել անդէն, և ապա յառաջ անցանել ։

Գ. Եթէ 'ի խնդիրն բազում իրք իցեն քննելիք, զմի մի առանձինն 'ի մէջ մատուսցուք. և օրէնս դիցուք անձանց , 'ի ծանօթէ յանծանօթն, և 'ի դիւրագունից 'ի դժուարինս յառաջանալ ։

Դ. Թուեսցուք զիրն որչափ ինչ մարթ է ըստ բոլոր հանգամանաց և ըստ բովանդակ մասանց. և այսու ևս ոչ բաւականացեալ, համեմատեսցուք նա և ընդ այլս որք ունին զհաղորդակցութիւն ինչ ընդ նմա ։

Ե. Որ ինչ ինքնադիմաբար յայտնի իցէ, կամ ցուցիւք հաստիցի , զայն միայն ըստոյգ համարեսցուք. և ուր տարակուսութիւն ինչ երևեսցի , ընդ երկբայականս դասեսցուք ։

Զ. Մի երբէք հարևանցիկ և վեր 'ի վերոյ ծանօթութեամբ 'ի մասնաւորաց ընդհանուր հետևութիւն հանցուք , մինչև ոչ յայտնի երևեսցի թէ ընդհանրապէս ասացեալն արդարև պատշաճի միոյ միոյ յայնմ կարգէ եղելոց զորմէ է խնդիրն. քանզի սխալեմք յոյժ եթէ առանց բաւական քննու-

Թեան 'ի մասնաւորաց ոմանց, զորս տեսանեմք՝ ընդհանուր բան հետևեցուցանեմք։ Ըստ այսմ օրինակի անկանիմք 'ի վրիպանս՝ եթէ զայն որ յատուկ է տեսակին՝ վերածեսցուք սեռին, կամ զորս պատշաճին մասնաւորաց ոմանց՝ մակադրեսցուք տեսակին։

ՊՐԱԿ Բ.

Հմտութիւնք զոր յայլոց ուսանիմք, և արուեստ դատողական։

Հմտութիւնք զոր ուսանիմք յայլոց, կամ զմտաւորական խնդրոց են, և կամ զգործոց եղելոց. յերկոսին 'ի սոսա դատողական արւեստին է անկ ընտրել և որոշել զճշմարիտն 'ի սուտ թէ յապացոյցս և թէ 'ի պատմութիւնս այլոց։

ԳԼՈՒԽ Ա.

Մտաւորական իրք։

Ի մտաւորական խնդիրս հարկաւոր գիտելիք են երկոքին սոքա. մի՝ սկզբունք կամ օրէնք հաստատութեան ապացուցից, և միւս՝ հետևութիւնք յառաջ եկեալք 'ի նոցունց։

Առ 'ի դատել և որոշել զստուգութիւն և զհաւանութիւն և զերկբայութիւն ապացուցից, բաւական են յառաջագոյն ասա-

ցեալքն յաղագս սկզբանց . զի օրէնք անհնարութեան՝ որովք պարտ է հարց և փորձ առնել, անմոլորաբար առաջնորդեն 'ի ցուցանել զճշմարիտն :

Իսկ առ ուղիղ և ըստ օրինի հետևութիւն հանելոյ 'ի սկզբանց անտի, մնայ խօսել յերկրորդում մասին որ յաղագս Տրամախոհութեան :

ԳԼՈՒԽ Բ.

Գործ :

Ի խնդիրս գործոց երկու ինչ են, որոց կարևոր է լինել մտադիր . մի՝ հանգամանք իրին եղելոյ, և միւս՝ զօրութիւն բանից պատմողին :

Եթէ հանգամանք իրին յայտնապէս անհնարին են կամ հակառակ միմեանց, անհաւատալի է պատմութիւնն :

Եթէ հանգամանք ոչ իցեն անհնարին և ոչ հակառակ՝ այլ հաւանական միայն, յայնժամ ոչ է պարտ դիւրահաւան լինել, և ոչ գլխովին ժխտել :

Իսկ եթէ հանգամանք պատմութեանն ոչ թէ միայն չիցեն հակառակք միմեանց, այլ մանաւանդ նման ինչ իցեն գործոց ըստ ժամանակս ժամանակս պատահելոց, յայնժամ թեթև ինչ հաւանութիւն տացի և ոչ աւելի :

Բանկցի զատանկին ամանկը, որ տեսեալ թէ քաղցում անգամ եղեալ են այսպիսի իրողութիւնք, յօժարին ցուցանել զգուշակութիւն իւրեանց իբրև գործ կատարեալ։ Օրինակ ինչ տեսեալ ուրուք 'ի ճանապարհի զհրու-դեհ ինչ 'ի քաղաքի, յոր մտոյր և երթեալ ձայն արձակեաց զքաղաքն ողջոյն հրկիզութեամբ ապառնեալ։ Նման տեսեալ 'ի հետասանէ զնաւ ինչ մերձ 'ի ջրհեղեղն, 'ի հասանել իւրում ուրեք զուժեաց զմեմանէ արդեն խորասոյզ եղեալ, իբր զի բազմիցս եղեալ է այնպէս։

Ապաքէն տեղեկութիւնք իւրաց եղելոց չորիւք եղանակօք մարթին հաստանիլ առ մեզ. առ աչօքն, Ինքնակաց պատմութեամբ ականատես վկայից. երկրորդ, Գրաւորական բանիւ վկայութեանց. երրորդ, Վկայութեամբ յիշատակարանաց. չորրորդ, Զայնաւոր կամ անգիր աւանդութեամբ։

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Վկայք։

Հաւանելի է վկայութիւնն, յորժամ անձա-զնումք որոց բնութիւնք, հասակք, հրահանգք, բարք, և շահք, տարբերք և անձնմանք են միմեանց, միաբան պատմեսցեն զեր ինչ մեծ և հրապարակեալ, որպէս զպատերազմ ինչ սաստիկ, զպայմանաւորութիւն բնակչաց

զկործանուածս երկրի, զհրդեհ քաղաքի ։ զի չէ՛ օրէն ՚ի կարծիս անկանիլ, թէ ամենեքին որք իբրև ականատես պատմեն զայն՝ խաբեալք իցեն, կամ միաբանեալք ՚ի խաբել զմեզ ։ Իսկ եթէ վկայն մի իցէ, կամ սակաւք, կամ անհամաձայնք, յայնժամ պարտ է քըննել զզօրութիւն բանից իւրաքանչիւրոց առանձինն. բայց նախ քան զամենայն զլաւութիւն պատմողացն, զի մի իցեն փառասիրուն և զրաբան, այլ բարեպաշտ և ճշմարտախօս. զի որք սովոր են խօսիլ սուտ, կամ ծիծաղիլ զմիամտութեամբ այլոց, միշտ կասկածաւոր է վկայութիւն նոցա ։

Բ. Քննելի են և թէ որք բարիք և ճըշմարտախօսք՝ որք պատմեն զիրողութիւն ինչ, մի՛ գուցէ ըմբռնեալք իցեն ՚ի կրից սիրոյ կամ ատելութեան, յակնկալութենէ շահից, ՚ի կողմնասէր կամաց, և յայլոց այսպիսեաց. կամ իրողութիւնն զոր պատմեն՝ ունիցի ինչ կցորդութիւն ընդ նոսա ուղղակի կամ կողմնակի, զի այս ամենայն տկարացուցանէ զզօրութիւն վկայութեան նոցա ։

Գ. Պարտ է նկատել և զհմտութիւն նորա և զիմաստութիւն. զի տգէտն չկարելով ըստ արժանւոյն հասու լինել իրացն, սխալի և խաբի. և պաշարեալն մտօք ըստ կանխակալ հաւանութեանն այլազգ քան զոր ենն՝ զիրսն տեսանէ ։ Սակայն ՚ի հրատարակեալ պատմութիւնս, որպիսի է կատարած ժան-

տախտի , տատանումն երկրի , հրկիզութիւն քաղաքի , և յայլ այսպիսիս , մի և նոյն զօրութիւն է տգիտի և գիտնոյ առ բանն իւր, բայց նկատմամբ հանգամանացն՝ պատմութիւն գիտնականին միշտ է նախապատիւ ։

Դ. Արժան է մտադիր լինել և, եթէ վկայն համաձայն բանից իւրոց խօսի թէ անհամաձայն. զի եթէ 'ի գլխաւոր հանգամանըս տեղւոյ կամ ժամանակի կամ օրինակի իրացն լինելոյ՝ ինքն ինքեան հակառակախօս և ընդդիմաբան գտանիցի, ոչ է արժան ընծայել զհաւանութիւն ։

Ե. Եթէ վկայքն բազումք իցեն , զմի մի առանձինն հարցանիցեն՝ տեսանել թէ միաբանք իցեն. իսկ եթէ անմիաբանք երևեացին թէ 'ի բուն իրն և թէ 'ի հանգամանըս նորուն, կասկածելի երևին բանք նոցա ։

Առաւել զօրաւոր լինի վկայութիւնն և ազդու՝ եթէ կայցեն նշանք հաստատութեան իրացն. որպէս եթէ առ ամբաստանեալ ոք վասն գողութեան՝ գտցի գողօնն , կամ գործի գողութեան. կամ յանկարծ հարստութեամբ մեծասցի , և չիցէ յայտնի թէ որով արդարութեան ճանապարհաւ յանկարծակի փարթամացեալ իցէ . կամ առաւել քան զայլս գիտիցէ զտեղի պահեստին և զմուտ նորին ։

Իսկ եթէ վասն սպանութեան իցէ դատաստանն , փաստապարտ լինել ցուցանի , ե-

թէ հանգերձ արիւնաթաթաւ. և զէն՝ բռնութեանն առ նմա գտանիցին, և յայտնի երևեսցի թէ ոխացեալ էր ընդ նմա, և սպանանել մահ 'ի վերայ ածել, կամ սատակապարտին կռուեալ. այս ամենայն ցոյցք են և նշանք զօրաւորք 'ի նոյն չարիս մատներելոյ:

Իսկ քանզի այս նշանք չեն յամենայնի անսխալ, այս բազում զգուշութեան և խոհական քննութեան պէտք են գտանել զչափ ստուգութեան կամ հաւանականութեան նոցա:

Այս օրէնք քննութեան վասն մեղաց են, որք՝ առաջին խորեանց եղեալ մեղայեն զոր պատմեն. որ եթէ վասն գործոյ իցէ՝ կոչին ականատես, իսկ եթէ վասն բանի՝ ասին ականջալուր:

Բայց որ պատմեն ինչ 'ի լրոյ այլոց, հայել պարտ է 'ի բանս յորոց լուան. 'ի նոցանէ առնուել արժանահաւատ է խորագէտն, զի դժուարաւ խաբի, քան պարզամիտն որ դիւրաւ անկանի 'ի խաբս, կամ չկարէ յիշել խնականաւ քննել իսկութեան իրացն, կամ այլազգ քան զոր լուաւն իմանայ:

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Պատմութիւն.

Կան պատմութիւնք որ ժամանակակիցք են, և կան որ յետնորդք. և 'ի ժամանակակից պատ-

մողաց ոմանք անկանոնաւորք են իրացն ; և ոմանք 'ի լրոյ առեալ․ Հաւատարմութիւն ժամանակակից և անկանոնաւոր պատմագրաց չափի ըստ օրինաց անկանոնաւոր վկայից զորոց 'ի նախընթաց յօդուածի ասացաւ ։

Բայց կարևոր է հայիլ և 'ի ժամանակ գրութեան պատմողին , թէ արդեօք ազատութիւն էր ամենայն ումեք անաչառ խօսել զճշմարիտն, եթէ լռել կամ պատրուակել ։

Եթէ ժամանակակից ոք պատմէ ինչ 'ի լըրոյ՝ յանուանէ նշանակելով յորոց իցէ լըւեալ․ կամ վկայ կոչելով զհամբաւն հասարակաց , նկատել պարտ է աստ , եթէ պատմեալն մեծ ինչ իցէ և հանդիսաւոր , և ոչ ոք 'ի ժամանակակից պատմչաց զհակառակն աւանդիցէ , պատմութիւն բանից նորա համարի հաւաստի ։ Իսկ եթէ չնչին ինչ է , թէ և ոչ ոք զստութիւն նորա ցուցանիցէ , տակաւին է երկբայելի ։

Հաւատք յետին պատմաբանից չափին 'ի ժամանակակից պատմագրաց , յաւանդութենէ , և 'ի յիշատակարանաց յորոց առին զմէպս իւրեանց ։

Նոյն յետին պատմիչ ոք եթէ յանուանէ ոչ նշանակեսցէ զաղբիւրն յորոց հանեալ է , և ոչ այլ ոք ժամանակակից նորին պատմեացէ զայն , կասկածելի են բանք նորա ։

Արժանահաւատ լինի պատմութիւնն , եթէ պատմիչն հմուտ ոք իցէ և անաչառ , և

զերծ 'ի կողմնաւոր բարուց, և ոչ բանիցն զարդարեալ բնաւոր վայելչութեամբ. զի աւելորդ պաճուճանք տան կարծել թէ կերպարանօք ճշմարտութեան զսուտ ինչ քողարկեալ՝ ջանայ հաւանական գործել:

ՅՕԴՈՒԱԾ Գ.

Յիշատակարանք:

Ամենայն նշանք վաղեմի իրաց որք կան այժմ, որպէս տաճարք, արձանք, աշտարակք, աւերակք քաղաքաց և բերդից, կամուրջք, շիրիմք, կամարք, արձանագիրք, դրամք, ձեռագիրք, և այլն, Յիշատակարանք են: Եւ են կրկին, ոմանք աննշանականք, յորս չիք ցուցականութիւն ժամանակի, կամ վասն որ և զիարդ կառուցեալք իցեն, որպիսի են աշտարակք, կամարք, կամուրջք առանց գրուածոյ. և ոմանք նշանականք, յորս դրոշմեալ գտանի պատմութիւն իւրեանց, որպէս դրամք, գրչագիրք, արձանագիրք:

Անչան յիշատակարանք յայտնի և հաւաստի լինին մեզ 'ի ժամանակակից պատմողաց, և յաւանդութենէ. բայց լոկ աւանդութիւնն ինքնին առանձին տկար է, եթէ ոչ ոք 'ի ժամանակակից պատմողաց զնոյն ոչ հաւաստաբանէ:

Իսկ որ յինքեանս նշանակեալ ունին զը-պատմութիւնս իւրեանց, կամ ինքնին յայտ-

նի են, և չունին ինչ պէտս այլում ածել ՚ի ծանօթութիւն. և կամ մթին, և կարօտին աւանդութեան կամ պատմութեան, զի լինիցին յայտնի ։

Բայց գտանին բազում դրուածք, ձեռագիրք, արձանագիրք և այլն, որք ՚ի խաբեբայից հնարեցան, վասն որոյ հնագիտութիւն պիտոյ է յորոշել զճշմարիտն ՚ի կեղծելոց անտի ։ Յիշատակարանք ոչ սակաւ են պիտանի, զի տան մեզ տեղեկութիւն կրօնից, օրինաց, արուեստից և գիտութեանց հնագոյն ազգաց ։

ՅՕԴՈՒԱԾ Դ.

Աւանդութիւն ։

Աւանդութիւնն որ է զրոյց անգիր՝ լինի արժանահաւատ յորժամ պատմէ զեր ինչ մեծ և աշխարհալուր ։ Բայց պարտ է հայել յաւանդութիւնն սոսկապէս ըստ էակութեան գործոյն · առանց մասնաւոր հանգամանաց · քանզի փոփոխին յոյժ, և երբեմն գլխովին օտարանան ՚ի ճշմարտութենէ յածեալ բերանոյ ՚ի բերան և ազգէ յազգ ։

Արժան է նկատել և ՚ի հնութիւն աւանդութեանն և ազգն յորմէ ելեալ է ։ Նո՛ր աւանդութիւնն առաւել հաւատալի է համարելի քան զհինն. զի առ սակաւութեան ժամանակին՝ սակաւ է այլափոխեալ. իսկ հինն

յերկարութենէ ժամանակին յաւէտ փոփո-խի, մնալով անդ բառ պարագայից իրողութեան։

Հնութիւն աւանդութեան ոչ չափի 'ի սկզբանէ իւրմէ մինչև ցաւուրս մեր, այլ մինչև ցժամանակ մատենագրի ուրուք՝ որ արձանագրոյց զայն 'ի գիր. եթէ հաւատարիմ իցէ մատենագիրն, առայգ և հանգամանք զբոսն իւր՝ այլ ոչ նոյնպէս զհանգամանացն. զի կարեն գտանիլ 'ի նմա յաւելուածք կամ պակասութիւնք կամ այլայլութիւնք, բայց ոչ ինչ վնասեն իսկութեան իրին։

Նկատելի է և բնութիւն ազգին յորմէ ելեալ է աւանդութիւնն. քանզի հնագոյն աւանդութիւնք սկսեալ 'ի խուժադուժ ազգաց և յանմիտ ժողովրդոց յետ բազում դարուց արձանագրեցան 'ի պատմաբանից. ապա ըստ աւանդութեան ազգացն չափի և առուգութիւն բանից մատենագրաց։

ԳԼՈՒԽ Գ.

Վաւերականութիւն գրոց և յիշատակարանաց։

Ո՛չ ամենայն մատեանք են վաւերականք, յայտնի, սուտք, և անարատ. ապա գործ է նշանակել օրէնս ինչ՝ որոշել զատոյգն և զանեղծն յանստուգից և յաղաւաղելոց։

Ա. Մատեան՝ որոյ հեղինակ զօրք յիշատակեն հնագոյն գրչագիրք և վաղեմի մատե-

նադիրք, նախնի համարեսցի. և յետադասագոյն բանք որ այլում անուան ընծայեն, առ ոչինչ գրեսցին։

Բ. Մատեան ինչ համեմատեալ ընդ հնագոյն ձեռագրոյ, կամ ընդ հաստատուն բանից յիշատակելոց 'ի նախնեաց՝ առեսցի յապաւեալ, կամ յաւելեալ, կամ փոփոխեալ, ընդ ապականելոյն դասեսցի։

Գ. Կասկածելի է մատեանն՝ յորում երեւին կարծիք կամ բանք հակառակ այլոց բանից նոյն մատենագրին, մանաւանդ այնպիսեաց որոց է ճշմարտագոյն 'ի հարազատ գիրս իւր, ոչ յիշատակելով ուրեք թէ փոխեալ իցէ զկարծիս իւր։

Դ. Անհարազատ է մատեանն եթէ գտանիցին 'ի նմա անուանք, քաղաքք, իրք, գիւտք և բառք՝ որ ոչ գոյին 'ի ժամանակս կարծեցեալ մատենագրին։

Ե. Աղաւաղեալ է մատեանն եթէ իցեն 'ի նմա բանք աղխտականք՝ որ ոչ վայելեն համա բարուոյ մատենագրին. կամ գտանիցին այնպիսի ինչ՝ զոր չէր հնար մատենագրին գիտել յայնժամ։

Զ. Մատեան՝ որոյ ոճն գլխովին աննման իցէ այլոց գրոց նոյն մատենագրին, կամ սովորական ոճոյ ժամանակին, ընդ անհարազատն կարգեսցի։

Հնար է և զայլ նշանս գտանել 'ի ձեռաց գրոցն յորոշել զստոյգն 'ի ստոց և զանազա-

ոքն 'ի խանգարելոց, սակայն և այս բազում հմտութեան պէտս ունի ։

ԳԼՈՒԽ Դ․

Թարգմանութիւն գրոց ։

Ազգօգուտ պիտանութիւն թարգմանութեան փորձիւ գիտեն ամենայն հրահանգեալ ազինք․ բայց մեծի հմտութեան և զգուշաւոր խնամոց պէտս ունի ուղիղ զիմաստ թարգմանել, ապա թէ ոչ՝ փոխանակ օգտի՝ բազում վնասու և մոլորութեան լինի պատճառ ։

Պարտ է, առաջին․ քաջ գիտել զլեզու ազգին և զոճ առաջիկայ գրոցն․ գտանել զանվրէպ օրինակ նորին, և բաղդատել ընդ հին և ընդ նոր օրինակս․ ունել 'ի ձեռին և զբառարան ընտիր՝ իմանալ զզօրութիւնս բառից և զկիրառութիւնս նոցին ։

Բ․ Գիտել զժամանակ, զհայրենիս, զհաւատս և զկրօնս, զվարս և զպաշտօնս մատենագրին առ. քաջ իմանալ զմիտս նորա ։

Գ․ Ունել զտեղեկութիւն սովորութեանց և բարուց ազգին և հանգամանաց ժամանակին յորում գրեալ է․ զի կարևոր է յոյժ առ բացայայտութիւն մթին կամ երկուանալի երևեալ բանից գրոյն ։

Դ․ Նկատել զժամանակ և զտեղի մատե-

նագրին և տեսանել թէ արդեօք գոյր ազա-տութիւն համարձակ գրել զամենայն յաջո-ղակ և զձախող դիպուածս՝ եթէ արգե-լեալ էր ։

Ե. Գիտել և զայն, միթէ ինքնակամ ձեռ-նամուխ եղեալ իցէ գրել ըստ հաճութեան սրտի իւրոյ՝ եթէ հրամանաւ այլոյ, և ըստ այլոյ ախորժակի ։

Զ. Զբառ և զոճ մատենին առնուլ ՚ի յատուկ և ՚ի բնական միտս, ուր չիք իրա-ւացի պատճառ յայլ միտս իմանալոյ ։

Է. Զչփոթ և զմթին տեղիս համեմա-տել ընդ այլ նման բանս նոյն մատենագրին առ ՚ի պարզ և յայտնի կացուցանել զիմաստ առաջիկայ բանին ։

Ը. Եթէ ՚ի բանի զանազան և տարբեր իմաստք երևեսցին, զայն ընտրելի է որ բո-վանդակ բանից մատենին և դիտաւորու-թեան մատենագրին թուի յարմար և ընտա-նի ։ Այս օրէնք են և յընտրութիւն ստու-գագոյն ընթերցուածոյ, եթէ օրինակք գը-րոցն անմիաբան գտանիցին ։

Թ. Զբանս մատենին որչափ ինչ մարթ է՝ ողջմտութեամբ թարգմանել, և ոչ բնաւ ՚ի թիւր իմաստս տանել, յորժամ ՚ի բանից անտի մոլորութիւն ինչ և թիւրութիւն ոչ երևի յայտակաբար ։

Ժ. Հաւատարիմ լինել և երկիւղած, ոչ փոփոխել զբան ինչ առ ՚ի տանել յօտար ի-

մաքուր, և ոչ յաւելուլ կամ հատանել խու-բամանկութեամբ, որպէս սովոր են առնել նենգաւորք և խաբեբայք:

ԳԼՈՒԽ Ե.

Կարգ կամ ՈՃ ուսման:

Յորժամ առաջին կայ ուսանել զիր ինչ, Առաջին, կարևոր է բաժանել զայն 'ի մասունս կամ 'ի հատուածս. և ապա զմի մի 'ի նոցանէ առանձին քննել, և զամենայն ճիգն 'ի նոյն թափել, 'ի բաց տարեալ զմիտսն 'ի բազմաց. զի որ բազմաց մտադրէ, առ անձնասին անկարանայ:

Բ. Օժանդակս արուեստի կամ գիտութեան 'ի մատենից իմաստնոց պարտ է առնուլ՝ որոց յստակ և ընտիր են բանք. զի որ յառաջագոյն 'ի գիրս տգիտաց թարթափի, 'ի հարկէ զխառնակ և զմոլար օժանդակութիւնս 'ի միտսն տպաւորէ. ապա այնուհետև դժուարին լինի նմա ուղղել զմոլորութիւն իւր:

Գ. Առ բարւոք յառաջանալ յինչ և իցէ ընթերցուածս և հմտութիւն գրոց, պարտ է 'ի բաց թօթափել յանձնէ զամենայն զբաղանս և զհոգս՝ որք մթացուցանեն զպարզութիւն բանին, և մտադիւր պարապիլ նոցին. և մինչև 'ի խորս տպաւորեալ իցէ բանն առաջինն՝ չանցանել 'ի յաջորդն, և ոչ հարևան-

ցին անտանօթութեամբ անձանձրանալ յուսարտու-մըն մատենին ։

Դ. Անտանել զառաջարկութիւն ընթերցելոյ մատենին, և մտածութեամբ իւրով տալ զլուծումն կամ զապացոյց, և տեսանել թէ նման իցէ լուծման մատենագրին. զընդհանուր բանն մերձեցուցանել 'ի մասնաւորս, և զմասնաւորսն՝ 'ի նոցին նմանսն. որովք զօրանան և բեղմնաւորին միտք զըտանել զփաստս և զհաւաստիս 'ի հաստատութիւն զինչ և իցէ բանից ։

Ե. Զընթերցեալն կրկին ընթեռնուլ. մի՝ զի առաջինքն լաւ ևս իմանին զկնի տեսանելոյ զյետինսն՝ ընդ որս ունին զկապակցութիւն, և միւս՝ զի պնդագոյնս տպաւորի 'ի միտսն ։

Զ. Զգլխաւորսն 'ի բանից և զկարևորագոյնսն կարգաւ քաղել և նշանակել 'ի գրի. և այսու օրինակաւ համառօտութիւն ինչ բովանդակ մատենին առնել, առ ամփոփ առաջի ունելոյ զխմաստ գրոյն ։

Է. Զուսեալն 'ի գրոց այլոց և զգիտումանց մերոց խօսեսցուք ընդ այլս, որով 'ի խորս տպաւորին և անկորուստ մնան յուշի ։ Առաւել անդ զի խօսակցութիւնն զարթուցանէ 'ի մեզ զնոր գաղափարս որք ինքնին ոչ գան 'ի միտ, և պատճառս տայ գտանելոյ զփաստս զօրաւորս 'ի հաստատութիւն ճշմարտութեան ։

Ը. Զոր միանգամ կամիմք ուսանել, իբրեւ մեծ ինչ եւ կարեւոր առաջի տրամասցուք մեզ, որպէս զի ախորժանօք եւ մտադիւր սիրով պարապեալ նմին, 'ի ձեռս բերել մնաւթացուք։

ՊՐԱԿ Թ.

Մոլորութիւնք։

Ամենայն մոլորութեանց երկուքեն պատճառք. մի՝ չվարիլ բանիւ, երկրորդ՝ չարաչար վարիլ։ Չվարի բանիւ, որ առանց ինչ քննութեան դատէ զիրաց. չարաչար վարի, որ առանց բաւական քննութեան դատէ։

ԳԼՈՒԽ Ա.

Մոլորութիւնք բանիւ չվարելոյ։

Առաջին եւ գլխաւոր պատճառ մոլորութեան չվարելոյ բանիւ՝ է վաղաժաման օրէնք եւ սովորութիւնք մտաց զոր 'ի մանկական տիս ստացեալ ունի ոք. յորում ժամանակի զոր ինչ ազդեցուցանեն զգայութիւնք՝ զայն ընդունէ, եւ ոչ մատչի 'ի քննել զսկզբունըս նոցա մտաւորական տեսութեամբ. եւ այսպէս ստեղծանէ յինքեան զբազում թիւր դատմունս, եւ հաստատի 'ի նոսա բազմաժամանակեայ սովորութեամբն։

Օգտա մոլար դատումն առաւելու և ևս անհանճարաքար կենակցութիւնն ընդ մանուկս տիօք, և ընդ պաշարեալս միօք. յարեց այլ ևս բազում մոլորութիւնս առնու. և զթիւր դատմունս իւր աճեցուցանէ։

Ահա մի 'ի կանխամուտ սովորութեանց տղայական հասակին է՝ անքննաբար անսալ ազդեցութեանց զգայարանաց մերոց, որք տան մեզ կարծել թէ համք, հոտք, ձայնք, գոյնք, ջերմ և ցուրտ, իրօք գտանին 'ի մարմինս. գոն հարկք և ճակատագիրք որք կատարին անվրէպ. բարի և չար գիպուածք որք պատահին 'ի կենցաղս, յառաջ գան 'ի բաղդէ. մոլորակք և աստեղք ունին զբարի և զչար ազդեցութիւնս, զորս ներգործեն յենթալուսնեայս։

Բազում և այլ թիւր դատմունք յառաջ գան յորժամ ոչ վարիմք բանիւ, այլ մանուանդ պաշարեալ միօք զհետ երթամք թիւր կարծեաց զոր ստացեալ եմք 'ի մանկութեան։

Սոյն քանզի 'ի զարգանալ հասակին դժուարին է ումեք թօղուլ զկանխակալ օրէնս և զպաշարմունս մտաց, որ բազմաժամանակեայ սովորութեամբն ընդակից եղեալ են նմա. վասն որոյ որ սիրօղն է ճշմարտութեան՝ որչափ ձեռնհաս իցէ՝ մի առ մի զննեա 'ի հարց և 'ի փորձ մատուսցէ, և ապա հաւատի համարեսցի։ Քանզի 'ի կանխակալ թիւր

դատողութենէ պաշտպանեալ միայն և շնչացեալ, որպէս ասացաք. ինչ և հաստատի անուանէ զանորատոյգն և զերկրպագականն. և ապէպ ապաբութեանն առաւել են հաստատուն 'ի մալոր դատմածոն իւր :

Երկրորդ պատճառ չվարելոյ բանիս՝ է կապելն 'ի բանս հեղինակի ուրուք, համարելով զկարծիս նորա պատգամս ճշմարտութեան, անխտրաբար հետեւելով նմին իբրև անմոլար առաջնորդի. Այսպիսի ամենք էին Պիւթագորեանք, յորս զամենայն վէճ մի միայն « նա ասաց » առ ժամայն լուծանէր. Ճեմականք, որ զբանս Արիստոտէլի վարդապետին իւրեանց՝ կատար ամենայն ճշմարտութեան կոչէին :

Ի բանս այլոց երկու ինչ է նկատելի, թէ արդեօք հոգևոր և ճշմարտախօսք իցեն խնդիրք, եթէ քննութիւնք զգալի և երկրաւոր էակաց. և այն թէ զարդեանց ինչ իրաց, կամ թէ զմտաւորականաց :

Ի խնդիրս հոգևորաց, որպէս հաւատոյ կրօնից, և բարեպաշտ վարուց, որ ինչ է յաստուածային յայտնութենէ ցուցեալ, կամ յառաքելոց աւանդեալ, և կամ 'ի տիեզերական ժողովոց վճռեալ, զայն ամենայն պարտիմք համարիլ աներկբայելի, թէպէտ և իցեն անդր քան զհասումն փանաքիմաց մերոց մտաց, զի առ Աստուծոյ են ազդեցեալ, որ ոչ խաբի և ոչ խաբէ երբէք :

Ի քննութիւնս զգալեաց, յորս ոչ լինին բանք զաստուածպաշտութենէ, զկրօնից և զմարդուց, եթէ զարդեանց իւրաց են խնդիրք. ըստ չափու հաւատոյ մեզ լինելոյ իրացն. պարտ է ընծայել հաւատս. և ոչ է պարտ զբանս աստուածաշունչ գրոց 'ի վկայութիւն ածել 'ի հաստատել զկարծիս ինչ որ մերաբերի առ գիտութիւն զգալի բնութեան. զի աստուածեղէն մատեանք ոչ զբնագիտութիւն՝ այլ զճշմարիտ կրօնս և զբարեպաշտութիւն մեզ ուսուցանեն. զի զզգալեացս զննութիւն ետ Աստուած 'ի զբաղումն որդւոց մարդկան. Ժող. Գ. 10։

Եւ վասն զի սուրբ գիրք վարդապետեն զխորհուրդս շնորհաց և փառաց, ոչ պարշաճի վարել զայնս յընդդիմութիւն փորձով յայտնեալ ճշմարտութեանց և բացատրել նախա զերևոյթս բնութեան։

Իսկ եթէ զմասաւորականաց իցեն քննութիւնք. օրինակ իմն զի՞նչ իցէ պատճառ առանձգականն կամ թափանցիկ լինելոյ մարմնոց։

Արդեօք գիսաւորք յինքեա՞նց ունին ըզլոյս, եթէ յարեգակնէ առնուն իբրև զմոլորակս։

Հաստատուն աստեղք ունիցի՞ն զշարժումն ինչ յամր, եթէ գլխովին անշարժք իցեն։

Զի՞նչ իցեն պատճառք հողմոց, արդեօք ջերմութիւնն և ցրտութիւն, եթէ գոլոր-

չէք վերամբարձեալք 'ի ծովէ և յերկրէ, կամ այլ ինչ իրք ։

Վասն է՞ր անձրև շիթ առ շիթ իջանէ յերկիր ։

Ուստի՞ պատճառիցի 'ի մեզ քուն կամ արթնութիւն ։

Յայսցիկ իրաց և այլոց բազմաց դժուարին խնդրոց, յորժամ ոչ կարեմք անձամբ 'ի փորձ մատչիլ և հասու լինել, ընկալցուք զկարծիս հմտացելոցն, որք փորձով և փաստիւք հաւաստի առնեն զբանս իւրեանց ։

Երրորդ պատճառ մոլորութեան բանիւ չվարելոյ՝ են կողմնաւոր կամք և մոլահաճութիւնք. զի երբեմն ցանկութիւն շահից և օգտի անձին, և երբեմն սէր բարեկամի և հայրենակցի. է զի մոլահաճութիւն ընդ ումեք, և է զի ատելութիւն և խէթ զումեքէ, և է ուրեք զի հաճոյք քմաց կամ յամառութիւն տան կուսակից լինել միոյ կողման, և չթողուն քննել զփաստս հակառակ կողման. և որոյ բանք հաւաստի գտանիցին՝ նմին ընծայել զհաւանութիւն ։

Չորրորդ պատճառ բանիւ չվարելոյ՝ է հեղգութիւնն, զի չկամի աշխատ լինել առ բարւոք քննել և ուղիղ դատել զխնդիրս, մանաւանդ եթէ դժուարահաս իցեն և խորին. վասն որոյ առանց հետաքննութեան հաճի ընդ կարծիս այլոց զորս անաշխատ դատանէ ։

Իսկ եթէ ոչ հեղգութիւնն, այլ՝ այլ ինչ տուիթ արգել լինիցի և ոչ տայցէ պարապ քննելոյ զիրան, պարտիմք յերկբայս թողուլ և չափաւորել զզատումն մեր. և ոչ ինչ հաւաստի համարիլ եթէ ստուգութիւն նորա չիցէ յայտնի ։

ԳԼՈՒԽ Բ.

Մոլորութիւնք չարաչար վարելոյ բանիւ ։

Չարաչար վարիմք բանիւ յորժամ. զատեմք զիրս հարևանցիկ և վեր 'ի վերոյ քննութեամբ, և կամ 'ի վերայ անեմք զմոլար և զանյարիր հետևութիւնս ։

Առաջին և գլխաւոր պատճառ մոլորութեանս՝ է պակասութիւն հաւաստի գաղափարաց և ծանօթութեանց. և գրեթէ ամենայն մոլորութիւնք յայսմանէ սերընին իբրև յարմատոյ ։

Գաղափարք գոյից՝ մանաւանդ անմարմին ծանօթութիւնք իմանալի և բարոյական էակաց չունին երբեմն զկատարեալ ստուգութիւն ։ Քանզի և հանգամանքն որով սացեալ լինին՝ կարեն խելամուտ առնել զմեզ. թէ բազումք 'ի նոցանէ չունին զբաւական ստուգութիւն ։

Տեսեալ մանուկն մարմին ինչ բոլորակաձև յերկինս ըստ մեծութեան սկաւառակի, լուսաւոր, ջերմ, ճառագայթարձակ և շար-

ժուն, և լսէ զի արեգակն տնաւանեն. միթէ մարթ ինչ իցէ ուղիղ խորհիլ և ստուգու-թեամբ դատել զնմանէ մինչև իցէ ստացեալ զտեղեկութիւն մեծութեան, ձգողութեան, և այլոց իսկական յատկութեանց նորա և հանգամանաց, զորս մանրամասնին խուզարկու-թեամբ նշանակեն զնմանէ աստեղագէտք:

Այսու օրինակաւ ստանայ և զանենթա-կայ ծանօթութիւնս բարոյական էակաց: Տեսանէ զոմն զի անհնարին բարկութեամբ վրէժխնդիր լինի վասն անարգանաց ինչ ե-ղելոյ առ ինքն, և ընդունի զպատիւ և զգո-վութիւն յընկերացն. տեսանէ և զայլ ոմն զի ոգւով հեզութեան տանի թշնամանաց, և անգանի իբրև զկնամարդի. յօդաւորէ 'ի մի-տըս իւր զպատիւ ընդ գազանական վրէժ-խնդրութեան, և զանարգանս ընդ ներո-ղամիտ հեզութեան:

Լսէ զի խոհեմ կոչեն զխորամանկն, արի զյանդուգն, առատաձեռն զշռայլն, քաղա-քավար զմարդահաճոյն, և զփառք կարացէ ուղիղ դատաստան առնել յաղագս ճշմարիտ պատուոյ և անարգութեան, խոհեմութեան և խորամանկութեան, արիութեան և յան-դգնութեան, և այլն:

Վասն որոյ և յոլովք 'ի բարոյական էա-կաց այսու օրինակաւ կերպաւորին 'ի միտս ժամանակի մանկութեան, և առ բազումս մնան այնպէս մինչև ցվախճան:

Այս յորժամ հանդերձեալ է ոք զդոյզն ինչ դատաստան առնել, ուշ 'ի կարծիս առացէ՝ թէ որդեօք գաղափարն զոր ունի 'ի միտի՝ իցէ ստոյգ. Նոյնպէս յորժամ առաջի կայ նմա խօսիլ ինչ զքարոզական էակէ, յառաջագոյն քննեսցէ զծանօթութիւնն զոր ունի զերէն զայնմանէ՝ թէ իցէ ուղիղ. միանգամայն հոգասցի դիտել զսահմանն՝ որով սահմանեալ են իմաստունք զբառն և զգաղափարն զոր յօդեալ են ընդ նմա:

Երկրորդ պատճառ ոչ ուղիղ վարելոյ բանիւ՝ է շուտափոյթ դատումն մեր զերէն. զի փոքրոգութիւն և փախուստ յաշխատութենէ յեւս կասեցուցանէ զմեզ 'ի մանրախոյզ քննութենէ իրացն. և յայսմանէ բազում անգամ յառաջ գայ թիւր դատումն:

Երրորդ պատճառ՝ պաշարումն մտաց. և այս յառաջ գայ 'ի վաղաժամեան դատողութենէ, զոր իբրև ստոյգ տայ համարել բազմաժամանակեայ սովորութիւնն մտաց, կամ սէր վարդապետին. որոց ոմանք ճշմարիտ կարեն լինել և ոմանք սուտ. զորս պարտ է 'ի կշիռս բանին քննել և ապա դատաստան առնել:

Չորրորդ պատճառ են ախտք. զի սէր և շահ անձին, նախանձ և ատելութիւն հակառակ կողման, զանձն առ գիտունս ունել, և յամառութիւն 'ի կարծիս մտաց, յոլովակի սատերիւրեն զմեզ յուղիղ դատելոյ: Աան

որոյ ասէր Պղատոն. «Սեր իշխեն ախտք, գերի է բանն»: Եւ Պլուտարքոս նմանեցուցանէ զնոսա գունաւոր ապակեաց, որ զամենայն ինչ ըստ իւրեանց երանգացն երևեցուցանեն:

Այսոքիկ և որ սոցուն սակի են ախտք մոլորեցուցանեն զմեզ. է ուրեք զի ցանկութիւն յաղթութեան և շառագնութիւն պարտութեան, և է ուրեք զի կողմնածութիւն առ այս ոք և ոսոխութիւն առ այն; չթողուն վարիլ բանիւ, և բազում այն է՝ զի տան չարաչար վարիլ:

Հինգերորդ պատճառ ոչ ուղիղ վարելոյ՝ է երևակայութիւնն, որ զհոգեղէնսն ըստ օրինակի զգալեացս ըմբռնէ, մարմնաւոր կերպարանս զգեցուցանելով նոցա. աստի յառաջ եկին ոչ սակաւ մոլորութիւնք զանմարմնոց, զԱստուծոյ, զհրեշտակաց, և ըզհոգւոց մարդկան:

Վեցերորդ պատճառ՝ զեղծումն օրինակաց. զի առ 'ի ապացուցանել զմի ինչ նըրբին և դժուարահաս, տեսեալ զայլ ինչ ըստ իմիք նման նմա, համարելով զօրինակն փաստ ինչ հաւաստի, ըստ այնմ դատի և զիրն զոր ցուցանել կամի: Զոր օրինակ՝ տեսեալ զի պատկեր ինչ աղօտացեալ 'ի փոշւոյ, ոչ երևեցուցանէ զկերպարանս, զոր նկարեալ ունի յինքեան, բայց սրբեալ տակաւ, հետըզհետէ յերևան ածէ զնոսա:

Զայս օրինակ իբրև ապացոյց կալեալ՝ համարիցի, թէ հոգին մեր անդստին յարարչութեան իւրում զգաղափարս և զծանօթութիւնս իւրաց տպաւորեալ ունի յինքեան։ Բայց 'ի մարմնոյ յորում բնակէ՝ աղօտացեալ է իբրև 'ի փոշւոյ. զոր ուսմամբ և գիտութեամբ օր ըստ օրէ սրբեալ զայն 'ի բաց՝ զբնածին գաղափարսն 'ի տեսիլ ածէ։

Եօթներորդ պատճառ՝ պիտակութիւն նշանակաց և նմանաբերութեանց. աստի յառաջ եկին մոլորութիւնք նշանագէտ ախտաբակաց, և գուշակութիւնք բարուց և վիճակաց մարդկան 'ի ձեռն մոլորակաց երկնից. զորս աստեղաբաշխք անուամբ կենդանեաց և այլ ևս բնական և արհեստական իրաց սովորեցան կոչել։ Յորոց նիւթ բանի առեալ սնապաշտ ախտարմողաց՝ բանդագուշեալ ասէին, թէ որք ընդ իշխանութեամբ առիւծուն ծնանիցի, վեհանձն և իշխան լինիցի, և որ ընդ կշիռ կենդանակերպին՝ արդար և բարեխորհուրդ, և որ ընդ կարճին՝ չար և ժանտաբարոյ։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԴԱՏՈՒՄՆ

Դատումն է ներգործութիւն մտաց, որով հոգին համեմատէ զերկուս գաղափարս կամ զծանօթութիւնս զոր յառաջագոյն ըմբռնեալ ունի. և զնմանութիւն կամ զաննմանութիւն նոցա ընդ միմեանս յայտ առնէ հաստատութեամբ կամ ժխտողութեամբ։

Գաղափարք և ծանօթութիւնք որք լայնաբար առմամբ Իմացմունք կոչին ՚ի Դաւթայ Անյաղթէ, են նշանակք իրաց և հանգամանաց նոցա. իսկ ձայնք՝ նշանակք իմացմանց, և գիրք՝ նշանակք ձայնից։

Արդ զոր օրինակ նշանակ և երևեցուցիչ ամենայն գաղափարաց և ծանօթութեանց՝ զորս իբրև հիմն և արմատ ամենայն ճանաչման իւրոյ ունի հոգին, են ձայնք՝ այսինքն բառք. նոյնպէս նշանակ և երևեցուցիչ ամենայն դատմանց իւրոց՝ որով հաստատէ կամ ժխտէ զնմանութիւն կամ զաննմանութիւն երկուց գաղափարաց կամ ծանօթութեանց՝ են բանք։

Արդ քանզի բանք յօդանան և կազմին ՚ի շարամանութենէ բառից որպէս բոլոր ինչ ՚ի մասանց, ապա ՚ի դէպ է այժմ համառօտիւ ինչ ասել զնոցանէ։

ԳԼՈՒԽ Ը.

Բառք։

Բառք են նշանք երևեցուցիչք աներե-ւոյթ խորհրդոց մտաց։ Կրկին է նշանն, բը-նական և արուեստական։ Բնականն է՝ որ յայտ առնէ զզանազան հանգամանս և զկի-րըս հոգւոյն միայն ըստ բերման բնութեան, որպէս ձիչ և աղաղակ զցաւս. հառաչանք և հեծութիւն զտրտմութիւն. ծաղր և կա-քաւ զուրախութիւն. շառագունանք և ա-կընկորանք զամօթ. սարսուռ և դալկութիւն զզարհուրանս։

Արուեստականն է՝ որ յայտ առնէ զկամա-ւոր խորհուրդս մտաց, որպէս ձիչ և աղա-ղակ գիտութեամբ արարեալ ՚ի ցաւս, զի այլք փութասցին յօգնել։ Ըստ սմին սարա-տի արուեստական նշանք են ամենայն բառք, զի են ձայնք ըստ հաճութեան՝ կարգեալք ՚ի ցուցակութիւն ներքին իմացման և խոր-հրդոց մերոց։

Այլօրինակ բաժանին բառք ՚ի տրամա-բանից, և այլ ՚ի քերականաց. զի տրա-մաբանք հային յայնս իբրև յորոշիչս գաղա-փարաց և ծանօթութեանց, և քերականք իբրև ՚ի նիւթս խօսից։

ԳԼՈՒԽ Ա.

Բաժանումն բառից ըստ տրամաբանութեան :

Ի բառից որք բացորոշեն զծանօթութիւնս և զգաղափարս՝

Ա. Ոմանք են յատուկ, և ոմանք առասական :

Յատուկ են որ զոմն մի առանձինն նշանակեն, որպէս Սոկրատէս, Տրդատ. առասական են՝ որ զհասարակ ինչ և ընդհանուր յայտ առնեն. որ եթէ զտեսակն ցուցանիցեն, տեսակարար կոչին, որպէս մարդ, նըշենի. և եթէ զսեռն՝ սեռական անուանին, որպէս կենդանի, ծառ :

Բ. Թանձրացեալ, և վերացական. թանձրացեալք են՝ որք նշանակեն զծանօթութիւնս և զգաղափարս անձնաւորս՝ այն է ենթակայացեալս, որպէս բոլորակ, քաղցր. վերացականք են՝ որք ցուցանեն զգաղափարս և զծանօթութիւնս զանձնաւորս՝ այն է անենթակայս, որպէս բոլորակութիւն, քաղցրութիւն :

Գ. Բնական և բնազանցական. բնականք են՝ որ զճշմարիտ գոյակս յայտ առնեն, որպէս արեգակն, երկիր, ցորեան, գարի. բնազանցականք են՝ որ զէակս սոսկ իմանալիս և բարոյականս նշանակեն, որպէս գիտութիւն և տգիտութիւն, գեղեցկութիւն և տգեղութիւն, առատաձեռնութի̃ և ռշոտութի̃ :

Դ. Էական և չէական. էականք են՝ որք զիսկութիւն իրաց ցուցանեն, որպէս կեանք, լոյս, զգացողութիւն. չէականք են՝ որք ըզպակասութիւնս իրաց յայտ առնեն, որպէս մահ, խաւար, անզգայութիւն:

Ե. Պարզ և բարդ. պարզ ասի՝ յորժամ գաղափար իրին միով բառիւ ցուցանի, որպէս ծաղիկ, պտուղ. բարդ կոչի՝ յորժամ բաղում բառիւք նշանակի, որպէս անուշահոտ ծաղիկ, քաղցրահամ պտուղ:

Զ. Բուն և այլաբանական. բուն ասին՝ որ յատուկ նշանակութեամբ վարին, որպէս գլուխ և ոտք կենդանւոյ, ցնծալ և ոգւալ մարդոյ. այլաբանական կոչին, որ 'ի բուն նշանակութենէ յօտար նշանակութիւն փոխադրին, որպէս գլուխ և ոտն լերին, ցընծալ և ոգւալ տարերաց:

Է. Միանշանակ և հոմանուն. միանշանակ են որ զմի ինչ միայն ցուցանեն, որպէս տակի, երկաթ, խնձոր, նուշ. հոմանուն են՝ որ զբազում ինչ նշանակեն, որպէս այր, մայր, ակն, փող, որթ, օդ, առիւծ՝ որ երկու ինչ նշանակէ, զպատառող գազանն մռնչական, և զկենդանակերպ ինչ յերկինս. և շուն՝ ըզցամաքային կենդանին հաչողական, և զհամաստեղութիւն ինչ: Ըստ սոցին օրինակի հոմանուն և բազմանշանակ են ամենայն բառք, որք բուն և այլաբանական նշանակութեամբ վարին 'ի բանս:

Ը. Պայծառ և աղօտ. պայծառ ասին՝ որ պարզ և յայտնի ցուցանեն զգաղափարս, որպէս հող, ջուր, ծառ, պտուղ. աղօտ ասին՝ որ մթին և ընդ աղօտ ցուցանեն զգաղափարս, որպիսի են բազումք ՚ի քերթողական և յիմաստասիրական. բառից. բաղդատութիւն և վերլուծութիւն. զգացումն և խմացուած, գաղափար և ծանօթութիւն, սէր և ատել, ենթակայ և մակդիր. սակայն այս մթութիւն ոչ է ՚ի բառս անդ՝ այլ ՚ի միտս. զի որք տեղեակք են, պարզ և պայծառ են նոցա, իսկ որ անտեղեակ՝ աղօտ են և մթին:

Թ. Բացորոշ և անորոշ. բացորոշ է՝ որոյ նշանակութիւն առ մի ինչ կապեալ է որոշակի, որպէս բոլորակ, քառակուսի. անորոշ է՝ որոյ նշանակութիւնն տարած է, և չէ որոշեալ ըստ բաւականին, այլ մերթ լայնաբար և մերթ սեղմաբար վարի յայլ և այլ միտս. որպիսի է նոյն ինքն ձայնս գաղափար, զի երբեմն առեալ լինի յանձանց ՚ի նշանակել զյատուկ գաղափարն, երբեմն զծանօթութիւնս, և երբեմն զզգացմունս և զխմացուածս: Ըստ այսմ են գրեթէ և ամենայն բառք իմանալի և բարոյական էակաց, որպիսի են գիտութիւն, իմաստութիւն, ազատութիւն, առաքինութիւն, արութիւն, քաջութիւն. և սակաւք են որ միշտ անփոփոխ պահիցեն զծանօթութիւնն ընդ ձայնիցն:

Ժ. Նոյնանշան և առանձնական. նոյնա-

նշան ասին՝ յորժամ այլ և այլ ձայնք 'ի նոյն միտս վարին ; որպէս վէմ և քար , տունկ և ծառ . առանձնական ասին՝ յորժամ այլ և այլ ձայնք զայլ և այլ միտս ընծայեցուցանեն 'ի բանի տարբեր 'ի միմեանց , որպէս արիւն և ոսկր , եղն և ոչխար : Սակայն կարի սակաւք են 'ի բառս նոյնանշանք . զի առ հասարակ ամենայն բառք մի մի իւրաքանչիւր առանձին իմն զօրութիւն ունին 'ի միտս . զի քար պատուական ասի գոհարն՝ այլ ոչ վէմ պատուական ; և տունկ ցորենոյ՝ այլ ոչ երբէք ծառ ցորենոյ . յորմէ յայտ է՝ թէ տունկ և քար ընդարձակագոյն են նշանակութեամբ քան զծառ և զվէմ , որով և առաջին , թէպէտ և բազում ուրեք նոյնանիշ վարին :

ԺԱ . Նախահայեաց և երկրորդահայեաց . զայս բաժանումն բառից յաւելուն ոմանք նկատմամբ իրական և ստեղծական գաղափարաց . նախահայեաց զայն ասեն՝ որ նշանակէ զիրն ըստ որպիսութեանն զոր ունի 'ի բնութեան իրաց , որպէս անասուն , թռչուն , ուղտ , կաքաւ : Երկրորդահայեաց ասեն զայն , որ նշանակէ զիրն ըստ որպիսութեանն ընծայելոյ նմա 'ի մտաց , որպէս սեռ , տեսակ , ենթակայ , մակդիր . իբր զի անասուն և թռչուն են սեռ կամ մակդիր , ուղտ և կաքաւ տեսակ կամ ենթակայ :

ԳԼՈՒԽ Բ.

Բաժանումն բառից ըստ քերականաց։

Ազգ բառից ութ թուին 'ի քերականաց, որք և կոչին Մասունք բանի. անուն դրական և ածական. դերանուն, որոյ կէսք ընդ դրական անուանս դասին և կէսք ընդ ածականս. բայ. բայանուն՝ այն է ընդունելութիւն, որք բոլորովին ածական են, զի զհանգամանս որպիսութեան իրաց յայտնեն. նախդիր. մակբայ. շաղկապ, և ձայնարկութիւն։ Այլ գլխաւորքն 'ի նոսա՝ որք յաւէտ կարևորք են 'ի յայտնել զդատումն մտաց՝ են անուն դրական և ածական, և բայ. իսկ մնացեալքն վերաբերին առ բացայայտութիւն բանին։

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Անունն է ձայն նշանական՝ ըստ հաճութեան՝ առանց ամանակի, որոյ ոչինչ մասն զատեալ է նշանական։

Անորոշ կոչի անուն ինչ, որ յառաջոյ յաւելեալ ունի զժխտողական նշանս ոչ, որպէս ոչ մարդ. զի անունն զմի ինչ որոշակի նշանակէ զատուցեալ յայլմէ ամենայնէ. իսկ անունս ոչ մարդ՝ ուրացեալ զմին՝ թուի նշանակել զայլն ամենայն անորոշակի։ Աստի ասէ Դաւիթ Անյաղթ. «Ոչ է թէ ոչ մարդն՝

է բացասութիւն, ստորասութիւն եղելոյ մարդ. ապա ոչ մարդ՝ ոչ ստորասութիւն եղելոյ և ոչ բացասութիւն»։

Անուանք բաժանին յերկուս՝ 'ի գոյական և յածական. գոյականն նշանակէ զիրս, որպէս մարդ, առիւծ. ածականն նշանակէ զհանգամանս որպիսութեան իրաց, որպէս բարի, զօրեղ։

Ճշգրտիւ խօսելով՝ միայն գոյականն է անուն. զի նշանակէ զիր ինչ բնական, որպէս երկիր և ծով. կամ բարոյական, որպէս առաքինութիւն և մոլութիւն. և կամ իմացական, որպէս ճշմարտութիւն և ստութիւն. իսկ ածականն ոչ է տիրապէս անուն՝ այլ մակդիր անուան, զի ցուցանէ զհանգամանս ինչ անուան կամ իրին։

Գտանին և անուանք ինչ որք 'ի քերականաց գոյականք կոչին, որպէս արդարութիւն, բոլորակութիւն, գոյն, և այլք անթիւք. բայց չեն իսկապէս գոյականք՝ այլ անուանք միայն. զի են ծանօթութիւնք մտաւորական էակաց, որք ոչ 'ի բնութեան իրաց՝ այլ միայն 'ի խորհրդեան մտաց ունին զլինելութիւն։

Գոյական անուանք և ածականք են հարկաւոր մասունք բանին, զի յօդաւորեալ ընդ միմեանս շաղկապաւ է, կամ ոչ է, բաւական են յայտնել զամենայն դատմունս մտաց։

ՅՕԴՈՒԱԾ . Բ.

Բայ :

Բայն է ձայն նշանական՝ ըստ հաճու-թեան՝ ընդ ժամանակաւ և գիմօք, որոյ ոչ ինչ մասն զատեալ է նշանական. և ասի զայլ-մէ, զի յենթակայութեամբ բնաւորեցեալ լինելոյ.

Բայս է՝ որ իբրև շաղկապ վարի 'ի հաս-տատական բանս, ցուցանէ թէ այս ինչ հան-դամանք է յայս ինչ իրի. որպէս մարդն է բանական :

Անունն նախկին է քան զբայն, վասն որոյ և պատուական քան զնա. զի անունն լինի ենթակայ, և յայտ առնէ զիրն. իսկ բայն յենթակայութեան լինի և ասի զնմանէ, զի ցու-ցանէ զհանդամանս ինչ կամ զորդասիս ի-րին. զոր օրինակ արեգակն լուսաւորէ, կամ է լուսաւոր. առ մակդիրս լուսաւորէ, կամ անձնական լուսաւոր՝ հանդերձ հաստատա-կան շաղկապաւ այսինքն է բայիւ, համա-րին լինել յենթակայն որ է անունն. արե-գակն, վասն որոյ և ասին զնմանէ. ապա ա-նունն պատուական է քան զբայն :

ՅՕԴՈՒԱԾ Գ.

Բանն է հիւսուած նշանական ձայնից կամ բառից, յայտնող զատման միտս. որոյ մասունք զատեալ՝ նշանակեն ենթակայ իրս

ինչ, կամ գործողութիւն իւի, կամ հանգամանս ինչ նորա. այլ ոչ յայտնեն զդատումն ինչ, և ոչ զճշմարիտ ինչ կամ զսուտ: Բայց յորժամ անուն և բայ յարին ընդ միմեանս՝ լինի առաջացուած, և յայտնեալ յայտ առնեն զխորհուրդ մտաց, և զճշմարիտ ինչ կամ զսուտս. զոր օրինակ, աշխարհս ապականանի, կամ է ապականացու:

Դաւիթ Անյաղթ՝ շարադրութիւն կոչէ զներքին դատումն և զկապակցութիւնն մտաց՝ թէ ենթակային հանգէտ է մակադրին, որպէս և ձայնիւ հաստատեսցի:

Իսկ տրոհութիւն կոչէ՝ յորժամ խորհրդածով մտաց ուրանայցէ զհանգիտութիւնն ենթակային և մակադրին շարադրութեան, որպէս ժխտեսցէ ձայնիւ. և զոր օրինակ ՚ի ձայնի հաստատութիւն և ժխտողութիւն, այնպէս և յիմացման մտաց շարադրութիւն և տրոհութիւն յայտ առնեն զճշմարիտն և զսուտ:

Արդ՝ որպէս պարզում անուանք՝ նոյնպէս և պարզում բայք առանձինն ոչ ճշմարտեն և ոչ ստեն:

Այլ որպիսի են իմացմունք, նոյնպէս պարտին լինել և ձայնք. զի եթէ իմացմունքն են շարադրականք, հաստատական եղիցին և ձայնք. իսկ եթէ տրոհական, և ձայնքն լիցին ժխտողական:

ԳԼՈՒԽ Գ.

Նշանակք դատման:

Նշանակ և յայտնիչ դատման մտաց՝ է ասացուածն, որ և կոչի արտաքերեալ բան, իմաստ, ասած, յԱրիստոտէլէ՝ վճիռ, ՚ի հընոց՝ նախադասութիւն, բացերևութիւն, և սովորաբար Առաջարկութիւն:

Երեք ինչ երևին ՚ի դատման. առաջին, Նիւթ բանի, և բառն որ ՚ի մէջ բերէ զայն՝ մանաւանդ անուամբ կոչի Ենթակայ: Երկրորդ, Հանգամանք կամ յատկութիւնք նիւթոյ բանին կամ ենթակային. և բառն յայտարարող նմին՝ ասի Մակդիր: Երրորդ, շաղկապ, որ յօդաւորէ զենթակայն ընդ մակդրին և յայտ առնէ զյարմարութիւն կամ զանյարմարութիւն նոցա առ միմեանս. և կոչի Նշան հաստատութեան կամ ժխտողութեան. և է բառս է, կամ ոչ է:

Օրինակ իմն, Աստուած է բարի: Աստուած է նիւթ դատման որ ասի ենթակայ: Բարի, է հանգամանք ենթակային, որ յայտ առնէ զպատշաճեալն Աստուծոյ, և ասի մակդիր. Իսկ է բառն՝ է շաղկապ, և նշան հաստատական: Այս մինչ միայնակ դնի, ցուցանէ զնմանութիւն, և զյարմարութիւն հանգամանաց կամ յատկութեանց իրիք ընդ այլում իմիք. և բանն կամ ասացուածն՝ այն է առաջարկութիւնն՝ լինի հաստատական.

զոր օրինակ, Առաքինութիւնն է գովելի. իսկ մինչ կից ունի զմասնիկս ո՛չ ցուցանէ զաննմանութիւն կամ զանյարմարութիւն, և առաջարկութիւնն լինի ժխտողական, զոր օրինակ, Մարդն ոչ է անբան:

ԳԼՈՒԽ Դ.

Մասունք առաջարկութեան:

Երկու են մասունք առաջարկութեան՝ Ենթակայ և Մակդիր. ենթակայն է փոքրագոյն մասն, և մակդիրն մեծագոյն մասն:

Մակդիրն՝ յոլովագոյն պարտի լինել քան զենթակայն, կամ գոնէ հանդէտ նմին. բայց նուազ և ոչ երբէք: Իսկ ենթակայն կամ նուազ կամ գոնէ հանդէտ, բայց յոլովագոյն քան զմակդիրն ոչ բնաւ. զոր օրինակ, Մարդն է կենդանի. մակդիրն յոլովագոյն է քան զենթակայն. իսկ Մարդն է բանական. մակդիրն հանդէտ է ենթակային՝ և հակադարձին առ միմեանս:

Դաւիթ Անյաղթ զենթակայն կոչէ՝ փոքր սահման, և զմակդիրն՝ մեծ սահման. իսկ այլք ոմանք փոքր ծայր և մեծ ծայր. բայց լաւ ևս արդի տրամաբանք կոչեն զնոսա՝ գլուխս կամ մասունս առաջարկութեան. զի ոչ միշտ ՚ի ծայրս գտանին ՚ի բանի, այլ փոփոխին ըստ կամի: Օրինակ իմն փոխանակ

տանելի ։ Առաքինութիւնն է օգտակար, առ-սենք՝ Առաքինութիւնն օգտակար է. օգտակար է առաքինութիւնն, և օգտակար առաքինութիւնն. օգտակար առաքինութիւնն է. այլ ոչ ըստ դասաւորութեան՝ այլ ըստ իմաստին է դատելի զմասունս առաջարկութեան ։

Մասունք անուան բայ և այլուր Դաւիթ Անյաղթ յասելն. «Սահման կոչեմ յոր վերլուծանի նախադասութիւն. իսկ ստորոգեալն և ենթակայն, եթէ անն է յաղագս որոյ բանն, իսկ անն յաղագս որոյ ասացեալքն, որք անփոփոխելի մասունք գան առաջարկութեանց ։

Ենթակայն առաջարկութեան ՚ի մէջ բերէ զիր ինչ ընդհանրական կամ բաղդատական. իսկ մակդիրքն զհանգամանս ինչ կամ զմերձաւորութիւնս, որ հաստատեն զնմանէ կամ ժխտեն. որպէս առանձին է սննդական. ծաղկութիւնն է մշտական. խաւսելին ոչ է զարդացան։ Այս ենթակային դաման առաջարկութեան զինքն զայսպիսի անուն ՚ի ցոյց իւրին զօրինէ է դատման, և մակդիրքն ածական ՚ի ցոյց հանգամանացն որ հաստատեն կամ ժխտեն ։

Երբեմն փոխանակ դերական անուան դնի բառ ինչ համաձայն նմին. զոր օրինակ՝ փոխանակ ասելոյ կարեկցութիւնն է գովելի, ասի՝ կարեկիցն է գովելի ։

Բայց է ասելք, զի մակդիրն դերական թուի, որպէս բարեգործութիւնն է առաքի-

նութիւն. սակս բաժանութիւնն է միութիւն. սակայն առաջնութիւն և միութիւն նշանակեն անհատականաւորս, իբր այն թէ՝ բաղկացութիւնն է առաջնական ինչ. ապաբաժանութիւնն է ձևական ինչ.

ԳԼՈՒԽ Ե.

Կազմութիւն բանի.

Բանն կազմի ՚ի գոյական անուանէ, յածականէ և յէական բայէ. բայց երբեմն ՚ի միոյ անուանէ և յէական բայէ, և պակաս թուի մակդիրն. զոր օրինակ, Աստուած է. սակայն և այս է կատարեալ բան, զի ՚ի սմին բանին են, ոչ հաստատութիւն միայն գոյացութեան, այլ և էութիւն և գոյութիւն. և բանն համարժէք է այսմ, Աստուած է էակ.

Երբեմն ամբողջ բան ինչ միով բայիւ կատարի, մանաւանդ յառաջին և յերկրորդ դէմսն. զոր օրինակ՝ սպանեմ, յուսամ, երթաս, որ է ասել, ես եմ սպանող. դու ես յուսող. նա է երթող. յայսոսիկ ենթակայքն պարունակեալ կան ՚ի մակդիրսն.

Երբեմն երկոքումբք բառիւք մի բան կատարի. զոր օրինակ՝ երկիրս շարժի. մարմինք ապականին, որ է ասել, երկիրս է շարժական. մարմինք են ապականացու.

Բայց սովորաբար երիւք բառիւք յայտ-

նի, որք են ենթակայ, շաղկապ, և մակդիր. զոր օրինակ՝ աստեղք են բոլորշի. քաղաքավարութիւնն ոչ է կեղծաւորութիւն.

Այս երբեմն յերկուց կամ 'ի բազում բանից մի բան կատարի, ներգործութեամբ կամ զօրութեամբ ունելով շաղկապն և. զոր օրինակ, Մելքիսեդեկ էր թագաւոր և քահանայ: Ուր պարունակեալ կայ երկու բան. այսինքն է Մելքիսեդեկ էր թագաւոր, Մելքիսեդեկ էր քահանայ. բայց վասն միութեան ենթակային մի բան ասի: Մարդն է կենդանի, երկոտանի, բանական, ծիծաղական:

Իսկ երբեմն 'ի բազում բառից մի բան կատարի, եթէ ենթակայն և մակդիրն մի իցէ. զոր օրինակ, Երանելի հայրապետն մեր սուրբն Գրիգոր՝ որդի Անակայ պարթևի, յետ անտանելի չարչարանացն զոր կրեաց յարքայէն Տրդատայ, եղև Լուսաւորիչ Հայաստանեայցս ազգի:

Այս ամենայն մի բան ասի վասն միութեան ենթակային՝ որ է սուրբն Գրիգոր, և մակդիրին՝ որ է՝ եղև Լուսաւորիչ. իսկ այլ բառքն են յաւելուած, որոց ոմանք դնին 'ի կողմանէ ենթակային, և ոմանք մակդիրին յառաւել որոշումն նոցին. և կամ 'ի յայտ առնել զժամանակն, և կամ 'ի սակս զարդու:

ՊՐԱԿ Բ.

Բաժանումն բանի ։

Բանն ընդհանրապէս բաժանի 'ի հինգ ազգս, որք են այսոքիկ.

Ըղձական. Երանի՜ թէ խելամուտ լինէաք գաղտնեաց բնութեան ։

Հարցական. Ո՞վ կարայ գիտել զմիտս Տեառն ։

Աղաչական. Եկա՛յք առ իս ամենայն աշխատեալք ։

Հրամայական. Ծանի՛ր զքեզ ։

Սահմանական. Հոգին է անմահ ։

Այլ ամենայն տեսակս բանի թողեալ առ քերթողս և առ ճարտասանս, տեսցուք միայն զսահմանականն, զի հմտութիւն նորա կարևոր է յոյժ Բանական արուեստին ։

ԳԼՈՒԽ Ա.

Սահմանական բանք ։

Սահմանական բանք են բազմատեսակ, որոց գլխաւորքն են սոքին. Պարզ, Բարդ, Բազմամասնեայ, Գլխաւոր, Եկամուտ, Պայմանաւոր, Պարզելի ։

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Պարզ, Բարդ, Գլխաւոր և Եկամուտ ։

Պարզ ասի բանն, որոյ մասունքն են պարզ, և իւրաքանչիւր միոյ գաղափարի կամ ծանօ-

թութեան նշանակ . զոր օրինակ , Աշխարհս է փոփոխական . ագահութիւնն ոչ է առաքինութիւն :

Բարդ ասի բանն , եթէ յենթակայն կամ 'ի մակդիրն գտանին այլ բառք յայտնիչք գաղափարի կամ ծանօթութեան :

Բարդ ըստ ենթակային . աստեղաց բազմութիւնն է անթուելի : Ըստ մակդրին . արիութիւնն է արժանաւոր վարձուց : Ըստ երկուցն . բարոյական առաքինութիւնք՝ են բարի ունակութիւնք մտաց :

Նոյնպէս բարդ լինի բանն , եթէ 'ի շաղկապն կցէ յարակցեալ այլ ինչ բառ . Աստուած ամենեւին է անփոփոխ . մարդս 'ի բնութեան է սխալական . բարկութիւնն արդարև է դիւահարութիւն . փքացումն բոլորովին է կոյր :

Բայց են բանք որ պարզ թուին՝ այլ ըստ իմաստին են բարդք . զոր օրինակ , Պետրոս է աղքատասէր . ուր մակդիրս աղքատասէր՝ զերկուս ծանօթութիւնս զարթուցանէ 'ի միտս՝ աղքատի և սիրոյ , վասն որոյ և հանգիտանայ այսմ բարդ առաջարկութեան . Պետրոս է սիրող աղքատաց :

Բարդ են և համանուն բառք . Արտաշէս էր յաղթող . զի չէ յայտ ո՞ր Արտաշէս իցէ՝ հա՞յն թէ պարսիկն , առաջի՞նն թէ երկրորդըն . Սմբատ էր առաքինի . սոյնպէս չէ յայտ թէ ո՞ր Սմբատ իցէ . զի բազում անձինք եկին սովին անուամբ , վասն որոյ և զբազում

գաղափարս յարուցանեն ՚ի միտս. այսպիսի պարզ ձայնք ։

Նոյնք են և առձեռնայն բանք, յորս այլ բայ կայ բան զէականն իբրև մակդիր եղեալ. զոր օրինակ, Դաւիթ սպան զԳողիաթ. Դեմաս սիրեաց զաշխարհ. զի նշանակէ առեալ, Դաւիթ եղև սպանօղ Գողիաթու, և Դեմաս եղև սիրօղ աշխարհի. յորս սպան և սիրեաց են մակդիր, զԳողիաթ և զաշխարհ՝ լրումն մակդրին. որ և կոչի լրումն բանի ։

Նաև՝ որ յարի ՚ի մակդիրն իբրև լրացուցիչ նորին, երբեմն լինի աներևոյթ բայ. զոր օրինակ, Տէրն պատուիրէ ընթեռնուլ զգիրս. իսկ երբեմն դերբայ. Պատուիրան տեառն յաղագս ընթեռնլոյ զգիրս է. որպէս թէ ասիցէ, Տէրն պատուիրէ զընթերցումն գրոց ։

Մասունք բանին լինին բարդ բազում կերպիւ ։

Ենթականօք. Օտար իւղայինն է դժուարամարսելի ։

Յայտնանուամբ. Աղեքսանդր ծնեալ ՚ի Մակեդոնիա՝ եղև ինքնակալ Ասիացւոց աշխարհին ։

Դերբայիւ. Աբրահամ հաւատալով խոստամանն Աստուծոյ՝ ընկալաւ զաւետիսն ։

Նախադրութեամբ. երբեմն ցուցանելով ըզպատճառն. Մոդոմանն փառս ապաշխարանաց իւրոց համարի փրկեալ ։ Երբեմն զժամանակն. Պօղոս յետ հալածելոյ զեկեղեցին Աստուծոյ՝ եղև հաստատութիւն եկեղեցւոյ ։

Երբեմն զաւեղին. Չիւնք 'ի վերայ բարձրա-բերձ լերանց Հիւսիսոյ ոչ Հալին երբէք ։

Օրինակ. Ներսէս 'ի Լամբրոնէ Կիլիկեցւոց՝ մեկնեաց զսաղմոսարանն ։ Թռչունք երկնից առակաւութիւ են քան զձկունս ծովու ։

Վերլուծումն բանին՝ 'ի ձեռն յարաբերական դերանուանս որ. Արշակ քաջ՝ որ թագաւորեաց 'ի պարթեւս, կացոյց թագաւոր զեղբայր իւր զՎաղարշակ 'ի Հայս ։

Զայս ամենայն օրինակս մարթ է ասել եկամուտ բան. զի ծառ խաղողին ; է ասել ծառ որ խաղողին է ։

Աղեքսանդր՝ որ ծնեալ էր 'ի Մակեդոնիա ։
Աբրահամ՝ որ Հաւատաց խոստմանն Աս-տուծոյ ։
Սողոմոն՝ որ ապաշխարեաց ։
Պօղոս՝ որ Հալածեաց զեկեղեցին Աստուծոյ ։
Ձիւնք՝ որ են 'ի վերայ բարձրաբերձ լե-րանց Հիւսիսոյ ։
Ներսէս՝ որ էր 'ի Լամբրոնէ Կիլիկեցւոց ։
Թռչունք՝ որ յերկինս են ։

Յայտ է յօրինակաց աստի, զի 'ի բարդ-ասացուածս է ինչ որ գլխաւոր է, և է ինչ որ եկամուտ, և կամ յաւելուած ։

Գլխաւոր բանն է՝ զոր գիտեմք յայտ առ-նել Հաստատութեամբ կամ ժխտողութբ ։

Եկամուտ բանն է՝ զոր յարաբերականա-ւն որ, կամ այլով զօդիւ յարեմք 'ի գլխա-ւոր բանն ։

Յաւելուած բանն է՝ նոյն ինքն եկամուտ բանն, և ամենայն բառք եղեալք իբրև յարակիցք և լծորդք. որք մինչ բացայայտեն զգլխաւոր բանն՝ համարին էական լծորդք. և մինչ ազդուութիւն և վայելչութիւն տան միայն, համարին պատահական լծորդք։

Յաւելուածն երբեմն ամփոփէ զէնթակայն, և երբեմն բացայայտէ. զոր օրինակ, Ոչ է արժան զգիշերն ամենայն 'ի քուն լինել առն խորհրդականի, որ ունի զխնամ 'ի վերայ հասարակութեան։ Ուր խորհրդականն յաւելեալ՝ ամփոփէ զէնթակայն որ է բառդ այր. և առ նմին լծորդեալ բանն, որ ունի զխնամ 'ի վերայ հասարակութեան, բացայայտէ զխորհրդականն։

Երբեմն զէնթակայն միայն բացայայտէ. զոր օրինակ, Ընկաւ Սարբիդոն գլխաւորն պատերազմողաց Լիկէացւոց։ Ուր Գլխաւորն պատերազմողաց Լիկէացւոց՝ բացայայտէ զՍարբեդոն, որ ենթակայ է 'ի բանիս։

Երբեմն զմակդիրն. Հեկտոր ընթանայր՝ նմանեալ մարդածախն Արէսի։ Ուր նմանեալ մարդածախին Արէսի՝ բացայայտէ զմակդիրն, որ է բառս ընթանայր։

Իսկ երբեմն զշաղկապն. զոր օրինակ, Հարկաւոր է մարդոյ մեռանիլ։ Ուր հարկաւորն բացայայտէ զշաղկապն է։

Առ 'ի ճանաչել զճշմարտութիւն և ըստութիւն բարդ բանից; պարտ է քննամբ

քննել զյաւելուածսն ; զի մի՛ ստութիւն ինչ 'ի գլխաւոր բանն սպրդեալ խառնեսցի յաւելուածոց անտի. զի են որք դնին 'ի լրումն բանին, և են որք 'ի զարդ և 'ի վայելչութիւն։

Օրինակ իմն. Մեծն Հերովդէս այր հզօր և անհարկու՝ կոտորեաց զդիեցիկ մանկունս Բեթղահեմի 'ի գիրկս մարց իւրեանց.

Ի սմին բանի, Մեծն կարևոր է և իբր էական յաւելուած, զի որոշէ զՀերովդէս յայլոց համանուն արքայից. իսկ հզօր և անհարկու՝ ոչ ինչ առաւել որոշումն տայ ենթակային՝ այլ զազդուութիւն միայն. զմանկունս Բեթղահեմի՝ հարկաւոր է 'ի լրումն բանին, զի ցուցանէ թէ ո՞յք ոմանք էին որք կոտորեցան. իսկ դիեցիկն և 'ի գիրկս մարցն, են պատահական յաւելուածք։

Առ ճշմարտութիւն գլխաւոր բանին՝ հարկ է ամենայն կարևոր յաւելուածոցն լինել ճշմարիտ. զի սուտ է ասել, Հերովդէս փոքրն կամ չորրորդապետ. նոյնպէս սուտ է ասել, զմանկունս Երուսաղէմի կամ Սամարիայ։

Իսկ ստութիւն պատահական յաւելուածոցն ոչ եղծանէ զճշմարտութիւն գլխաւոր բանին։ Դիցուք թէ՝ Հերովդէս չէր հզօր և անհարկու. կամ թէ մանկունքն զորս կոտորեաց՝ չէին դիեցիկք՝ այլ հատեալք 'ի ստենէ. և կամ ոչ 'ի գիրկս մարց՝ այլ 'ի մահճի. այս

ամենայն պատահական յաւելուածք ոչ ինչ վնասեն ճշմարտութեան գլխաւոր բանին. քանզի ճշմարիտ է գլխաւոր բանն, թէ մեծն Հերովդէս կոտորեաց զմանկունս Բեթղահեմի:

Երբեմն որ գլխաւոր բան կարծի, այն եկամուտ է և յաւելուած, և որ եկամուտ թուի՝ այն է գլխաւոր բան. որպէս եթէ ասիցեմք. Ցուցեալ է յաստեղագիտաց թէ մոլորակք աւելի են քան զեօթն: Այս ՚ի սմին՝ ցուցեալ է յաստեղագիտաց, որ կարծի գլխաւոր, է եկամուտ բան. իսկ մոլորակք աւելի են քան զեօթն, որ եկամուտ թուի, է գլխաւոր բան:

Այլ ՚ի վերայ այսր ամենայնի՝ յորժամ մեզէն շարադրեմք ինչ, պարտիմք փոյթ մեծ ունել առ ճշմարտութիւն էական յաւելուածոյն, և հոգ տանել առուգութեան պատահականացն. որ ինչ անհաւատալի երևի՝ իբրև զանպիտան ինչ ՚ի բաց հատանել ՚ի բանէն, կամ գտնել երկբայական եղանակաւ չափաւորել. զոր օրինակ, Մեծն Աղեքսանդր՝ զորմէ ասեն լինել որդի Նեքտանեբայ, յետ նուաճելոյ զմեծ մասն Ասիացւոց աշխարհին՝ մեռաւ ՚ի Բաբելոն ՚ի տիս երիտասարդութեան, որպէս կարծի ՚ի թունաւոր դեղոյ դաւաճանողաց: Ի սմին՝ զորմէ ասեն, երկբայական կացուցանէ զլինել նորա որդի Նեքտանեբայ, և ոչ ստէ զպատմիչսն որք հաւաստեն լինել որդի Փիլիպպոսի. և որպէս կարծի, երկուանալի գործէ զմահ նորա ՚ի

թունոյ, և ոչ սահմանէ նոցա որք պատմեն մեռանիլ յարբեցութենէ ։

Ըստ այսմ և Խորենացին զհերձանիլ կարծրագոյն քարանց 'ի ժամու հայեցուածոյ Երուանդայ Հայոց արքայի՝ 'ի բերանոյ այլոց 'ի մէջ բերելով զգացուցանէ լինել անհաւատի կամ երկբայական, այսպէս ունելով բանիւն. «Բայց ասեն զԵրուանդայ ըստ հմայից դժնեայ գոլ ական հայեցուածով. վասն որոյ ընդ այգանալ աշալրջոցն սովորութիւն ունել ասեն սպասաւորայն արքունի՝ վէմս որձաքարեայս ունել ընդդէմ Երուանդայ, և 'ի հայեցուածէ ասեն դժնէութեանն պայթիլ որձաքար վիմացն» ։

Իսկ 'ի շարագրածս այլոց զոր ընթեռնումք կամ լսեմք, պարտիմք խտրել ընդ կարևոր և էական յաւելուածսն և ընդ պատահականսն. և ապա ազդ առնել՝ եթէ գըլխաւոր բա՞նն իցէ ճշմարիտ կամ սուտ՝ և եթէ յարակիցն ։

Պարտ է ունել և զգուշութիւն առ 'ի որոշել զտարբերութիւն համանունանց և հանգամանաց թէ 'ի գլխաւոր բանն իցեն և թէ 'ի յաւելուածսն. օրինակ իմն, Այաս ընդ Հեկտորի մենամարտեցաւ ։ Այս բան կարէ լինել սուտ և ճշմարիտ. զի երկու համանունն Այաս էին 'ի տրոյական պատերազմին. վասն միոյն ճշմարիտ է, և վասն միւսոյն սուտ ։

Աղեքսանդր յաղթող գտաւ ։ Ճշմարիտ է վասն մակեդոնացւոյն, և սուտ վասն տրովադացւոյն ։ Աքիլլէս նահատակեցաւ 'ի պատերազմի ։ Պարտ է որոշել առ տրոյակա՞ն թէ առ պեղոպոնական պատերազմին ։

ԳԼՈՒԽ Բ․

Բազմամասնեայ կամ խառն բանք, ըստ հնոց Բաղադրեալ։

Բազմամասնեայ ասի բանն, որոյ ենթակայն կամ մակդիրն առաւել է քան զմի․ և հանգիստանայ այնչափ պարզ բանից որչափ են մասունքն, ենթակայքն և մակդիրքն ։

Բազմամասն ըստ ենթակային ։ Արշակ և Վաղարշակ էին թագաւորք ։ Անդէաս և Զաքարիաս մարգարէանային ։

Բազմամասն ըստ մակդրին ։ Հեսիոդոս էր իմաստասէր և բանաստեղծ ։ Ղուկաս բժիշկ էր և աւետարանիչ ։

Բազմամասն ըստ երկուց ։ Սողոն և Լիկուրգոս էին օրէնսդիրք և զօրավարք ։ Սահակ և Մեսրոպ եղեն հիմնադիրք հայկական դպրութեան, և թարգմանք Աստուածաշունչ գրոց ։

Գլխաւոր տեսակք բազմամասնեայ բանի՞ց են ութ․ շաղկապական․ անջատական․ կցորդական․ պատճառական․ համեմատական․ զատական․ հետևողական և նմանական ։

ՅՈԴՈՒԱԾ Ա.

Շաղկապական, ըստ հնոյ Բաղհիւսական:

Շաղկապականն է՝ յորում կամ բազում ենթակայք կամ մակդիրք շաղկապեալք՝ հաստատելով կամ ժխտելով:

Հաստատելով. Հուր և օդ, ջուր և հող՝ են սկզբնատարերք մարմնաւոր գոյակաց: Ոսկին է արիւն և հոգի ագահին:

Ժխտելով. Դու ոչ առնես զբարի ինչ, և ոչ թողուս զի այլք արասցեն: Ո՛չ մեծութիւն և ոչ աղքատութիւն, ոչ կեանք և ոչ մահ կարեն մեկնել զբարեպաշտ հոգին ՚ի սիրոյն Աստուծոյ:

Երբեմն շաղկապն ոչ դնի ներքագործութեամբ յենթակայն. Արիութիւն, արդարութիւն, խոհեմութիւն, բարեխառնութիւն, են բարի ունակութիւնք հոգւոյ:

Եւ երբեմն ոչ դնի ՚ի մակդիրն. Խոհեմն զգուշաւոր է ՚ի խօսս, նախատես ՚ի գործս, անյողդողդ ՚ի յաջողուածս, արի յարկածս ձախողակ բաղդի:

Այս ուղղութիւն սոցա հարկ է ՚ի հաստատականս ամենայն մակդրաց պատշաճիլ ենթակայից իւրեանց. իսկ ՚ի ժխտողականս՝ և ոչ միոյ մակդրի պատշաճիլ ումեք յենթակայիցն:

Բազում անգամ առ զգուշութիւն անխո-րութիւն է դնել անդ կէտ ինչ՝ ուր շաղկա-

ոգին զօրութեանն իմանի. զի կարեն ընդդէմ բարձր. յորս բառս ինչ յարաբերալ ընդ նախընթացին` այլ միայն ընծայէ, և յարաբերալ ընդ յանձնորդին` այլ ինչ միայն. և երբեմն ներհակ առաջնոյն։ Որպիսի էր այս բառն Էազդական առ Կրիտա. «Սերթեցեալ զարծաթս ոչ մեռանեցայ ի պատերազմի»։ Աստ ձևացուցանեն բառս ոչ` յարաբերալ ընդ նախընթացին այլայլեալ զանձին ոչ, ցուցանէ առել` ոչ զարծաթսն զի մեռանեցայ ի պատերազմի. և յարաբերալ ընդ յանձնորդին պայմանէ, ոչ մեռանեցայ, նշանակէ առել` զարծաթս, և ոչ մեռանեցայ։

Այսպէս չկամ լինի եթէ աստուածէ պատռանց շարակարգի կամ կերպ. «Փառաւորէ զտաճարս առ որդս ողջանան ընդ այլ մեծ ամենայն ի ամին` որպէս ընդ այդ, եթէ կցեալ ընդ նախընթացին առնէ, նշանակէ առել` հայր քո տնտեսականն որ էր, առնէր և դու որդեակ, և մի մեծար ազգեսս. իսկ եթէ կցեցեալ ընդ վերջադասին, ցուցանէ առել` հայր քո ազգեսս որ էր, դու լեր տնտեսական, և մի մեծար ազգեսս իբրև զնա։

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Ընդհատական. ըստ հնոց Տրոհական,
և ըստ ոմանց Զատական։

Ընդհատական է` յորում ենթակայքն կամ մակդիրքն յօդին ընդ միմեանս տրոհական

շաղկապեալք․ ըստ օրինակի ։ Նմանայն մարմին 'ի շարժման է կամ 'ի դադարման ։ Նմանայն կենդանի բանական է կամ անբան ։

Առ ճշմարտութեան սորա հարկ է, զի ամենայն մասունք բոլորին անպակաս թուեսցի, և հաստատութիւնն կամ ժխտութիւն միոյ մասին և եթ պատշաճեսցի, և ոչ ամենայն մասանցն միանգամայն ։ Ապա եթէ ամենայն մասանցն պատշաճեսցի՝ լինի թիւր․ զոր օրինակ, Առաքինութիւնն առաջնորդէ առ երջանկութիւնն մարմնաւոր կամ առ հոգևոր․ քանզի առ երկոսին ևս առաջնորդէ ։ Առ ուսումն աստուածային արուեստի և գիտութեանն՝ հարկաւոր է ուշիմութիւն կամ ջանք․ սխալ է զի երկոքին ևս են հարկաւոր ։

Նոյնպէս թիւր լինի եթէ և ոչ միում 'ի մասանցն պատշաճեսցի․ Բնութիւնն հրեշտակաց հողմեղէն է կամ հրեղէն․ սուտ է զի ոչ հողմեղէն է և ոչ հրեղէն՝ այլ հոգեղէն ։

Ըստ այսմ օրինակի սխալ է, եթէ 'ի մէջ անջատեալ մասանցն գտանիցի միջին ինչ․ Նմանայն գործ զորս գործէ մարդ՝ բարի են կամ չար ։ Զի գոն և անտարբեր գործողութիւնք որք ոչ բարի են և ոչ չար․ որպիսի են բնական շարժմունք մարմնոյ ։

ՅՕԴՈՒԱԾ Գ․

Կցորդական ։

Կցորդական են՝ որ եթէ ճշմարիտ իցէ

մի մտան, հարկաւ հետևէր ճշմարիտ լինել և միւսոյն որ կցորդի նմին։ Եթէ ամենայն ինչ 'ի շարժման է, ապա է ոմն անշարժ որ շարժէ զնոսա։ Եթէ յօրինաց չէր ասացեալ մի երդնուցուս սուտ, ապա չէր ինչ մեղ ստերդմանց։

Ոչ ճշմարտութիւն սորա բաւական է հետևութեան երևելն 'ի միւս մասնէ, որ իւրև պայման առաջի դնի. և չէ հարկ պայմանին թէ իցէ ինքնին ճշմարիտ։

Քանզի բազում անգամ առ 'ի ցուցանել զսուտութիւն իրիք, յառաջ բերեմք 'ի նմանէ զանտեղութիւն ճշմարտութեան նորա. զոր օրինակ, Եթէ փառք և բարք և վիճակ մարդոյ յաջողեցութենէ մոլորակաց իցէ, ապա ծնեալքն 'ի միում վայրկենի ընդ բովանդակ աշխարհ, զնոյն փառս և բարս և զվիճակ կենաց պարտ էին ունել։ Եթէ չէր առաջին շարժօղ, չլինէր ուրեմն և ոչ մի ինչ շարժումն։ Եթէ չգոյր նախախնամութիւն, ոչինչ կարգ բնութեան գտանէր յաշխարհի։

Աշխարհական բանք երբեմն կազմին յերկուց հաստատականաց. Եթէ օդն ունի ծանրածութիւն, ապա է մարմին։ Եթէ հոգին պարզ է 'ի բնէ, ապա հարկաւ է անապական։ Եթէ գոյ ուրեք դատաւոր արդար և իմաստուն, ուրեմն գոյ անդ իրաւունք և արդարութիւն։

Երբեմն յերկուց ժխտողականաց. Եթէ

չիք լոյս յաշխարհի․ չերևէր և ոչ մի ինչ մարմին գունաւոր ։ Եթէ ոչ ելանէր ՚ի ծովէ և ՚ի ցամաքէ գոլորշի յօդս, և ոչ շիթ մի անձրևոյ իջանէր յերկիր ։ Եթէ ոչ շնչէր հողմն ՚ի վերայ երկրի․ ոչ երբէք լինէր ալեկոծութիւն ՚ի ծովու ։

Երբեմն ՚ի հաստատականէ և ՚ի ժխտողականէ․ Եթէ լուսինն է մարմին դիմահայր, ապա ոչ ունի զլոյս յինքենէ ։ Եթէ աստուածապաշտ ոք է, ուրեմն ոչ անիրաւէ ումեք ։

Եւ երբեմն ՚ի ժխտողականէ և ՚ի հաստատականէ․ Եթէ չէ ուսեալ ինչ, ապա տգէտ ոք է ։ Եթէ ոչ էին օրէնք բարիք, և ոչ վարձք օրինապահաց և պատիժ օրինազանցից, ամենայն անկարգութիւն և անիրաւութիւն տիրեալ էին ՚ի մարդիկ ։

Յայտ իսկ է, զի յամենայն պայմանական բանս մի մասն է նախընթաց, և միւսն հետևեալ․ ապա որոց հետևութիւնք կարիցեն ուղղակի յարիլ ՚ի նախընթացն, մարթին փոխիլ ՚ի բացարձակ բանս․ զոր օրինակ, Եթէ ունի զգործառութիւն շնչոյ՝ կենդանի է․ փոխի ՚ի բացարձակն, Շնչաւորն կամ որ ունի զշունչ՝ կենդանի է ։ Եթէ սիրես զխրատութիւն՝ լինիցիս բազմագէտ․ փոխի ՚ի բացարձակ, Սիրօղ զխրատութեան, կամ որ սիրէ զխրատութիւն՝ լինիցի բազմագէտ ։

Կարեն փոխիլ և ս ՚ի պատճառականն․ զոր օրինակ, Որովհետև սիրես զխրատութիւն՝ լի-

նշցիս բաղդատիցէս ։ Որպէս այսմ, եթէ է բա-րի՝ է գթած․ փոխի ՚ի պատճառականն, վասն զի է բարի, է գթած ։ Հնար է փոխել և ՚ի կրկնականն․ ըստ որում է բարի՝ է գթած ։

Որպէս սմին օրինակի սակի․ Եթէ է անփո-փոխ, է և յաւիտենական ։ Պատճառականն․ վասն զի է անփոփոխ, է և յաւիտենական ։ Կրկնականն․ ըստ որում է անփոփոխ, է և յաւիտենական ։

ՅՕԴՈՒԱԾ Դ․

Պատճառական ։

Պատճառականն է՝ որոյ մի մասն յայտ առ-նէ զպատճառ կամ զդիտաւորութիւն միւ-սոյ մասին․ և կազմին պատճառական շաղ-կապօք․ զոր օրինակ, Ջուր առաւելեցաւ ընդ-արձակի․ քանզի օդ բազում ՚ի ներքս փու-կէ ։ Չէ՛ օրէն դատաւոր կարգել զագահս և զմարդահաճոյս, զի այնպիսիքն վասն կաշա-ռաց կամ առ հեծուկս թիւրեն զիրաւունս և զդատաստան ։ Որպէս այսմ է՝ և այս զոր ա-սաց Արիստիպպոս․ Ոչ կորուսի ինչ, զի պատե-րազմն ոչ յափշտակէ զառաքինութիւն ։

Ու ճշմարտութիւն այսպիսի բանից ՚ի պարտին ճշմարիտ լինել պատճառն կամ դի-տաւորութիւնն ։

Պահանջի և ս զի իցեն իսկական պատ-ճառք․ զի ճշդիւ իմացեալ՝ սուտ է ասել,

Գիտէ դա զամենայն գիտութիւն, զոր ունի է սուֆիք և տաւարքինի։

ՅՕԴՈՒԱԾ Ե.

Համեմատական։

Համեմատականն է՝ որ ցուցանէ զհամեմատութիւն երկուց առ իրեարս. զոր օրինակ, Որչափ խիտ և հոծ են մասնկունք մարմնոյ իրիք, այնչափ առաւել ծանր քան զայլ համաչափ մարմինս բնաւորեցաւ լինել։ Ձեռք որչափ 'ի հեռուստ հարկանեն զոք, այնչափ առաւել ցաւ զնովիմբ ածեն։ Որչափ սաստիկ շնչեսցէ հողմ, այնքան առաւել ալեկոծի ծով։

Նա ուղղութիւն բանիցս պահանջէ էական և անփոփոխ համեմատութիւն երկոցուն համեմատականցս։ Իսկ եթէ համեմատութիւնն չիցէ էական և ճիշդ, չէ հնար լինել բանին բացարձակապէս ճշմարիտ. և յայնժամ պարտ է մեղմել և չափաւորել. զոր օրինակ, Որպիսի են կենցաղականցս ուսումն բարք, այնպիսի երևի լինել և նորուն բնաւորութիւն։ Թէպէտ և այս ճշմարիտ է 'ի բազումս՝ այլ ոչ յամենեսին։

ՅՕԴՈՒԱԾ Զ.

Զատական։

Զատականն են՝ յորս զմի և զնոյն ենթա-

կայէ հաստատուն մակդիր ինչ, և միւսն այլ-
իմն։ Կամ մի և նոյն մակդիր ընծայի միում
ենԹակայի, և բառնի յայլմէ։ Սորին ոչ է
յոյժ մեծամեծութիւն, այլ է բանաւորութ։ Սոր-
գիրկ նախնիք գտեալ ոչ ունէին զպատուա-
բանս ուանցեալս յՍտածոյ վարել նոցա,
այլ զօրէնս բնութեան։ Աշխարհս ոչ է յա-
ւէտենից Աստուծոյ, այլ արարած ՚ի ժաման-
նակի։ Նա ՚ի սմին մակդիրք ինչ ՚ի բաց
հատանին յենԹակայից իւրեանց, որք են ա-
ռիւծ, մարդիկ, աշխարհ, և մակդիրք ինչ
հաստատունն գնոցանէ։

Ոչ մեծութիւն բազում՝ այլ բարեպաշ-
տութիւնն առնէ զմարդ սիրելի Աստուծոյ։
Ոչ գիտողք օրինաց՝ այլ առնողք օրինաց ար-
դարանան։

Ի սմին մի և նոյն մակդիր հաստատուն զեն-
Թակայէ իմեքէ, և հատանի յայլմէ։

Նա ուղղութիւն սոցա հարկ է, զի որք
հաստատունն կամ միտքն՝ իցեն անվրէպ ճըշ-
մարիտ։

Նախնիք բանք երբեմն կազմին ՚ի հաս-
տատականաց. Պաւղոս փոքր էր հասակաւ,
բայց էր պատերազմող։ Աբեսողոմ գեղեցիկ
էր տեսլեամբ, սակայն ագահ բարուք։

Նաև երբեմն ՚ի հաստատականէ և ՚ի ժխտա-
կանէ. Նաւազանք կարեն կողոպտել զինս
չասուորութ, այլ ոչ զբարեպաշտութիւն նոցա։
Նաև ջուր զերթա ընդունի, այլ ոչ զմարտան։

ՅՕԴՈՒԱԾ. Է.

Հեփեստոսական ։

Հեփեստոսականն է՝ յորում մի մասն նիւ-թոյ ի միւսոյ մասանցն իբրև զօրծ իւրում պատ-ճառի ։ Սոր չէք արեգական կամ հուրս և ոչ անգ ջերմութիւն ինչ կամ լոյս ։ Սոյն կա-րացեալ են աչք և լսելեաց ըմբռնելիք, նա և ոչ տեսանել կարող է և կամ լսել ինչ ։ Մանկան մինչև ոչ բաւականին առատանունդք, չկարէ ծա-մել զհաստատուն կերակուր ։ Յորժամ հա-սին անձամբ ի մարմնոյ, յայնժամ ամենայն զգայութիւն բառնի ի մարմնոյ ։ Հնոցային ու-րեգական ի ներքին կենդանոցի յանկէ, այլ ոչ է առ մեզ ։

Սուզեալ լինին այս բանք, եթէ երկրորդն ամե-նեքեան ունեցին կատարելութիւն ընդ միմեանս ։

Յայտ է ՚ի վերոգրեալ օրինակաց ․ զի այսպիսի բանք երբեմն կարգին յերկրոց հաստատութեանց ․ զոր օրինակ, Յորժամ թագաւոր արդար նստի յաթոռ, յայնժամ ամենայն ժողովուրդք նորա վայելեն զպտու-ղս բարութեան ։

Երբեմն յերկուց ժխտողականաց ․ զոր օրի-նակ, Սէր չէք պատիւ չարաց, չէք անգ և ապահովութիւն կենաց ։

Երբեմն ՚ի հաստատականէ և ՚ի ժխտո-ղականէ ․ Սոյն խոստովանեալ են միայն ; ոչ կա-րէ նա խոստովանել զփորձն ։

ՅՕԴՈՒԱԾ Ը.

Նմանական ։

Նմանականն է՝ յորում զայլ և այլ իրս համեմատեմք իրերաց վասն առ միմեանս նըմանութեան. զոր օրինակ, Որպէս առիւծն է թագաւոր գազանաց, նոյնպէս և արծիւն թագաւոր թռչնոց ։ Որպէս տզրուկն ոչ յագի արեամբ, նոյնպէս և ագահն ոչ յագի արծաթով ։ Որպէս օձն թաքուցեալ ընդ ծաղկամբք թունաւորէ զանզգոյշս, նոյնպէս և նենգաւորն կերպարանօք բարեկամութեան կորուսանէ զպարզամիտս ։

Նա ուղղութիւն սորա պահանջի, զի տարբեր իրք ունիցին զնմանութիւն ինչ ընդ միմեանս ՚ի մասին յայնմիկ յորում բաղդատին ։

ԳԼՈՒԽ Գ.

Պայմանաւոր բանք, բառ հնոց Եղանակաւոր ։

Պայմանաւոր բանք ընդ բարդս և ընդ բազմամասնեայս դասին. և հիմնութիւն նոցա կայ և որ է յընտրութիւն ճշմարտութեան բանից այլոց, և յուղղութիւն մերոցն ։

Պայմանաւոր կոչին բանք, որք ցուցանեն զպայման ինչ, որով մակդիրն յարակցի ընդ ենթակային հաստատութեամբ կամ ժխտո-

ղութեամբ . և այսպիսի պայմանք են չորք . հարկաւոր, պատահական, կարելի, անկարելի ։

Հարկաւոր . Շնչոյ տուրևառութիւն հարկաւոր է կենդանւոյ ։ Ու շարժումն դադարեալ մարմնոյ հարկաւոր է շարժիչ զօրութիւն արտաքին իմն գործողի ։

Պատահական, կամ ըստ հանդիպման, ըստ հնոց ներընդունական . Պատահի և իմաստնոյն չտեսանել երբեմն զպակասութիւն իւր ։ Հանդիպի և մեծատան անկանիլ ՚ի կարօտութիւն ։

Կարելի, կամ հնարաւոր . Կարելի է մարդոյ անտրտունջ համբերել վշտաց ։ Հնարաւոր է ամ մի ողջոյն ոչ բնաւ անձրևել ։

Անկարելի, կամ անհնարաւոր . Անկար է ձիոյ օդապարիկ թռչել ։ Անհնար է սերմանեաց երկրի առանց ինչ ջերմութեան և խոնաւութեան բուսանիլ ։

Պայմանաւոր բանք եռակի են . բնազանցական, բնական, և բարոյական ։

Բնազանցաբար հարկաւոր այն է՝ որում անհնար է չլինել, կամ այլ օրինակ լինել . Հարկ է առաջնոյ պատճառին լինել ինքնագոյ ։ Հարկաւոր է մարդոյ լինել բանական ։

Քանզի անհնար է ամենևին լինել առաջին պատճառ, այլ ոչ ինքնագոյ . գոլ մարդ՝ այլ ոչ բանական ։

Բնականաբար հարկաւորն է, որում հարկ է լինել ըստ հասարակ ընթացից բնութեան .

Հարկ է ամենայն կենդանեաց մեռանիլ։ Հարկ է գետոց հոսիլ ՚ի խոնարհ։ Քանզի չէ ամենեւին անհնար աստուածային ամենակարող զօրութեան՝ անմեռ զկենդանիսն պահել, կամ զգետս ընդ դառ ՚ի վեր խաղացուցանել. զի անդստին ՚ի լինելութեան իւրեանց ընկալեալ ունին ՚ի նախասկզբն ճարտարապետէն ՚ի բնութեան իւրեանց զհնազանդական կարողութիւն իւրաքանչիւր գոյակ ըստ իւրում պայմանի՝ իբրեւ պարտք անհրաժեշտ հպատակիլ կամաց նորա ՚ի գովեստ փառաց մեծվայելչութեան նորա։

Բարոյապէս հարկաւոր է, որ գրեթէ այնու օրինակաւ լինել կարէ, և առ յայժ դժուարութեան այլազգ լինել ոչ պատահէ. զոր օրինակ, Հարկաւոր է հմտութիւն չափաւորական արուեստի առ ՚ի գիտել անվրէպ զչափ բարձրութեան հեռաւոր բրգան։ Որ իմանալ ճշգրտիւ զհամար ամբոխի իմիք, հարկաւոր է ՚ի թիւ արկանել զմի մի իւրաքանչիւր։

Բայց չէ պարտ յամենայն պայմանաւոր բանս ներգործաբար դնել զհարկաւորն և զպատահաբարն զկարելին և զանկարելին. քանզի բազում ուրեք ինքնին իմանին ՚ի բանէն. Զգալի գոյակք յօդեալք են ՚ի մասանց։ Ծանունք անկանին ՚ի խոնարհ։ Յայտ ուրեմն է թէ հարկի պայմանաւ են այս բանք։

Քաջարուեստ ճարտարն ՚ի լուծել ան-

կեալ 'ի ծով հեղձանի, և ամենևեին անհնարաւորն՝ զերծանի 'ի ցամաք։ Երևին ինքնին թէ պատահարք են և ըստ հանդիպման պատացեալքս։

Վայրենին մարդիկ ճակատագրականեայքն հրակայանք 'ի մասին ինչ Ամերիկոյ, որոց կեանք երկպատիկ և եռապատիկ երկնարաւե են քան զմեր։

Պտուղքն և անասունք որք զկէսն կենաց իւրեանց 'ի քուն անցուցանիցեն։ Չէ ինչ դժուարին իմանալ՝ թէ կարելի և հնարաւոր գոլ գուցանեն։

Ակինչն այլոց տացէ զգոլ։ Հուրն ոչ այրեսցէ զխուփս։ Ի զօրութենէ քանիցն յայտ է, թէ անկարելի են և անհնարաւոր։

Բայց սակայն 'ի դժուարին բանս, ուր մարթ է հակառակութիւն ինչ լինել 'ի բանականաց, բարւոք է նշանակել թէ յո՞ր միտս առնումք զպայմանն, բնազանցօրէն, կամ բնաբար, և կամ բարոյապէս, այսպիսի իմն օրինակաւ։

Բնազանցօրէն հարկաւոր է ամենայն գործոյ յառաջ գալ 'ի գործողէ իմեքէ։

Ի բնէ հարկ է հրոյ ջեռուցանել և այրել։

Բարոյապէս հարկաւոր է զօրավարել առըն քաջի և իմաստնոյ առ 'ի յաղթել թշնամեաց։

Ըստ այսմ՝ բնազանցօրէն անկարելի է լինել նման և ոչ նման 'ի նմին վայրկենի։

Բնապէս անհնարելի է առանց լուսոյ տեսանել զգոյնս ։

Բարոյապէս անհնարին է տկար անձամբ պարտել զհսկայն ։

Ի պայմանաւոր բանս երկու են եղանակ ինչ ընդհանրութեան և մասնաւորութեան. քանզի հարկաւորն նշանակէ իբրև ընդհանուր հաստատական, պատահականն և կարելին իբրև մասնաւոր հաստատական. իսկ անկարելին իբրև ընդհանուր ժխտողական ։

Հարկ է բոլորին մեծ լինել քան զո՛ր և իցէ մասն իւր. նոյն է ասել, ամենայն բոլոր մեծ է քան զմասն իւր ։ Անհնար է նիւթոյ յոչինչ վերածիլ. նոյն է, ոչինչ նիւթ ոչընչանայ ։ Հանդիպի և բարեբաստիկն անկանիլ ՚ի թշուառութիւն. նոյն է, ոմն բարեբաստ եղև թշուառ ։ Հնարաւոր է ումեք յողջութիւն պահել զամս բազումս. նոյն է, ոմն եղև երկայնակեաց բազմամեայ ժամանակաւ ։

ԳԼՈՒԽ Դ.

Պարզելի բանք ։

Պարզելի, կամ որ նոյն է՝ բացատրելի բանք են, որ ՚ի վերին երեսս պարզ թուին, բայց ըստ իմաստիցն բազմամասնեայ բանից հաւասարին, և են վեց. Ըստանձնական, Տրա-

հական, Բաղդատական, Կրկնական, Ակրդ-բնաւորական և Վաղճանական:

Առանձնական, որ ըստ ոմանց Զատական:

Առանձնական ասի, յորում ցուցանի թէ մակդիրն միոյ և եթ ենթակայի պատկանի. կամ թէ այնպէս պատկանի ենթակային մի և եթ մակդիր, մինչև յայլոց ամենեցունց 'ի բաց որոշել: Ի կենդանիս միայն մարդն է բանական: Հրահալք՝ միայն հրով լուծանին: Որպէս թէ ասէր. մարդն է բանական, և բաց 'ի մարդոյ ոչ և մի ոք կենդանի է ընդունակ բանի: Հրահալք հրով լուծանին, և ոչ յայլ իմեքէ լինին հալանուտ: Ըստ այսմ ասին, Միայն լուսինն պատի զերկրաւ: Տունկ որթոյ՝ միայն 'ի ձիթոյ խորշի:

Այլ այս եղանակ բանի, եթէ նոյն մակդիրն պատշաճեսցի և այլում ենթակայի. կամ յորժամ բաց 'ի միոյ անտի միայնոյ, և այլ մակդիր պատշաճիցի ենթակային. որպէս սուտ է ասել, Միայն հրեշտակք են անմարմին. զի մակդիրն անմարմին՝ պատշաճի և այլոց ենթակայից, Աստուծոյ և հոգւոյ մարդկան: Օրէնք՝ միայն 'ի վնասել թշնամւոյն են պիտանացու. քանզի պիտանի են և 'ի պաշտպանութիւն անձին յերեսաց թշնամւոյն:

Յայսմ ամենայնէ յայտ է, թէ զատուցանող բառն երբեմն 'ի կողմանէ ենթակային եդեալ՝ 'ի բաց տանի զայլ ենթակայս 'ի

մակդրէն. զոր օրինակ, Միայն Աստուած գիտէ զգաղտնիս մարդկան ։ Մարդոյն և եթ տուեալ է վարիլ բանիւ ։

Ըստ այսմ է և այս որ ասասցուք. Յամենայն Աքայեցւոց միայն ընկողմանեալս այս արշաւեաց 'ի պարիսպն ։

Իսկ երբեմն 'ի կողմանէ մակդրին եդեալ՝ 'ի բաց հատանէ զայլ մակդիրս ։ Արարածք ամենայն միայն 'ի փառս մեծվայելչութեանն Աստուծոյ արարան ։ Հանդերձք՝ միայն 'ի ծանկոյթ և 'ի պատսպարութիւն մարմնոյ տուան ։ Բաղդն զանփորձս և եթ խաբէ ։

Տրոհական, որ ըստ ոմանց Բացառոյական լծ ։

Տրոհականն է՝ յոր հաստատեալ ինչ զամենեցունց միանգամայն, ժխտեմք ապա ըզմիոյ իմեքէ որ 'ի նմին կարգի ։ Ամենայն հըրահալք պակասին 'ի հուր բաց յասկեոյ ։ Ամենայն հաւ թռչի ընդ օդս բաց 'ի ջայլեմանէ ։ Ամենայն քար ընկղմի 'ի ջուր բաց 'ի սունկ քարէ ։

Առ ճշմարտութիւն սորա հարկ է, զի այն ինչ որ հաստատի զայլոց՝ անպատշաճ իցէ այնմ յորմէ 'ի բաց տանիմք. վասն որոյ և սուտ եղէ և նմա պատշաճիցի. Ամենայն մարմին ունի զծակոտիս բաց յանդամանդէ և յասկեոյ ։ Սուտ է, զի անդամանդն ունի զամենափոքր ծակոտիս, ընդ որ թափանցէ լոյս. և ոսկին՝ յոր ընդմտանէ հուր և լուծանէ ։

Իսկ եթէ ասիցես, Ամենայն կենդանիք բաց 'ի կոկորդիլոս զաղանէ զներքին կզակն շարժեն. հաւաստի է, զի այնպէս միայն զնմանէ բնախօսք:

Անկատար լինի եթէ ոչ 'ի բաց հանցին ամենայն զատուցանելիքն. զոր օրինակ, Ամենայն զոր ստացեալ եմք և ունիմք՝ յափշտակին կամ կորնչին բաց յառաքինութենէ. վասն զի 'ի բաց հանել պարտ է և զգիտութիւն և զարհեստ, որք նոյնպէս են մնայուն:

Բաղդատական, որ ըստ ոմանց Համեմատական:

Բաղդատականն է՝ յորում համեմատեալ երկու ինչ ընդ միմեանս՝ միումն տամք զառաւելութիւն. Ի վեր քան զամենայն գանձըս պատուականի են սերք հայրենիք. Ազգու է խայթ խղճի մտաց քան զայլ ամենայն գործիս տանջանաց. Ախտ հոգւոյ դժուարաբոյժ են քան զամենայն ախտ և զհիւանդութիւնս մարմնոյ:

Սուտ լինի բաղդատութիւնն եթէ ոչ տացի առաւելութիւնն արժանաւորին. որպէս եթէ ասասցի, Թեթևագոյն է օդ քան զհուր. քանզի հուր ընդ օդ 'ի վեր ելանէ. Դժուարափուտ է նոճի քան զգիհի. զի գիհի առաւել անապական է քան զայն:

Յոռի լինի եթէ առաւելութիւնն և ոչ միումն համեմատելոց պատշաճիցի. զոր օրինակ, Գեղեցիկ է գորտ քան զկրիայ. զի եր-

կոչին ևս են սոքեա։ Խորամանկ է Ձորի քան զէշ. զի երկոքին են յիմար։

Երբեմն զփոքր չարն բաղդատէ ընդ մեծ չարին և զփոքրն ընտրէ. Լաւ է կոյր աչօք քան կոյր մտօք։ Ընտրելի է անձնատուր լինել ՚ի գերութիւն թշնամւոյն՝ քան պատերազմաւ ընդդէմ կալ և մեռանիլ ՚ի սուր։ Բայց ոչ այսպէս է ասել. Լաւ է աղքատ ճշմարտախօս քան զմեծատուն ստաբան։

Ըստ բաղդատականս վերաբերին որք զնուազութիւն ինչ կամ զյաւելութիւն ցուցանեն, զոր օրինակ, Տիգրան երուանդեան ամենայն թագաւորաց մերոց ցուցաւ խոհեմագոյն և հարստագոյն։ Շահավաճառ մեծ աստուածպաշտութիւնն է համարելի։ Վերջինն ՚ի չարիս է մահ։

Արկնական։

Արկնականն է՝ յորում ենթական ցուցանի յատուկ պատճառ մակդրին. զոր օրինակ, Կենդանին ըստ որում կենդանի՝ զգայ։ Հուրն ըստ որում հուր՝ այրէ։ Արդարն որպէս արդար՝ ուղիղ դատաստան առնէ։

Այլ իբր փոխի երբեմն ՚ի պատճառական, Կենդանի է, վասն զի զգայ. Հուր է, վասն զի այրէ. Արդար է, վասն զի ուղիղ դատէ։

Մարթ է փոխիլ և յառանձնականն. Այն կենդանին զգայ. Այն հուրն այրէ.

Մ՛իայն արդարն ուղիղ դատէ ։ Կարէ փոխիլ և 'ի կցորդականն . Եթէ կենդանի է՝ զգայ . Եթէ հուր է՝ այրէ . Եթէ արդար է՝ ուղիղ դատաստան առնէ ։

Նա ճշմարտութիւն սորա պահանջէ , զի ենթակայն իցէ իսկական պատճառ մակդրին. որպիսի է և այս , Երամիշտն ըստ որում երամիշտ՝ երգէ . Թուաբանն որպէս թուաբան՝ ոչ սխալէ 'ի համրելս ։ Բայց այսմ սուտ լինի եթէ ասիցի , Երամիշտն ըստ որում երամիշտ՝ ոչ սխալէ 'ի համրելս ։

Սկզբնաւորական և Վախճանական ։

Սկզբնաւորական է՝ որ զսկիզբն իւր , կամ զիւրն նորոգ սկսեալ ցուցանէ . Հռոմոց ինքնակալութիւնն սկսաւ յերրորդ դարու ։ Նա հաւասիկ հիմն եդաւ շինութեան աթոռանիստ եկեղեցւոյն Կոստանդնուպոլսի ։ Այժմ գրգռեցաւ պատերազմ 'ի մէջ Պարսից և Աղուանից ։

Վախճանականն է՝ որ ցուցանէ զվախճանն , կամ զիւրն նորոգ վերջացեալ . Հռոմոց ինքնակալութիւնն վերջացաւ յարևելս 'ի հնգետասաներորդ դարու ։ Այժմ եղև զինադադարութիւն 'ի մէջ երկուց թագաւորութեանց Աղուանից և Պարսից ։ Յայսմ ամի թագաւորն Պարսից մեռաւ ։ Յաւուրս յայսոսիկ կատարեցաւ շինութիւն աթոռանիստ եկեղեցւոյն Կոստանդնուպոլսի ։

Նա ուղղութիւն սկզբնաւորականին և վախճանականին պահանջէ, զի հաւաստի լիցեն նշանակել ժամանակքն սկզբանն և վախճանի։

ԳԼՈՒԽ Ե.

Որակ և Քանակ բանի.

Յառաջեղոցս յայտ է, զի են բանք որ պարզ են, որ բարդ, որ բազմամասն. և են որք ընդ պարզս և ընդ բարդս դասին՝ պայմանաւորքն և պարզեալք. յայսոսիկ յամենեսին երկու ինչ է գլխաւորապէս նկատելի. Որակ և Քանակ.

Ըստ որակին բաժանի բանն 'ի հաստատական և 'ի ժխտական։ Հաստատականն է հաւանողական, յանձնառական, որ ըստ հնոց ստորասական կոչի, է բան յորում մակդիրն յարի յենթակայն հաստատելով զհանդիպութիւն. զոր օրինակ, Մարդն է բանական։

Ժխտականն՝ որ և ուրացական, հրաժարական, և ըստ հնոց բացասական լսի. է բան յորում մակդիրն անջատի յենթակայէն՝ ժխտելով զհանդիպութիւնն. զոր օրինակ. Մարդն ոչ է անբան։

Իսկ առ լինել ճշմարիտ կամ սուտ հաստատութեանն և ժխտողութեան, այսպէս նշանակէ Արիստոտել, ասէ. «Ճշմարիտ է

ստորասութիւնն եթէ ցուցցէ զէն իբրեւ զէ . և ճշմարիտ է բացասութիւնն եթէ ցուցցէ զչէն իբրև զչէ ։ Սուտ եթէ զչէն իբրև զէ , և զէն իբրև զչէ ցուցցէ , սուտ լինին երկոքին՝ ստորասութիւնն և բացասութիւնն »։

Այլ գիտել արժան է զի ոչ ամենայն ուրեք ժխտողական նշանն ոչ՝ առնէ զբանն ժխտողական , այլ յորժամ անկանիցի 'ի վերայ շաղկապին . ուստի այս բանք ոչ են ժխտողական . Օրէնքն հրամայէ ոչ ուտել սուտել՝ զի հանդիսանայ այժմ հաստատական բանն . Ոչ ստեղն է հրամանն օրինաց ։ Որ ոչ գիտէ զպարտաւորութիւն իւր՝ է յանցանաց սակի . որ է ասել , Տգէտն պարտաւորութեան իւրոյ՝ է յանցանաց սակի ։

Դատանին և բանք յորում ժխտողականն նշանն ոչ՝ չէ յարեալ առ շաղկապն , բայց համդիպական ժխտողականին՝ յորժամ մասնէին է բառ ժխտողական . և այս յայտնի 'ի պայմանաւոր բանս ստանի . Անկար է փոխ միտախոհ լինել . քարի ընդ օդս մնալ է անհնարին ։ Ուր բառքս անկար , անհնարին , համդէպ են ժխտողականաց ոչ է կարելի , ոչ է հնարաւոր ։

Յորժամ 'ի բանի երկու ժխտողականք իցեն , առնեն զբանն հաստատական . Ոչ է անկարելի առն իմաստնոյ մոլորիլ . այսինքն կարելի է ։ Ոչ եթէ չկարէ մարդ կեալ առաքինաբար , այսինքն կարէ ։ Չիք ինչ կենդա-

նի որ չիցէ մահկանացու․ այսինքն ամենայն կենդանի է մահկանացու ։

Ըստ քանակին բաժանի բանն յընդհանուր, ՚ի մասնաւոր, և յեզական ։

Ընդհանուր կոչի բանն՝ յորժամ հաստատի ինչ կամ ժխտի զբոլոր սեռէ կամ զբոլոր տեսակէ․ զոր օրինակ՝ Ամենայն թռչուն է թևաւոր ։ Ոչ ոք հրեշտակ է մարմնաւոր ։

Մասնաւոր ասի բանն՝ յորժամ հաստատի կամ ժխտի ինչ զոմանց միայն ՚ի սեռէն կամ ՚ի տեսակէն․ Ոմանք կենդանիք են երկոտանի․ ոմն մարդ է անիրաւ ։ Ոմանք կենդանիք ոչ են երկոտանի․ ոմն մարդ ոչ է անիրաւ ։

Եզական կոչի բանն յորժամ զմիոյ միայնոյ ինչ հաստատիցի կամ ժխտիցի․ զոր օրինակ, Երկիրս է զանգուած ինչ ՚ի զանազան տարերաց կամ ՚ի նիւթոց ։ Լուսինն ոչ է յիւրմէ լուսաւոր ։ Այս ծառ է պտղաբեր․ Այս պատերազմ է արիւնահեղ ։ Աստուած ոչ է փոփոխական ։ Այս քար ոչ է դիւրաւ փխրելի ։

Ընդհանուր լինի բանն՝ յորժամ յարի յենթակայն ընդհանրական բառ, որպէս ամենայն, կամ բոլոր, կամ իւրաքանչիւր, և կամ այլ ինչ այսպիսի բառ․ զոր օրինակ, Ամենայն մարմին է ապականացու․ Բոլոր արարածք են սահմանաւոր․ Կենդանիք համօրէն շարժին ինքնօրէն ։ Սակայն չէ պարտ առ ընդհան-

րութիւն յաւելուլ միշտ զածականիցս զայսոսիկ. զի եթէ մակդիրն յայտնապէս պատշաճիցի բովանդակ կարգին, օրէն է 'ի բաց հատանել: Զի ամենայն ոք կարէ ինքնին ճանաչել թէ ընդհանուր է բանն. զոր օրինակ, Հրեշտակք են գոյացութիւն հոգեղէն, և իմացական: Չկունք ոչ կարեն կեալ արտաքոյ ջուրց: Անիրաւք ոչ ժառանգեն զարքայութիւնն Աստուծոյ:

Երկին են տեսակք ընդհանրութեանն. պարզաբար և բարոյապէս: Պարզաբար ընդհանուր բանք են, յորս հաստատութիւնն կամ ժխտումն տարածի առ իւրաքանչիւրս միոյ կարգի. զոր օրինակ, Կենդանիք են սընընդական. տունկք ոչ են զգայուն:

Բարոյապէս ընդհանուր են, յորժամ հաստատութիւնն կամ ժխտումն ոչ տարածի առ իւրաքանչիւրսն, այլ առ մեծ մասն և եթ. զոր օրինակ, Մեծատունք են փառասէր. Մարդիկ յաւէտ 'ի կրից շարժին քան 'ի բանէ: Որք թէպէտ յոլովակի ճշմարտին առ բազումս, այլ ոչ առ ամենեսին:

Բարոյապէս ընդհանուր բանք՝ թէպէտ յաճախ վարին 'ի խօսս, և 'ի դէպ իսկ է վարել եթէ ամենեցուն պատշաճիցի. զոր օրինակ, Մարդիկ կարօտ են օգնականութեան միմեանց: Կենդանիք ներքոյ անկեալ են ապականից և հիւանդութեանց:

Իսկ եթէ ոչ պատշաճի, պարտ է յաւելուլ

տու նմին Դեչ ձայն, յորդ, և զայլ այսպի-սի բառս. վասն որոյ զգուշալի է ասել, Կա-նայք են շատախօսք. Մարդիկ են անիրաւ. այլ թէ՝ մեծ մասն կանանց է շատախօս, յո-լով մարդիկ են անիրաւ:

ԳԼՈՒԽ Զ.

Ընդդիմական բանք, ըստ հնոց Հակադրութիւն:

Ընդդիմական ասին երկու բանք, յորժամ զնոյն ենթակայէ նոյն մակդիր 'ի միում հաս-տատէ և 'ի միում ժխտէ. զոր օրինակ, Ամե-նայն հուր թեթեւագոյն է քան զօդ. ոչինչ հուր թեթեւագոյն է քան զօդ: Նիւթն է դանդաղ 'ի բնէ. Նիւթն ոչ է դանդաղ 'ի բնէ:

Իսկ այսպիսի բանք՝ է զի երկոքին և են ընդհանուր, է զի մասնաւոր, և է զի եզա-կան. կամ մին ընդհանուր և միւսն մասնա-ւոր. նմին իրի եռակի են ընդդիմական բանք. հակառակ, ներհակ, հուպ ներհակ:

Հակառակ, որ ըստ հնոց հակասական կոչին, յորժամ ընդհանուր բան և մասնա-ւոր, կամ երկու եզականք դիմամարտին ընդ-միմեանս. որպէս՝ Ամենայն բիւրեղ է բե-կանուս. ոմն բիւրեղ ոչ է բեկանուս. Լու-սինն առնու զլոյս իւր յարեգակնէ. լուսինն ոչ առնու զլոյս իւր յարեգակնէ:

Հակառակ բանք ոչ կարեն լինել միան-

գամայն ճշմարիտ՝ կամ միանգամայն սուտ. այլ յերկուց անտի եթէ մինն ճշմարիտ է, միւսն հարկաւ է սուտ. ապա թէ ոչ՝ նոյն մի իր լինի միանգամայն և ոչ լինի ։

Աւստի ասէ Դաւիթ Անյաղթ. «Որք մի-անգամ իբրև ստորասութիւն և բացասու-թիւն հակակային, հարկաւոր է միշտ մինն ճշմարիտ և միւսն սուտ գոլ. զի եթէ ասի-ցէ ոք վասն չարամանեալ ներհակաց, Սոկ-րատէս ողջ է, Սոկրատէս հիւանդ է. և սա-կայն ոչ հարկաւոր է միոյն ճշմարիտ լինել և միւսոյն սուտ. քանզի 'ի լինել Սոկրատայ, այն ճշմարիտ է և այն սուտ. իսկ յոչ լինելն, երկոքին սուտ եղեցին ։ Իսկ ըստ հակասու-թեան մինն ճշմարիտ է և միւսն սուտ. զոր օրինակ յասելն, Սոկրատէս է հիւանդ, Սոկ-րատէս ոչ է հիւանդ. եթէ գոյ Սոկրատէս, յերկուց մինն ճշմարիտ է. և եթէ ոչ գոյ Սոկրատէս, հիւանդանալն սուտ է, և ոչ հիւանդանալն ճշմարիտ ։»

Ներհակ կոչին, յորժամ երկու ընդհա-նուր բանք զիմամարտին. Նմանայն մարդ է արդար. ոչ ոք մարդ է արդար ։ Նմանայն քոյս է անձողական. և ոչ մի ինչ քոյս է ան-ձողական ։

Ներհակականք կարեն լինել միանգամայն սուտ, կամ մին ճշմարիտ և միւսն սուտ. բայց ոչ երբեք լինին միանգամայն ճշմարիտ. Նմա-նայն մարդ է անիրաւ, ոչ ոք մարդ է անի-

ըստ. սուտ են երկոքեան և՛ս ։ Ամենայն միա-սին է յօդուածոյ. ոչ որ մասամբն է յօդուա-ծոյ. մին ճշմարիտ է և միւսն սուտ ։

Հուպ ներհակ, որ ըստ հնոց՝ ենթահակք հասկան լսի, յորժամ երկու մասնաւորականք ընդդ-գէմ կան միմեանց. որպէս, Ոմն մարդ է ա-գահ. ոմն մարդ ոչ է ագահ. Ոմն տունկ է կենսաւոր. ոմն տունկ ոչ է կենսաւոր ։

Հուպ ներհակք կարեն լինել երկոքեան ճշմարիտ, կամ մին ճշմարիտ և միւսն սուտ. բայց ոչ երբեք լինին միանգամայն սուտ ։

Դաւիթ Անյաղթ ըստ Արիստոտէլի նշա-նակէ և զայլ տեսակ ընդդիմական բանից՝. զոր կոչէ անորոշականի. և անորոշականին է՝ յորժամ ենթակային տրամաբանութեան ոչ կից ունի զընդհանուր կամ զմասնաւոր նշան ինչ. զոր օրինակ, Է մարդ արդար. ոչ է մարդ արդար ։

Այսպիսի տրամաբանութիւնք ըստ նիւ-թոյն են նկատելի, զի կարեն նշանակել իբ-րեւ ընդհանուր կամ մասնաւոր. քանզի ՚ի հարկաւոր նիւթս նշանակեն ընդհանրապէս. զոր օրինակ, Է մարդ կենդանի. որ է ասել՝ ամենայն մարդ է կենդանի. Ոչ է մարդ ան-բան. այսինքն՝ ոչ որ մարդ է անբան ։ Իսկ ՚ի կարելի նիւթս նշանակեն մասնաւորապէս. զոր օրինակ, Է մարդ բարի. ոչ է մարդ բա-րի. այսինքն է՝ ոմն մարդ է բարի. ոմն մարդ ոչ է բարի ։

Ոմանք յաւելուն ընդ սոսա և զայլ տե-

սակ ընդդիմակ բանից, զոր կոչեն ստորա-կայ կամ ստորադասս, որպէս և այլք՝ ընդմի-մեանս. որոց մին է ընդհանուր և միւսն մաս-նաւոր. և երկոքին հաստատականն են կամ ժխտականն. և միշտ մին հետևանայ միւսոյն. զոր օրինակ, Ամենայն մարմին յօդեալ է 'ի մա-սանց. ոմն մարմին յօդեալ է 'ի մասանց. լու-սինն յօդեալ է 'ի մասանց: Չիք ինչ մարմին պարզ. ոմն մարմին ոչ է պարզ. լուսինն ոչ է պարզ: Բայց զայսպիսիս չէ արժան կոչել ընդդիմականս. զի իրապէս ընդդիմակ այնո-քիկ են, որոց մին հաստատէ և միւսն ժըխ-տէ. որպիսիք են հակառակն, ներհակն, և հուպ ներհակն. և ոչ թէ սոքին որք միմեանց հետևանան 'ի հաստատելն և 'ի ժխտելն. զոր օրինակ, Ամենայն բոյսք ունին զարմատս. ոմն բոյս ունի զարմատ. Ոչինչ հրահալ է անկիզական. ոմն հրահալ ոչ է անկիզական. և ահա չիք 'ի սոսա դիմամարտութիւն ինչ, այլ մանաւանդ հետևութիւն:

Խնդրելի է, թէ արդեօք հաստատու-թեան ընդդիմակ ժխտումն է միայն՝ եթէ հաստատութիւնն ևս մարթի լինել:

Ստոյգ իմն է, թէ ժխտումն և հաստա-տութիւնն ոչ նոյն զօրութիւն ունին 'ի բա-նի, զի Սոկրատէս է բարի, Սոկրատէս ոչ է բարի, հակառակ են միմեանց. և հարկա-ւոր մին ճշմարիտ է և միւսն սուտ: Իսկ Սոկրա-տէս է բարի, Սոկրատէս է չար, ոչ է այս-

պէս . զի կարելի է թէ Աղեքսանդրոս ոչ բարի իցէ և ոչ չար ։

Արդ՝ երկու այսորիկ են որ 'ի բաց բառնան զգոյն բարի, ժխտումն և ներհակական հակասութիւնն . ժխտումն որ ցուցանէ թէ ոչ է բարի, բաւական է ըստ ինքեան 'ի բաց բառնալ զհակառակն իւր զբարին գոլ . իսկ ներհական հակասութիւնն որ է չարն՝ ոչ ըստ ինքեան 'ի բաց բառնայ զբարին, այլ զօրաւիգն ունի զժխտումն, այսինքն զոչ գոլն բարի ։

Բանզի որ ոք կարծեսցէ զբարին չար գոլ . նախ հարկի դնել զնա ոչ բարի գոլ . յետ այնորիկ ապա և չար ։ Իսկ եթէ ոք կարծեսցէ զբարին ոչ գոլ բարի, ոչ ևս այլում կարօտանայ . այլ ինքն ըստ ինքեան ունի զայսպիսի կարծիս ։ Ապա ներհակագոյն եղիցի ժխտումն քան ներհական հակասութիւնն ։

Բայց է և հակասութիւն որում գիմամարտի ժխտումն, և ոչ բնաւ ներհական հակասութիւն ինչ . որպէս մարդն կարծել մարդ, դիմամարտի նմին ժխտումն՝ թէ ոչ է մարդ . և չիք գտանել ներհական հակասութիւն ինչ նմին ընդդիմակ . ապա ժխտումն է առաւել ներհական քան թէ ներհական հակասութիւնն ։

Արդ՝ ժխտումն որ 'ի բաց բառնայ զհակասութիւնն, է պարզ . իսկ ներհական հակասութիւնն որ 'ի բաց բառնայ զհակասու-

տութիւնն՝ է բարդ. վասն զի ներհակական հաստատութիւնն ոչ իւրով ինքեամբ զայն բանայ ։ այլ զի ընդելեալն ունի զժխտումն կից ինքեան, նորուն զօրութեամբն բանայ. զի չարին ընդելեալն պարունակէ յինքեան զժխտումն, թէ ոչ է բարի. արդ՝ որպէս է 'ի խորհրդեան մտաց, նոյնպէս է և յարտաքերական բանին ։

ԳԼՈՒԽ Է.

Հանդիպութիւն ։

Հանդէպ կոչին յորժամ երկու ընդդիմակ բանք համազօր և հաւասար լինին իրերաց. և այս լինի յաւելմամբ ժխտողական նշանիս ոչ, ըստ այսմ օրինակի ։

Հակառակ. Ամենայն մարդ է արդար. ամէն մարդ ոչ է արդար. Ոչ ոք մարդ է արդար. ամէն մարդ է արդար ։

Հանդէպ. Ամենայն մարդ է արդար. ոչ ամէն մարդ ոչ է արդար. Ոչ ոք մարդ է արդար. ոչ ամէն մարդ է արդար ։

Ներհակ. Ամենայն մարդ է արդար. ոչ ոք մարդ է արդար. Ոչ ոք մարդ է արդար. ամենայն մարդ ոչ է արդար ։

Ստորադաս. Ամենայն մարդ է արդար. ամէն մարդ է արդար ։ Հանդէպ. Ամենայն մարդ է արդար. ոչ ամէն մարդ ոչ է արդար ։

Պատճառ հանգստութեանս է, զի ժխտողական նշանս ոչ, յորժամ դնի յառաջոյ ընդհանուր հաստատական բանից 'ի վերայ ենթակայի, եղծանէ զհաստատութիւնն և զընդհանրութիւնն, և առնէ զնա մասնաւոր ժխտողական. բայց յորժամ դնի 'ի վերայ շաղկապին, թողու զենթակայն յիւրում ընդհանրութեան, և եղծանէ միայն զհաստատութիւնն, և առնէ զբանն ժխտողական։

ԳԼՈՒԽ Ը.

Անդրադարձ բանք։

Անդրադարձ կոչին բանք, որ 'ի փոփոխել զմակդիրն յենթակայ և զենթակայն 'ի մակդիր, տակաւին մնան ճշմարիտ. որպէս, Ամենայն մարմին ունի զտարածութիւն. Ամենայն որ ունի զտարածութիւն՝ է մարմին։ Ամէն մարմին է հաստատուն. Ամէն հաստատուն է մարմին։

Այս դարձուածք և փոփոխութիւնք լինին երրակի. Սոսկապէս, Ըստ պատահման, Ըստ դիմադրութեան։

Սոսկապէս անդրադարձ, որ ըստ հնոց՝ սեպհական, նոյնական, և ըստ այլոց՝ պարզաբար կոչին, են այնպիսի բանք՝ որ ճշմարիտ մնան սոսկ փոփոխմամբ ենթակային 'ի մակդիր և մակդրին յենթակայ, պահելով

զնոյն քանակութիւն, այսինքն զընդհանրութիւն և զմասնաւորութիւն. Ոչ որ տունկ է շնչաւոր. ոչ որ շնչաւոր է տունկ:

Ըստ պատահման անդրադարձ, կամ ըստ հնոց՝ տարբերական ասին, յորժամ մակդիրքն փոխի յենթակայ այլայլութեամբ քանակութեան, այսինքն ընդհանուրն լինի մասնաւոր. Ամենայն մարդ է կենդանի. ոմն կենդանի է մարդ:

Ըստ դիմադրութեան անդրադարձ, կամ ըստ ոմանց՝ ըստ հակադրութեան կոչին, յորժամ մակդիրն փոխի յենթակայ. և ժխտողական նշանն որ կայր 'ի վերայ բային այսինքն շաղկապին՝ դնի 'ի վերայ մակդրին փոխելոյ յենթակայ. Ոմն կենդանի ոչ է մարդ. ոմն ոչ մարդ է կենդանի:

Սոսկապէս անդրադառնան, Նախ՝ ամենայն ընդհանուր ժխտողականք. զոր օրինակ, Ոչ որ զգայուն է տունկ. ոչ որ տունկ է զգայուն: Երկրորդ՝ ամենայն մասնաւոր հաստատականք. որպէս, Ոմն աստղ է լուսաւոր. ոմն լուսաւոր է աստղ: Երրորդ՝ ամենայն եզական ժխտողականք. Արեգակն ոչ է լուսին. լուսինն ոչ է արեգակն:

Են և ընդհանուր հաստատական բանք որք անդրադառնան սոսկապէս՝ բայց ոչ ամենեքին, այլ նոքին միայն՝ յորում սահմանն ենթակային եղեալ իցէ մակդիր նմին. և յայնժամ լինի նոյնաբանութիւն. և կամ

մակդիրին ցուցանիցէ զյատուկն այնմ՝ ենթակայի · զոր օրինակ, Ամենայն մարդ է կենդանի բանական · ամենայն կենդանի բանական է մարդ · Ձին է խրխնջական · խրխնջականն է ձի ։ Բայց չէ հնար ասել, Ամենայն մարդ է կենդանի · ամենայն կենդանի է մարդ · Ամենայն ձիթենի է ծառ · ամենայն ծառ է ձիթենի ։ Սուտի ամենայն այսպիսի բանք անդրադառնան ըստ պատահման · զոր օրինակ, Ամենայն մարդ է կենդանի · ամն կենդանի է մարդ · Ամենայն ձիթենի է ծառ · ամն 'ի ծառոց է ձիթենի ։

Կարեն ստակապէս անդրադառնալ և մասնաւոր ժխտողականք, եթէ ենթակայն նըուազ քան զմակդիրն նշանակեսցէ · զոր օրինակ, Ոմն մարդ ոչ է սեաւ · ոմն սեաւ ոչ է մարդ ։ Բայց չէ մարդ անդրադառնալ ստակապէս եթէ ենթակայն պարունակեսցէ զամենայն ընդարձակութիւն մակդրին · զոր օրինակ, Ոմն կենդանի ոչ է մարդ · ոմն մարդ ոչ է կենդանի · որ է ժխտել թէ առաւելն պարունակիցի 'ի սեռի ։ Այսպիսի բանք որք սակաւ ուրեք պատահին, անդրադառնան ըստ դիմադրութեան, այս է բառնալ ըզժխտողական նշանն 'ի բայէն, և դնել 'ի վերայ մակդրին փոխելոյ յենթակայ, զորոշեալ բառն առնելով անորոշ · զոր օրինակ, Ոմն կենդանի ոչ է մարդ · ոմն ոչ մարդ է կենդանի ։

Եւ քանզի ոմանք 'ի բանից հաստատա-

կանք են և ոմանք ժխտականք, զորս որակ կոչեն տրամաբանք. ըստ այսմ նկատման Դաւիթ Անյաղթ զերրեակ ազգս հակադարձութեան նշանակէ. պարզ, մարթելի, և փոխադարձ՝ այսու օրինակաւ:

Պարզ զայն ասէ, որ զորակն նոյն պահէ և զկարգ բառիցն փոխէ. այսինքն զմակդիրն փոխէ յենթակայ և զենթական 'ի մակդիրս. որ և կոչի սոսկապէս անդրադարձութիւն. զոր օրինակ, Ոչ ոք աստղ է զգայուն. ոչ ոք զգայուն է աստղ:

Մարթելի կոչէ. որ զորակն փոխէ, և ըզկարգ բառիցն նոյն պահէ. Հնարաւոր է ամենայն մարդոյ լինել արդար. հնարաւոր է ոչ ումեք մարդոյ լինել արդար:

Ահա որակն փոխեցաւ, զի հաստատականն դարձաւ 'ի ժխտողական. իսկ կարգ բառիցն նոյն պահեցաւ. քանզի մնաց նոյն ենթակայ և նոյն մակդիր:

Իսկ փոխադարձն է, որ զորակն փոխէ և զկարգ բառից. զոր օրինակ, Եթէ է մարդ, է կենդանի. եթէ ոչ է կենդանի, ոչ է մարդ:

ՊՐԱԿ Գ.

ՈՃ։

Որք միանգամ գրաւորական բանիւ ար-քամաքանական արուեստի վարժապետք ե-ղեն, ոչ բաւական համարեցան զկարգ քըն-նութեան 'ի գիւտ ճշմարտութեան որ կոչի Ոճ վերլուծական, և զեղանակ ուսուցանե-լոյ զնոյն որ ասի Ոճ շարադրական, բարե-կարգ կիրառութեամբ իւրեանց օրինադրել. այլ և հոգացան 'ի դիւրութիւն ուսանողաց առանձին պրակօք զվարդապետութիւն նո-ցին աւանդել. ընդ նմին ճառելով զսահմա-նէ և զբաժանմանէ որք առաւել 'ի դէպ գան ուսուցանողական ոճոյ. յաւելին։ Եւ ոմանք բանս զվերատառութենէ, զորմէ բազում ու-րեք լինին յիշատակութիւնք 'ի տրամաբա-նութեան։ Վասն որոյ և մեք առ ծանօթու-թիւն անտեղեակ եղելոց՝ զառ 'ի նոցանէ աւանդեալսն ըստ մարթելոյ նշանակեսցուք։

ԳԼՈՒԽ Ա.

Ոճ վերլուծական և Ոճ շարադրական։

Ոճն է եղանակ կարգաւ քննելոյ և ճա-նաչելոյ զճշմարտութիւնն, և զնոյն ուսուցա-նելոյ այլոց. և է կրկին, Վերլուծական և Շարադրական։

Վերլուծականն է, որ 'ի քննութենէ մասանց եւ 'ի պարզից սկիզբն արարեալ յառաջանայ առ ընդհանուրս եւ 'ի յօդուածոյս։

Շարադրականն՝ որ ըստ հնոց բաղադրական կոչի, գլխովին հակառակ վերլուծականին, յընդհանուր սկզբանց եւ 'ի յօդուածոյից սկսեալ, գայ իջանէ 'ի մասնաւորս եւ 'ի պարզս։

Ի շարադրականն՝ նախ դնին անուանք իրացն եւ սահմանք նոցա, եւ ապա բաժանին 'ի մասունս յորոց յօդեալք են։ Իսկ 'ի վերլուծականն չիք սահման կամ բաժանումն. այլ նախ 'ի Թիւ արկանին մասունք բոլորին, կամ գաղափարք եւ ծանօթութիւնք յորոց յօդուածոյքն կազմին. եւ 'ի վերջոյ կարգին անուանք։

Վերլուծական ոճով բացատրութիւն թէ զինչ են կամք։

Ստոյգ է ամենեւին, զի յորժամ իր ինչ ընդառաջ լինի մեզ, իշխանութիւն ունիմք հաւանիլ եւ ընդունել զայն, կամ անհաւան գտանիլ եւ մերժել. եւ եթէ երկու ինչ հանդիպեսցին միանգամայն, նոյնպէս ինքնիշխան ազատութեամբ կարեմք ընտրել զմին եւ խոտել զմիւսն. եւ այս ինքնիշխան զօրութիւն կամ անձնիշխանութիւն կոչի Կամք։

Շարադրական ոճով բացատրութիւն։

Կամքն է զօրութիւն անձնիշխան հոգւոյ,

որով հաւանի ընդունել ինչ կամ մերժել, և յերկուց ընտրել զմին ։

Բացատրութիւն բարկութեան յոյժ վերլուծական ։

Յօժարամ կրէ ոք անարգանս յումեքէ, արիւնն գրգռի և եռայ զսրտիւն, ըղձիւ խնդրելոյ զվրէժ անարգանացն յայնմանէ յորմէ ընկալաւ. և այս կիրք կոչի Բարկութիւն ։

Բացատրութիւն նմին յոյժ շարադրական ։

. Բարկութիւնն է եռանդն արեան զսրտիւ՝ բաղձանօք հատուցանելոյ զփոխարէն անարգանացն զոր կրեաց ։

Սոյն վերլուծական միայն 'ի դիւրաճշմարտութեան պիտանի առէին նախնի տրամաբանք, իսկ շարադրականն յաւուցանել ընդ նոյն. իսկ արդիք խոհական ընտրութեամբ զերկոսին ևս պիտանացու լինել ցուցանեն. յորոց ուրեք զմին և ուրեք զմիւսն ըստ տեղւոյն 'ի վար արկանեն 'ի բանս իւրեանց ։

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Սահման ։

Սահման կոչի բանն յայտարար իրի կամ նշանակութեան անուան. վասն որոյ և է կրկին, սահման իրի և սահման անուան ։ Սահման իրին է՝ ըստ Դուլթի Ընդաղթին, բան կարճառօտ յայտնիչ բնութեան ենթակայ իրի ։

Սահման իրի ասի՝ զի բացատրէ զիրն ՚ի ձեռն գոյացուցական սկզբանց, յորոց էութիւն առաջիկայ իրին է կազմեալ. և է կրկին, բնական և բնազանցական։

Բնական է որ յայտ առնէ զիրն ՚ի ձեռն բնական մասանց, որք իրօրէն տարբերին ՚ի միմեանց. զոր օրինակ, Մարդն է կազմեալ ՚ի հոգւոյ և ՚ի մարմնոյ։

Բնազանցականն է որ ցուցանէ ՚ի ձեռն բնազանցական մասանց՝ որք միաւորական տեսութեամբ և եթ զանազանին. զոր օրինակ, Մարդն է կենդանի բանական։

Սահման անուան է որ յայտ առնէ զիրն որ նշանակի անուամբ՝ ՚ի ձեռն պատահական յատկութեանց. զոր օրինակ, Մարդն է կենդանի ուղղորդագնաց, ծիծաղական, լայնեղունգն։ Սա կոչի Ստորագրական սահման, ևս և Ստորագրութիւն։

Ուստի յորժամ կամիցիմք յայտ առնել թէ զի՞նչ նշանակիցեն անուանքս ամպ և որոտումն, բացատրեմք այսպէս. Ամպն է հաւաքումն ջրային և հողային գոլորշեաց ՚ի վերնագաւառն օդոյ։ Որոտումն է ուժգին բարբառ հնչեցեալ ՚ի վառեալ գոլորշւոյ ՚ի մէջ թանձրամած ամպոյ։ Որք են սահման անուան, այն ինքն է ստորագրութիւն։

Գրէ Գուլիթ Ընյալթ, «Եթէ զանազանի սահման ՚ի ստորագրութենէ այսու. վասն զի սահման ՚ի գոյացողականաց ձայնի-

ցըն առնու , և զգայութիւն և զբնութիւն ենթակայ իրին յայտնէ . . . իսկ ստորագրութիւն 'ի պատահմանցն առնու , և զպարագայս ենթակայ իրին յայտնէ » ։

Նաև գիտել արժան է , զի գոյացողական զայն ասէ , որ առընթեր գոլով գոյացուցանէ , և ոչ գոլովն ապականէ որպէս բանականն . իսկ պատահական զայն՝ որ առընթեր գոլով ոչ գոյացուցանէ , և բառնալովն ոչ ապականէ , որպէս ծիծաղականն , լայնեղունգըն և ուղղորդագնաց ։

Նաև որովհետև բուն էութիւն իրաց թաքուն են 'ի մարդկային մտաց , և ոչ կարեմք ճշգրտիւ ճանաչել զիսկութիւնս գոյութեան նոցա , զի սահմանաւ իրի բացատրել զայնս՝ այլոց ծանուցանել մարթասցուք ։

Քանզի ոչ եմք կարող գիտել թէ զի՞նչ իցեն 'ի բնութեան իւրեանց հուր , օդ , ջուր , հող . և զի՞նչ հրահալք ոսկի , արծաթ , կապար , և այլք . նոյնպէս և ոչ զբունն ազգի ազգի անասնոց , թռչնոց , ձկանց , զեռնոց , միջատից , և այլոց բիւրաւորաց գիտեմք . այլ զոր ինչ ճանաչեմք 'ի նոսին՝ ամենեքին յատկութիւնք ինչ են և հանգամանք . իսկ զէութիւն իրաց՝ անուամբքն միայն ճանաչել գիտեմք ։ Ապա տիրապէս խօսելով՝ ամենայն բացատրութիւնք մեր զոր սահման կոչեմք , են սահման անուան կամ որ նոյն է՝ ստորագրութիւն , և ոչ եթէ սահման իրի ,

զի են յայտարարութիւնք յատկութեանց և պարագայից և հանգամանաց նոցին՝ որչափ մարթիմք տեսանել և իմանալ։

Այսպիսի են ամենայն սահմանք մեր, արով սահմանեմք զիրս. զոր օրինակ, Երկիրս է մարմին խառնակ, բոլորաձև, ընդարձակ. որ ունի զտարածութիւն պարարտ հողոյ, կաւոյ, աւազոյ, և զանազան բրածոյից և հրահալելեաց. և բերէ զբոյսս, զծաղիկս, զարմատիս և զտունկս. սնուցանէ զմարդիկ և զայլ կենդանիս։

Սոյնպէս և առ 'ի ճանաչել զմտաւորական և զչանձնաւոր էակս, որպէս զառաքինութիւն, զմոլութիւն, զարուեստ, զգիտութիւն, ըստ դատման մտաց մերոց յօդուածոյ գաղափարս սահմանեմք, որում անուն տամք Սահման իրի. բայց և այն է սահման անուան։

Բայց ըստ բարւոք խրատու իմաստասիրաց առ 'ի պահել զյատկութիւնս երկաքանչիւր սահմանաց, սահման անուան առ ի բացատրութիւն նշանակութեան բառին ըստ իմացուածոյ ումեմն. իսկ սահման իրի՝ զհասարակաց իմացուած։ Զոր օրինակ, Ճարտասանութիւնդ անուն՝ ցուցանէ ըստ իս զճարտար ասութիւն. զի ոչ այլ ինչ նշանակէ այս ձայն, բայց ըստ հասարակաց իմացուածոյ՝ նշանակի սովաւ արհեստն բարւոք ասելոյ առ 'ի հաւանեցուցանել և շարժել

զենիլոս ։ Ըստ այսմ են և այլ ամենայն անուանք մտաւորական էակաց ։

Իսկ առ լաւութիւն սահմանի՝ այս կանոնք աւանդին ։

Ա. Զի իցէ համառօտ՝ բայց ոչ կրճատ և թերի. որպէս թերատ է այս սահման Պղատոնի, թէ Մարդն է կենդանի երկոտանի և անփետուր. քանզի մարդաձիւաղ ասացեալ ազգ կապկաց, երկոտանի են և անփետուր. այլ պարտ էր դնել զբանականն, զի որոշեսցի յայսոցիկ մարդաձիւաղաց, և յայլ ամենայն երկոտանեաց որք ՚ի ձեռն արհեստի կարեն լինել անփետուր ։ Թերի է և այս սահման բժշկութեան. Բժշկութիւնն է արհեստ վասն մարդկային մարմնոյ եղեալ. քանզի սափրողականն և այլք սմանք վասն մարդկային մարմնոյ են. այլ պարտ է յարել և զայն, թէ յապաքինումն ախտից. զի վախճան բժշկականութեան է ապաքինումն ախտից և հիւանդութեանց ։

Բ. Զի որ ինչ հարկաւոր է՝ այն միայն դիցի, և մի ինչ աւելորդ ընդ այն խառնեսցի. զոր օրինակ, Մարդն է կենդանի բանական, ծիծաղական ։ Ուր ծիծաղականն աւելորդ է ։

Գ. Զի լինիցի պարզ և յստակ, որպէս զի զսահմանեալն յայտնաբանեսցէ. զոր օրինակ, Ծառն է մարմին ինչ կենսունակ, գործարանաւոր, անզգայ, անգնայուն, ունի զար֊

մատ ընդ հողով՝ յորմէ սնանի և աճի, և զգուն, զոստս, զտերևս, զծաղիկս, զպտուղս, յորում է սերմն որով ծնանի զիւր նըման մարմին։

Մ՛թին է սահմանն որով սահմանեաց Արիստոտէլ զշարժումն, զի ասէ. Շարժումն է ներգործութիւն էակի 'ի կարողութեան ըստ որում է 'ի կարողութեան։

Դ. Զի իցէ յստակ. իբր զի սահմանեալ իրին պատշաճեսցի և ոչ այլում. զոր օրինակ, Ո՛վին է կուտակութիւն ջուրց. որ ունի զտարածութիւն, զընդարձակութիւն և զխորութիւն։ Այս սահման պատկանի և գետոց. այլ պարտ է յաւելուլ ըզյստակն, և ասել, Ո՛վին է կուտակութիւն աղեհամ ջուրց, և այլն։

Ե. Որչափ ինչ մարթ է՝ 'ի մօտաւոր սեռէ և 'ի յատուկ տարբերութենէ առցի. ուստի ոչ բարւոք սահմանի մարդ՝ եթէ ասիցի, Մարդն է կենսաւոր բանական. զի կարգ կենսաւորին հեռի է 'ի մարդոյ. այլ թէ՝ կենդանի բանական։

Զ. Զի անդրադարձցի ընդ սահմանելոյն. զոր օրինակ, Մարդն է կենդանի բանական. Կենդանի բանականն է մարդ։ Զայս ես արժան է առնուլ 'ի միտ, զի ամենայն ուղիղ սահման անդրադառնայ ընդ սահմանելոյն, այլ ոչ ամենայն որ անդրադառնայ՝ է ուղիղ։ Օրինակ իմն, մարդն է կենդանի

բանական և մտաւոր․ զի թէպէտ անդրադառնայ այս, այլ է յուրի, զի աւելորդ է մտաւորին։ Այնպէս յուրի են և ամենայն սահմանք յորս աւելորդ գաղափարք և ծանօթութիւնք գտանիցին։

Ոչ սակաւ յուրի են և սահմանք եթէ իցեն սոսկ ժխտողականք․ զոր օրինակ, Առաքինութիւնն ոչ է հարստութիւն, ոչ ազնուականութիւն, ոչ իշխանութիւն, և ոչ բարեբաղդութիւն։ Այլ պարտ է նշանակել հաստատութեամբ թէ զինչ է։ Բայց կարէ լինել սահման ինչ որ ըստ ձայնին է ժխտողական, սակայն իրօք է հաստատական․ զոր օրինակ, Պարզն է որ ոչ յօդանայ 'ի մասանց․ զի ցուցանէ թէ է մի ինչ։ Յաւիտենականն է՝ որ ոչ սկիզբն ունի և ոչ վախճան։

Հաւաստի իմն է, զի պարզ գաղափարք կամ ծանօթութիւնք ոչ սահմանին․ քանզի սահմանն այնու աղագաւ է հնարեալ՝ զի ըզպարզ գաղափարս և զծանօթութիւնս որ 'ի յօդուածոյս են՝ 'ի յայտ բերցէ։

Բայց եթէ պիտոյ լինիցի զպարզ գաղափար ինչ բացատրել, մի՝ 'ի մէջ բերեմք զիրսըն յորոց գան այն գաղափարք կամ ծանօթութիւնք․ զոր օրինակ, Սպիտակն է գոյն ձեան․ և կարմիրն երանգ արեան։ Երկրորդ՝ յայտ առնեմք զայն՝ որով լինիմք հասու․ զոր օրինակ, Հոտն է տպաւորութիւն ինչ զոր զգամք հոտոտելեօք։ Երրորդ՝ զյատուկ գոր-

ծրս նորա յառաջ անձեմք. զոր օրինակ, Գերմութիւնն է՝ որ ջերմացուցանէ, լուծանէ, հալէ, անօսրացուցանէ, և ցրուէ զմարմինս որոց հաղորդի։ Կամ՝ որ հալէ զմոմ, և պընդացուցանէ զտիղմ։

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Բաժանումն։

Բաժանումն է տրոհումն բոլորի ՚ի մասունս։ Զի յորժամ նիւթ բանին զբաղում ինչ յինքեան պարունակեսցէ, պիտոյ է բաժանել զայն ՚ի մասունս իւր առ ճիշդ և վըճիտ տեսութիւն իւրին և մասանց նորա։ Իսկ բաժանումն է հնգեակ։

Ա. Յօդուածոյ ենթակայն բաժանի ՚ի մասունս յորոց է միաւորեալ. զոր օրինակ ժամանակն ՚ի ներկայն, ՚ի յանցեալն և յապառնին։ Կենդանին՝ ՚ի ցամաքայինն, ՚ի ջրայինն, և յերկակենցաղ։ Երկիրն՝ յեւրոպէ, յասիա, յափրիկէ, և յամերիկա։

Բ. Սեռն ՚ի տեսակս իւր. զոր օրինակ գոյացութիւնն՝ ՚ի հոգի և ՚ի մարմին. կենդանին՝ ՚ի մարդ և յանասուն։

Բայց երբեմն սեռն փոխանակ բաժանելոյ ՚ի տեսակս իւր՝ բաժանի ՚ի տարբերութիւնս. զոր օրինակ գոյացութիւնն՝ ՚ի հոգևոր և ՚ի մարմնաւոր. կենդանին՝ ՚ի բանական և յանբան։

Գ. Ընթակայն յընդդիմակ պատահմանս. զոր օրինակ, ամենայն մարմին կամ լոյծ է կամ անդակազմ : Ամենայն հրեշտակք կամ բարի են կամ չար :

Դ. Հանգամանք կամ պատահումն բաժանի ըստ ենթակայից յորս գտանի. զոր օրինակ աճումն 'ի բոյս և 'ի կենդանիս : Անախտութիւնն՝ 'ի հոգի և 'ի մարմին :

Բազում անգամ մասունք բաժանման կրկին բաժանին. զոր օրինակ, նախ բաժանին մարմինք 'ի յերկնային և յերկրաւորս. երկրաւորք մակաբաժանին 'ի պարզս և յօդաւորս. և յօդաւորք ստորաբաժանին 'ի հանքս, 'ի բոյսս, և 'ի կենդանիս. և իւրաքանչիւր սոցա կրկին և կրկին ստորաբաժանին յայլ զանազան դասս :

Ըստ այսմ գաղափարն բաժանեալ նախ 'ի պայծառ և յաղօտ, պայծառքն ստորաբաժանին 'ի յստակ և 'ի շփոթ. յստակքն 'ի կատարեալ և յանկատար. կատարեալքն 'ի ճշգրիտ և 'ի հարևանցիկ :

Կանոնք բաժանման այսոքիկ են :

Ա. Զի տարանջատ իցեն մասունք կամ անդամք, և մերժեսցեն զմիմեանս. և մի ըննու մի մասն զմիւսն յինքեան պարունակեսցէ. վասն որոյ յոռի լինի բաժանումն եթէ բաժանեսցես զմարդ իբրև յէական և 'ի կացուցիչ մասունս՝ 'ի մարմին, և 'ի հոգի, և 'ի միտս. զի միտքն բովանդակի 'ի հոգւոջ :

Բ. Զի կատարեալ իցեն, դյօրինքն մասունք բաժանման միանգամայն առեալ բովանդակիցեն զբաժանեալ ենթակայն ըստ ամենայն ընդարձակութեան իւրոյ, որպէս զի մի ինչ առաւելուցու և մի ինչ նուազեսցէ. վասն որոյ յոռի է բաժանումն եթէ բաժանեսցի բարոյական առաքինութիւնն՝ յարիութիւն, յարդարութիւն, և 'ի խոհեմութիւն. զի արտաքոյ մնայ բարեխառնութիւնն: Նոյնպէս յոռի է եթէ բաժանեսցի՝ յարիութիւն, յարդարութիւն, 'ի խոհեմութիւն, 'ի բարեխառնութիւն, և յողջախոհութիւն. քանզի աւելորդ է ողջախոհութիւնն, զի պարունակի 'ի բարեխառնութեան:

Գ. Զի բաժանումն իցէ համառօտ և յստակ, 'ի սակաւ մասունս բովանդակեալ. զի դիւրընկալ լինիցին, և մի իցեն կարի մանրամասն, զի ծանրացուցանեն զմիտս. քանզի ըստ առածին. խառնիխուռն լինի՝ որ մանրի 'ի փոշի:

ԳԼՈՒԽ Գ.

Վերառութիւն:

Յորժամ առաջի կայցէ ենթակայ ինչ՝ յորս իցեն պէսպէս գաղափարք և ծանօթութիւնք. կամ գտանիցին 'ի նմա այլ և այլ իմացուածք, որք իսկութեամբ մի ինչ

իւրեն՝ այլ մտաւորական տեսութեամբ զանազանիցին, յայնժամ առ բարւոք և ըստ կարգի ճանաչել զայն ըստ ամենայն հանգամանաց և իմացուածոց, տրոհեմք զնոյն և զմի ինչ յայլ և այլ գաղափարս և 'ի ծանօթութիւնս և 'ի զանազան իմացուածս. որպէս զի զմի մի իւրաքանչիւր առանձինն խորհեալ՝ յստակաբար ծանիցուք զայն զոր դիտեմք:

Օրինակ իմն; 'ի Նարինջն գտանեն գաղափարք ձևոյ և գունոյ, և ծանօթութիւնք ծանրութեան, համոյ, հոտոյ, և այլոց հանգամանաց. նոյնպէս և 'ի մարդն գոյացութիւն, մարմնեղինութիւն; կենսաւորութի, զգայականութիւն, կենդանութիւն, բանականութիւն. զայս ամենայն վերացութեամբ մտացն անջատեալ յենթակայէն կամ 'ի միմեանց՝ որոշակի զմտաւ ածեմք:

Վերացութիւնն գլխաւորաբար է երբեակ:

Ա. Վերացութիւն գաղափարի կամ ծանօթութեան յենթակայէ կամ 'ի նիւթոյ. զոր օրինակ, բնաբանն վեր առեալ 'ի մարմնոյ զգոյն, զձայն, զծանրութիւն և զթեթևութիւն, զձգողութիւն և զվանողութիւն, ըզթափանցկութիւն և զընդդիմահարութիւն, և զայլ պատահական յատկութիւնսն, ուրոյն ուրոյն քննէ և ճառէ զնոցանէ: Եւ չափաբանք թուաբանք զպէսպէս տեսակս ձևոյ և թուոյ

հրաժարեցուցեալ յինչ և իցէ նիւթոյ, և բարոյականք՝ զարիութիւն, զարդարութիւն և զայլսն յենթակայից իւրեանց, իբրև առանձին ենթակայացեալս խորհին։

Բ. Վերառութիւն ընդհանրոյ 'ի մասնաւոր գոյակաց կամ յեզականաց. զոր օրինակ, տրամաբանն վերացուցանէ մտօք յանհատից կամ 'ի մասնաւորաց զայն ամենայն՝ որ հասարակ է նոցա, և ստեղծու զմի միայն գաղափար ինչ ընդհանուր հայեցող 'ի բազումս՝ կոչեալ տեսակ. և 'ի տեսակաց կազմէ զսեռ, նոյնպէս և զայլ ընդհանուրս. որոց թէպէտ չիք գոյութիւն, բայց ինքն իբրև 'ի գոյօղս ինչ հայի առ նոսա։

Գ. Վերառութիւն մակդրի 'ի մակդրէ. յորժամ 'ի միում իրի զանազան իմացմունք իցեն, հարկիմք զատուցանել զմին 'ի միւսմէ, և ուրոյն ուրոյն խորհիլ զնոցանէ. զի առ տկարութեան մտաց մերոց՝ չկարեմք միով հայեցիւք իմանալ որոշակի։ Օրինակ իմըն՝ միտք, կամք, յիշողութիւն, նոյն են իրօրէն ընդ միմեանս և ընդ հոգւոյն. զի հոգին յորժամ խորհի՝ է միտք, յորժամ յօժարի կամ դժկամակի՝ է կամք, և յորժամ յիշատակէ՝ յիշողութիւն. բայց քանզի զօրութեամբ զանազան գոլով իմացուած միոյն ոչ փակի 'ի միւսն, և դիմամարտին ընդ իրեարըս հաստատութեամբ և ժխտողութեամբ. զի ասեմք՝ միտքն ոչ է կամք և ոչ յիշողու-

թիւն, և կամքն ոչ է միտք և ոչ յիշողութիւն, և յիշողութիւնն ոչ է միտք և ոչ կամք. վասն որոյ և ոչ միով հայեցիւք ճանաչին յստակաբար, այլ վերաբերութեամբ 'ի միմեանց և առանձին տեսութեամբ:

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ՏՐԱՄԱԽՈՀՈՒԹԻՒՆ ԿԱՄ. ԽԵԼԱՄՏՈՒԹԻՒՆ

Յօրժամ նմանութիւն կամ աննմանութիւն երկուց գաղափարաց ինքնադիմաբար ոչ երեւի, խորհրդով մտաց համեմատեմք ընդ նոսա ընդ այլում երրորդ գաղափարի, զի 'ի նմանութենէ եւ յաննմանութենէ նոցա ընդ սմա՝ իմասցուք զնմանութիւն կամ զաննմանութիւն նոցա ընդ միմեանս. այս ներգործութիւն մտաց կոչի Տրամախոհութիւն, կամ Խելամտութիւն:

Բանն յորում լինի այս՝ ըստ հնոց շարաբանութիւն ասացաւ: Բայց քանզի ձայնիւս շարաբանութիւն յատկապէս իմացեալ լինի մինն 'ի տեսակաց ապացուցից՝ որ այն ինքն է Հաւաքաբանութիւն, եւ ոչ այլքն ամենեքին. ապա լաւ եւս այժմ Ապացոյց կոչի:

ՊՐԱԿ Ա.

Ապացոյց:

Ապացոյցն սահմանի յիմաստասիրաց՝ շարամանութիւն բանից, որով 'ի ծանօթից ոմանց յառաջանամք 'ի գիտել անծանօթից: Քանզի ասէ Դաւիթ Անյաղթ. « Ոչ զամենայն ինչ թաքոյց բնութիւնս, զի ոչ կարող

գոյր գտանել ինչ ոք. և ոչ գործեալ զամե-նայն ինչ յայտնի արար, զի ոչ ոք էր այս որ 'ի խնդիր անկանէր. այլ է ինչ զոր թա-քոյց, և է ինչ զոր յայտնեաց. վասն որոյ խնդրելն է յուզելն և գտանելն ։ Նոր եկն էանց 'ի մէջ հաւաքարանութիւնն, որպէս զի յորոց եցոյց բնութիւնս՝ գտցէ զայն զոր թաքոյցն.» ։

Զոր օրինակ չէ յայտնի ծանուցեալ ա-մենեցուն թէ օդն իցէ մարմին, սակայն քա-ջածանօթ են ամենեքին՝ թէ ամենայն ծա-նրր՝ մարմին է. և յայսմանէ յառաջանամք 'ի ծանօթութիւն մարմնաւորութեան օդոյ, կազմելով ապացոյց այսու օրինակաւ ։

Ամենայն որ ծանր է՝ մարմին է.

Իսկ օդն ունի ծանրութիւն.

Ապա օդն է մարմին ։

Ակներև տեսանի զօրհանապազ օդոյն ծանրութիւն նա և 'ի բոցոյ հրոյն, որ ճեղ-քեալ զօդն ցոլանայ 'ի վեր, և ընդ իւրև ունի զօդն ։

Ապացոյցն կազմի յերից պարզ կամ խառն գաղափարաց. որոց առաջինն կոչի Ենթա-կայ, երկրորդն Մակդիր, և երրորդն Միջնորդ ։

Յապացուցական բանի ենթակայն կոչի Փոքր ծայր, մակդիրն՝ Մեծ ծայր. միջին գա-ղափարն որ 'ի միում առաջարկութեան բաղ-դատի ընդ ենթակային և 'ի միւսումն ընդ մակդրին՝ կոչի Միջնորդ ։

Յապացոյցս երրեակ գլուխք կամ մասունք որոշին ըստ երից գաղափարացն բաղդատելոց։ Մասն՝ յորում բաղդատի մեծ ծայրն ընդ միջնորդին՝ ասի Մեծագոյն. մասն՝ յորում փոքր ծայրն բաղդատի ընդ միջնորդին՝ ասի Փոքրագոյն. իսկ մասն՝ յորում փոքր ծայրն բաղդատի ընդ մեծ ծայրին՝ ասի Հետեւութիւն. և այս մասն է զոր խնդրեմք յապացոյցս։

Օրինակ իմն, խնդրի թէ Թառամիլն ծաղկանց իցէ յարտաքին պատճառէ. որովհետեւ ոչ յայտնի երեւի հանգիտութիւն ենթակային ընդ մակդրին, առնում միջնորդ զփոփոխութիւնն առ ՚ի յայտ բերել զհանգիտութիւնն. զոր օրինակ, Ամենայն փոփոխութիւն յառաջ գայ յարտաքին իմն պատճառէ. իսկ Թարշամիլն ծաղկանց է փոփոխութիւն. ապա Թարշամիլն ծաղկանց յառաջ գայ յարտաքին պատճառէ։

Ի սմին՝ յառաջգալն յարտաքին պատճառէ՝ է մեծ ծայր. Թարշամիլն ծաղկանց՝ փոքր ծայր. իսկ փոփոխութիւնն միջնորդ։ Եւ քանզի մեծ և փոքր ծայրք յերկոսին առաջարկութիւնս հանգիտացան ընդ միջնորդին, հանգիտացան և ընդ միմեանս ՚ի հետեւութեան, որպէս և ապացոյցն եղեւ հաստատական. և այս երրեակ դատմունք միանգամայն առեալ կոչին Տրամախոհութիւն կամ Խելամտութիւն։

Յամենայն ապացոյցս մեծագոյն առաջարկութիւնն կամ որ նոյն է՝ ընդհանուր բանն պարունակէ զհետեւութիւնն. զոր օրինակ՝ Ամենայն մոլութիւն է վնասակար, (մեծագոյն). ծուլութիւնն է մոլութիւն, (փոքրագոյն). ծուլութիւնն է վնասակար. (հետեւութիւն)։

Ուր 'ի հետեւութեան ոչ այլ ինչ արարաք, բայց եթէ զլռելեայն պարունակեալն 'ի մեծագոյնն՝ յայտնի բացատրեցաք։

Ապաքէն յամենայն ապացոյցս մի յառաջարկութեանցն պարունակէ զհետեւութիւն, եւ միւսն յայտ առնէ թէ հետեւութիւնն պարունակեալ կայ յառաջարկութեան անդ։ Ի հաստատական ապացոյցս ընդհանուր բանն է պարունակողն որպէս ցուցաք, իսկ 'ի ժխտողականս՝ ժխտողական բանն. զոր օրինակ, Ոչ ոք կենդանի է տունկ. ամենայն ձի է կենդանի. ապա ոչ ոք ձի է տունկ։

Ահա 'ի սմին՝ ընդհանուր բանն է ժխտողական առաջարկութիւնն, ոչ ոք կենդանի է տունկ. յորում լռելեայն պարունակեալ կայ հետեւութիւնն, ոչ ոք ձի է տունկ. վասն զի ձին պարունակի ընդ կենդանեաւ. ապա առ ուղղութիւն շարաբանութեան հարկաւ պահանջի, զի հետեւութիւնն պարունակեսցի յընդհանուր բանն։

ԳԼՈՒԽ Ա.

Զանազան ապացոյցք։

Երրակի մի ինչ պարունակի յայլում. նախ՝ իբրև մասնաւոր 'ի ներքոյ ընդհանրոյ. երկրորդ՝ իբրև ընդհանուր 'ի մասնաւորս իւր. երրորդ՝ իբրև նման 'ի նմանւոջ։ Ուստի ասէ Դաւիթ Անյաղթ. «Հաւատալն եռակի գոյ. կամ 'ի հանրականաց զմասնականն ցուցանէ և հաւաստարմացուցանէ. կամ 'ի մասնականաց զընդհանրականսն. կամ 'ի զուգէն զզոյգն»։ Յայսմանէ երրեակ ազգ ապացուցից զանազանին. Հաւաքաբանութի՛ւն, Մակածութիւն, և Յարացոյց։

Եւ բաց 'ի սոցանէ են և այլ տեսակք ապացուցից, որք կոչին Եզառած, Փաստորդ, Երկսայրաբանութիւն, Համաբարդութիւն, և Բազմաբարդութիւն. զորոց տեսցուք յառաջիկայդ։

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Հաւաքաբանութիւն։

Հաւաքաբանութիւնն է ապացոյց կազմեալ յերից բանից այնպէս դասաւորելոց, զի յերկուց առաջնոց օրինօք բղխէ երրորդն. զոր օրինակ, Ամենայն տունկ է սննդական. նոճին է տունկ. ապա նոճին է սննդական։ Այս տեսակ ապացուցի կատարելագոյն է

քան զայլսն . զի այլքն ամենեքին 'ի նոյն դառնան ։

Զհետ երթեալ բնական կարգի որ սովորական է 'ի խօսս, պարտ էր նախ դնել զխնդիրն զոր կամի ցուցանել, և զկնի յարել զփաստս կամ զպատճառն 'ի ցուցումն խնդրոյն, և 'ի վերջոյ զընդհանուր բանն . զոր օրինակ, Գողն է պատժելի, վասն զի է օրինազանց . և ամենայն օրինազանց է պատժելի ։ Ուր գողն է պատժելի, է խնդիրն զոր կամիմք ցուցանել, որ յարհեստական ձևոջ հաւաքողականութեան փոխի 'ի հետևութիւն . վասն զի է օրինազանց, է փաստն որով ցուցանեմք զայն . ամենայն օրինազանց է պատժելի, է ընդհանուր բանն՝ յորում լուծեալ պարունակի խնդիրն ։

Բայց Արիստոտէլ և որք զկնի առ դիւրաւ յաղթահարելոյ զանհաւան միտս հակառակորդաց, յընդհանուր բանից առ մասնաւորս իջանել սովորեցան, զբնական ձևն փոխելով յարհեստականն . ըստ այսմ եղանակի . Ամենայն օրինազանց է պատժելի . գողն է օրինազանց . ապա գողն է պատժելի ։

Ընդհանուր բանն որ կոչի մեծագոյն առաջարկութիւն, 'ի բնական հաւաքաբանութեան թէպէտ և 'ի վերջոյ դասի, այլ այնու ոչ անկանի 'ի լինելոյ մեծագոյն . զի ուր և դիցի՝ է մեծ, թէպէտ յառաջոյ թէպէտ 'ի վերջոյ . զի ոչ ըստ տեղւոյն՝ այլ ըստ ի-

մասունն է դատելի ։ Այնպէս են և փոքրագոյնն և հետևութիւնն ։

Իսկ համաքարանութիւնն կայանայ յայսոսիկ սկզբունս · Որ ինչ հաստատի զընդհանուր բանն, հաստատի և զիւրաքանչիւրոց ընդ նովաւ պարունակելոց · և որ ինչ ժխտի զընդհանուր բանն, ժխտի և զիւրաքանչիւրոց ընդ նովաւ պարունակելոց ։

Եւ որպէս ասացաք յառաջագոյն, 'ի հաստատական համաքարանութեան ընդհանուր բանն յայտնի է, որ և մեծագոյն կոչի · իսկ 'ի ժխտականն՝ ժխտողական առաջարկութիւնն է ընդհանուր բանն ։

ՅՕԴՈՒԱԾ Բ ·

Մակածութիւն ։

Մակածութիւնն է ապացոյց, որ 'ի ծանօթութենէ բազմաց մասնաւորաց գամք 'ի ծանօթութիւն ընդհանրոյն · զոր օրինակ, Տեսանեմք զի մարդ, գազան, անասուն, թռչուն և այլք ունին զտուրևառութիւն շնչոյ · յայսմանէ 'ի վերայ բերեմք, թէ ապա ամենայն կենդանիք ունին զտուրևառութիւն շնչոյ ։

Այս տեսակ ապացուցի հակադրի համաքարանութեան · զի նա հանրականէն զմասնաւորն ապացուցանէ, իսկ սա 'ի մասնաւորաց զընդհանուրն ։

Քանզի յորժամ ասացուած ինչ հաստատի զամենայն տեսակաց, կամ զիւրաքանչիւր մասնաւորաց, որք պարունակին ընդ սեռիւ կամ ընդ տեսակաւ, նոյնն հաստատի ապա զբովանդակ սեռէն կամ զտեսակէն։

Ի տեսակաց առ սեռս ապահովագոյն է մակածութիւնն. զոր օրինակ, Անձրև, կարկուտ, ձիւն, եղեամն և այլք յօդերևութից գոյանան յերկրային և 'ի ջրային գոլորշեաց. ապա ամենայն օդերևոյթք գոյանան յերկրային և 'ի ջրային գոլորշեաց։ Նոյս, Կենդանիք որ յերկրի են և որ յօդս և որ 'ի ջուրս, ունին ծնունդ, սնունդ, աճումն, և ապականութիւն. ապա ամենայն կենդանիք ունին ծնունդ, սնունդ, աճումն և ապականութիւն։

Իսկ 'ի մասնաւորաց առ տեսակս մակածութիւնն տկարանայ բազում անգամ. որպէս գյոլովս 'ի զինուորաց տեսեալ ուրուք սաստ և այժմ. զի նեղեն զռամիկն, յայնմանէ զհետ բերցէ, թէ ապա ամենայն զօրականք են նեղիչք. վասն զի գտանին և այլ բազում զօրականք որք ոչ նեղեն զոք։

Առ ուղղութիւն սորա հարկ է. զի թըւումն մասանց անթերի և կատարեալ լինիցի. և որ զբոլորէն ասի՝ իւրաքանչիւր մասանցն ստուգիւ պատշաճիցի, թէպէտ և զանազանեալ իցեն 'ի միմեանց բնութեամբ կամ զօրութեամբ։ Իսկ եթէ ամենայն մասունքն ոչ 'ի թիւ անկանիցին, և որ զբոլո-

րէն տայ՝ ոչ պատշաճեսցի իւրաքանչիւր մա-տանց, լինի թիւր։ Զի որպէս նշանակէ Դաւիթ Անյաղթ յասելն, թէ « Վասն զի մարդ և ձի զներքին կլափն շարժեն. ուրեմն և ամենայն կենդանի զներքին կլափն շարժէ. ոչ է ճշմարիտ դ։ Քանզի կոկորդիլոս գազանն և այլք ոմանք ոչ շարժեն զներքին կլափն՝ այլ զվերինն, որպէս նշանակէ անդանօր։

ՅՕԴՈՒԱԾ Գ.

Յարացոյց ։

Յարացոյցն է ապացոյց, յորժամ յօրի-նակէ եղելոց ինչ իրաց զայլ ինչ նման նմին հետևեցուցանեմք. զոր օրինակ, Յեսու ի-րաւամբք ՚ի մահ դատապարտեաց զԱքար, զի զլացաւ խոստովանիլ զոր թաքուցեալ էր յաւարէն. ապա և սուրբն Պետրոս իրա-ւամբք ՚ի մահ դատեցաւ զԱնանիա և զՍա-փիրա, որք նոյնպէս ոչ կամեցան խոստովա-նել զխորել իւրեանց ՚ի գնոյ գեղջն վաճա-ռելոյ։

Անյագ արբեցութիւնն տարաժամ մահ ՚ի վերայ եած մեծին Աղեքսանդրի. ապա և զդա տարաժամ մահուամբ բարձցէ ՚ի կե-նաց, որ գինեմպու լինի անյագուրդ։ Ըստ այսմ և հոցագործն ասէ. ցորեանս այս նը-ման է այնմ ցորենոյ, զի ՚ի սերմանելին է դեղնագոյն, չեկախառն, թափանցիկ, ձուա-

ձև. 'ի շօշափականս հարթաթիկունք, նրբա-
մածկ, սահուն, զովագին. 'ի հոտոտելիս անու-
հոտ. 'ի ճաշակելիս՝ համ նորա 'ի ծառքեն
իբրև զճաշակ պտղոյ. 'ի լսելիս՝ չփեալ ընդ-
այր շանչէ. իսկ ալիւր նորա էր աճեցուն
սպիտակ և անօսր, և հաց նորա քնքուշ և
փափուկ. այգա և սորայս ալիւր և հաց ըստ
նմին օրինակի լինիցի: Նոյնպէս և բժիշկն ա-
սէ, Սխտոր այս նման է այնմ սխտորի ըստ ա-
մենայն հանգամանաց. իսկ նա այս նիշ դե-
ղով բժշկեցաւ. ապա և սա նովին բժշկեսցի:

Որ ուղղութիւն հետևութեանն հարկ
է կատարեալ նմանութիւն յերկոսին դէպսն,
որպիսի պահանջէ օրէնքն համեմատութեան,
թէ 'ի նման պատճառէ նման գործք լինին,
և 'ի նման գործոյ նման պատճառք:

Իսկ եթէ չիցէ կատարեալ նմանութիւն
'ի պարագայս երկոցունց, այլ միայն ըստ ի-
միք, տկարանայ ապացոյցն, և սուտ և ս: Նոյ-
պէս և 'ի պատմական անցս յորժամ հաւա-
սարաւն զհաւասարն հաւասարմացուցա-
նեմք, ոչ է ամենևին ճշմարիտ: Զի ըստ
նշանակելոյ Դաւթի Անյաղթին, «Յասելն՝
թէ մի տացուք Դիոնիսի մարմնապահս, զի և
Պիսիստրատոս առեալ բռնացաւ. ոչ է ճշմա-
րիտ. քանզի ոչ եթէ յորժամ Պիսիստրատոս
բռնացաւ, և Դիոնեսիոս բռնացաւ »:

Զայսպիսի ապացոյցս յաճախ 'ի կիր ա-
նուն վարդապետք 'ի քարոզական խրատս, և

իմաստասէրք առ 'ի պարզել զնրբութիւն ձեռնարկութեանց իւրեանց զգալի օրինակօք:

ՅՕԴՈՒԱԾ Դ.

Ըղառուած:

Ըղառուած, որ յոմանց հնարք կոչի, է հաւաքաբանութիւն՝ յորում զմի յառաջարկութեանց 'ի մէջ մատուցեալ՝ 'ի վերայ բերեմք զհետեւութիւնն, լռելով զմիւս առաջարկութիւնն, իբրեւ ինքնին դիւրաւ ծանուցեալ. զոր օրինակ, Ամենայն մոլութիւն է չար. ապա եւ անիրաւութիւնն է չար:

Ահա 'ի սմին փոքրագոյնն, որ է՝ անիրաւութիւնն է մոլութիւն, թողեալ է զօրութեամբ իբրեւ դիւրաւ իմանալի. որ եթէ ներգործութեամբ դիցի, լինի կատարեալ հաւաքաբանութիւն ըստ այսմ օրինակի. Ամենայն մոլութիւն է չար. անիրաւութիւնն է մոլութիւն. ապա անիրաւութիւնն է չար:

Արբեցութիւնն վնասակար է կենաց. ապա զգուշանալ պարտ է յարբեցութենէ: Ի սմին մեծագոյնն զօրութեամբ կայ վասն յայտնի գոլոյն. եւ լինի հաւաքաբանութիւն այսպէս. Որ ինչ վնասակար է կենաց՝ պարտ է զգուշանալ 'ի նմանէ. իսկ արբեցութիւնն վնասակար է կենաց. ապա զգուշանալ պարտ է յարբեցութենէ:

Ահա որպէս յայտնի երեւի, երկու բանք

միայն են յեղանակն. որոց առաջինն կոչի Նախադաս, երկրորդն Հետևորդ: Ճշմարտութիւն և ստութիւն եղանակի ըստ որինի հաւաքականութեան է դատելի. զի որպէս ասացաք, եղանակն է հաւաքականութիւն՝ որոյ մի յառաջարկութեանցն պակասի իբրև դիւրաւ իմացեալ. որ եթէ չիցէ յայտնի և դիւրիմաց, պարտ է ներգործութեամբ դնել զայն. և երբեմն յարել ընդ նմա և զհաստատիչն և առնել փաստորդ:

Եղանակն երբեմն 'ի մի բան ամփոփի, և կոչի կարճաբանութիւն. ըստ այսմ է եղանակն այն հռչակաւոր. Մահկանացուիդ չէ՛ օրէն ունել ոխս անմահս: Եւ դառնայ 'ի հաւաքականութիւն, զոր օրինակ, Չէ՛ օրէն մահկանացուաց ունել ոխս անմահս. իսկ դու ես մահկանացու. ապա չէ՛ օրէն քեզ ունել ոխս անմահս: Ըստ այսմ, Իշխանք ժողովրդեան՝ արարէք իրաւունս և արդարութիւն. Տառապեալքդ կարէք տառապելոց լինել կարեկից. Որդիք՝ հնազանդ լերուք ծնողաց ձերոց: Զկարճաբանութիւնն յոլովակի վարեն սուրբ գիրք և վարդապետք:

ՅՕԴՈՒԱԾ Ե.

Փաստորդ:

Փաստորդ, որ յոմանց տրամախոհութիւն կոչի, է հաւաքականութիւն՝ յորում առ մի

յառաջարկութեանցն կամ առ երկոսին իսկ յարի փաստն, եթէ ինքնին չիցէ բացայայտ. զոր օրինակ, Ամենայն ախտ մահաբեր որ փոխադրական է և սուր, պարտ է ամենից փախչիլ և զգուշանալ 'ի նմանէ. իսկ սրածութիւնն է ախտ ինչ մահաբեր փոխադրական և սուր, վասն զի շաղախի 'ի հոտոյ` 'ի շնչոյ` 'ի շօշափմանէ և յայլ ո՛ և իցէ դոյզն մի հպաւորութենէ, և չթողու ժամանակ բժշկական դարմանոյ` փութացուցեալ զմահ. ապա պա՛րտ է ամենեցուն փախչիլ և զգուշանալ 'ի նմանէ :

Ամենայն իշխան որ ոչ հնազանդի օրինաց` որ կարգեալ են յօգուտ հասարակութեան, է բռնաւոր. իսկ իշխանդ այդ ոչ հնազանդի օրինաց, վասն զի վարի ըստ թելադրութեան կամաց և հաճոյից իւրոց 'ի ծառայեցուցանել և 'ի կեղեքել զժողովուրդն անխնայ. ապա իշխանդ այդ է բռնաւոր : Ի սոսին փոքրագոյնքն ունին զփաստս :

Ամենայն բամբասող մեղանչէ մահուչափ, զի յանիրաւի բռնաբարէ զհամբաւ օտարին. իսկ դա է բամբասող, զի յանիրաւի վատահամբաւեաց զօտար ոք. ապա բամբասողդ այդ մեղաւ մահուչափ :

Ամենայն մոլութիւն է չար, զի է անկարգ բաղձանք հակառակ ուղիղ բանի. այլ ագահութիւնն է մոլութիւն, զի է անկարգ բաղձանք արծաթոյ. ապա ագահութիւնն է չար :

Ոչ ոք վաշխառու կարէ անբասիր լինել. քանզի վաշխն արգելեալ է բնական՝ աստուածային և քաղաքական իրաւամբք. իսկ դա է վաշխառու, զի առնու զվաշխ 'ի փոխոյ բանիւ փոխոյ. ապա դա ոչ կարէ անբասիր լինել։ Ի սոսին երկոքին առաջարկութիւնքն ունին զհաւաստիս։

ՑՕԴՈՒԱԾ Զ.

Երկայրաբանութիւն։

Երկայրաբանութիւն է խառն ապացոյց, յորում անջատական բանիւ բաժանի բոլորն 'ի մասունս, յորոց զորն ընդունիցի ոք, հարկի նա ընդունել և զբոլորն։ Որպիսի է հռչակաւոր երկայրաբանութիւնն Տերտուղիանոսի առ Տրայիանոս կայսր. որ պատուէր տուեալ էր մի ևս 'ի հարցափորձ քըննութեան մատուցանել զքրիստոնեայս. այլ եթէ յայտնեսցին՝ պատուհասակոծ առնել։ Ասէ. Կամ վնասապարտ են քրիստոնեայքդ՝ կամ արդար. եթէ վնասապարտ, ընդէ՞ր արգելուս 'ի հարցափորձէ. եթէ անպարտ, զմէ՞ դատապարտես։ Իբր թէ ասէր. Պատուէրդ 'ի վերայ քրիստոնէից՝ անիրաւ է ամենևին թէ՛ յանցաւոր իցեն և եթէ անմեղ. զի թէ յանցաւոր, ընդէ՞ր արգելուս 'ի քննութենէ. եթէ անմեղ, վասն է՞ր պատուհասես։

Այսպիսի է ապացոյցն ընդդէմ Պիւհռոնացւոց՝ որք պնդէին թէ ոչ ոք ստուգիւ

գիտել ինչ զօրէ . այլ ամենայն է անստոյգ և երկբայական ։ Կամ գիտէք զոր ասէքդ՝ կամ ոչ. եթէ գիտէք, կարող էք գիտել և զայլս. իսկ եթէ ոչ գիտէք, 'ի զուր ուրեմն զուն գործէք հաւանեցուցանել զայն, թէ ոչ ոք գիտել ինչ զօրէ . քանզի չէ արժան հաստատել զոր ոչն գիտէ ։

Երկարաբանութիւնն լինի ըստ կարգի և անհերքելի, Նախ՝ եթէ բոլորն ճշդիւ և ուղիղ բաժանեսցի առ ամենայն մասունս իւր . և ամենայն մասունք իւր 'ի համար արկանիցին . որով պաշարի ամենուստեք փախուստ հակառակորդին ։

Ապա եթէ թուումն մասանց թերի լինիցի, և մնասցէ ինչ արտաքոյ, առ ոչինչ զօրէ երկարաբանութիւնն . իբր այն զոր ասաց Սոկրատէս մերձ 'ի մահ՝ առ 'ի ցուցանել, թէ մահն չէ երկիւղալի, ասէ . Կամ մահուամբ ամենայն զգայութիւն բառնի որպէս 'ի քուն, և կամ հոգին 'ի լուսագոյն տեղի փոխադրի . եթէ առաջինն՝ քաղցրութեամբ հանգեայց . և եթէ երկրորդն՝ երանագոյն ևս կեցից ընդ Որփէոսի և Մուսեայ և Հոմերոսի և այլոց քաջազանց . ապա չիք ինչ երկիւղ 'ի մահուանէ ։ Բայց արտաքոյ եթող զերրորդն, այն է՝ գուցէ 'ի չարագոյն կեանս փոխեսցի ։

Երկրորդ՝ հետևութիւնն զոր հանեմք յիւրաքանչիւր մասանց՝ իցեն ճշմարիտ և

հարկաւոր։ Նման որոյ ոչ ըստ կարգի խօսէր, որ կամելով հեռի պահել զոմն 'ի գործոյ հասարակապետութեան, ասէր. Կամ բարւոք վարեսցես զգործ անտեսութեան աշխարհին՝ կամ չարաչար. եթէ բարւոք վարեսցես, մարդիկ թշնամի լինին քեզ. եթէ չարաչար, աստուածոց լինիս ատելի. ապա հեռի՛ կաց ամենևին։

Թիւրութիւն ապացուցիս յայսմ է, զի ոչ հարկաւ զհետ գայ բարւոք վարելոյն՝ թշնամի առնել զմարդիկ. զի եթէ ամբարիշտք ոմանք ատեսցին և թշնամի լինիցին, այլք բարիք սիրով բարեկամասցին ընդ նմա. յորոց մին առաւել արժէ քան զհազարս ամբարշտաց։

Երրորդ՝ յոռի է երկսայրաբանութիւնն, յորժամ երկոքանչիւր մասն ընդ հակառակն շրջեսցի 'ի գլուխ խօսողին. զոր օրինակ, Եթէ ամուսնասցիս, կամ ծնցիս որդի՝ կամ ոչ. եթէ ծնցիս, քանի՞ աշխատութիւն իցէ. եթէ ոչ ծնցիս, զի՞նչ օգուտ իցէ. ապա լաւ է չամուսնանալ։

Նա մարթ է ընդդէմ խօսողին դարձուցանել զայս. Եթէ ամուսնասցի, կամ ծնցի որդի կամ ոչ. եթէ ոչ ծնցի, զի՞նչ աշխատութիւն իցէ. եթէ ծնցի, տե՛ս որչափ օգուտ իցէ. ապա լաւ է ամուսնանալ։

Այսպիսի է և այն երկսայրաբանութիւն, որով ոմն 'ի քրմաց խրատէր զորդի իւր չխօ-

ել բանս առ ժողովուրդն. ասէ. Եթէ անիրաւս ինչ հաւանեցուցանես, զայրասցին քեզ դիքն. եթէ իրաւացիս, բարկասցին քեզ մարդիկ, ապա լաւ է բնաւ չխօսել։ Եւ պատանին ընդդէմ հօրն դարձոյց զայս երկայրաբանութիւն՝ ասելով. Եթէ իրաւացիս խօսեցայց, սիրեսցեն զիս դիքն. իսկ եթէ անիրաւս, սիրեսցեն զիս մարդիկ. ապա յաւէտ օգտակար է խօսել բանս առ ժողովուրդն։

ՅՕԴՈՒԱԾ Է.

Համաբարդութիւն։

Համաբարդութիւնն է հաւաքաբանութիւն կուտակեալ, յորում չար բանից այնպէս կարգեալ և կապեալ են ընդ միմեանս, զի զոր 'ի վերայ յետին ենթակայի ածեմք հետևութիւն, նոյն զառաջնոյն հաստատի։

Քանզի կազմի սա 'ի հետևութենէ առաջարկութեանց այսու օրինօք, զի մակդիրըն առաջին բանին լինիցի ենթակայ երկրորդին, նոյնպէս և երկրորդն՝ երրորդին մինչև 'ի հասանիլ 'ի վերջին հետևութիւնն, յորում ենթակայ առաջնոյն միասցի ընդ մակդիրի վերջնոյն։ Օրինակ իմն. կամեցեալ ցուցանել, թէ իշխան խոհեմ արժանի է գովութեան և պատուոյ՝ առիցեմք. Խոհեմ իշխանն բարուօք նկատէ զանցեալսն և նա-

խատես լինի ապագայից. և որ բարւոք զան-ցեալն նկատէ. և ապագայից նախատես լի-նի, զամենայն ինչ յօգուտ հասարակութեան կարգէ. և որ զամենայն յօգուտ հասարա-կաց կարգէ, զազգ և զհայրենիս իւր բար-ձրացուցանէ. և որ զազգ և զհայրենիս իւր բարձրացուցանէ, արժանի է գովութեան և պատուոյ. ապա իշխան խոհեմ արժանի է գովութեան և պատուոյ:

Յայսպիսի ապացոյցս դիւրին է սպրդիլ պատրանաց. յայն սակս ազդ առնեն տրա-մաբանք, թէ առ 'ի լինել հետեւութեանն ճշմարտի՝ պարտ է զի ամենայն բանքն բըղ-խեսցին 'ի միմեանց, և ոչ մի ինչ սուտ կամ երկբայելի խառնեսցի ընդ նոսա. որպիսին է և այս ապացոյց: Հոգին է պարզ. պարզն է առանց մասանց, և որ առանց մասանց է՝ անքաժանելի է. անքաժանելին է անապա-կան. անապականն է անմահ. ապա հոգին է անմահ: Տես զիարդ հետեւութիւնք բըղ-խեալք 'ի միմեանց՝ անքակ ընթացեալ են ընդ միմեանս. ապա թէ ոչ՝ իւրաքանչիւրքն լի-նէին ճշմարտութեան բանք, և ոչ պատշաճեալքն յինքեանս զհետեւութիւնն:

Իսկ առ 'ի ճանաչել զուղղութիւն կամ զթիւրութիւն այսպիսի ապացուցից. պարտ է փոխանակ միոյ միոյ ենթակայի իւրաքան-չիւր բանից՝ դնել զբուն զառաջին ենթա-կայն. ուր եթէ ճշմարտեսցին բանքն՝ ուղիղ

է ապացոյցն, այսպէս թէ ոչ՝ է թիւր և մո-լար: Վասնզի ճշմարիտ է ասել. Հոգին է պարզ. Հոգին է առանց մասանց. Հոգին է անհաս և անքննելի. Հոգին է անեղծ և անապա-կան. Հոգին է անմահ:

Երկրորդ՝ մասունք բանին 'ի նոյն միա-ւորացին միջոց, այսպէս թէ ոչ՝ հետևութիւնն ըն-նի թիւր. որպէս ասէր Թեմիստոկղէս ընդ-կատակս, թէ որդի իւր երկամեան իշխէ հա-մօրէն աշխարհին յունաց: Որդի իմ, ասէ, իշխէ մօր իւրում. մայրն իւր՝ ինձ. ես ողջոյն յունաց աշխարհին. ապա որդի իմ երկա-մեան իշխէ բովանդակ յունաց աշխարհի:

Յայտ է զի այլ և այլ օրինակաւ իշխէին: Վասնզի որդին իշխէր մօրն ճշիւ և ժպտու-թեամբ, մայրն գգուանօք և աղերսանօք, իսկ Թեմիստոկղէս սաստիւ և զօրութեամբ տուեցելով նմա 'ի հասարակութենէն. ուր բառս իշխել՝ ոչ 'ի նոյն միտս կրկնի, վասն որոյ զհետ գայ թիւր հետևութիւն:

Բազմաբարդութիւնն է այն ազգ համա-բարդութեան, յորում առաջին ենթակային ընծայեմք զայն ամենայն՝ որք հետաղհետէ ըն-նին միմեանց հետևութիւն և ենթակայ. զոր օրինակ, Հոգին է պարզ. իսկ պարզն է առանց մասանց. ապա հոգին է առանց մա-սանց: Իսկ որ առանց մասանց է՝ անլուծա-նելի է. ապա հոգին է անլուծանելի: Իսկ անլուծանելին է անեղծական, ապա հոգին

է անեղծական ։ Իսկ անեղծականն է անմահ, ապա հոգին է անմահ ։

Այսու բազմաբարդութեան ձեւով ճանաչի ուղղութիւն և կամ թիւրութիւն համաբարդութեան որպէս ցուցաւ վերագոյնդ. ուր ենթակայն նախկին՝ լինի ենթակայ հետեւութեանց կարգաւ ’ի միմեանց բղխելոց ։

ԳԼՈՒԽ Բ.

Խառն հաւաքաբանութիւն, որ ըստ հնոց Ստորադասական լսի.

Խառն հաւաքաբանութիւն կոչին, որոց մեծագոյն է խառն բան. և են կցորդական, շաղկապական, և անջատական ։

Կցորդական, ըստ հնոց Թէական ։

Կցորդական հաւաքաբանութիւնն է, որոյ մեծագոյնն է բան կցորդական, պայմանաւոր. զոր օրինակ, Եթէ գոն արարածք, ապա գոյ և արարիչ նոցա. իսկ արդ գոն արարածք, ապա գոյ և արարիչ ։

Ի կցորդական բանի՝ մասն որ զպայմանն յայտնէ՝ Նախադաս կոչի, և որ զհետեւանն պայմանին յայտնէ՝ Հետեւորդ ։

Առ ուղղութիւն սորա պարտ է զի հետեւորդն յառաջ գայցէ ’ի նախադասէն, որպիսի է վերագրեալ օրինակդ, և սոքին, Եթէ արեգակն ’ի մերում կիսագնդի է՝ տիւ է. իսկ

արդ արեգակն է 'ի միջումն կիսագնդի · ու-րեմն է տիւ ։ Եթէ երկինք ոչ էին բոլոր , մո-լորակքն ոչ շարժէին 'ի վեր և 'ի վայր · իսկ արդ շարժին մոլորակք 'ի վեր և 'ի վայր · ա-պա բոլորաձեւ են երկինք ։

Իսկ եթէ հետեւորդն ոչ յառաջ գայցէ 'ի նախադասութենէն՝ լինի թիւր , որպիսի է այս · Եթէ գոյ 'ի ցամաքի առիւծ , գոյ և 'ի ծո-վու · իսկ արդ գոյ 'ի ցամաքի , ապա գոյ և 'ի ծովու ։

Հետեւորդն յառաջ գայ 'ի նախադասութենէն՝ եթէ պարունակեալ իցէ 'ի նմա · ապա թէ ոչ՝ լինի թիւր · որպէս առասնի յօրինակիդ՝ և յայսմ ևս · Որ կորովի է մարմնով · կարօղ է և մտօք · իսկ դա կորովի է մարմնով , ապա է կորովամիտ ։ Թիւրութիւնն յայսմ է , զի հետեւորդն՝ որ է լինելն կորովամիտ , ոչ պա-րունակի 'ի նախադասութեան , որ է լինելն կորովի մարմնով , զի յառաջ գայցէ 'ի նմանէ ։

Շաղկապական , ըստ հնոց Բաղհիւսական ։

Շաղկապական ասի հաւաքաբանութիւն , որոյ մեծագոյնն է բան շաղկապական և ժխտա-կան · զոր օրինակ , Ոչ ոք կարէ լինել հի-ւանդ և առողջ 'ի միում կէտի · իսկ սա յայս-նիշ ժամու էր հիւանդ · ապա ոչ էր յայն-ժամ առողջ ։ Ոչինչ աղբիւր կարէ բղխել 'ի նոյն ակնանէ դառն և քաղցր 'ի միում ժա-մանակի · իսկ աղբիւրն այն յերեկն և յե-

ռանց. բղխէր զջուր քաղցր · այլ ոչ բըղխէր զդառն ։

Ու ճշմարտութիւն սորա հարկ է երկոցուն բանիցն անմիաբանական լինել և զմիմեանս խափանել. իբր զի 'ի կալ միոյն՝ մի կացցէ միւսն. զոր օրինակ, Մինչ ջուր 'ի միում ժամանակի կարէ լինել ջերմ և ցուրտ. իսկ ջուրս այս այժմ է ցուրտ, ապա ոչ է ջերմ. կամ է ջերմ, ապա ոչ է ցուրտ ։

Յայսցանէ յայտ է, զի 'ի հաստատիլ միոյ մասին, ուղղութեամբ հետևի ժխտումն միւսոյն. և լինի թիւր, եթէ 'ի ժխտելոյ միոյ մասին զհետ բերցի հաստատութիւն միւսոյն. զոր օրինակ. Ջուրս այս այժմ ոչ է ցուրտ, ապա է ջերմ. կամ ոչ է ջերմ, ապա է ցուրտ. քանզի կարէ լինել գաղջ. զի յոչ կալ միոյն՝ ոչ է հարկ դնիլ միւսոյն ։ Ընդդէմ երևանէ այս. Ոչ ոք կարէ լինել 'ի նմին ժամանակի մեռեալ և կենդանի. այս անուն ոք յայս նիշ աւուր կենդանի էր. ապա ոչ էր մեռեալ ։

Այսպիսի հաւաքաբանութիւնք ուղիղ հետևեցուցանեն, զի են անմէջ ներհակաւնք. բայց եթէ ունիցին մէջ՝ սխալեն, որպիսի է և այս. Մինչ իր 'ի նոյն վայրկենի կարէ լինել սպիտակ կամ սեաւ. իսկ թուղթս այս ոչ է սպիտակ, ապա է սեաւ. կամ ոչ է սեաւ, ապա է սպիտակ ։ Սակայն ուղիղ կանոն հաւաքաբանութեանն այն է, զի միշտ ճշմարտեսցէ ։

Անջատական, ըստ հնոց Տրոհական կամ Զատական ։

Անջատական հաւաքաբանութիւնն է, որոյ մեծագոյնն է բան անջատական, զոր օրինակ, Ամենայն կենդանի կամ բանական է կամ անբան. իսկ կապիկն չէ բանական, ապա է անբան. կամ կապիկն է անբան, ապա ոչ է բանական ։ Գիսաւորք կամ յինքեանց ունին զլոյս, կամ փոխառու են յարեգակնէ. իսկ ոչ առնուն յարեգակնէ, ապա յինքեանց ունին. կամ յինքեանց ունին, ապա ոչ առնուն յարեգակնէ ։

Բազումք յանջատականաց լինին շաղկապական փոխելով զմեծագոյնն. Ոչ և մի ինչ կենդանի կարէ լինել միանգամայն բանական և անբան. այլ կապիկն ոչ է բանական. ապա է անբան ։

Առ ուղղութիւն սորա հարկ է զի մասունք անջատեալք արտաքոյ իցեն միմեանց, և չունիցին մէջ. ապա թէ ոչ՝ լինին թիւր. զոր օրինակ, Այր բարի և ճշմարտասէր զամենայն ճշմարտութիւնս զոր գիտէ՝ կամ խօսել պարտի կամ լռել. իսկ ոչ պարտաւորի խօսիլ, ապա պարտի լռել. կամ ոչ պարտաւորի լռել, ապա պարտի խօսիլ ։ Զի գտանի ինչ միջին, այս ինքն է՝ ոչ խօսիլ զամենայն, և ոչ լռել բոլորովին. այլ զոմանս խօսիլ, և զոմանց լռել խոհեմութեամբ ըստ տանելոյ լսելեաց ։

Ամենայն շարժումն կամ ուղիղ է կամ խոտորնակ. իսկ շարժումն աղօրւոյ ոչ է ուղիղ, ապա է խոտորնակ. կամ ոչ է խոտորնակ, ապա է ուղիղ։ Թերեւս մարթ է ասել երկոցունց եւս, զի որպէս երեւի՝ ոչ ուղիղ է տիրապէս եւ ոչ խոտորնակ, այլ խառն յերկոցունց շարժմանց շրջապատոյտ։

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Հիմնական կանոնք ուղղութեան պարզ հաւաքաբանութեանց։

Ամենայն պարզ հաւաքաբանութիւն կազմի յընդհանուր բանէ, որով հաստատի կամ ժխտի թէ այն ինչ մակդիր այս ինչ դասու իցէ յարմար կամ անյարմար. եւ այս կոչի Մեծագոյն։ Երկրորդ՝ ի մասնաւոր կամ յեզական բանէ, որով հաստատի կամ ժխտի թէ ի նմին դասու իցէ իրքն զորմէ են բանքն, կամ չիցէ. եւ այս կոչի Փոքրագոյն։ Երրորդ՝ ի հետեւանաց, որով ցուցանի թէ ուրեմն մակդիրն յարմարի կամ չյարմարի իրին զորմէ խնդիրն է. եւ այս կոչի Հետեւութիւն։

Այս ի հաստատական հաւաքաբանութեան, հետեւութիւնն՝ որով հաստատի յարմարութիւն մակդրին ընդ իրին, ճշմարիտ լինի եթէ իրն ի նմին դասու իցէ, եւ մակդիրն յարմարիցի այնմ դասու. վասն այսորիկ ճշմարիտ է՝ թէ Օտարոտիկէն է անդամանդ,

զի թանձրացիկ է. և ամենայն որ թանձրա-ցիկ է, ծաւալական է. Ջուրն ունի ծանրու-թիւն, վասն զի է մարմին. և ամենայն որ մարմին է՝ հարկ է զի և ծանր իցէ. ..

Ի միտական հաւաքաբանութեան ճշմա-րիտ լինի հետևութիւնն եթէ առաջին և-դեալ իրն չիցէ յայնմ դասու, որում միջա-նոյ պատշաճի մակդիրն: Ուստի ուղիղ հե-տևի՝ թէ Կապիկն չէ բանական, զի կապիկն ոչ վարի խորհրդածեալ կամօք. և ամենայն որ բանական է՝ հարկ է զի խորհրդածեալ կամօք վարեսցի: Յօտանկն ոչ է զգայուն, զի չունի շարժումն կամակարութ. և ամենայն որ զգայուն է՝ կարող է շարժիլ կամակար:

Կամ թէ իրն զորմէ բանքն են՝ յայնմանէ դասու իցէ, որում չպատկանիցի մակդիրն. վասն որոյ ուղիղ է հետևութիւնս, թէ Կա-պիկն ոչ ունի զազատ կամս, վասն զի վարի հարկաւ ըստ ազդեցութեան բնութեան. և ամենայն որ վարի հարկաւ բնութեան՝ ոչ ունի զազատ կամս: Յօտանկն ոչ զգայ. զի է տունկ. և ամենայն որ տունկ է՝ ոչ ու-նի զգալ:

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Կանոնք խառն հաւաքաբանութեան:

Նոյն կանոնք են խառն հաւաքաբանու-թեան առ՚ի որոշել զճշմարիտն ՚ի սուտ, որ

ինչ ստանդեցան վասն պարզ համառօտու-թեան, զի և առաջ ընդ օրինօք պարզակ-ցըն են :

Յամենայն խառն համաքարաբանութիւնս գոյ բան ընդհանուր յայտնի կամ ըսեւերայն. և ճշմարտութիւն և սուտութիւն նոցա յա-ռաջ գայ ’ի ճշմարտութենէ և ’ի սուտութե-նէ ընդհանուր բանի :

Ի շաղկապականն և յանձնառականն համա-քարաբանութիւնս ընդհանուր բանքն են մե-ծաւորքն. զոր օրինակ, Ոչ որ կարէ լինել ստացող և հիւանդ ’ի միում կետի : Ամենայն կենդանի կամ բանական է կամ անբան :

Ի կցորդականն՝ ընդհանուր բան համա-րի մեծաւորն յորում պայմանն պարունակի, որպիսի է այս . Եթէ գոն արարածք, գոյ և նոցա արարիչ. զի ցուցանէ սահել, թէ ա-մենայն գործ հարկաւ ունի զպատճառ. որ է ճշմարիտ : Նաև որոց թիւրութիւնն լինի մանաւանդ ’ի մեծաւորն. զոր օրինակ. Որ ինչ կենդանի գոյ ’ի ցամաքի, գոյ և ’ի ծո-վու. իսկ գոյ առիւծ ’ի ցամաքի, ապա ու-րեմն գոյ և ’ի ծովու. և սակայն չէ հարկ այդպէս լինել :

Ապա որպէս տեսցուք, ուղղութիւն կամ թիւրութիւն համաքարաբանութեանց սովո-րաբար յառաջ գայ ’ի մեծաւորնէն, այսին-քըն է՝ յընդհանուր բանէն : Քանզի ընդհա-նուր գաղափարք և ծանօթութիւնքեն գու-

մարութիւնք յօդեալք 'ի մէնջ . մասնաւոր գաղափարօք հանգամանացն զորս 'ի բազում իրս հասարակ տեսանեմք ։

Նոյն եթէ յընդհանուր գաղափարի դասու իրիք ոչ ամփոփիցեմք զամենայն հանգամանս մասնաւորաց որք են 'ի նմին դասու ; կամ զոմանց և եթ զյատուկսն ժողովիցեմք , և ապա զամենայն դասն այնպիսի գոլ վարկանիցիմք , անկանիմք 'ի սխալանս ։ Իբր որպէս ցուցաւ , լինի սխալումն այս 'ի մեծագոյնն՝ այսինքն յընդհանուր բանն , յարում բովանդակի հետևութիւն , և ոչ 'ի փոքրագոյնն՝ որ միայն յայտնի կացուցանէ զդասս ենթակայի բանին . ապա զմեծագոյնն քաջ քննել պարտ է զի մի վրիպեսցուք ։

Իբր թէպէտ այս կանոնք բաւական են 'ի ճանաչել զուղղութիւն և զթիւրութիւն ամենայն հաւաքաբանութեան թէ՛ հաստատական իցեն և թէ ժխտական . սակայն տրամաբանք աւանդեալ ունին և զայլ հասարակ կանոնս ինչ , որոց ոմանք պիտանի են և վերածին 'ի հիմնական կանոնս զոր եդաք , և ոմանք երևին աւելորդ . սակայն մեք զամենեսին նշանակեսցուք աստանօր առ ծանօթութիւն խնդրողին ։

ԳԼՈՒԽ Գ.

Հասարակ կանոնք հաւաքաբանութեան:

ԿԱՆՈՆ Ա.

Օրէնս հաւաքաբանութեան 'ի նոյն միտս պարտ է առնուլ յիւրաքանչիւր առաջարկութիւնս:

Բացատրութիւն:

Ամենայն հաւաքաբանութիւն կազմի յերից գաղափարաց կամ ծանօթութեանց, որոց նշանակք են բառք. և սոքա կոչին մեծ ծայր, փոքր ծայր, և միջնորդ. զոր օրինակ, Ամենայն մարդ է կենդանի. Սոկրատէս է մարդ. ապա Սոկրատէս է կենդանի:

Բայց եթէ իմաստից ուշ դիցուք, երկու գաղափարք միայն են, մարդ և կենդանի. զի Սոկրատէս պարունակեալ գտանի 'ի մարդն: Այս ճշդիւ խօսելով 'ի մեծ ծայրէ և 'ի միջնորդէ կազմի հաւաքաբանութիւնն. զի փոքր ծայրն լռելեայն պարունակեալ կայ 'ի միջնորդն:

Սակայն ըստ կարգին հայեցեալ երեք գաղափարք կամ ծանօթութիւնք են 'ի հաւաքաբանութեան. մեծ ծայր, փոքր ծայր, և միջնորդ. եթէ մի յերից աստի յայլ միտս առցի 'ի միում առաջարկութեան, և յայլ միտս 'ի միւսումն, յայնժամ լինին չորք գաղա-

փարք։ Իսկ զօրութիւն հաւաքաբանութեան յայտ կայանայ, զի ցուցցէ զյարմարութիւն և զանյարմարութիւն երկոցունց ծայրից ընդ միմեանս 'ի համեմատութենէ նոցա ընդ միջնորդին։ Եւ եթէ մի ինչ գաղափար, այսինքն բառ յայտարար նմին, երկդիմի նշանակութեանք վարեսցի, և ոչ դիցի 'ի նոյն միում յերկոսին առաջարկութիւնս, լինին յայնժամ չորք գաղափարք, և բովանդակ զօրութիւն հաւաքաբանութեանն տկարանայ, և յառաջ բերէ հետևութիւն թիւր։ Եւ այս երկդիմի նշանակութիւն առաւելապէս պատահէ 'ի միջնորդն, որ դնի յերկոսին առաջարկութիւնս։

ԿԱՆՈՆ Բ.

Միջնորդ գաղափարն, այսինքն յայտարար բառն միջնորդ գաղափարին, պարտ է ընդհանրապէս նշանակել գէթ 'ի միում առաջարկութեան։

Բացատրութիւն։

Միջնորդ գաղափարն պարունակէ յինքեան զենթակայն հետևութեան. ապա եթէ յերկոսին առաջարկութիւնս մասնաւորապէս առցի, ոչ պարունակէ զհետևութիւնն. զի մասնաւորն ոչ կարէ պարունակել զմասնաւորն, այլ ընդհանուրն է որ պարունակէ զմասնաւորն։

Եւ որոշմանս 'ի հաւաքաբանութեան երեք գաղափարք պարտին գտանիլ, և ոչ աւելի. բայց զայս իմանալ պարտ է ըստ կերպական իմաստիցն և ոչ ըստ նիւթական բառիցն. զի ըստ բառիցն իւրաքանչիւր նոքա թէպէտ աւելի կարեն լինել, որպէս 'ի բարդ և 'ի խառն առաջարկութիւն է տեսանել, բայց ըստ իմաստիցն բազում բառք առեալ դնին իբրև մի գաղափար։

Այլ եթէ միջնորդ գաղափարն առեալ լիցի մասնաւորապէս կամ զատաբար, յայնժամ 'ի մեծագոյն առաջարկութեան առեալ լինի 'ի նշանակել զմի մասն, և 'ի փոքրագունին 'ի ցուցանել զմիւս մասն. որով միջնորդ գաղափարն անջատի յերկուս մասունս, և մուծանին 'ի հաւաքաբանութեան չորք գաղափարք, և լինի թիւր։

Իսկ եթէ 'ի հաւաքաբանութեան ինչ 'ի դնիլ միջնորդին մասնաւորապէս՝ տակաւին ուղիղ լինիցի հետևութիւնն, այն է ըստ պատահման, որպիսի է այս. Ամենայն կենդանի է գոյացութիւն. ոմն կենդանի է գոյացութիւն. ապա ոմն կենդանի է մարդ։ Ի սմին Գոյացութիւնն որ դնի իբրև միջնորդ, վասն զի ոչ նշանակէ ընդհանրապէս որպէս ցուցանի յերրորդ կանոնի, վասն որոյ ոչ յամենայն՝ հաւաքաբանութիւնս ճշմարտի, զի չէ ըստ ուղիղ կանոնաց. զի ձև ինչ՝ որ 'ի միում հաւաքաբանութեան ուղիղ հետևե-

ցուցանէ՝ և ՚ի միուսում Թիւր, չէ կանոնաւոր. որպէս և այս հաւաքաբանութիւն. որ ոչ պահէ զկանոնս, է Թիւր. Ամենայն մարդ է կենդանի. ոմն ձի է կենդանի. ապա ոմն ձի է մարդ. Ի սմին կենդանին որ դնի երկու միջնորդ, ՚ի մեծագոյն առաջարկութեանն ըշանակէ զտեսակ ինչ կենդանեաց՝ որպիսի է մարդն. և ՚ի փոքրագոյնն զայլ ինչ տեսակ կենդանեաց՝ որպիսի է ձին. որով բաժանի նոյն և մի գաղափար յերկուս, և լինին չորք գաղափարք. վասն որոյ և հաւաքաբանութիւնն լինի Թիւր:

Բայց ոչ է այսպէս, յորժամ միջնորդ գաղափարն իցէ եզական, զի ոչ անջատի յերկուս, այլ միշտ զնոյն և զմի նշանակէ, վասն որոյ և հետևութիւնն է ուղիղ. զոր օրինակ, Մելքիսեդեկ էր Թագաւոր Սաղիմայ, Մելքիսեդեկ էր քահանայ Աստուծոյ. ապա ոմն քահանայ Աստուծոյ՝ էր Թագաւոր Սաղիմայ:

ԿԱՆՈՆ Գ.

Ոչ ինչ գաղափար ընդհանրապէս առնուլ պարտ է ՚ի հետևութեան, եթէ յառաջարկութեան չիցէ առեալ ընդհանրապէս:

Բացատրութիւն:

Վասն զի գաղափար ինչ որ յառաջարկութեան մասնաւորապէս կամ զատաբար իցէ առեալ, եթէ ընդհանրապէս առցի ՚ի հե-

տեւութեան, հաւաքաբանութիւն լինի թիւր. օրինակ իմն 'ի լինելոյն միոյ մարդոյ ծառայ կամ տէր, դնես բերցի ամենայն մարդոյ լինել ծառայ կամ տէր: Ըստ այսմ է եւ այս հաւաքաբանութիւն. Ամենայն ձի է կենդանի. ամենայն ձի է գոյացութիւն. ապա ամենայն գոյացութիւն է կենդանի: Քանզի գոյացութիւնն յառաջարկութեան անդ դնի զատաքար, այսինքն մասնաւոր նշանակութբ, զի է մակդիր հաստատական բանի. իսկ ոչինչ մակդիր հաստատական բանի նշանակէ ընդհանրապէս՝ այլ զատաքար միայն. զի ցուցանէ ասել՝ թէ ձին է ոմն 'ի գոյացութեանց, եւ ոչ եթէ ձին է ամենայն գոյացութիւն. սակայն 'ի հետեւութեան յորում է ենթակայ, դնի ընդհանրապէս. եւ այսու օրինակաւ մի գաղափարն անջատի յերկուս. զի գոյացութիւնն յառաջարկութեան անդ նշանակէ զոմըն 'ի գոյացութեանց, եւ 'ի հետեւութեան դնի նշանակել զամենայն գոյացութիւն, որով լինին չորք գաղափարք 'ի հաւաքաբանութեան. բայց պարտ է զձայնս զորս վարեմք փոխանակ իրաց՝ 'ի նոյն միտս առնուլ ըստ ուղիղ կանոնի, զի մի չորք գաղափարք լինիցին:

ԿԱՆՈՆ Դ.

Հետեւութիւնն սովորաբար զհետ երթայ խոնարհագոյն մասին հաւաքաբանութեան.

իբր զի եթէ մի յառաջադրութեանց իցէ մասնաւոր, հետեւութիւնն լինի մասնաւոր. եւ եթէ մի յառաջադրութեանց իցէ ժխտողական, հետեւութիւնն լինի ժխտողական ։

Ապացուցումն ։

Վասն զի ՚ի լինել միոյ յառաջադրութեանցն մասնաւոր՝ եթէ ընդհանուր հետեւութիւն ՚ի վերայ բերցի, լինի թիւր. զի ՚ի լինել միոյ մարդոյ արդար կամ իմաստուն, ոչ ուղիղ հետեւի, թէ ուրեմն ամենայն մարդ է արդար կամ իմաստուն ։ Նայց ընդհանուր առաջադրութենէ կարէ յառաջ գալ հետեւութիւն մասնաւոր. զի եթէ ամենայն մարդ է արդար կամ իմաստուն, ճշմարիտ է՝ թէ ոմն եւ ոմն մարդ է արդար կամ իմաստուն ։

Այնպէս եթէ մի յառաջադրութեանցն իցէ ժխտողական նկատմամբ հետեւութեանն, լինի թիւր եթէ ՚ի վերայ բերցի հետեւութիւն հաստատական ։

Նոյնպէս. երբեմն տեսանի զի ժխտական առաջադրութիւն կարէ ունիլ հաստատական հետեւութիւն, եւ հաւաքաբանութիւնն է ուղիղ. զոր օրինակ, Այն ինչ որ ոչ է բարի եւ ոչ միջակային, ապա է չար ։ Իսկ թէ, Կէտ ինչ որ ոչ է ՚ի սկիզբն գծին, եւ ոչ ՚ի վերջն. ուրեմն ՚ի միջոցի անդ երկուցն է ։

Այսպէս իմն է, թէ այսպիսի խառն բանք

մեծագոյն առաջարկութեանն ունիցին զօրու-թիւն, և ոչ են ճիշդ հաւաքաբանութիւնք. որպէս եթէ ասէր. Այն ինչ որ ոչ է բա-րի և ոչ միջակային՝ է չար. իսկ այս գործ է այնպիսի. ապա այս գործ է չար: Կէտ ինչ որ չէ 'ի սկիզբն գծին և ոչ 'ի վերջն, է 'ի միջի անդ երկուցն. իսկ այս կէտ է այնպիսի. ապա այս կէտ է 'ի միջոցի երկուցն.

ԿԱՆՈՆ Ե.

Ի սոսկ մասնաւորաց ոչ ինչ հետեւի:

Բացայայտութիւն:

Մասնաւոր առաջարկութիւնք ցուցանեն զմասնաւոր իրս որք նշանակին յառաջարկու-թիւնսն յայնոսիկ. և զայլ ինչ որ չէ նշանա-կեալ 'ի նոսա, ոչ կարեն յայտ առնել: Եւ քանզի յայսպիսի հաւաքաբանութեան մե-ծագոյնն գոլով մասնաւոր՝ չկարէ պարունա-կել յինքեան զհետեւութիւնն, որպէս օրէնք հաւաքաբանութեանն պահանջեն, վասն ո-րոյ ոչ կարէ յառաջ բերել զհետեւութիւնն, զոր օրինակ, Ոմն կենդանի է ձի. ոմն մարդ է կենդանի. ապա ոմն մարդ է ձի:

Վասն որոյ կենդանին որ է միջնորդ՝ ոչ նշանակէ զնոյն և զմի բաղադրաբար. զի 'ի մի-ում առաջարկութեան դնի փոխանակ ձիոյ և 'ի միւսում փոխանակ մարդոյ, որով և բա-

ժամի յերկուս . և այսու օրինակաւ չորք գուզափարք լինին 'ի հաւաքաբանութեան՝ ընդդէմ օրինաց հաւաքաբանութեան ։

ԿԱՆՈՆ Զ.

Ի սոսկ միատողականաց ոչ լինի հաւաքաբանութիւն ։

Բացատրութիւն ։

Վասն զի 'ի միատողական հաւաքաբանութիւնս երկու ծայրք հակառակին ընդ միջնորդին յառաջարկութեան անդ . վասն որոյ և առաջարկութիւնքն ոչ կարեն պարունակել յինքեանս զհետևութիւնն , ոչ զհաստատականն և ոչ զմիատողականն . յայսմանէ և հետևութիւնն լինի թիւր . զոր օրինակ , Ոչ որ քար է կենդանի . ոչ որ մարդ է քար . ոչ որ մարդ է կենդանի ։

Ասիցէ ոք . այս հաւաքաբանութիւն է միատողական , բայց ուղիղ հետևեցուցանէ . Որ ոչ ունի սկիզբն՝ ոչ ունի և զվախճան ։ Աստուած ոչ ունի սկիզբն . ապա ոչ ունի և զվախճան ։

Յայտ իսկ է , զի այսպիսի հաւաքաբանութիւնք չեն միատողական՝ այլ հաստատական ; Թէպէտ բառ բայիցն երևիցին միատողական . զի ցուցանէ ասել , Նա որ է ոչ ունող սկզբան՝ է և ոչ ունող վախճանի . այս

ինքն՝ նա որ անսկիզբն է, անվախճան եւս է. իսկ Աստուած է անսկիզբն, այլ եւ անվախճան :

Զայս եւս գիտել արժան է, զի ըստ ասելոյ որդի իմաստասիրաց, չէք ստորադասել ստորոգական դատումն . զի ամենայն բանք որք ըստ ձայնիւն են ժխտողական, 'ի միտս են հաստատական . զոր օրինակ, քարն ոչ է կենդանի . է ասել՝ քարն է ոչ կենդանի, այսինքն քարն է իր իմն արտաքոյ կենդանեաց : Արբեցութիւնն ոչ է բարի . այսինքն է՝ օտար 'ի բարւոյ, է անբարի . վասն որոյ եւ 'ի ստորոգական առաջարկութեանց կարէ կազմիլ հաւաքաբանութիւն ուղիղ :

ԳԻՐՔ Բ.

Արուեստն բանական՝ որ այն ինչն է Տրամաբանութիւնն, որպէս աւանդէ վկայեալս 'ի գիրս Ճշմարտութեան և ուղղադատութեան, նոյնպէս և զօրէնս յայտնաբանելոյ այլոց 'ի ձեռն ապացուցից զգտանել Ճշմարտութիւնն :

Բայց քանզի յոլովակի պատահի մեզ սխալել յայսոսիկ, ամին իրի հոգացուք նշանակել 'ի նախընթաց պրակի զպատճառսն յորոց յառաջ գան սխալմունք մեր :

Ասայ աստանօր առաջի առնել զաղերս թիւր և մոլար ապացուցից, որք են Ծեքարանութիւն և Խմաստակութիւն. և այս ոչ առ 'ի զառանցուցանել զայլս ծեքարանութեամբ, կամ պատրել խմաստակութեամբ, այլ գիտելով զայնոսիկ՝ զգուշ կալ և չանկանիլ 'ի զառանցանս և 'ի պատրանս :

ԳԼՈՒԽ Ա.

Ծեքարանութիւն :

Ծեքարանութիւն ասի մոլար ապացոյցն. և այս մոլորութիւն կրկնակի պատահէ, մի՝ 'ի նիւթն, և միւս 'ի տեսակն: Նախ՝ սխալէ 'ի նիւթն, յորժամ խարդախութեամբ կամ վրիպակաւ մի յառաջարկութեանց հա-

ւաքաբանութեանն իցէ ուղղ կամ թիւր. և այս մանաւանդ պատահէ 'ի մեծագոյնս, այսու-ինքն յընդհանուր բանն :

Երկրորդ՝ սխալէ 'ի տեսակն, յորժամ առնուի 'ի հաւաքաբանութեան աւելի քան զերիս մասունս կամ գաղափարս բաղդատե-լիս. և այս առաւելութիւն պատահէ 'ի միջ-նորդն :

Նոյն երկուց այսոցիկ պարտիմք աչալըր-ջութեամբ մտադիր լինել : Նախ ընդհանուր բանին, կամ որ նոյն է՝ մեծագունին, զի մի ընկնիցի ուղղ կամ թիւր. և սխալս այս է բառ նիւթոյն, որպիսի է այս հաւաքաբանութիւն. Որ ունի բուն և ոստ, է տունկ. բուսոյն ու-նի բուն և ոստ. ապա բուսոյն է տունկ :

Սուտ է ընդհանուր բանն. զի ոչ ամե-նայն որոց են բուն և ոստք՝ անկանի ընդ սե-ռիւ տնկոց, այլ պարտ է ևս զի սնանիցի ար-մատով 'ի հողոյ, և տերևս ունիցի : Ըստ այ-սմ են և այլքն :

Որ ինչ ոչ է կորուսեալ զք՝ ունի. Սոկ-րատէս ոչ է կորուսեալ եղջիւրս. ապա Սոկ-րատէս ունի եղջիւրս : Սուտ է մեծագոյնն. զի ոչ եթէ զոր ինչ ոչ է կորուսեալ զք՝ ու-նի, այլ զայն և եթ զոր ունէր յառաջագոյն :

Երկրորդ՝ զգուշանալ, զի մի վրիպակաւ կամ խարդախութեամբ սպրդեսցի 'ի հա-ւաքաբանութեան աւելի քան զերիս մա-սունս բաղդատեալս, որ առհասարակ պատա-

հի 'ի միջնորդն, յորժամ յերիսս միտս առ-նեալ լինիցի. և այս է սխալումն լրս ան-սակին. զոր օրինակ,

Ա. Մարդն է կենդանի. ձին է կենդանի. ապա մարդն է ձի։

Բ. Որք միշտ Թարթափին 'ի գիրս՝ են գիտուն. գրավաճառք միշտ Թարթափին 'ի գիրս. ապա գրավաճառք են գիտուն։

Գ. Որ ունի զակն՝ տեսանէ. եփրատ գետ ունի զակն. ապա եփրատ գետ տեսանէ։

Յառաջնումն օրինակի կենդանին որ է միջ-նորդ, 'ի միում առաջարկութեան դնի փո-խանակ մարդոյ, և 'ի միւսումն փոխանակ ձիոյ. որով և անջատի յերկուս, և հաւաքաբա-նութիւնն լինի քառանդամեայ։

Յերկրորդումն, Թարթափողն 'ի Գիրս՝ որ է միջնորդ, յերկուս միտս հարկանի. զի են որք վասն ուսման Թարթափին 'ի գիրս, որպէս ուսումնականք, և են որք վասն առևտրու-թեան և շահու որպէս գրավաճառք. որով և քառանդամեայ լինի հաւաքաբանութիւն։

Յերրորդումն, ակն որ է միջնորդ՝ գոլով հոմ, 'ի միում առաջարկութեան նշանակէ զակն տեսողական, և 'ի միւսումն զակն ջրոյ. որով և հաւաքաբանութիւնն լինի քա-ռանդամեայ, ընդդէմ օրինաց հաւաքաբա-նութեան։

Զայսպիսի հաւաքաբանութեանց զվրի-պակս մարթ է ճանաչել ևս 'ի քննութենէ

ընդհանուր բանին, որ կայ 'ի նմա ներգործութեամբ կամ զօրութեամբ ։

Յառաջնումն սուտ է ընդհանուր բանն որ զօրութեամբ իմանի. զի ոչ է իսկապէս հաւաքաբանութիւն յերից մասանց կազմեալ, այլ եղծուած. իսկ ընդհանուր բանն է այս, ամենայն կենդանի է նոյն. որով կազմի հաւաքաբանութիւն այսպէս. Ամենայն կենդանի է նոյն. մարդ և ձի են կենդանի. ապա մարդ և ձի է նոյն ։

Յերկրորդումն սուտ է ընդհանուր բանն որ ասէ, ամենայն թարթափօղք 'ի գիրս են գիտուն. զի չկարէ գիտուն լինել որ միայն յածեցուցանէ 'ի ձեռս գրիրս ; այլ որ մտաւորութեամբ ընթեռնուցու ։

Յերրորդումն՝ ճշմարիտ է ընդհանուր բանն, եթէ առեալ իցէ բան և յատուկ նշանակութեամբ փոխանակ աչաց, և սուտ եթէ առեալ իցէ փոխաբերաբար փոխանակ աղբեր ջրոյ, որ իբրև ակն է երկրի ։ Բայայց է. և այս. Պետրոս ոչ է գաղղիացի. Պետրոս ոչ է իտալացի. ապա Պետրոս է հելլէն ։

Եղծուած է և այս, որոյ ընդհանուր բանն է սուտ, որ լռելեայն իմանի, և է այս. Ամենայն որ չէ գաղղիացի, և ոչ իտալացի, է հելլէն. Պետրոս ոչ է գաղղիացի, և ոչ իտալացի. ապա Պետրոս է հելլէն ։

Այս ուրեմն է թէ ստութիւն թիւր ա-

պատգամացից ձանձրալի քննութեամբ ընդհանուր բանին. բայց սակայն ոչ սակաւ նպաստամատոյց լինին և կանոնք որք աւանդեցան առ ընտրութիւն ստոյգ կամ մօտոյ հաւանականութեանց։

ԳԼՈՒԽ Բ.

Իմաստակութիւն։

Իմաստակութիւնդ անուն լայնագոյնս առեալ՝ նշանակէ զամենայն թիւր պատճառս․ որ եթէ առանց միտադրութեան և վրիպակաւ իցէ եղեալ՝ մասնաւոր անուամբ կոչի Օ՝երաբանութիւն. իսկ եթէ դիտմամբ և խարդախութեամբ իցէ կազմեալ՝ առ ՚ի խաբել և շառագունել զայլս, յայնժամ յատկապէս անուանի Իմաստակութիւն։

Այս իմաստակութիւնն՝ որ և ասի պատառողական առարկութիւն, խաբէական հաւաքաբանութիւն, մոլոր ապացոյց, է բան կազմեալ ՚ի ներհակաշար առաջարկութեանց, որ ըստ երևութին կարծի ճշմարիտ և ուղիղ. բայց իրօք է սուտ և թիւր, պատրաստեալ խորամանկութեամբ ՚ի պատրել զայլս։

Երկքին են ազգ իմաստակութեանց. մի՛ բառից, և միւս՝ իմաստից, զորոց տեսանիցուք ինչ առ ՚ի զգուշութիւն։

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Իմաստակութիւն բառից։

Իմաստակութիւն բառից է՝ ՚ի թիւրս մտօք վարել զձայնս առ ՚ի պատրել զայլս։ Նա է բազմապատիկ։

ԻՄԱՍՏԱԳՈՒԹԻՒՆ Ա.

Երկդիմութիւն բառից։

Երկդիմութիւն բառից այն է, զի կամ նշանակութիւն բառին է տարտամ և անստոյգ, և կամ յերկուս միտս հարկանի։ Այսպիսի էր այն դաշն՝ զոր եդին Հռոմայեցիք ընդ Անտիոքոս արքայ. զի ՚ի նեղ արկեալ զԱնտիոքոս՝ խնդրեցին ՚ի նմանէ զկէս նաւուցն զի հաշտեսցին. և թագաւորն յանձն էառ իմանալով զկէս համարոյն. և իբրև դաշն հաստատեցաւ, պահանջեցին ՚ի նմանէ զկէսն իւրաքանչիւր նաւացն, զի զամենայն նաւսն միջակտուր արարեալ կորուսցեն։

ԻՄԱՍՏԱԿՈՒԹԻՒՆ Բ.

Համանունութիւն բառից։

Համանունութիւն բառից, որ յիմաստասիրաց թիւր երկդիմութիւն անուանի, է բառն մի և նշանակեալքն նորա զանազանք. զոր օրինակ, Կոյս յերկինս համաստեղութիւն

ինչ առիւծ. իսկ առիւծն է մանչական. ապա գոյ յերկինս համաստեղութի ինչ մանչական:

Սուտութիւն հաւաքաբանութեանս պարուրեալ կայ 'ի հոմանուն ձայնն առիւծ. զի 'ի միում առաջարկութեան նշանակէ զհամաստեղութիւն ինչ, իսկ 'ի միւսումն՝ զկենդանի ոմն 'ի դաշտ գազանաց. որով և լինի հաւաքաբանութիւնն չորեքմասնեայ: Բազում են և այլքն:

Մարդն է բանական. իսկ բանականն է տարբերութիւն. ապա մարդն է տարբերութիւն:

Ի սմին բանականն յերկուս բաժանի. զի 'ի միումն դնի փոխանակ իրական էակի, որպիսի է մարդ, և 'ի միւսումն դնի փոխանակ էակի բանի, որպիսի է տարբերութիւն. զի սեռ, տեսակ, տարբերութիւն և այլն, են մակամտածական ինչ զիրական էակէ:

Առ այս վերաբերին և այլքն:

Ամենայն անմարմին ոչ ունի մարմին. իսկ հոգին է անմարմին. ապա հոգին ոչ ունի մարմին:

Սուտութիւն ապացուցիս դարանեալ կայ յընդհանուր բանն, մանաւանդ 'ի բառն անմարմին. որ 'ի մեծագոյնն նշանակէ զայն ինչ որ չէ մարմին, և ոչ ունի զմարմին, որպիսի են հրեշտակք: Իսկ 'ի փոքրագոյնն ցուցանէ զայն որ չէ մարմին, բայց ունի զմարմին, որպիսի է հոգին մեր:

Անարգելին է՝ որ չէ արգելեալ. իսկ նախատելին է անարգել. ապա նախատելին ոչ է արգելեալ։ Ուր ահարգելն կրկին նշանակութեամբ եղեալ կայ, որով եղեալ է հաւաքականութիւնն չորեքմասնեայ։

ԻՄԱՍՏԱԿՈՒԹԻՒՆ Գ.

Զբաժանեալ միտսն միաւորել, և զմիաւորեալսն բաժանել. որ և կոչի Խաբէութիւն միաւորութեան և բաժանման։

Զբաժանեալն միաւորել։

Ամենայն կենդանի ոչ է մարդ. իսկ Սոկրատէս է կենդանի. ապա Սոկրատէս ոչ է մարդ։

Թիւրութիւն հետևութեանն պարուրեալ կայ 'ի մեծագոյնն. վասն զի այս բան ամենայն կենդանի ոչ է մարդ, 'ի բաժանեալ միտս նշանակէ ասել. ամենայն կենդանիք ոչ են մարդիկ, այլ ոմանք 'ի կենդանեաց են մարդիկ. և յայնժամ լինէր ճշմարիտ, և ոչ զհետ գայր ժխտողական հետևութիւն։

Բայց 'ի միաւորեալ միտս նշանակէ ասել, ոչ ոք կենդանի է մարդ, որ է սուտ. յորում պարունակի և այս սուտ հետևութիւն, թէ Սոկրատէս ոչ է մարդ։

Զմիաւորեալն բաժանել։

Ամենայն կենդանի կամ բանական է կամ

անդամն. այլ ամենայն կենդանիք ոչ են բանականն. ապա ամենայն կենդանիք են անդամն:

Ի մեծագոյնն՝ ամենայն կենդանի՝ 'ի միաւորեալ միտս նշանակէ զբանականն և զանբանն միանգամայն. իսկ 'ի փոքրագոյնն 'ի բաժանեալ միտս առեալ նշանակէ միայն զանբանն, վասն որոյ և հետևութիւնն լինի թիւր. զի կենդանին 'ի միում առաջարկութեան դնի ընդհանրապէս և 'ի միւսումն մասնաւորապէս, անջատի յերկուս, և ապացոյցն լինի չորեքմասնեայ՝ ընդդէմ կանոնաց:

Սոյն և աւետարանական բանն Յիսուսի՝ զոր ասէ յաղագս իւրոց աշակերտաց, թէ «կոյրք տեսանեն, խուլք լսեն, կաղք գնան», իմանի 'ի բաժանեալ միտս. իբր զի որ յառաջագոյն կոյր էին, կամ խուլ, կամ կաղ, այժմ բաժանեալ 'ի կուրութենէ իւրեանց՝ տեսանեն. ըստ նմին օրինակի և խուլք լսեն, և կաղք գնան:

Այլ ոչ է հնար իմանալ 'ի միաւորեալ միտս, որպէս այն թէ կոյրն կուրութեամբ տեսանիցէ: Ապա եթէ ասիցի. կոյրք ոչ տեսանեն, իմանալի է 'ի միաւորեալ միտս, որպէս թէ ցորչափ կոյր են՝ ոչ տեսանեն:

Ի բաժանեալ միտս վերաբերի և ասելն. «Աստուած արդարացուցանէ զամբարիշտս», «մաքսաւորք և պոռնիկք յառաջեսցեն քան զձեզ յարքայութիւն երկնից». այսինքն բաժանելով զամբարիշտս յուրեանց ամբարշ-

ռութեանց՝ արդարացուցանէ . մաքսաւորք և պոռնիկք զղջանալով և 'ի բաց կալով 'ի մեղաց իւրեանց յառաջեսցեն յարքայութիւնն ։ Ի միաւորեալ միտս՝ բառն արձակաբար և անփոփոխելի կայ 'ի բուն նշանակութեան իւրում . իսկ 'ի բաժանեալ միտս նշանակէ մասնաւորապէս և սեղմօրէն ։

ԻՄԱՍՏԱԿՈՒԹԻՒՆ Դ .

Ի հաւաքական մտաց անցանել 'ի զատական միտս , և 'ի զատական մտաց 'ի հաւաքականս ։

Ի հաւաքականն մտաց 'ի զատականն միտս ։

Զոր օրինակ այս տղայական իմաստակութիւն . Կենդանակերպք են երկոտասան . իսկ խոյ և ցուլ են կենդանակերպք . ապա խոյ և ցուլ են երկոտասան ։

Նոյնաւոր 'ի մեծագոյնն բառս կենդանակերպ առեալ լինի հաւաքապէս , իսկ 'ի փոքրագոյնն զատաբար ։

Ի զատականն մտաց 'ի հաւաքականս ։

Մարդն է մահկանացու . իսկ մարդն է կազմեալ 'ի հոգւոյ և 'ի մարմնոյ . ապա հոգի և մարմին մարդոյն է մահկանացու ։

Յաւելուած առաջարկութեան՝ մարդն առեալ լինի 'ի զատական միտս՝ փոխանակ

մարմնոյն միայն. իսկ յերկրորդումն՝ հաւաքականս, այսինքն ըստ հոգւոյն և ըստ մարմնոյն. վասն որոյ և հետևութիւնն է մոլար։ Բայց սակայն 'ի նոյն միտս առնուլ պարտ է զբանս 'ի հաւաքաբանութեան, զի մի՛ քառամասնեայ լինիցի։

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Իմաստակութիւն իմաստից։

Իմաստակութիւնք իմաստից կամ՝ իրաց յառաջ գան 'ի դնելոյ թիւր սկզբանց, կամ 'ի հանելոյ թիւր հետևութեանց. որոց գլխաւորքն են սոքին։

ԻՄԱՍՏԱԿՈՒԹԻՒՆ Ա.

Անգիտութիւն խնդրոյ։

Անգիտութիւն խնդրոյ այն է՝ յորժամ առաջիկայ խնդիրն յայլ կերպարան փոխի. և այս լինի մինչ զայլ ինչ խօսիմք, և զայլ ինչ հաստատեմք կամ ժխտեմք։ Եւ այս իմաստակութիւն բազում անգամ առեանի 'ի վիճաբանութիւնս. որպիսի էր երբեմն՝ զի ոմանք 'ի հարց զերիս գոյացութիւնս ասէին յԱստուած, զգոյացութիւնն փոխանակ անձին իմացեալ. և ոմանք մի գոյացութիւն, իմանալով զբացարձակ էութիւնն. և այսու օրինակաւ այր զընկեր իւր մոլորեալ կարծէին 'ի զուր։

Այնպէս և բառս բնութիւն, ամենայն ի-
մացեալ զլրացեալ բնաւթիւն այսինքն է են-
թակայութիւն, մի լինել պնդէին ՚ի Քրիս-
տոս. և այլք անգիտացեալ զմտաց նոցա,
կարծէին թէ իմանան նոքա այնու զէու-
թիւնն՝ այսինքն զանձինքն որ ըստ ինքեան և
անընդմիջաբար հոսէ զգործն. և առէին կըր-
կին, և հակառակէին տարապարտուց ընդ-
միմեանս։

Ընդդէմ այսմ պարտ է խնամով բացա-
յայտել զհանգամանս խնդրոյն, պարզել և որո-
շել զբառսն որոց տարատամ և երկդիմի է նշա-
նակութիւն՝ առ քաջ խելամտութիւն հա-
կառակորդին. զի մի՛ դուցէ թիւր և մոլար
համարելով զուղղութեամբ ասացեալսն, զա-
մենայն ջիգն թափեսցէ յունայն առ ՚ի հեր-
քել զընդդիմակին բան և հաստատել զիւրն։

Իսկ այս իմաստակութիւն է՛ զի ՚ի տգի-
տութենէ խնդրոյն լինի, և է զի յանգէտս
ձևանալոյ։ Որ ՚ի տգիտութենէ հակառա-
կի, մարթ է զհանգամանս և զիսկութիւն
խնդրոյն պարզ և մեկին առաջի դնելով դար-
ձուցանել զնա յետս։ Իսկ որ գիտութեամբ
զանգիտութիւն յանձին բերէ, դժուարին
է յոյժ ՚ի հաւանութիւն ածել. զի ոչ է ան-
գիտութիւնն կամ սխալումն ՚ի միտս, զոր
հնար իցէ ուղղել և խելամուտ առնել զօ-
րութեամբ փաստից. այլ թիւրութիւնն է
՚ի կամս՝ զոր միայն Աստուծոյ է նուաճել

փառամոլութիւնն, և գերել 'ի հաւանութիւն ճշմարտութեան :

ԻՄԱՍՏԱԿՈՒԹԻՒՆ Բ.

Սոսափ վարկածն փոխանակ ճշմարտի :

Սուտ վարկած առ՝ յորժամ ապացոյցք հաստատուն յայնմ իրաց որ ոչ է, և ստութեանց կարծիք թէ իցէ : Նոյնպիսի էին ամենայն գուշակութիւնք, որով 'ի պէսպէս հայեցուածոց աստեղաց գուշակէին ախտարամոլք զհանգամանս բարուց և բախտից և զանազան դիպուածոց մարդկան. որպէս թէ այն ամենայն յազդեցութենէ աստեղաց լինիցի :

Նոյնպէս և գիսաւորացն ընդ ժամանակս ժամանակս երևմունք, պատերազմի և սովոյ և սատակութեան և պէսպէս ձախորդուկի պատահարաց նշանակ լինել համբաւէին. և զբազումս՝ որք անկեղծութեամբ հաւատս ընծայէին բանից նոցա, սնոտի արհաւիրօք պակուցանէին :

Դիւրաւ ըմբռնիմք յայս իմաստակութիւն, յորժամ անփոյթ լինիմք 'ի քննել զիրսն. որպէս և ոմանք 'ի նախնեաց ճշմարիտ լինել կարծեցին զիրս փիւնիկեան հաւուն, և նաւակալ ձկան, և ապակեղէն երկնի. և ինքնաստեղծ բանիւք ջանահնար եղեն հաւատալի ցուցանել :

Բաց սոցուն ստարասի յառաջ քան զամս

բազդումն՝ մինչդեռ հրատարակեալ լինէր զու-մեմնէ պատանւոյ ունել զատամն ակնի, զմանկն յիմաստնոց ժամանակին պատուեալ կամէին հաւանեցուցանել և զայլս՝ առնելով. Հնար է նու Թուին կազմակերպել յատամն պատանւոյն, այնու օրինակաւ որով կազմակերպի 'ի մեծ-ատամն ոսկւոյն: Բայց բժիշկ մի ճարտար նշաւակեալ զպատրանսն՝ եցոյց ամէն յայտնի, Թէ ատամն այն՝ ոսկեղէն Թերթիւ պատեալ և արուեստիւ իմն մածեալ է 'ի լնտերսն, և ոչ եԹէ անդ գոյացեալ: Ուստի նախ պարտ է քաջ տուգել զգործն՝ Թէ իցէ այնպիսի որպէս կարծի, և ապա խօսիլ զպատճառէն:

Բայց գտանին բազումք՝ զի հրապուրեալք 'ի զուարճուԹիւն զարմանալեաց, Թէ և խելամուտ լինիցին ստուԹեան այնպիսի վարկածից, տակաւին ախորժեն հաւատալ. և ջանահնար լինին հայԹայԹել պատճառս ինչ զի և այլք հաւատասցեն. մինն սակս յարմակի 'ի վեր երևին այսպիսի հրաշանշան կեղծիք.

ԻՄԱՍՏԱԿՈՒԹԻՒՆ Գ.

Զեղծուած սկզբանց:

Զեղծումն սկզբան է հաստատել զապացոյցն 'ի սկիզբն ինչ, որ և ինքն կարօտ է ապացուցի: Այսպիսի էր այն ապացոյց, որով ճեմականք ջանային ցուցանել՝ Թէ եր-

կէտս է միջակէտ աշխարհի. սակէին, Այս է միջակէտ աշխարհի՝ յոր ամենայն ծանունք դիմեն. իսկ ամենայն ծանունք 'ի միջակէտ երկրիս դիմեալ են. ապա միջակէտ երկրիս՝ է միջակէտ աշխարհի: Ուր մեծագոյնն որ դնի առ 'ի ցուցանել զհետեւութիւնն, և ինքն կարօտ է ցուցման: Ամենայն ծովս ունի հաղորդութիւն ընդ Ովկիանոս երեւելի կամ գաղտնի շաւղօք. ապա և ծովն Կասպից գաղտնի շաւղօք սեաւ ծովու հաղորդի ընդ Ովկիանոս: Եւ ահա մեծագոյնն որ 'ի սմա, պէտս ունի ապացուցի. զի չերեւի ունել ստուգութիւն աներկեան:

ԻՄԱՍՏԱԿՈՒԹԻՒՆ Դ.

Երկնումն սկզբան:

Երկնումն սկզբան է, յորժամ զնոյն ինքն խնդիրն՝ այլ և այլ բառիւք պատասխանի առնեմք նմին: Վասն որոյ 'ի խնդրել, թէ ընդէ՞ր գինին զուարճացուցանէ և թմբրեցուցանէ, տացէ ոք պատասխանի. վասն զի 'ի նմա է զուարճացուցիչ և թմբրեցուցիչ զօրութիւն: Ահա պատասխանին ընթանայ առ սկիզբն որ հարցանի, զի է նոյն իսկ խնդիրն այլովք բառիւք կրկնեալ. զի որ հարցանէ՝ գիտէ թէ այս զօրութիւնք են 'ի նմա. բայց խնդրէ հասու լինել՝ թէ ուստի՞ իցեն այսպիսի զօրութիւնք 'ի նմա. որդեօք

'ի ցնդական և 'ի խուկեալ ամենից յորոց առա-րացեալ է, եթէ յայլ ինչ պատճառէ ։

Իսկ սմին օրինակի 'ի հարցանել ուրուք, թէ վասն էր լոյս ընդ անդամանդ և ընդ բիւ-րեղ անցանիցէ, լուիցէ պատասխանի՝ թէ վասն զի թափանցիկ է նիւթ նոցա. այս պա-տասխանի է նոյն իսկ հարցումն իւր. բայց պարտ էր պատասխանողին յայս առնել ըն-պատճառն թափանցիկ լինելոյ նիւթոյ նո-ցա, թէ յուղղութենէ ծակոտեաց նոցա յա-ռնչ փայցէ կամ յայլ ուստեքէ ։

Այնպէս 'ի խնդրելն՝ ընդէր տաքդեղն ջեր-մացուցանէ, տացէ պատասխանի. վասն զի ջերմ է նորա բնութիւն ։ Ուր չէ յայտ թէ ո՞ր իցէ հարցումն և ո՞ր պատասխանի. զի ըն-նոյն և զմի իմացուած ունին երկոքին ։

Այսպիսի պատասխանիք բերեալք 'ի լու-ծումն խնդրոց գտանին և 'ի գիրս ինչ. վասն որոյ խրատեն իմաստասէրք, թէ բարւոք էր խոստովանել զանգիտութիւն, քան թէ ծա-խաբար զնոյն երկրորդել ։

ԻՄԱՍՏԱԿՈՒԹԻՒՆ Ե.

Յուրի շրջան ։

Յուրի շրջան է, յորժամ առաջինն երկ-րորդաւն ցուցանի, և երկրորդն դարձեալ առաջնովն. իբր զի յորժամ կամիցիմք աստ-ցուցանել զխնդիր ինչ, առնուցումք 'ի միջ-

նորա. կամ 'ի լուծանել զայն, որպէս ցուցանէ կախեալ իցէ զառաջնոյն, որ է ընդ երկբայութեամբ.

Զոր օրինակ 'ի հարցանելն, թէ ընդէ՞ր աղի են ջուրք ծովու, պատասխանի տացէ. վասն զի բաղկացեալ հանք աղից են 'ի յատակս ծովու։ Կրկնեսցէ ոք. և ուստի՞ իցէ յայս թէ. այնչափ հանք աղի իցեն, մինչև զանդրանս ջուրն Ովկիանու տանել աղարտացին, տացէ. վասն զի ահա փորձիւ տեսանեմք զի աղեհամ են ջուրք ծովու, ապա հանք աղից են 'ի յատակս նորա։

Այնպէս 'ի հարցանելն, զիա՞րդ քացախն խայթիցէ զլեզու, ասիցէ. զի սլաքաձև են ամենամանր մասունք կամ տարերք նորա. և եթէ խնդրեսցես ցուցանել զայն, պատասխանի տացէ. վասն զի քացախն խայթէ զլեզուն, ապա սլաքաձև են մասնկունք նորա։

ԻՄԱՍՏԱԿՈՒԹԻՒՆ Զ.

Ոչ պատճառն իբր պատճառ։

Այս իմաստակութիւն անկանիմք՝ յորժամ տեսանեմք զգործ ինչ որոյ պատճառն անծանօթ է մեզ, փոխանակ զանգիտութիւն խոստովանելոյ՝ առնումք 'ի պատճառ զայն որ ոչ է պատճառ. իբր զի յառաջեաց քան զգործն, կամ 'ի նմին ժամանակի եղև։ Այսու իմաստակութեամբ ոմանք 'ի վաղ ժա-

մանաւանդ կարծէին զշանթն և զդիպուածս 'ի ծծմբային գոլորշեաց գոյանալ յօդս ։ Նոյնպէս և զխաւարումն արեգական և լուսնի և զերևումն գիսաւորաց դնէին պատճառ որածութեան, պատերազմաց, սովոյ, մահու իշխանաց. տեսեալ զի այսպիսի դժնդակ արկածք զհետ եկին խաւարման լուսաւորաց և երևման գիսաւորաց ։

Նոյնպէս տեսեալ զի անձրև եկն 'ի նորոգման և 'ի լրման լուսնոյ, յայսմանէ 'ի վերայ ածէին, թէ նորոգումն և լրումն լուսնոյ պատճառ է զանձրև 'ի վերայ երկրի ։

Սակայն փորձով ցուցեալ է թէ խաւարմունք լուսաւորաց և երևումն գիսաւոր աստեղաց չունին կապակցութիւն կամ յարաբերութիւն ինչ ընդ արկածս չարեաց, և ոչ լուսինն ընդ անձրևոյ ։

Եւ այս վերաբերի միոյ պատճառի դրել զայն որ 'ի բազմաց իցէ. զոր օրինակ՝ զյանցանս ապստամբութեան խառնամբոխ ժողովրդեան քաղաքի իմիք, 'ի վերայ միոյ ուրուք կուտել, ուր բազում էին խռովիչք ։ Միոյ պատճառի տալ զճարակումն մահաբեր հիւանդութեան իրիք, կամ զնուազութիւն արմտեաց, որ 'ի յոլովից եղանիցին ։

Ի սոյն իմաստակութիւն անկանի, որ զառիթն պատճառ առնէ գործոյ. որպէս թէ մեծագանձ ճոխութիւն կամ առատաբեր հանքք ոսկւոյ և արծաթոյ հասարակապետու-

Թեան երիք եղէ պատճառ 'ի վերայ յարձա-կելոյ սահմանակից իշխանաց և պատերազմի և մահու ։ Կամ բարեբաստիկ յաջողուած ու-րուք եղէ պատճառ վնասու որ պատահեցէ նմա 'ի նախանձու է յաչաղկոտաց ։

ԻՄԱՍՏԱԿՈՒԹԻՒՆ Է.

Անկատար Թուման Մասանց ։

Անկատար Թուումն մասանց է՝ յորժամ մասունք բոլորի իմիք ոչ Թուին բովանդակ, որպիսի է այս ապացոյց . Գործ ինչ արտա-քեալ 'ի մարդոյ կամ է բարի կամ չար . իսկ գործդ այդ ոչ է բարի, ապա է չար . կամ ոչ է չար, ուրեմն է բարի ։ Սակայն բաց 'ի նոցանէ գտանի գործ արտաքեալ 'ի մարդոյ, որ ոչ բարի է և ոչ չար, այլ է անտարբեր . որպիսի են ամենայն բնական շարժուածք անդամոց ։

Ըստ այսմ են և այսք, Մեծատունք կամ շռայլ են և կամ ռիշդ . իսկ մեծատունս այս ոչ է շռայլ, ապա է ռիշդ . ոչ է ռիշդ, ա-պա է շռայլ ։ Զի գոյ մեծատուն որ ոչ շռ-այլ է և ոչ ռիշդ, այլ առատաձեռն ։

Ամենայն կենդանի կամ ցամաքային է և կամ ջրային . իսկ կենդանիս այս, ոչ է ցա-մաքային, ապա է ջրային . կամ ոչ է ջրային, ապա է ցամաքային ։ Զի գոյ կենդանի որ երկակենցաղ է, որպէս ջրշուն, և այլք ։

Նա այս իմաստակութիւն գլխի, յորժամ իցէ ինչ որ 'ի բազում պատճառաց յառաջ գայ, միոյն կամ ոմանց 'ի նոցանէ հասու եղեալ, համարիցի թէ նոքա միայն են պատճառ իրին. գուցէ գլխաւոր և իսկական պատճառ նորա այլ է՝ զոր ինքն չէ գիտացեալ։ Որպէս յորժամ վարկանիցի ոք, թէ միայն ջերմութիւն և ցրտութիւն օդոյ իցեն պատճառք հողմոյն։ Բայց գուցէ գլխաւոր պատճառ նորին իցեն գոլորշիք որք բարձրանան 'ի ծովէ և յերկրէ, կամ այլ ևս իրք։

ԻՄԱՍՏԱԿՈՒԹԻՒՆ Ը.

Խաբէութիւն պատահման։

Խաբէութիւն պատահման է՝ յորժամ ընդ գործ պատահական դիպուածոց համարիցի ինչ լինել հարկաւորաբար եղեալ։ Որպէս յորժամ անհմուտ ոք բժիշկ ըստ դիպուածոյ բժշկիցէ զխիթ որովայնի ուրուք ցրտագոյն ջրով. իսկ և իսկ կարծեսցէ, թէ ցուրտ ջուր դեղ ապաքինիչ է ամենայնի որ ունիցի ընդ խիթ որովայնի։

Նոյնպէս եթէ զանդիկ, զաբիոն, և զայլ այսպիսի դեղս անհետ առնել ոք կամիցի 'ի բժշկականութենէ, զի երբեմն վնասու լինին պատճառք յանհմտութենէ բժշկին։

Ըստ այսմ է և ասելն. Հարստութիւնն հպարտացուցանէ զմարդիկ, այս է չար և

վնասակար ։ Նաւարկութիւնն զբազումս կորոյս ծովամոյն . ապա չէ արժան նաւազնացին լինել ։

Այսու օրինակաւ մոլորին, յորժամ իրաղութեան խելք ըստ երազոցն պատահելոյ՝ հաստատեսցին ՚ի միտս, թէ երազք ապագայ դիպուածոց են նախագիտութիւնք ։

ԻՄԱՍՏԱԿՈՒԹԻՒՆ Թ.

Առնուլ զբոլորն փոխանակ մասանց ։

Զբոլորն փոխանակ մասանց առնումք, յորժամ զպատկանեալն ոմանց միայն ՚ի մասանց՝ ՚ի վերայ ածեմք բոլորին ։ Զոր օրինակ՝ յորժամ վասն ոմանց վատութեանց զազգ մի կամ զժողովուրդ մի բամբասողաւ ընդ վայր հարկանիցեմք ։ Կամ տեսեալ զոմանս յաշակերտաց դպրոցի ուրուք ունչս առնել կամ ծիծաղիլ զոգխտութեամբ այլոց, միահամուռ զամենայն աշակերտան այնպիսի լինել բամբասիցեմք ։ Կամ տեսեալ զվրիպակ ինչ ՚ի մատենի իմիք, զբոլոր մատեանն անգոսնիցեմք . որպէս այն թէ վասն միոյ կամ ոմանց չորացեալ ճիւղոց, զբոլոր ծառն գօս և հատանելի վարկանիցիմք ։

Առ այս վերաբերի և այն տղայական իմաստակութիւն . Սուր սպիտակութիւն գոյ, սպիտակ է . յեթովպացին սպիտակութիւն գոյ . ապա եթովպացին սպիտակ է . այնու

զի ըստ մասին ինչ՝ պտղինքն, ըստ տատամանցն է սպիտակ ։

ԻՄԱՍՏԱԿՈՒԹԻՒՆ Ժ։

Ո՞ւր էմք ճշմարիտն ընել պարբերաբար ճշմարիտ ։

Այն ինչ որ պայմանաւ և չափով պայաշաճի իրին, յորժամ բացարձակաբար առանց պայմանի և չափու ընծայեմք իրին, անկանիմք յայս իմաստակութիւն. որպէս 'ի տեսանելն զի ջերմութիւն արևու տապակէզ. արարեալ իցէ զմանս 'ի բուսոց, զարեգակն որ կենդանացուցիչն է կենսաւորաց, վնասակար լինել ասասցէ ։ Կամ յորժամ սաստիկ բարկութեամբ և սպառնալեօք 'ի զգօնութիւն ածիցեմք զխեռ ոք և զանըզգամ, կիրք ինչ բարի համարիցիմք ըզբարկացողութիւնն ։ Նոյնպէս մահաբեր ասիցեմք զդեղ ինչ օգտակար՝ կերեալ արտաքոյ չափու և սահմանադրութեան բժշկին ։

Ըստ սմին օրինակի, յորժամ վնասաբեր առողջութեան մերոյ կարծեսցուք զմաղձ և զսևամաղձ, որ 'ի սկզբնատարերց անտի են մարմնեղէնս կազմածոյ, իբր զի երբեմն պատճառեն զհիւանդութիւն 'ի մարդս ։ Բայց ոչ եթէ գոյութիւն նոցա որ հարկաւոր է բնականաբար, այլ անբարեխառնութիւննացա լինին պատճառ հիւանդութեանց մերոյ ։

ԻՄԱՍՏԱԿՈՒԹԻՒՆ ԺԱ.

Զկարելին ընել ճշմարիտ:

Այսու իմաստակութեամբ ախտանամք, յորժամ զկարելին համարիցիմք իրօք եղեալ. որպէս յասելն, Հնարաւոր է թէ բաց յաշխարհէ աստի իցեն և այլ բազում աշխարհք յընդարձակութեան երկնից. ապա ուրեմն գոն: Ըստ այսմ է ասել, Գէթ յոմանս 'ի մոլորակաց գտանիցին բնակիչք. ապա գոն ճըշմարտիւ: Կարելի է զի գտանիցին մարդիկ ճակատակնեայք յանծանօթ ինչ երկրի. ապա ուրեմն գոն: Չէ ինչ անհնարին, թէ իցեն աներևոյթ արարածք մահկանացուք, այն ինքն է յաւէժահարսունք, որք ծնանիցին և մեռանիցին իբրև զմեզ. ապա գոն իրօք:

Այս իմաստակութիւն կործանին, որք զկարծիս իւրեանց իբրև ստոյգ առաջի դընեն, և ջանահնար լինին գտանել փաստս 'ի հաւանեցուցանել:

ԻՄԱՍՏԱԿՈՒԹԻՒՆ ԺԲ.

Զեղծումն օրինակաց և նմանութեանց:

Այս իմաստակութիւն անկանի յորժամ զնմանութիւն միոյ իրի խառնակիցէ ընդ միւսոյն:

Օրինակ իմն յորժամ ահմուտ ոք զգըժուարահաս ինչ իրողութենէ միջամուխ լի-

նիցի դատել, և զի չէ բաւական մանրախոյզ քննութեամբ խելամուտ լինել, խնդրէ գըտանել զայլ ինչ նման, և ըստ նմին օրինակի դատաստան առնել զիրէն ։

Որպէս ոմանք 'ի յետնոց կամելով հաւատոյ ցուցանել զվաղեմի կարծիսն Պղատոնի, որ դնէր՝ թէ գաղափարք և օրէնք 'ի բնուստ անստուստ տպաւորեալք 'ի, հոգին՝ մեան անեղծանելի, յօրինակ առին զքարն, որ անջնջելի պահէ զդրօշմեալ տառսն յինքեան ։

Ըստ այսմ է և այս տղայական ապացոյց. Որպէս աչք եթովպացւոյն է մասն, նոյնպէս և ատամն է մասն. այլ որպէս աչք եթովպացւոյն կոյր գոլով՝ կոյր ասի եթովպացին. նոյնպէս և ատամն սպիտակ գոլով, սպիտակ ասի եթովպացին ։

ԻՄԱՍՏԱԿՈՒԹԻՒՆ ԺԳ.

Ի միոյ սեռէ յայլ սեռ ։

Ի միոյ սեռէ անցանեմք յայլ սեռ, յորժամ 'ի գերբնական կարգէ դիմեմք 'ի բնական կարգ, և 'ի բնական կարգէ 'ի գերբնականն ։ Որպէս եթէ կամիցի յայտնել ըզխորհուրդս յարութեան որ է 'ի գերբնական կարգի, 'ի ձեռն փիւնիկ հաւուն որ է 'ի բնական կարգի. քանզի չեղև երբէք փիւնիկ հաւ, որ անդրէն ծնանիցի 'ի մոխրոց իւրոց.

Այնպէս և՛ թէ զկենդանանալն մեր 'ի մեռելութենէ մեղաց արեամբն Քրիստոսի, որ է 'ի գերբնական կարգի, նկարագրեսցէ ոք օրինակաւ հաւալուսան թռչնոյ, որ է 'ի բընական կարգի։ Որպէս թէ ձագք այսր թըռչնոյ թունաւորեալ 'ի թշնամեաց իւրոց մեռանին, և սա կտցաւն ծակեալ զկուրծս իւր սրսկէ զարիւնն 'ի վերայ նոցա և կենդանացուցանէ։

Նոյնպէս եթէ ոք ճշմարիտ լինել պնդիցէ զցնորս իւր զոր եսես յերազի, 'ի մէջ բերեալ զտեսիլն Յակոբայ, անցանէ 'ի միոյ սեռէ յայլ սեռ։

Այս խմաստակութիւն բերէ զայլաբանական նշանակութիւնն առնուլ փոխանակ նկարագրական բուն նշանակութեան։ Ասաց Տէրն. ուր գանձք ձեր են, անդ և սիրտք ձեր եղիցին։ Եթէ ոք զսիրտն՝ որ դնի փոխաբերաբար 'ի տեղի սիրոյ, իմասցի իսկական նշանակութեամբ, դիմէ 'ի միոյ սեռէ յայլ։ Որպէս կեղակարծօրէն պատմի, թէ 'ի մեռանիլ ագահի ուրուք՝ բացեալ զմարմինն առ 'ի զննել՝ ոչ գտին անդ զսիրտն, և խնդրեալ գտին յարկեղ գանձուց նորա։

Բաց 'ի սոցանէ զայլ երիս՝ խմաստակութիւնս նշանակեն տրամաբանք, զորս խարդախութիւն 'ի դէպ է կոչել քան իմաստակութիւն։

Առաջինն անուանի ապացոյց 'ի պատկա-

ւանաց. և այն է՝ յորժամ չունի ոք զայլ ինչ փաստս հաստատել զկարծիս իւր, 'ի վկայութիւն բերցէ զբանս մեծահամբաւ արանց, որոց ոչ համարձակի ընդդիմակն հակառակիլ, պատկառելով յանուանէ նոցա և յաստիճանէ :

Երկրորդն ասի ապացոյց 'ի տգիտութենէ. և է այն՝ յորժամ ստիպեսցէ ոք զոսոխն ընդունել զկարծիս իւր, ապա թէ ոչ՝ զլաւագոյնն քան զայն առաջի առնել. որպէս եթէ ուղիղ և ըստ կարգի իցեն կարծիքն մեր, յորժամ ընդդիմակն չկարիցէ այլ ինչ լաւագոյն 'ի մէջ մատուցանել :

Երրորդն կոչի ապացոյց 'ի մարդոյ կամ առ մարդ. և է այն՝ յորժամ ստիպեմք զոք զի գոնէ ըստ իւրոց օրինաց հաւանեսցի կարծեաց մերոց :

Այս ապացոյց չէ իսկապէս իմաստակութիւն, յորժամ միայն կամիցիմք ցուցանել հակառակորդին, թէ ընդդէմ դնելովն բանից մերոց՝ հակառակի օրինացն իւրոց :

Բայց լինի իմաստակութիւն, եթէ փաստըս 'ի հաստատութիւն կարծեաց մերոց յօրինաց իւրոց առնուցումք, զի գուցէ սուտ իցեն օրէնքն, ընդ նոսին և բանքն գտանիցին

ստայօղ :

ՎԵՐՋ.

ՑԱՆԿ ԳԼԽՈՑ

ԳՐԱԿ ԱՌԱՋԻՆ

Հոգի և զօրութիւնք նորա և ներգործութիւնք. 2

ԳԼ. Ա. Զօրութիւն զգալոյ և մտածելոյ. 3

ՅՕԴ. Ա. Զգալ. 3

Բ. Մտածել. 4

ԳԼ. Բ. Զօրութիւն ճանաչելոյ և յիշելոյ. 5

ՅՕԴ. Ա. Ճանաչել. 5

Բ. Յիշել. 7

ԳԼ. Գ. Զօրութիւն կամելոյ և գործելոյ. 8

ՅՕԴ. Ա. Կամիլ. 8

Բ. Գործել. 11

ԳՐԱԿ ԵՐԿՐՈՐԴ

Ներգործութիւնք մտաց. 13

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Ըմբռնումն. 15

ԳԼ. Ա. Գաղափարք. 16

Բ. Գաղափարք և ծանօթութիւնք բացարձակապէս նկատեալ կարեն լինել նկարագիր կամ աննկարագիր, պարզ կամ յօդուածոյ, և այլն. 21

ՅՕԴ. Ա. Նկարագիրք և աննկարագիրք. 21

Բ. Պարզք և յօդուածոյք. 22

Գ. Ենթակայացեալք և անենթակայք. 22

Դ. Մասնաւորք և ընդհանուրք. 23

ԳԼ. Գ. Գաղափարք և ծանօթութիւնք ՚ի կողմանէ փետութեան մտաց՝ լինին պայծառ կամ աղօտ, և այլն. 25
ՅՕԴ. Ա. Պայծառք և աղօտք. 25
Բ. Յստակք և շփոթք. 26
ԳԼ. Դ. Գաղափարք և ծանօթութիւնք ՚ի կողմանէ իրացն զորս երևակայեն՝ լինին կատարեալ և անկատար, և այլն. 27
ՅՕԴ. Ա. Կատարեալք և անկատարք. 27
Բ. Ճշգրիտք և հարևանցիք. 30
Գ. Հաստատեալք և մթացածինք. 30
Դ. Ճշմարիտք և սուտք. 32

ՊՐԱԿ ԵՐՐՈՐԴ

Ընդհանուր գաղափարք. 34
ԳԼ. Ա. Բաժանումն ընդհանուր գաղափարաց և ծանօթութեանց. 36
ՅՕԴ. Ա. Սեռ. 38
Բ. Տեսակ. 38
Գ. Տարբերութիւն. 39
Ծառ Պորփիւրեան. 42
Դ. Յատուկ. 45
Ե. Պատահումն. 46

ՊՐԱԿ ՉՈՐՐՈՐԴ

Ընդհանուր գաղափարք և ծանօթութիւնք, որք կոչին առաջադրութիւնք այսինքն մակադրութիւնք. 48
Նախաշաւիղք մակադրութեանց. 48

Գլ. Ա. Մակադրութիւնք. 51
ՅՕԴ. Ա. Մակադրութիւնք բաղդատութեամբ առ ընթակայն յորում են, կամ որում մակադրին. 51
Բ. Մակադրութիւնք յորժամ չէր ինչ կամ չէին երես ՚ի դէմս ածեն. 54
Գլ. Բ. Գոյացութիւն եւ յատկութիւնք նորա. 55
ՅՕԴ. Ա. Գոյացութիւն. 55
Բ. Յատկութիւնք գոյացութեան. 57
Գլ. Գ. Քանակութիւն եւ յատկութիւնք նորա. 59
ՅՕԴ. Ա. Քանակ. 59
Բ. Յատկութիւնք քանակութեան. 62
Գլ. Դ. Առինչ եւ յատկութիւնք նորա. 63
ՅՕԴ. Ա. Առինչ. 63
Բ. Յատկութիւնք առնչին. 65
Գլ. Ե. Որակութիւն եւ տեսակք նորա եւ յատկութիւնք. 67
ՅՕԴ. Ա. Որակութիւն. 67
Բ. Ունակութիւն եւ տրամադրութիւն. 68
Գ. Կարողութիւն եւ անկարողութիւն. 69
Դ. Կրական որակութիւնք եւ կիրք. 70
Ե. Ձեւ եւ կերպ. 74
Զ. Յատկութիւնք որակութեան. 75
Գլ. Զ. Առնելութիւն եւ յատկութիւն նորա. 76
ՅՕԴ. Ա. Առնել. 76
Բ. Յատկութիւնք առնելութեան. 77
Գլ. Է. Կրելութիւն եւ յատկութիւնք նորա. 78
ՅՕԴ. Ա. Կրել. 78
Բ. Յատկութիւնք կրելոյ. 78

Գլ. Ը. Կալ և յատկութիւն նորա. 79
ՅՕԴ. Ա. Կալ. 79
Բ. Յատկութիւնք կալոյ. 79
Գլ. Թ. Ուր և յատկութիւնք նորա. 79
ՅՕԴ. Ա. Ուր. 79
Բ. Յատկութիւնք ուրին. 80
Գլ. Ժ. Երբ և յատկութիւնք նորա. 80
ՅՕԴ. Ա. Երբ. 80
Բ. Յատկութիւնք երբին. 81
Գլ. ԺԱ. Ունել և յատկութիւնք նորա. 81
ՅՕԴ. Ա. Ունել. 81
Բ. Յատկութիւնք ունելոյ. 82

ԳՐԱԿ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Հետեւանք մակադրութեանց. 83
Գլ. Ա. Հակադրութիւնք կամ հակակայք. 84
ՅՕԴ. Ա. Առնչականք. 84
Բ. Ներհականք. 85
Գ. Ունակութիւն և պակասութիւն. 86
Դ. Հաստատութիւն և ժխտութիւն. 89
Գլ. Բ. Նախկինք. 91
Գ. Համանգամայնք. 93
Դ. Շարժութիւն. 94

ԳՐԱԿ ՎԵՑԵՐՈՐԴ

Հմտութիւնք. 97
Առ ՚ի գիտել և ճանաչել զճշմարտութիւնն և ուղիղ դատել. 97

ԳԼ. Ա. Զանազան հմրութիւնք և օրէնք գիտ-
պէ հաւանականութեան կամ ստու-
գութեան, որ է ուղղադատութիւն. 99
ՅՕԴ. Ա. Հմրութիւնք ո՛ր ինքնադէմ, ո՛ր ցու-
ցիւք, որ աղդմամբ, և որ ատէ-
րութեամբ. 100
ԳԼ. Բ. Ստոյգ, հաւանական, և երկբայական
հմրութիւնք. 103
ՅՕԴ. Ա. Յապաւոյ նշանք ստուգութեան, կար-
ծեաց և երկբայութեան. 103
Բ. Պատճառք ստուգութեան, կարծեաց
և երկբայութեան. 104
ԳԼ. Գ. Չափ ստուգութեան և հաւանակա-
նութեան ազգէ ազգէ հմրութեց. 108
ՅՕԴ. Ա. Աննիւթական գոյացութիւնք. 108
Նիւթական գոյացութիւնք. 111
Բ. Չափ հաւանականութեան գոյու-
թեան իրաց. 113
Գ. Չափ ստուգութեան և հաւանակա-
նութեան հանգամանաց իրաց. 116
Դ. Չափ ստուգութեան և հաւանակա-
նութեան համեմատութեանց. 119
Միութիւն և բազմութիւն. նմանու-
թիւն և աննմանութիւն. պատճառ
և գործ. ընտանութիւն և ներհա-
կութիւն. 120
Նոյնութիւն. 121
Համեմատութիւնք քանակի. 123
Համեմատութիւնք պարագականութեան 125

ՊՐԱԿ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Հմտութիւնք ըստ Թըչէն տպանամք,
և համառօտ սահմանք գիտութեց. 125
ԳԼ. Ա. Հմտութիւնք գոյութեան և հանգա-
մանաց աննիւթ գոյից. 125
Բ. Հմտութիւնք գոյութեան և հանգա-
մանաց նիւթական գոյից. 127
Համառօտ պատկեր գիտութեանց ըն-
գալեաց. 127
Գ. Հմտութիւնք համեմատութեանց. 130
ՅՕԴ. Ա. Նոյնութիւն և նմանութիւն. 121
Բ. Քանակ. 131
Գ. Պատճառ և գործ. 132
Գործք հարկաւոր պատճառաց. 135
Պատահական դիպուածք. 136
Գործք ազատ պատճառաց. 138
Դ. Պարագայութիւն. 139
ԳԼ. Դ. Ոճ ընդհանուր քննութեան. 141

ՊՐԱԿ ՈՒԹԵՐՈՐԴ

Հմտութիւնք ըստ յայտնի ուսանելեաց և
արուեստ դատողական. 143
ԳԼ. Ա. Մտաւորական էրք. 143
Բ. Գործ. 144
ՅՕԴ. Ա. Վկայք. 145
Բ. Պատմութիւն. 148
Գ. Յիշատակարանք. 150
Դ. Աւանդութիւն. 151

ԳԼ. Գ. Վաւերականութիւն գրոյ և յեղափոխարանաց . 152

Դ. Թարգմանութիւն գրոյ . 154

Ե. Կարգ կամ ոճ ուսման . 156

ՊՐԱԿ ԻՆՆԵՐՈՐԴ

Մոլորութիւնք . 158

ԳԼ. Ա. Մոլորութիւնք բանիւ շփոթելոյ . 158

Բ. Մոլորութիւնք շարաշար վարելոյ բանիւ . 163

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Դատումն . 168

ՊՐԱԿ ԱՌԱՋԻՆ

Բառք . 169

ԳԼ. Ա. Բաժանումն բառից ըստ տրամաբանից . 170

Բ. Բաժանումն բառից ըստ քերականաց . 174

ՅՕԴ. Ա. 174

Բ. Բայ . 176

Գ. 176

ԳԼ. Գ. Նշանակք դատման . 178

Դ. Մասունք առաջարկութեան . 179

Ե. Կազմութիւն բանի . 181

ՊՐԱԿ ԵՐԿՐՈՐԴ

Բաժանումն բանի . 183

ԳԼ.	Ա.	Սահմանական բանք .	183
ՅՕԴ.	Ա.	Պարզ. բարդ, գլխաւոր և ենթամասն.	185
ԳԼ.	Բ.	Բազմամասնեայ կամ խառն բանք.	191
ՅՕԴ.	Ա.	Շաղկապական.	192
	Բ.	Անջատական .	193
	Գ.	Կցորդական .	194
	Դ.	Պատճառական .	197
	Ե.	Համեմատական .	198
	Զ.	Զատական .	198
	Է.	Հետևողական .	200
	Ը.	Նմանական .	201
ԳԼ.	Գ.	Պայմանաւոր բանք .	201
	Դ.	Պարզելի բանք .	205
		Առանձնական .	206
		Տրոհական .	207
		Բաղդատական .	208
		Կրկնական .	209
		Սկզբնաւորական և վախճանական .	210
	Ե.	Որակ և քանակ բանի .	211
	Զ.	Ընդդիմակ բանք.	215
	Է.	Հանգիտութիւն .	220
	Ը.	Անդրադարձ բանք .	221

ՊՐԱԿ ԵՐՐՈՐԴ

		Ոճ	225
ԳԼ.	Ա.	Ոճ վերլուծական և ոճ շարադրական.	225
ՅՕԴ.	Ա.	Սահման .	227
	Բ.	Բաժանումն .	234
ԳԼ.	Բ.	Վերաստութիւն .	236

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Տրամախոհութիւն կամ խելամտութիւն 240

ՊՐԱԿ ԱՌԱՋԻՆ

Ապացոյց . 240
ԳԼ. Ա. Զանազան ապացոյցք . 244
ՅՕԴ. Ա. Հաւաքաբանութիւն . 244
Բ. Մակածութիւն . 246
Գ. Յարացոյց . 248
Դ. Եղաւած . 250
Ե. Փաստորդ . 251
Զ. Երկայրաբանութիւն . 253
Է. Համաբարդութիւն . 256
ԳԼ. Բ. Խառն հաւաքաբանութիւն . 259
Կցորդական . 259
Շաղկապական . 260
Անջատական . 262
ՅՕԴ. Ա. Հիմնական կանոնք ուղղութեան պարզ հաւաքաբանութեան . 363
Բ. Կանոնք խառն հաւաքաբանութեան . 264
ԳԼ. Գ. Հասարակ կանոնք հաւաքաբանութեան . 267
ԿԱՆՈՆ Ա . 267
ԿԱՆՈՆ Բ . 268
ԿԱՆՈՆ Գ . 270
ԿԱՆՈՆ Դ . 271
ԿԱՆՈՆ Ե . 273
ԿԱՆՈՆ Զ . 274